ՀՈՎՍԵՓ ԱՎԱԳ
ՔԱՀԱՆԱ ՀԱԿՈԲՅԱՆ

Ո՞Վ Է ԻՄ ԸՆԿԵՐԸ

ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ – 2010

Սուրբ Էջմիածնի Հոգևոր Ճեմարանի
2-րդ Լսարանում 1967թ.

Ձախից աջ՝ Արգար Սարկավագ (Պոլիս-Ստամբուլ), հեղինակը՝ Հովսեփ Սարկավագ Հակոբյան, Բարեշնորհ Սասուն Սրկ. Վարդանյան (Լա Չին – Արցախ Դպրոցի Ուսուցիչ), Բարեշնորհ Վրեժ Սարկավագ Ներսեսյան (այժմ՝ Դոկտ. Տ. Ներսես Ավագ Քահանա Ներսեսյան Բրիտանական թանգարանի Հայկական Բաժնի պատասխանատու և Հոգևոր Հովիվ)

«Ո՞Վ Է ԻՄ ԸՆԿԵՐԸ

ՀՈՎՍԵՓ ԱՎԱԳ ՔԱՀԱՆԱ ՀԱԿՈԲՅԱՆ

Գրքի կողքի ձևավորումը՝ Մաշտոց Չոբանյանի

Copyright @ 2007
By Archpriest Fr. Hovsep Hagopian
All right are reserved.
First edition – 2007
Printed in Armenia-Yerevan
For information and address
Archpriest Fr. Hovsep Hagopian
1620 N. San Fernando Blvd. # 15
Burbank, CA 91504, USA
e-mail: frhovsepfaith@hotmail.com

Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ Ն. Ս. Օ. Տ. Տ.

ԳԱՐԵԳԻՆ Բ.

ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Հրամանաւ
Տեառն Յովնանու Արքեպիսկոպոսի
Առաջնորդին Հայց. Եկեղեցւոյ Հիւսիսային
Ամերիկայի Արեւմտեան Թեմի

Երրորդ գրքիս կազմը





WESTERN DIOCESE OF
THE ARMENIAN CHURCH OF NORTH AMERICA
Հայաստանեայց Եկեղեցի՝ Հիւսիսային Ամերիկայի Արեւմտեան Թեմ
HIS EMINENCE ARCHBISHOP HOVNAN DERDERIAN, PRIMATE

ԳԻՐ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆՔԻ

Ահաւասիկ, սեղանիս է օրհնաբեր եւ հոգեշահ գրութիւն մը՝ աշխատասիրութեամբ Տէր Յովսէփ Աւագ Քհնյ. Յակոբեանի:

Արժանապատիւ Տէր Հայրը մեր Ս. Եկեղեցւոյ անդաստանէն ներս բերած է եւ կը շարունակէ բերել օրինակելի հոգեւոր ծառայութիւն՝ պապակ հոգիները ջամբելով Քրիստոսի հոգեւոր հացով: Այս Քարոզգիրքը վառ ապացոյցն է իր անմնացորդ նուիրումի, բոլորանուէր սիրոյ եւ ինքնաբաշխումի:

«Սիրոյ Աղաւնին» խորագիրը կրող այս գողտրիկ Քարոզգիրքը բարութիւն, լոյս ու մաքրութիւն կը ճառագէ ընդմէջէն: «Աղաւնին» սիրոյ թագաւորութեան պատգամաբերն է, Աստուծոյ Թագաւորութեան մունետիկը, որ կու գայ իր թեւերու ամպհովանիին տակ պատսպարելու Աստուծոյ յուսացողները՝ յաւիտենական խաղաղութեան մէջ: Այս հոգեւոր հանգստութիւնը առկայ է Տէր Հօր բոլոր քարոզներու մէջ եւ այս առումով շատ օգտակար եւ յանձնարարելի է ընթերցել զայն:

Մենք մեծապէս կը գնահատենք եւ կ'օրհնենք Արժ. Տ. Յովսէփ Աւագ Քհնյ. Յակոբեանի այս աշխատասիրութիւնը եւ կը մաղթենք Տէր Հօր նորանոր յաջողութիւններ, արեւշատութիւն, ոյժ եւ կորով հոգեւոր ասպարէզին մէջ՝ ի փառս Աստուծոյ եւ ի պայծառութիւն Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցւոյ:

Սիրոյ ջերմ ողջունիս,
Աղօթարար՝

Յովնան Արք. Տէրտէրեան
Առաջնորդ

Պրրպէնք, Յունուար 28, 2008

3325 NORTH GLENOAKS BLVD., BURBANK, CA 91504
TEL: 818.558.7474 • FAX: 818.558.6333 • EMAIL: INFO@ARMENIANCHURCHWD.COM • WWW.ARMENIANCHURCHWD.COM

ՍՈՒՅՆ ՔԱՐՈԶԳԻՐՔԸ

ՆՎԻՐՈՒՄ ԵՄ ԳԵՎՈՐԳՅԱՆ ՃԵՄԱՐԱՆԻ

ՎԵՐԱՏԵՍՈՒՉ ԵԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻ

ԼՈՒՍԱՐԱՐԱՊԵՏ, ԻՆՁ ՇԱՏ ՍԻՐԵԼԻ ՀԱՅԿԱԶՈՒՆ

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

Յիշատակն արդարոյն օրհնութեամբ եղիցի. ամէն։



ՔԱՐՈԶԳՐՔԻ ՀՈՎԱՆԱՎՈՐՆ Է ՍՓՅՈՒՌՔԻ ՄԵՐ

ՍԻՐԵՑՅԱԼ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԽՈՍՔ

Իմ հայրենի սիրելի ժողովրդի ընթերցանությանն եմ հանձնում Լոս Անջելեսում հրատարակած երրորդ Քարոզ-գրքիս *«Միրո Աղավնին»)* քարոզները, որոնք անվանել եմ՝ *«Ո՞վ է իմ ընկերը»:*

Նախ աղոթող եմ Ազգիս Վեհափառ Հայրապետի՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի քաջառողջության և իր եկեղեցանվեր ու հայրենաշեն գործոց հաջողության համար:

Գրքի պատրաստության համար քաջալերանք ստացա Հյուսիսային Ամերիկայի Արևմտյան Թեմի Բարեխնամ Առաջնորդ՝ Գերշ. Տ. Հովնան Արք. Տերտերյանից, որի համար իմ երախտագիտությունն եմ հայտնում Առաջնորդ Սրբազան Հորը և միշտ աղոթող եմ իր քաջառողջության ու գործոց հաջողության համար: Արևելահայերենի ուղղագրության և մտքի դասավորման, ինչպես նաև գրքի կազմը պատրաստելու աշխատանքի մեջ, իրենց կարևոր լուման ունեն Առաջնորդարանի աշխատակիցներ՝ ինձ շատ սիրելի Հայկ Մադոյանն ու Մաշտոց Չոբանյանը, որոնց նույնպես հայտնում եմ իմ սերն ու շնորհակալությունը:

Քարոզգրքիս լույս ընծայման նպատակն է ինչ որ չափով հագեցնել մեր ժողովրդի հոգու ծարավը: Եթե մի կաթիլ իսկ հաջողվեմ իմ այս առաքելության մեջ, դա կլինի իմ վարձը: Աղոթեցեք ինձ համար:

Սիրով՝

Հովսեփ Ավագ Քհն. Հակոբյան

Հոկտեմբեր 2010 Բրբենկ,
Կալիֆորնիա, ԱՄՆ

ՍԻՐՈ ԱՂԱՎՆԻՆ՝ ԱՍՏՎԱԾ ԱՂԱՎՆՈՒ ՍԻՐՏԸ՝ ՄԱՅՐԸ

«Բոլոր մայրերը կույս են...»
Վազգեն Վեհափառ

Այսօր մայրերի տոնն է: Ինձ համար և վստահ եմ ամեն հասկացող ու իրենց մայրերին գնահատող զավակների համար հրաշալի և գեղեցիկ օր է, մի ուրախ առիթ, երբ կարող ես արտահայտել քո իրական ու անշահախնդիր սերը քեզ ստեղծողի և աշխարհ բերողի նկատմամբ:
«ՈՎ Է ՄԱՅՐԸ»:

Ինչքա՜ն գեղեցիկ խոսքեր ու արտահայտություններ են պետք, նկարագրելու համար, թե՝ *«Ով է մայրը»* և կամ *«Ի՞նչպիսին է մայրը»:* Մայրը մի նոր մարդու կյանք տվողն է, ստեղծիչը մի նոր էակի, որի համար շատ անգամներ իր կյանքն է զոհել, երբ պետք է եղել ընտրություն կատարել՝ զավա՞կը, թե՞՝ մայրը: Առանց տատանվելու մոր խոսքը եղել է՝ *«Թող ապրի իմ զավակը»* և աչքերը հավիտյան փակել զավակի կարոտը իր սրտում: Մի՞թե սրանից ավելի մեծ զոհողություն կամ հերոսություն կարող է լինել: Այո, մայրերը հերոսուհիներ են:

Քանի որ Աստված ֆիզիկապես միանգամից ամեն տեղ չէր կարող լինել, այս պատճառով էլ ստեղծեց մորը: Ծաղկաստան է մոր սիրտը:

Առաջին մայրը՝ Եվան,Աստծու ստեղծագործությունն էր, նշանակում է նրա սրտում աստվածային սեր կար: Որով մայրական սերը անկրկնելի է, որն իր մէջ պարունակում է՝ *նվիրում, զոհողություն, գուրգուրանք ու սրբություն:*

Մի անգամ մի փոքրիկ կույր աղջկա հարցրել են, թե՝ *«Աստված ո՞ւմ նման է»: «Աստված ճիշտ ու ճիշտ իմ մոր նման է»,*- պատասխանել է նա: Մայրը մի հրեշտակ է միայն մի տարբերությամբ, որ նա երկրի վրա է: Նա հերոսության և քաջության սքանչելի մի օրինակ է ու նրա սերը ժամանակ և սահման չի ճանաչում:

«Բոլոր մայրերը կույս են,- երջանկահիշատակ Վաղգեն Վեհափառի խոսքն է սա. *«Ո՞ր հայրը ի տես իր նորածին երեխայի չի բացականչում հրա՛շք և մի պահ իր կնոջ մեջ չի տեսնում պատկերը Սուրբ Կույս Մարիամի: Կինը մայրությամբ վեր է բարձրանում մարմնականի պայմանից և պսակվում ծննդյան հրաշքի Լույսով: Նա իր էության մեջ զգում է սարսուռը արարչագործության ու ծնկի եկած իր ծնած երեխայի առջև նրա մեջ տեսնում է պտուղը Աստուծո շնորհաբաշխ ուժի և տեսիլքը ունենում նմանվելու Հիսուս ծնող Սուրբ Կույսին»:*

«Ահա հոգեկան հիմնական մի ճշմարտություն մայրության մասին, որը կարծում ենք իբրև հիմք պիտի ծառայի մեր բոլոր մտածումների՝ ընտանիքի և ընտանեկան կյանքի վերաբերյալ»:

«Գիտությունը իր բոլոր հայտնաբերումներով ու հաստատումներով մնում է ծննդյան հրաշքի մարմնական մեքենականությունը և գոյատևման պայմանները հետազոտողի ու բացատրողի դերում: Սակայն հրաշքը մնում է հրաշք, անիմանալի խորհուրդ: Ավելին, գիտության լույսի տակ հրաշքը դառնում է առավել հրաշալի»: «Հրաշալիքը ծնունդի և սրբությունը մայրության, ահա ընտանիքի հիմքը: Չի ընտանիքն է խորանը այդ հրաշքի և աղբյուրը մայրական սրբության»:

Իրապես հրաշալի խոսքեր են՝ արժանի մեր մայրերին:

Կյանքում յուրաքանչյուրիս համար ամենաքաղցր խոսքերն են՝ *երկինք, տուն, սեր ու մայր:*

«Պատմվում է, որ պատանի Բենջամին Ուեսթի

մայրը մի անգամ պատվիրում է նրան, որ քրոջը Մելիին հսկի իր բացակայության ժամանակ: Բենջամինը գունավոր թանաք գործածելով, գծում է քրոջ նկարը: Երբ մայրը վերադառնում է, թանաքի հետքեր է գտնում աթոռների, հագուստների ու գետնի վրա: Առանց մի բառ իսկ ասելու թափթփուքի համար, նկատում է նկարը: Հետո բացականչում է. «Աստված իմ, ի՜նչ լավ ես նկարել քրոջդ»: Նա գրկում ու համբուրում է Բենջամինին:

1763-ին, 25 տարեկան հասակում, այս ամերիկացի նկարիչը՝ Բենջամին Ուեսթը, իր օրերի լավագույն արվեստագետներից մեկն էր նկատվում: Երբ հարցնում են, թե ինչպե՞ս քաջալերվեցիր նկարելու, նա պատասխանում է, թե մոր համբույրն է իրեն նկարիչ դարձրել»:

Մոր նկարագիրը քաղցր է ու սուրբ: Նա իր կամքով՝ տան սյունն է, հավատքով՝ հիմքը, իսկ իր սիրով՝ սիրտն ու հոգին: Մայրը իր գավակի *առաջին ու լավագույն դաստիարակն է, որը նրան* սովորեցնում է բարին, գեղեցիկն ու ճշմարիտը: Նա մի ճարտարապետ է, որ ոչ միայն իր գավակի նկարագրի հատակագիծն է գծում, այլ նաև *կերտում է նրա ուղիղ, ապահով ու հաջող ճանապարհը:*

Նա իր սրբազան պարտականությունները անթերի է կատարում և այս աշխարհում ներկայացնում է աստվածային անսպառ ու անսակարկ սերը, հոգատարությունն ու գերագույն զոհողությունը: Նա միայն ապրում է՝ ապրեցնելու համար:

Մայրը զավակներին մեծացնելու համար զոհում է իր կյանքի ծաղիկ շրջանը: Մի՞թե այս հրաշալի զոհողության դիմաց չի կարելի նրան արժանացնել մի փոքրիկ հարգանքի, չասելու համար խոնարհության: Այո, խոնարհության: Ինչպես մենք խոնարհվում ենք Աստծու ու մեր սրբությունների առաջ՝ *Հայրենիք, Հավատք, Սրբություն, Եկեղեցի,* այնպես էլ պիտի խոնարհվենք մեր մայրերի առաջ, քանի որ նրանք մեզ կյանք տվող, սեր բաշխող հերոսուհիներն են:

Վա՛յ այն զավակին, որն իր մորը կհարգի պարզապես պարտականություն կատարած լինելու համար:Չե՞ք կարծում, որ այդպիսի զավակը ոչ միայն երջանիկ կյանք չպիտի ունենա, այլ արդեն իսկ Աստծու կողմից դատապարտված է: Մորը սիրելը խոսքով կամ բաժակաճառով չի լինում, այլ միայն ու միայն գործով: Այո, միայն գործով: Մեր սերը, գնահատանքն ու հարգանքը պիտի արտահայտենք գործով: Մեր մայրը թող օրինի մեզ, որպեսզի երջանիկ ու խաղաղ կյանք ունենանք: Երիտասարդ, մայր սիրող և գնահատող երիտասարդ, խիղճդ հանգիստ թող լինի, քանի որ այն աստվածային է:

Բոլոր մայրերը անկախ իրենց գույնից ու սեռից մայր են, հարգանքս ու սերս բոլորի նկատմամբ, բայց ինձ համար իմ մայրը ուրիշ մի մայր է: *«Ինչո՞ւ, ի՞նչ է տարբերությունը»,*- կարող է հարցնել մեկը: Տարբերությունը նրանում է, որ նա իմ մայրն է, մյուսներն էլ թող իմ նման մտածեն, նրանք էլ թող լինեն նրանց մայրերը, միայն կարևորը սերն ու գնահատանքն է: Բոլոր մայրերը նույն ցավով են ծնում իրենց երեխաներին, բայց իմ մոր ցավերը տարբեր են եղել ինձ համար: Աշխարհը կուզենայի տալ նրան, որպեսզի երբեք զավակ ծնելու ցավից բացի, այլ ցավ չզգար և առավելապես իր զավակի կորստյան ցավը չզգար: *«Իմ անուշիկ մայրիկ, քեզ համար ես մի մեծ նվեր եմ պատրաստել այսօր, նվեր, որը ոչ մի բանով չի գնվի, իմ որդիական սիրո անխառն ու սրտանց համբույրը, իմ շնորհակալության համբույրը, որ դու կաս ու ես ապրում եմ քո շնորհիվ»:*

Թող յուրաքանչյուր զավակի համար իր մայրը տարբեր լինի և նա սիրի իր մորը առանձնահատուկ երկյուղածությամբ ու իր սերը գործի վերածի, որպեսզի մոր մայրամուտին ստանա նրա բացառիկ օրհնությունը. *«Օրհնեալ լինես, զավակս»:* Իմ կարծիքով ավելի մեծ երջանկություն չկա, քան մոր օրհնությամբ ապրելը:

Վաշինգտոն Ըրվինգը ասել է, թե՝ *«Մի հայր իր զավակից կարող է երես թեքել, եղբայրներն ու քույրերը իրար հետ կարող են մոլեգին թշնամիներ դառնալ, ամուսինները կարող են թողնել իրենց կանանց և հակառակը՝ կանայք՝ իրենց ամուսիններին, բայց մի*

մոր սերը կհանդուրժի բոլորին լավի կամ վատի պարագայում էլ, նույնիսկ աշխարհի երեսին բոլորի կողմից դատապարտվելու պարագայում էլ մայրը կշարունակի սիրել իր զավակին, միշտ հույս ունենալով, թե մի օր նա ետ պիտի վերադառնա, գոջա ու դարձի գա իր վատ ճանապարհից: Մայրը միշտ հիշում է իր զավակի ժպիտները, թե նա իր մանկության ժամանակ իր մայրական գիրկը լցնում էր ուրախ ու զվարթ ծիծաղով: Հիշում է նրա մանկության ուրախ աղաղակները ու պատանեկության խոստումնալից վիճակը: Այս բոլորից հետո նա երբեք չի կարող մտածել, թե իր զավակը անարժեք մեկն է»:

Ուզում եմ ձեզ պատմել Հայաստանում ապրող մի 15-ամյա որբ աղջկա պատմությունը:

«Որբ աղջիկը փողոցում կանգնած տեսնում է մի փոքրիկի իր մոր ձեռքը բռնած անցնելիս: Նա ծիծաղում էր և մայրը ուրախ էր: Նրանք երջանիկ էին: Մայրն իր ձեռքում բռնել էր մի ամբողջ աշխարհ, էլ ոչինչ պետք չէր: Որբ աղջիկը թախծոտ աչքերով, հոգու կարոտի ճիչը սրտում, ուզում էր բղավել, ճչալ. «Երանի ես էլ իմ մայրիկի համար լինեի մի աշխարհ, թեկուզ ամենավատ մայրիկի...»: Ամենավա՞տ: Ոչ, մայրիկին բնութագրել նման խոսքով անկարելի է, աններելի: Մայրը սուրբ է, միշտ կատարյալ:

Նա հաճախ էր հանդիպում աղջիկների, որոնք առանց քաշվելու գանգատվում էին իրենց մայրիկներից: Զարմանում էր ու խիստ զայրանում: Նման դեպքերում նա գնում էր մի տեղ, մեկի մոտ, ում կարող էր հայտնել իր մանկական սրտի վրդովմունքն ու բողոքը: Նա, ում այցելում էր որբուկը, հասկանում էր ամեն բան...

Մայրության և գեղեցկության տոնն էր: Աղջիկը ծաղիկներ էր գնել՝ չիմանալով թե ո՞ւմ համար: Բոլորն էլ ծաղիկներ ունեին ձեռքերում. բոլորն էլ շնորհավորում էին միմյանց: Քայլերն էլի ուղղեց այնտեղ... Եկեղեցու գորշ ու խորհրդավոր պատից իրեն դիմավորեց

սուրբ ու ամենակատարյալ Մայրը: Նա հասկանում էր, մխիթարում ու հույս էր տալիս իրեն: Մոտեցավ, կանգնեց ու խոնարհվելով ծաղիկները դրեց նկարի առաջ և կամացուկ շշնջաց. «Դրսում գարուն է, նոր կյանք, զարթոնք...» «Շնորհակալ եմ, որ դու կաս, դու երբեք չես լքի ինձ: Ահա սա էլ...,- կմկմաց նա՝ մի քնքուշ ծաղիկ առանձնացնելով մյուսներից,- սա էլ խնդրում եմ փոխանցիր մայրիկիս: Ես գիտեմ՝ նա բարի է քեզ պես ու գեղեցիկ: Մայրերը միշտ էլ այդպիսին են»:

«Նկարից նայող սուրբի աչքերը կարծես ժպտացին, ճառագեցին անսահման քնքշություն, հուզում և սեր: Այդ պահին Աստվածամոր պատկերից նայում էր փոքրիկ աղջկա մայրիկը»

«Շնորհավոր տոնդ, մայրիկ»:

Կյանքից վերցված այս որբ աղջկա պատմությունը շատ հուզեց ինձ, վստահ եմ, որ ձեզ էլ կհուզի: Երանի՜ ոչ մի տեղ որբեր չլինեն: Իբրև իմ մոր զավակը նախ գրկում ու համբուրում եմ նրան և ապա ձեզ սիրելի մայրեր ու սրտանց շնորհավորում մորս և ձեր բոլորի տոնը:

Այս գեղեցիկ բանաստեղծությունը ձեզ բոլորիդ է նվիրում Հայաստանից Փիրուզա Վարդանյանը.

ՄԱՅՐԻԿԻՍ

Ա՜խ, ինչեր կտամ անուշ մայրիկիս.
Թե գանձ ունենամ, գանձերս կտամ.
Իմ միակ սերը նրան կընծայեմ,
Իմ հոգու վերջին փշրանքը կտամ:

Ամեն ինչ կտամ քաղցր մայրիկիս.
Միայն թե նրա բարդ հոգին կարդամ.
Իմ ամբողջ հոգով ես կնվիրեմ.
Միայն թե նրա փակ սիրտը բանամ:

Ու եթե նրա սիրտը ես բանամ.
Որքան վերքեր էլ ես տեսնեմ այնտեղ,
Իմ արցունքներով դրանք կլվամ
Եվ իմ մազերով դրանք կսրբեմ:

Ես այնտեղ բազում մոմեր կվառեմ.
Որ կյանքում երբեք-երբեք չհանգչեն,
Որ իմ մայրիկի ցավերը նրանց
Ախ, գոնե իրենց լույսով սփոփեն:

Ամեն զավակ հետևելով մեր Տիրոջ օրինակին պիտի սիրի իր մորը, պարզ հասկացողությամբ, թե նա իրեն կյանք է տվել, պետք է հարգի նրան իր համար արած անհամար զոհողությունների համար և զուրգուրա նրա վրա տկարության ու անկարողության տարիներին: Խրիմեան Հայրիկն ասում է, թե ծնողների օրինակը պատճենահանվում է զավակների մեջ: Ի՞նչ եք կարծում ծնող չսիրող, չգնահատող ու չհարգող զավակների երեխաները ի՞նչ պիտի սովորեն նրանցից: Պատկերացնո՞ւմ եք նրանց վիճակը, երբ երեխաները մեծանան ու նույնը անեն իրենց, ինչ որ իրենք արել էին իրենց ծնողներին: Ավա՜ղ, գուցե անդրադառնալու համար արդեն իսկ ուշ լինի: Նրանց այլևս չեն կարող փրկել ոչ իրենց հարստությունը, ոչ ունեցվածքն ու թանկագին մեքենաները, ոչ տիտղոսներն ու վկայականները, մի խոսքով ոչ մի բան: Նրանց ներսից մի բան միշտ պիտի անհանգստացնի իրենց. *«Խիղճդ, խիղճդ, ո՞ւր էր խիղճդ»:* Բոլոր մայրերը ներող են, նույնիսկ գերեզմանում: Սակայն Աստված կների՞: Գուցե, քանի որ Նա էլ ներողամիտ է ու գթասիրտ: Բայց ես վստահ չեմ: Աստված սիրում է մայրերին, քանի որ նրանց ստեղծելու շնորհքը տվեց: Երիտասարդ զավակներ զգույշ եղեք Աստծու վրեժխնդրությունից: Մենք դատավոր չենք: Աստված ասաց. *«Իմն է վրեժխնդրությունը»:* Դուք դա Ինձ թողեք և ես գիտեմ թե ինչ պիտի անեմ: Ուրեմն եկեք սիրենք մեր մայրերին առանց որևէ ակնկալության, երբ նրանք ողջ են ու պետք ունեն մեր սիրույն և օգնության:

Արժանաշնորհ Տ. Վարդան Ավագ Քեն. Տյուլկերյանի խոսքը մոր մասին.

«...Ո՛վ դուք, որ մայր պիտի լինեք, մի՛ թողեք, որ ձեր գուրգուրանքից զրկվելով զավակը վաղաժամորեն խամրի և ձեզ համար մի դժբախտ օր, իր անառակություններով ու ոճիրներով անպատվի ձեզ, անպատվի իր ազգն ու հայրենիքը:

Հիշեցեք ու մեծարեցեք ձեր աննման մայրերին, որոնք ձեզ հետ չեն այլևս, բայց առավել սիրեցեք ու գուրգուրացեք հանգստյան տներում ձեր կարոտով տոչորվող ձեր անմխիթար մայրերի համար, որոնք դեռ ապրում ու ամենից ավելի այսօր պետք ունեն ձեր բոլորանվեր սիրույն և հոգատարության:

«Մեծանուն գրագետ Արշակ Չոպանյանը Փարիզում ներկա է լինում մի հայ նկարիչի ցուցահանդեսին և բոլոր նկարները ուշադիր դիտելուց հետո, կանգ է առնում յուղաներկ մի պատկերի առջև, ուր երիտասարդ մի աղջիկ ամուր գրկել էր ալևորված մի կնոջ:

- Ի՞նչ է այս նկարի խորհուրդը, որ այս երկու կանայք իրար ամուր գրկած ողջագուրվում են:

- Այս ծերունազարդ կինը ներկայացնում է զոհողությունը,- պատասխանում է նկարիչը,

Իսկ այս երիտասարդուհին՝ երախտագիտությունը:

- Օ", հիմա եմ հասկանում, թե ինչո՞ւ այդպես ջերմորեն գրկել են իրար,- պատասխան է տալիս գրագետը,- *որովհետև հազվադեպ է պատահում, որ կյանքում այս երկու առաքինությունները իրար հանդիպեն»:*

Պողոս Առաքյալը հորդորում է բոլոր զավակներին, նրանց ուշադրության հանձնելով այս խոսքերը. *«Որդիներ, հնազանդ եղեք ձեր ծնողներին ի Տեր, որովհետև դա է ճիշտը» (Եփես. 6:1):* Հնազանդվել նշանակում է հարգել ու սիրել:

Սիրելի Մայրիկ և սիրելի Մայրեր, իմ աղոթքս է, որ դուք միշտ երջանիկ լինեք, ուրախ ու հպարտ, որ բարի և արդար գործ եք կատարել զավակներ ծնելով ու ազգը հարստացնելով: Եթե կան զավակներ, որոնք ցավեցնում, չեն գնահատում ու չեն սիրում ձեզ, դա իրենց վնասն է: Աստծու դատաստանը մոտ է նրանց համար: Ձեր շունչը նրանց մեջն է, վաղ թե ուշ նրանք էլ ուզեն կամ չուզեն պիտի շարունակեն ձեր բարի գործը: Հանգիստ և ապահով եղեք ու մի լացեք: Ձերն է Աստծու Տան մեջ վայելելու սերը և ուրախությունը: Ամեն:

ԱՊՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿԸ

«Մէր անուն Յիսուս, սիրով բով ճմլեա,
սիրտ իմ քարեղէն»

««Մեր քո անունը Հիսուս է, քո սիրով ճմլիր,
իմ քարեղեն սիրտը»
(ՍՈՒՐԲ ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ)

Այս խոսքերը 12-րդ դարի մեր հրաշալի Կաթողիկոս-ներից Ս. Ներսես Շնորհալու *«Առավոտ Լուսո»* երգի բառերից է:

Կյանքում կարող ենք հանդիպել մոլորված, հուսահատված ու դժգոհ, մարդկանցից հեռու ապրել ցանկացող, բարեկամությունից հոգնած, ընկերներից խաբված, աշխատանքում ձախորդ և հոգեպես ցնցված մարդկանց, որոնք աննպատակ ապրում են: Կարծես թե նրանք ապրում են միայն պարզապես ապրելու համար:

Սակայն անշուշտ կյանքն ունի իր նպատակը: *«Ո՞րն է այն»:*

Մարդիկ կամ Միություններ, կրոնական թե աշխարհիկ, կյանքում տեսնում են տարբեր նպատակներ: Ըստ ոմանց մաքուր և արդար ապրելը կյանքի գերագույն նպատակն է, ուրիշների կարծիքով' գլխավորը և ամենակարևորը հոգեկան մաքրությունն է Աստծուն հասնելու համար:

Քրիստոնեությունը աստվածային ճշմարտություններին հավատացողների համար ստեղծել է ընտանեկան կյանքի ամենակատարյալը: Դա Աստծու ընտանիքն է, այսինքն՝ Եկեղեցին: Ինչո՞ւ կատարյալ, որովհետև ընտանեկան կյանքը վիրավոր է՝ նախանձի, ամուսնալուծումների և ծերության պատճառով ու մահվան անխուսափելիությամբ: Մինչդեռ Աստծու ընտանիքի անդամ դառնալ նշանակում է Քրիստոսին ժառանգակից լինել, ինչպես վկայում է Սուրբ Մկրտության Խորհրդի ընթացքում արտասանվող բանաձևը. *«Այս անունով Աստծու ծառան, (խոսքը երախայի (չմկրտվածի) մասին է) եկել է երախայությունից Մկրտության համար, մկրտվում է Հոր, Որդու և Սուրբ Հոգու անունով: Գնվելով Քրիստոսի* արյունով մեղքի ծառայությունից, ընդունում է Երկնավոր Հոր որդեգրությունը,

լինելու Քրիստոսի ժառանգակիցը և Սուրբ Հոգու Տաճարը» (Մաշտոց):

Աստծու ընտանիքին անդամ դառնալը ամենամեծ ու ամենաբարձր պատիվն է: Որով, մարդիկ երբ որ ձեզ ատեն, բարեկամներն ու ձեր սիրելիները ձեզանից հեռանան և գործընկերները ծաղրեն ձեզ, հիշեցեք, թե դուք ո՞ր ընտանիքին եք մաս կազմում...: Այդ զգացումը բավական է, որ դուք ձեզ ուժեղ և ապահով զգաք:

Այս սուրբ ընտանիքը, սակայն ունի իր ներքին օրենքները, այնպես, ինչպես ամեն ընտանիք ունի, որոնցով կառավարվում է և ավելի հեշտ է դառնում կյանքը: Աստծու ընտանիքի օրենքները սակայն խտացված են մի կանոնում, որը ինքնին իսկ մարդկային կյանքի նպատակն է: Այդ *«Օրենքը»* կրում է Աստծու անունը՝ *ՍԵՐ:*

Աստված Ինքը սիրո աղբյուր լինելով, ուզում է, որ մենք այս կյանքում սիրել սովորենք: Նրա հայրական ամենախոր ցանկությունն է, որ մենք սիրենք մեր նմաններին, այսինքն՝ պահենք Ավետարանի ոսկե օրենքը. *«Այն ամենը, ինչ կկամենաք, որ մարդիկ ձեզ անեն, այդպես և դուք արեք նրանց» (Մատթ. 7:12),* որովհետև ուրիշին սիրելը՝ այնքան էլ հեշտ բան չի, երբ մարդը եսասեր է: Մենակության մեջ չենք կարող մարդ սիրել, այլ պետք է շրջապատված լինենք նույնիսկ երբեմն բարկություն պատճառող, զանազան թերություններ ունեցող, վտանգավոր ու ոչ ուսյալ մարդկանցով: Այդպիսի ժամանակ է երևում մարդու սերը իր նմանների նկատմամբ: Մեր ունեցած սիրո աստիճանով պիտի գնահատվենք: Մեր մահից հետո Աստված երբեք մեղ չպիտի հարցնի թե դրամատան մեջ ինչքա՞ն դրամ ունենք, ոչ էլ պիտի հարցնի մեր անձնական նախասիրությունների մասին, այլ՝ թե ինչպիսի՞ վերաբերմունք ցույց տվեցինք մարդկանց, մանավանդ երբ նրանք կարիքի, դժբախտության ու նեղության մեջ էին: Սիրո ամենամեծ արտայայտությունը ուրիշին ժամանակ տրամադրելն է:

Հետաքրքիր մի զրույց տեղի ունեցավ իմ և երեսնամյա մի երիտասարդի միջև, որ գիշեր ցերեկ վաղքի մեջ էր: Իմ հարցը այն էր, թե՝ *«Ի՞նչ է իր կյանքի նպատակը, ինչո՞ւ է այդքան վազում կամ ո՞ւր և ինչի՞ է ուզում հասնել»* Նրա պատասխանը կարծես այս դարի բոլոր երիտասարդների մտածումն էր. *«Տեր Հայր, քանի ուժս տեղն է, վազում եմ,*

որպեսզի հարստանամ, այսօր այս երկրի մեջ նյութն է իշխում: Եթե դրամ ունենամ, ուրեմն ինձ բանի տեղ կդնեն: Այս երկրում եթե դրամ չունես, ուրեմն մարդ չես»: Նրա պատասխանից անշուշտ ես տխրեցի, վստահ եմ, որ զուր էլ ուրախ չեք, որ մեր երիտա-սարդները այսպիսի նպատակ ունեն:

Ակամայից հիշեցի իմ երիտասարդության տարիները, երբ փոքր տարիքից սկսեցի վազել, հավաքել ու կուտակել. ուղիղ տասնչորս տարի, սակայն երբ ժամանակը հասավ, ես սկսեցի հավաքածս բաժանել: *«Ի՞նչ էր հավաքածս, դրա՞մ, հարստությո՞ւն, ունեցվա՞ծք»:* Ո՞չ, քավ լիցի: Բաժանածս տասնչորս տարի հավաքած ու կուտակած իմ հավատքը և սերն էր, որոնք անշահախնդիր կերպով երեսուներեք տարի շարունակ իբրև Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու ներկայացուցիչ բաժանեցի ու բաժանում եմ իմ ժողովրդի բոլոր զավակներին թե Հայրենիքում և թե վերջին տասներկու տարիները հեռավոր Հյուսիսային Ամերիկայում: Առաքինություններ, որոնք ոչ մեկը չկարողացավ խլել ինձանից, որովհետև դրանք նյութական ու տեսանելի չէին, այլ հոգեկան հարստություններ էին: Նույնիսկ, երբ իմ ընտանիքի հետ տեղի ունեցավ մի տխուր դեպք ու մենք կարելի է ասել ամբողջությամբ կորցրեցինք մեր տարիների հավաքած նյութական ունեցվածքը, սակայն փառք Աստծու, ես պահեցի իմ հավասարակշռությունը, որովհետև հոգեպես հարուստ էի. հավատքս ու սերս ուժեղ էին: Աստված օգնեց, որպեսզի ես ավելի ուժ առնեմ, չհուսահատվեմ և շարունակեմ իմ կյանքը: Շնորհակալ եմ Քեզանից Տեր Աստված ու փառք եմ տալիս, որ ձեռքդ մեկնեցիր ու ինձ ավելի Քեզ մոտեցրիր: Նյութական ունեցվածքս տարիների ընթացքում տղայիս հետ ձեռք-ձեռքի տված նորից ետ բերեցինք, սակայն եթե կորցնեի հավատքս ու սերս, երբեք էլ ոտքի չէի կարող կանգնել: Հիմա պարզ է չէ՞, թե ինչո՞ւ տխրեցի երիտասարդի պատասխանից: Նրա կյանքի նպատակը ժամանակավոր էր, իսկ եթե կորցներ հավաքած միլիոնները, ինչպե՞ս պիտի կարողանար դիմանալ, ի՞նչ ուժով, որը չուներ: Վստահ չեմ, որ կդիմանար, ինքնասպանները ճիշտ այդպիսի հոգեկան վիճակում են լինում, երբ կորցնում են տարիներով հավաքած ու չվայելած տեսանելին' նյութական ունեցվածքը: Ինչո՞ւ, որովհետև նրանց կյանքի նպատակը դրամն է եղել: Հիշում եք չէ, թե ինչ պատասխան

տվեց ինձ երիտասարդը. *«Այս երկրում եթե դրամ չունես, ուրեմն մարդ չես»:* Ցավալի է: Սիրելի երիտասարդ, քեզ պատասխանելով, ասեմ, որ դրամը պետք է լինի ոչ թե նպատակ, այլ իբրև միջոց, հարստությամբ լավ ու բարի գործեր կատարելու համար: Երանի իմ ձայնը լսելի լինի բոլոր երիտասարդների մոտ:

Տեսնենք, թե երջանկահիշատակ Վազգեն Վեհափառը ի՞նչ է ասում այս մասին.

«Առանց անկեղծության ամեն բան կձախողի: Ու չկարծվի թե այնքան հեշտ բան է ինքնիրեն ճանաչելու անկեղծությունը ունենալ այդ հնարավորությունը, պետք է ասեմ այդ հոգեկան ուժը, կախում ունի մեծ չափով մարդու ստացած դաստիարակությունից:... Մակերեսային մի դաստիարակություն, արտաքին փայլ ունեցող մի դաստիարակություն տանում է դեպի ինքնակեղծում ու ցամաքեցնում ինքնիրեն ճիշտ ճանաչելու անկեղծության աղբյուրները... Մի ազգ չի ապրում միայն իր նյութական բարիքներով, չի ապրում միայն իր մտքի և զգացումի արտահայտություններով, ինչպես են արվեստներն ու գրականությունը, չի ապրում միայն հանճարեղ անհատների գործերով, այլ ապրում է նաև պատվի և արժանապատվության զգացումներով, իր «մենք»-ի գիտակցությամբ և զոհաբերության ոգով, իր ազատ և հպարտ ապրելու կամքով, մի խոսքով իր բարոյական նկարագրով»:

Իբրև Աստծու պատկերով ստեղծված, սակայն մեղավոր ու անցավոր մարդիկ, ինչպե՞ս կարող ենք հաղթահարել կյանքի դժվարին կողմերը' իր բոլոր երեսներով: Հարց է:

Կարծում եմ այս պատմությունը որոշ չափով կարող է լուսաբանել մեզ:

«Պարսից Պերոզ Շահը չափազանց թույլ և տկար մի մարդ լինելով ինքնիրեն երբեք երջանիկ չէր զգում: Մի օր իր խորհրդատուին հարցնում է. «Ինչպե՞ս կարող եմ ճշմարտությունը գտնել և ո՞վ կարող է իմ ցավը մեղմացնել ասա ինձ ու ես այն փորագրեմ կտամ ոսկու վրա, միշտ աչքիս առջև պահելու համար»:

Խորհրդատուն, որը կյանք տեսած մի ծերունի էր, հուշում է Շահին, որ պատրաստել տա մի ոսկե

մատանի քաղաքի խեյացի ու անվանի ոսկերիչներից՝ վարպետ Սարգսին: Շահը անմիջապես կանչել է տալիս ոսկերիչին և հանձնարարում, որ նա պատրաստի ոսկու վրա աշխարհի ամենագեղեցիկ մատանին. «Սակայն,- ասում է Շահը,- ինձ համար մատանուց ավելի կարևորը նրա վրա գրված այն կարճ ու իմաստուն խոսքն է, որը թե պիտի ուրախացնի ինձ, երբ տխուր եմ և թե պիտի լացացնի, երբ ուրախ եմ»: Ա՜յ քեզ տարօրինակ ցանկութիւն,- կասեր մեզանից ամեն մեկը:

Նույնը մտածեց նաև ոսկերիչ Սարգիսը և տխրեց Շահի հրամանից, բայց հրամանը հրաման էր և հնարավոր չէր չկատարել:

Նա ամուսնացած էր և ուներ երկու անուշիկ զավակներ:

Տուն գալով, ոսկերիչը առաջին հերթին երկու օրում պատրաստում է մատանին, սակայն նրա մտահոգությունը մատանու վրա գրվելիք իմաստուն խոսքն էր: Երբ չկար: Լացելու աստիճան տխուր ու մտածմունքի մեջ էին ինքն ու կինը: Նրա ութը և տասը տարեկան զավակները երբ տեսնում են, որ իրենց հայրը լալիս է, մոտենում են նրան, գրկում ու համբուրում և պարզ միամտությամբ հարցնում. «Հայրիկ, ինչո՞ւ ես լալիս»: Հայրը գրկում, համբուրում է նրանց ու բացատրում իր վիճակը, խնդրելով, որ նրանք միայն աղոթեն իր համար: Փոքրիկները իրար երես են նայում: Մի պահ լռություն է տիրում ու հանկարծ տասը տարեկան տղան իր անմեղ գառնուկի պես աչքերով նայում է հորն ու ասում. «Մի նեղվիր հայրիկ, այս էլ կանցնի»:

Ոսկերիչը ուժեղ ցնցում է ապրում, նրա շրթունքները սկսում են շարժվել: Նա լուռ աղոթում էր. «Գտա, Աստված խոսեց մեր անմեղ զավակի բերանով: Այս էլ կանցնի»: Եվ անմիջապես մատանու վրա գրում է այս խոսքը՝

Շահը շատ բարկացած ու ջղային վիճակ ուներ: Մատանին իրապես հրաշալի էր: Կարդալով նրա վրա գրված խոսքը, նա միանգամից ժպտում է ու ասում.

«Ուրեմն ինչո՞ւ տխրեմ ու սիրտս ցավեցնեմ մի նեղության համար, որը ժամանակավոր է և պիտի անցնի»: Այս խոսքերը ասելուց հետո նա բավական խոշոր գումարով վարձատրում է ոսկերիչին, որն իր անմեղ զավակի բերանով մեծ ճշմարտության դուռն էր բացել մի ճշմարտություն, որը կյանքի բոլոր փորձառությունների մեջ խորապես բարերար ազդեցություն ունի. «Այս էլ կանցնի»:

Այս պատմությունը մեզ դաս է տալիս, հասկացնելով, թե ինչ էլ լինենք՝ շահ, թագավոր, նախագահ, լավ պաշտոն ու հարստություն ունեցող, *մի խոսքով ամեն բան, որով հնարավոր կլիներ «վայելելու այս աշխարհը և ուտել, խմելով անց կացնելու այս կյանքը», ինչպես* շատ անգամ ասում են կյանքի նպատակ չունեցող որոշ մարդիկ, սակայն մեկ է մեր ժամանակը հասնելու է: Մտածենք միայն, թե ի՞նչ ենք թողնելու: Բայց մտածելու պետքը չկա, Աստված մեզ արդեն իսկ ուղեցույց է և ցույց է տալիս Իր սիրո ճանապարհը:

Մնում է, որ մենք Աստծու սերը ունենանք միմյանց նկատմամբ ու այն թողնենք իբրև հավիտենական հիշատակ մեր սիրելիների սրտում:

«Ընտանեկան խնդիրներ ունեցող մի հայր ասում է, թե չի հասկանում, թե իր կինն ու զավակները ի՞նչ են ուզում իրենից, երբ ամեն ձևով բավարարել է նրանց՝ դրամ, տուն, մեքենա, ուսում, շրջապտույտներ, հաճույք ու ամեն բարիք: Ծանոթ լինելով նրա հաճախակի բացակայություններին, գործի բերումով կամ անձնական հաճույքի, նրան պատասխանեցի.

- «Կինդ ու զավակներդ քեզ են ուզում: Նրանք քո աչքերիդ, ականջներիդ, իրենց հանդեպ հետաքրքրությանց և ի վերջո քո տրամադրելիք ժամանակիդ կարիքը ունեն, որի միջոցով իրենց նկատմամբ քո ունեցած սերը պիտի տեսնեն»

Ուրեմն, հիմա է մեր սերը արտահայտելու ժամանակը: Հիմա պետք է որոշում տանք, որովհետև ժամանակը մեզ չի պատկանում և վաղը ուշ կլինի, քանի որ չգիտենք, թե ապրելու ինչքան ժամանակ ունենք: Հիմա է ժամանակը իրար սիրելու, հիվանդին այցելելու, կարիքավորներին օգնելու, բանտարկյալներին տեսության գնալու, որովհետև

ամեն ինչ կարող է միանգամից փոխվել. մարդիկ մեռնում են, մանուկները մեծանում են և երբեք էլ ապահովություն չունենք՝ սպասելու վաղվան:

Հիմա պա՞րզ է, չէ, թե ի՞նչ է կյանքի նպատակը: *«Միայն ու միայն Մեր»:*

Ահա այդ սերը, Աստծու միջոցով տալիս է մեզ Հայաստանյայց Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին ու Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը: Ինչքան շուտ մոտենաք նրան, այնքան սերը ավելի խոր և օրհնությունը շատ կլինի: Ուրեմն շտապեցե՛ք, մոլորյալներ և մանավանդ ճշմարիտ հավատքից հեռացածներ, Հայ Եկեղեցին իր գիրկը բացած ձեզ է սպասում, որպեսզի ձեր հոգսը, նեղությունները և դժվարությունները թեթևացնի ու ձեզ տա հոգու և մտքի խաղաղություն ու հանգստություն: Ամեն:

ժողովրդի միջից մեկը նրան ասաց. *«Վարդապետ, ասա եղբորս, որ ժառանգությանը ինձ հետ բաժանի»:* Եվ Նա ասաց. *«Ով մարդ, ինձ ո՞վ դատավոր կամ բաժանարար կարգեց ձեր վրա»:* Ապա ժողովրդին ասաց. *«Տեսեք, որ զգույշ լինեք ամեն տեսակ ագահությունից, որովհետև մարդու կյանքը իր կուտակած հարստության մեջ չէ» (Ղուկ. 12:13-15):*

Մեր Եկեղեցու նշանավոր Հայրերից Մաղաքիա Արք. Օրմանյանի բացատրությունը.

«Ահա մի միջադեպ ևս, որը առիթ է ընծայում Հիսուսին' խոսել աշխարհի բարիքների մասին: Մի օր Հիսուս քարոզում էր, երբ հանկարծ ժողովրդի միջից մի ձայն լսվեց. - *«Վարդապետ, մեր հայրը մեռավ պետք է եղբորս հետ ստացած ժառանգությունը բաժանենք, բայց եղբայրս ինձ զրկում է ե ողջ ունեցվածքը ցանկանում է գրավել, դու, որ պատրաստ ես խեղճերին օգնել համոզիր եղբորը, որ արդարությամբ իմ բաժինը տա»:* Հիսուս չէր զլացել օգնել ոչ մի խեղճի, եթե դիմել էին Իրեն, սակայն երկու հիմնական պատճառով մերժեց այդ բողոքողին:

«*Առաջին*, նախ, որ պարզ բարերարության մի գործ չէր առաջարկվածը, այլ *օրինական ու դատական:* Ան հրաժեշտ էր լսել նաև մյուս եղբորը' իմանալու համար, թե ինչո՞ւ է զլանում եղբոր բաժինը տալ կամ իրո՞ք բողոքողը զրկված մեկն էր, թե ուղղակի այս ձևով ցանկանում էր խաղ խաղալ: Հետեաբար Հիսուս պատասխանեց. *«Ե՞րբ ես լսել, թե այս երկրում դատավորի պաշտոն եմ ստանձնել որ Ինձ բողոք ես ներկայացնում, կամ ե՞րբ եմ Ես ժառանգություններ բաժանելու ե իրավարարի գործ կատարել, որ դիմում ես Ինձ» (Ղուկ. 12:13)»:*

«Երկրորդ պատճառը' *բարոյական էր:* Մեր Տերը շարունակ այս աշխարհի բարիքն անարգելու, ինչքից ու ստացվածքից հրաժարվելու, միայն բարոյական ու հոգևոր բարիքները որոնելու քարոզ էր խոսել և բոլորովին էլ հար-

մար չէր երկու եղբայրների նյութական շահով զբաղվել, մեկին կամ մյուսին ավելին ստանալուն օգնել, որ նշանակում է քաջալերել ագահության զգացմունքն ու մտածումը: Ահա այս է Հիսուսի ասածը. *«Ամենքդ էլ զգուշացեք դրամ ու հարստություն ձեռք բերելու մտածումից, որովհետև մարդու ճշմարիտ կյանքն ու հոգու օգուտը ունեցվածքի շատությունից չէ»* և շարունակում է. *«Ով իր երջանկությունը հիմնում է գանձերի, ինչքերի ու վայելքների վրա, զանց է անում իր համար երկնավոր գանձեր, հոգևոր հարստություններ ու վայելքներ ստեղծելը: Նույնպես է նաև նա, ով իր անձի համար գանձ կհավաքի և Աստուծով չի հարստանա»» (Ղուկ. 12:21) (Մաղաքիա Արք. Օրմանյան, «Համապատում», Ս. էջմիածին, 1997, էջ 405):*

Եվ Իր աշակերտներին ասաց. *«Դրա համար էլ ասում եմ ձեզ. հոգ մի արեք ձեր հոգու համար, թե ինչ եք ուտելու, ոչ էլ մարմնի համար, թե ինչ եք հագնելու, որովհետև հոգին առավել է, քան կերակուրը, և մարմինը՝ քան՝ հագուստը:... Ձեզնից ո՞վ հոգս անելով, կկարողանա իր հասակի վրա մեկ կանգուն ավելացնել:... Եվ դուք մի մտահոգվեք, թե ի՞նչ եք ուտելու կամ ի՞նչ եք խմելու, և մի մտատանջվեք... Իսկ ձեր Հայրը գիտե, որ այդ ամենը պետք է ձեզ: Այլ դուք հետամուտ եղեք Աստծու արքայությանը, և այդ ամենը ավելիով կտրվի ձեզ»... (Ղուկ. 12:22-31):*

Երբ Հիսուս խրատում է ասելով, թե հոգու և մարմնի կարիքների, կերակրի ու հագուստի անհրաժեշտության մասին մի մտածեք, ուզում է ասել, որ հոգին կյանքից ու մարմնից, ապրելուց, կերակրից ու հագուստից ավելի արժեքավոր պիտի համարվի: Աստված, որ մտածում է և խնամում ագռավին, ծաղիկներին և այլ թռչունների, որոնք առանց սերմանելու, հնձելու և հավաքելու շարունակում են իրենց կյանքը, ուրեմն ինչքա՜ն *ավելիով պիտի հոգա Իր իսկ ստեղծած մարդու մասին,* որն առավել է, քան թռչուններն ու բույսերը: Մարդը հակառակ իր աստվածային ծագման, առանց Աստծու օգնության, իր ցանկությամբ չի կարող նույնիսկ իր հասակի վրա մի կանգուն անգամ ավելացնել, զարմանալիորեն

այս իմանալով հանդերձ, համարձակվում է մտածել, թե առանց Աստծու օգնության սեփական ուժերով կարող է ավելի մեծ արդյունքի հասնել: Շուշան ծաղիկը, որին ոչ մեկը չի ջրում, չի խնամում, ավելի գեղեցիկ է, քան Սողոմոն իմաստունը իր ողջ հարստությամբ և կարողությամբ: Միայն մի տարբերություն կա, շուշանը ծաղիկ է, այսօր՝ թարմ է, վաղը՝ կարող է չորանալ, մյուս օրը' կրակի բաժին դառնալ, բայց մարդը իբրև Աստծու կատարյալ ստեղծագործությունը անշուշտ որ ավելի բարձր է, քանի որ օժտված է Նրա անմահ հոգով: Մենք իբրև քրիստոնյաներ հավատում ենք, որ Աստված կա և ամեն ինչ Նրա տնորենությամբ է կատարվում:

Այնուհետև Հիսուս շրջվելով Իրեն հետևող բազմությանը՝ փոքրիկ հոտին, քաջալերում է նրանց, որ երբեք չվախենան արտաքին դժվարություններից և չարի որոգայթներից: Երկնավոր *Հայրը Երկնքի Արքայությունն ու Ավետարանը տվել է փոքրիկ հոտին: Մեր Տիրոջ խոսքերն են. «Վաճառեցեք ձեր ինչքերը և ողորմություն տվեք. և ձեզ համար շինեցեք չհնացող քսակներ և անհատնում գանձեր երկնքում, ուր ոչ գողն է մոտենում, և ոչ ցեցը' փչացնում, որովհետև, ուր որ ձեր գանձն է, այնտեղ և ձեր սրտերը կլինեն» (Ղուկ.* 12:33-34):

Այս աշխարհի գանձերին սպառնում են գողերը, իսկ ցեցերը՝ վնասում են շտեմարանները, սակայն Երկնքում Աստծու գանձին ոչ գողն է մոտենում, ոչ ցեցն է ապականում, սիրտն էլ հանգիստ ու ապահով է: Մարդը միշտ սրտով կապված է իր գանձին. նրա մասին է մտածում և վախենում սպառնացող վտանգներից: Երկրային գանձին կապված սիրտը միշտ դողում է, իսկ երկնայինին կապվածը՝ ազատ է վախից ու կասկածից և երջանկություն է վայելում, (Մաղաքիա Արք. Օրմանյան, *«Համապատում»,* Ս. էջմիածին, 1997, էջ 406408):

Այս պատմությունը ուսանելի է.

«Երկու եղբայր են լինում, մեկը հարուստ, մյուսը՝ աղքատ: Հարուստ եղբայրը քրիստոնեական սիրով լցված լինելով, միշտ օգնում է իր աղքատ եղբորը երկար ժամանակ անձանձրույթ կերպով: Մի օր էլ մտածում է իր եղբորը

հարստացնել: Տոպրակով բավական մեծ գումար տանում ու դնում է մի տան անկյունում, այնտեղ, ուր նրանք սովորաբար քայլում էին: Եղբոր թևը ընկնելով, հարուստը նրան տանում է ճիշտ այն ճանապարհով, ուր նա պահել էր տոպրակով դրամը: Դրամին հասնելու համար ընդամենը մի քանի քայլ էր մնում: Հանկարծ աղքատը ասում է իր հարուստ եղբորը. «Եղբայր, եթե ես կուրանամ, ինչ ես կարծում, կարո՞ղ եմ քայլել առանց որևէ մեկի օգնության» և չսպասելով նրա պատասխանին, ուզում է, որ նա փորձելու համար իր աչքերը կապի: Հարուստ եղբայրը նրան հորդորում է մի փոքր էլ սպասել, որից հետո նրա խնդրանքը կկատարվի: Սակայն փոքր եղբայրը չի լսում նրան ու համառորեն ցանկանում է, որ նա իր աչքերը կապի: Շատ խնդրելուց, աղաչելուց հետո, հարուստ եղբայրը տոպրակով դրամից մի քանի քայլ այս կողմ, ստիպված կապում է նրա աչքերը: Աղքատ եղբայրը աչքերը կապած անցնում է դրամի կողքով: Հարուստ եղբայրը հասկանում է, որ եղբոր գրքում գրված է, որ նա այդպես էլ աղքատ պիտի մնա: Երբ հասնում են դրամին, եղբայրը վերցնում է այն ու շարունակում քայլել իր աղքատ եղբոր հետ»:

Հոգևոր հարստություն ունենալ նշանակում է աղոթքով ու հավատքով մաքրված և սրբված արդար գործեր կատարել, գործածել Աստծու տված բարիքներն ու պարգևները, օգնել կարիքավորին, խնամել հիվանդին, այցելել բանտարկյալներին և հոգատարություն ցույց տալ նրանց նկատմամբ, իսկ ամենակարևորը՝ անշահախնդիր սիրել մարդկանց: Հոգևոր հարստությունը մնայուն արժեք է, ոչ կարող է գողացվել և ոչ էլ կփչանա: Աշխատենք հոգեպես հարուստ լինել և հայ քրիստոնյային վայել կեցվածքով ու վարմունքով օրինակ հանդիսանալ մեր նմաններին: Ամեն:

ՆԵՂՈՒԹՅԱՆ
ՕԳՏԱԿԱՐՈՒԹՅՈՒՆԸ

«...Ով ասում է, թե ինքը Նրա (Աստծու) մեջ
է բնակվում, պարտավոր է այնպես ընթանա
ինչպես որ Նա էր ընթանում» (Ա. Հովհ. 2:6)

Երբ փորձության մեջ ենք ընկնում, մտաբերում ենք Հիսուսին: Գիտենք, որ Նրա ճանապարհը շատ փշոտ ու նեղություններով և նախատինքով լիքն էր: Հրեաները միշտ Նրան խելագար, մոլորեցուցիչ և հմայող էին կոչում. *«Այս մարդը Աստծու կողմից չի, այլ մի մոլորեցնող է»: «Այս մոլորեցնողը, քանի կենդանի էր, ասում էր, թե՝ երեք օրից հարություն պիտի առնեմ» (Մատթ. 27:63):*

Երբ մարդը դժվարության կամ թշվառության մեջ է, նրա վիճակը ավելի ծանր է դառնում անընդհատ բողոքելով ու դժգոհելով: Այդպիսիները դժգոհելու փոխարեն, ընդհակառակը՝ պիտի օրհնեն, որպեսզի Աստված էլ իրենց օգնի, այսինքն ավելի լավատես լինեն, քան հոռետես, կյանքին նայեն պայծառ աչքերով և Աստծու տված բարիքները վայելեն միշտ Նրան փառք տալով:

Ընդհանրական Եկեղեցու հայրերից մեկն ասում է. *«Ինչպես շունը երբ սեղանի մոտ է մի պատառ ես նետում, մնում է և սպասում, որ էլի տաս ու չի գնում, այդպես էլ սատանան միշտ կանգնում է մեր առաջ բաց բերանով, սպասելով, թե երբ Աստծուն վիրավորող, հայհոյող ու դժգոհություն պարունակող բառ պիտի ասենք, որպեսզի այն բռնելով՝ նորից գա: Իսկ եթե միշտ գոհություն մատուցենք Աստծուն, քաղցի կմատնենք նրան և կստիպենք փախչել»:*

«Չես կարող լռել,- խորհուրդ է տալիս Ընդհանրական Քրիստոնեական Եկեղեցու նշանավոր Հայրերից՝ Հովհան Ոսկեբերան Հայրապետը,- *խոսիր, բայց ոչ թե հայհոյանք, այլ՝ շնորհակալություն հայտնիր, իսկ բողոքի փոխարեն՝ օրհնություն խնդրիր: Բարձր ձայնով կանչիր Տիրոջը՝ Նրան փառաբանելով: Դրանից սիրտդ*

կթեթևանա, քանի որ քո շնորհակալության պատճառով սատանան կփախչի և Աստծու օգնությունը արագ կհասնի քեզ»:

Անցյալ դարի Կ. Պոլսի մեր Լուսամիտ Պատրիարքներից Շնորհք Գալուստյանը ասում է.

«Մեզ համար շատ ուսանելի են Հոբ Երանելիի, Հայր Աբրահամի և Հովսեփ Գեղեցիկի օրինակները: Նրանք որոշ ժամանակ ապրեցին ահաւոր աղքատության ու թշվառության մեջ, հակառակ դրան այդ նեղությունների մեջ իսկ մշտապես փառաբանում էին և օրհնում Աստծուն, մինչև ի վերջո կարողացան Նրա օգնությամբ ապրել խաղաղ և հանգիստ մի կյանք» (Շնորհք Պատրիարք Գալուստյան, *«Համաքրիստոնեական Սուրբեր»,* էջ 19):

Երկրորդ դարում ապրած Հուստինոս *«Մարտիրոս»-ի* վկայությամբ, *«Թեև քրիստոնյաները խաչվեցին, վայրի գազանների առջև նետվեցին, շղթաներին հարվածվեցին, այրվեցին, տանջվեցին, իրենց ստացվածքներից ու դիրքերից զրկվեցին, բայց չհրաժարվեցին իրենց կրոնից: Ընդհակառակը, որքան շատացան չարչարանքները, այնքան բազմացան քրիստոնյաները...»:*

Խաչի շուրջ հավաքվելով հրեաները ծաղրում էին Հիսուսին և իրենց գլուխները շարժելով' ասում. *«Վա՜հ, դու որ քանդում էիր տաճարը և երեք օրից այն շինում, փրկիր քեզ, եթե Աստծու Որդի ես, իջի՛ր այդ խաչից» (Մատթ. 27:40):* Երբ *«ծարավ եմ»* ասաց և ջուր ուզեց, նրա փոխարեն քացախ տվին, թքեցին Նրա երեսին, ծաղրելով ծնկի էին գալիս և այլ նեղություններ պատճառեցին Նրան:

Նույնիսկ Նրա աշակերտներից ոմանք վախենալով հետևեցին հրեաներին և այլևս չէին շրջում Հիսուսի հետ: Մեր Տերը այս նկատի ունենալով հարցնում է Իր տասներկու աշակերտներին. *«Միթե դո՞ւք էլ ուզում եք գնալ» (Հովհ. 6:68),* այսինքն' հետևել մյուս աշակերտների *օրինակին:*

Երջանկայիշատակ Շնորհք Պատրիարք Գալուստյանը ասում է.

«Հալածանքը քանդում է այն հավատքը, որը արմատ չի գցել մարդու հոգու խորքերում...: Աստված տվել է անհրաժեշտ ուժը բոլոր քրիստոնյաներին դիմանալու ամեն տեսակ հալածանքի, տառապանքի և փորձության: Երբ չենք դիմանում սրանց, այդ նշանակում է, որ կամ չենք գործածում Աստծուց մեզ շնորհված այդ զորությունը և կամ բոլորովին զուրկ ենք դրանից, ինչ որ համազոր է ասելու, թե հոգեպես քրիստոնյա չենք, և հետևաբար չենք ստացել այդ անհրաժեշտ զորությունը» (Շնորհք Պատրիարք Գալուստյան, «Համաքրիստոնեական Սուրբեր», էջ 26):

Պողոս Առաքյալը իր և քրիստոնյաների օրինակով հորդորում է դիմանալ նեղություններին. *«Մինչև այսօր և քաղցած մնացինք, և ծարավեցինք, և մնացինք մերկ, և բռնցքահարվեցինք, և մնացինք անկայան, և չարաչար աշխատեցինք մեր ձեռքերով, նախատում էին մեզ՝ օրհնում էինք, հայհոյում էին՝ աղոթում էինք.» (Ա. Կորնթ. 4:11-13):*

Այսօր մեզանից ո՞ր մեկը կարող է դիմանալ Պողոս Առաքյալի կրած չարչարանքներին ու նեղություններին. *«Հրեաներից, հինգ անգամ, քառասունից մեկով պակաս ծեծ կերա, երեք անգամ ձաղկվեցի, մեկ անգամ բարկոծվեցի. երեք անգամ նավաբեկության ենթարկվեցի. մեկ ցերեկ և մեկ գիշեր ծովի անդունդներում տառապեցի» (Ա. Կորնթ. 11:24-26):*

Հեթանոսաց Առաքյալը ոչ միայն իր, այլև Հիսուսի նեղությունների մասին էլ է խոսում. *«Նայենք Հիսուսին՝ հավատի զորագլխին, այն կատարելագործողին, որն իր առաջ դրված ուրախության համար հանձն առավ խաչը, արհամարհեց ամոթը և նստեց Աստծու աթոռի աջ կողմում» (Եբր. 12:2):* Մեր Տերը Իր աշակերտներին զգուշացրեց գալիք նեղությունների ու դժվարությունների մասին. *«Աշխարհում նեղություն պիտի ունենաք..» (Հովհ. 16:33):*

Եթե քրիստոնյա ենք, պիտի հետևենք Մեծ Վարդապետի օրինակին և գնանք Իր քայլած ճանապարհով, թեկուզ

և այն լինի փշոտ ու նեղություններով լի:

«Կարելի՞ է երևակայել մեր աշխարհը առանց քամու և փոթորիկի, առանց ձյունի և ձմեռի: Բույսերի աճման ու հատկապես ամրացման մեջ կարևոր դեր ունեն դրանք: Մի ծառ ինչքան շատ շարժվի, այնքան անհնարին է իր արմատները ավելի խորացնելու. Որքան ցրտին ենթակա է լինում, այնքան կարծրանում է: Ամենաամուր փայտերը գալիս են հյուսիսային գոտիներից և բարձրաբերձ լեռներից: Հալածանքն էլ ծառայում է ամրացնելու հավատքը, եթե այն արմատ բռնել է» (Շնորհք Պատրիարք Գալուստյան, «Համաքրիստոնեական Սուրբեր», էջ 26):

Ուրեմն նեղությունը օգտակա՞ր է: Իրապես զարմանալի է նույնիսկ մտածել այս հարցի մասին: Այո, ասում է Հիսուս: Ինչպե՞ս: Նեղությունները մեզ առաջնորդում են երկու մեծ ու կարևոր ճանապարհների:

ա. Նախ «մեղքը փախչում է մեզանից» և բ. «Հավատքի մեջ մեզ ավելի ամուր է պահում»: Բնականորեն ոմանք կարող են առարկել, թե՝ «Ինչ անենք, թողնենք, որ այն (նեղությունը) կորստյա՞ն մատնի մեզ»: Սխալ մտածում է ու հատուկ թերահավատներին: *«Ոչ թե նեղությունն է այդ անում, այլ՝ մեր ծուլությունը»: «Իսկ ինչ կարելի է անել դրանից խուսափելու համար»,* կարող է հարցնել մի ուրիշը: Եթե արթուն լինենք ու խնդրենք Աստծուն, որ մեր ուժից վեր մեզ փորձության չենթարկի: Եթե ճանաչենք և մեր մեջ Տիրոջը ունենանք, նույնիսկ եթե փորձություններն ու նեղությունները փոթորիկի պես ուժեղ փչեն, մեզ համար դրանք թեթև քամուց թռչող ճյուղ և տերև կարող ենք նկատել:

««Երբ տկար եմ, այն ժամանակ եմ զորավոր» (Բ. Կորնթ. 12:10), ասում է Պողոս Առաքյալը Կորնթացիներին ուղղած իր Երկրորդ թղթում:

«Կա մի գեղեցիկ պատմություն ոչխարի մասին, որը կաղում էր և հովիվից միայն հինգ մետր հեռու էր կանգնում: Մի անծանոթ հարցնում է այս ոչխարի մասին, թե ինչո՞ւ է կաղում և թե ինչո՞ւ իր կողքից երբեք

չէր հեռանում: Հովիվը բացատրում է, որ տվյալ ոչխարը մասամբ խուլ է ծնվել և հովիվի ձայնը չի լսում: Այդ պատճառով էշ միշտ վտանգի մեջ է լինում: Շատ անգամներ նա փրկել է ոչխարին վտանգից: Վերջ ի վերջո հովիվը ստիպված նրա սրունքին վնաս է հասցնում: Դրանից հետո ոչխարը սկսում է կաղալ, սակայն դրա փոխարեն հովիվի մոտից հեռու չի գնում ու զերծ է մնում վտանգից»:

Պողոս Առաքյալը խոսում է նմանօրինակ կաղության մասին, որը անվանում է *«մարմնի փուշ»:* Դա մի տեսակ երկարատև հիվանդություն էր, որը մեծ անհանգստություն պատճառեց նրան:

Երբ կյանքում հասնում ենք մի տեղ, ուր մարդկային ուժը մեզ բավարար չէ շարունակելու մեր ճանապարհը, կարող ենք երկու կարծիք ունենալ. կամ ձեռքերը վեր բարձրացնելով անձնատուր լինել և պարտությամբ մի կողմ քաշվել ու կամ էլ՝ Աստծուն գտնել և Նրա զորությամբ առաջ գնալ:

Մեր իսկական զորությունը մեր անզորության ու մեր թուլության մեջ է, որը մեզ մղում է Աստծուն խնդրել օգնության համար, որից հետո անօգնական մարդիկ դառնում են ամենակարող: Թեև մենք իբրև մարդիկ անօգնական ենք, սակայն կարող ենք *«ամեն բան անել Քրիստոսով, որը մեզ կուժեղացնի»:*

«Նեղությանս մեջ ես Տիրոջը դիմեցի և իմ Աստծուն աղաղակեցի.

Նա լսեց ինձ և իմ աղոթքի ձայնն իր սուրբ տաճարից,

Նրան ուղղված աղաղակս նրա ականջին է հասնելու» (Սաղմոս 17:7):

Ո՜վ Տեր մեր թուլություններն ու դժբախտությունները թող մեզ ավելի մոտեցնեն դեպի Քեզ, որպեսզի Պողոս Առաքյալի նման Քո մեջ գտնենք ամեն բան կատարելու ուժը:

Եթե մեր հույսը Աստծու վրա դնենք, երբեք չենք նեղվի ու չենք հուսահատվի, նույնիսկ եթե կողոպտվենք, հալածվենք ու տեսակ-տեսակ նեղությունների մատնվենք, քանի որ

երկնքում պիտի արձանագրվի մեր քաջությունը: Այնտեղ հավաքենք մեր բարեգործությունները և այս կյանքի մասին շատ չմտահոգվենք, որովհետև ինչ էլ լինեն երկրի վրա՝ ամեն ինչ ստվեր է ու երազ:

Պողոս Առաքյալն ասում է. *«Մեր թեթև նեղության առժամանակյա հաճախանքը (շարժումը) մեր մեջ առաջ է բերում հավիտենական փառք, որ գերազանցում է ամեն ինչ» (Բ. Կորնթ. 4:17):*

Մեր Տերը Լերան քարոզի Իր նշանավոր խրատականում ասում է.

«Երանի է ձեզ, երբ ձեզ նախատեն ու հալածեն և իմ պատճառով ձեր մասին ամեն տեսակ չար խոսք՝ սուտ ասեն: Ցնծացեք և ուրախացեք, որովհետև երկնքում ձեր վարձը շատ է, քանի որ այսպես հալածեցին մարգարեներին, որոնք ձեզնից առաջ են եղել» (Մատթ. 5:11): Զարմանալի, բայց ճշմարիտ խոսքեր են: Իրապես իբրև քրիստոնյա այնքան ուժեղ հավատք պիտի ունենանք, որ մեզ հալածողներին կարողանանք շնորհակալություն հայտնել, քանի որ Աստված ասում է, որ մեր վարձքը երկնքում կստանանք: Դժվար գործադրելիք մի բան է սա մանավանդ այս փշոտ ու նյութապաշտ աշխարհում, սակայն անկարելի չէ, եթե ճշմարիտ և ուժեղ հավատք ունենք:

Պողոս Առաքյալը խրատում է Կորնթացիներին- *«...Ինչքան բաժնեկից լինենք Քրիստոսի չարչարանքներին, նույնքան և Քրիստոսի միջոցով մեր մխիթարությունն էլ առավել կլինի. քանզի եթե նեղություն ենք կրում, այդ՝ ձեր մխիթարության և փրկության համար է...» (Բ. Կորնթ. 1:5-6):*

Եվ վերջապես՝ *«Ի՞նչ է նեղությունը, որ Հիսուսի և Նրա առաքյալների կողմից օգտակար է նկատվում»:*

Այս պատմությունը հետաքրքիր է.

«Միջին դարում մի ծուխի քահանա նկատելով, որ իր շրջանում աղքատները շատանում են ու նրանց զավակները դժվարությամբ են ապրում, դիմում է երևելի մի մեծահարուստի և օգնություն խնդրում նրանից: Հարուստը ոչ միայն չի զլանում իր քսակը բացել, այլ

կոպտորեն մերժում է քահանայի խնդրանքը ու անպատվում աղքատներին: Աստծու ծառան անտեսելով նրա կոպտություններն ու վիրավորանքը, ամեն անգամ համառորեն աղքատների սիրույն խնդրում է, որ հարուստը օգնի նրանց:

Եվ երբ մի անգամ քահանան կրկին դիմում է նրան, մեծահարուստը այլևս չհամբերելով, ափերից դուրս է գալիս և բարկացած վիճակում ուժգնորեն ապտակում է նրան: Պատկերացրեք, եթե այդպիսի ապտակ ստացողը դուք լինեիք, ի՞նչ կանեիք, կլռեի՞ք, կթողնեիք ու կգնայի՞ք լուռ կուլ տալով վիրավորանքը, թե՝ դուք էլ ապտակով կպատասխանեիք: Գիտեմ, որ հիմա դժվար է ձեր կողմից որևէ պատասխան ստանալը: Ժամանակ է պետք, որ մտածեք: Տեսնենք, թե քահանան ինչպես վարվեց: Ինչպես վայել է Աստծու ծառային, համբերությամբ ու սառնարյուն կերպով, կարծես թե ոչինչ չէր պատահել, դիմում է մեծահարուստին ու հանգիստ ասում.

- Շնորհակալ եմ, ես իմ բաժինը ստացա, հիմա խնդրում եմ մի բան էլ իմ աղքատներին տվեք:

Կարծես մի լույս է ծագում Մեծահարուստի մտքում, սրտում ու հոգում և նա հուզված ու զղջացած, տալիս է քահանայի խնդրած գումարը և հազար անգամ ներողություն խնդրում իր կոպիտ արարքի համար»:

Մեր ժողովուրդը այսպիսի մի գեղեցիկ և ուսանելի արտահայտություն ունի. *«Մինչև որ քեզ չվնասես կամ նեղություն չտաս, չես կարող ուրիշին լավություն անել»:* Մի մտածեք ձեր *«ես»-ի* մասին, այլ ապրեք ու գործեք *«մենք»*- ի գիտակցությամբ:

Յուրաքանչյուր քրիստոնյա պիտի հիշի իր Մեծ Ուսուցչի՝ Հիսուսի խոսքը. *«Երանի նրանց, որ հալածվում են արդարության համար, որովհետև նրանցն է երկնքի արքայությունը» (Մատթ. 5:10):*

Ուրեմն պարզ է մեզ համար, թե իբրև քրիստոնյա ինչո՞ւ նեղություն պիտի ունենանք: Մտածենք այս մասին և

եթե մեզ նեղություններ ու դժվարություններ ստեղծողներ կան՝ մեր Մեծ Վարդապետի նման ասենք. *«Հայր ներիր դրանց, որովհետև չգիտեն, թե ինչ են անում» (Ղուկ. 23:34):*

Նեղություններն ու դժվարությունները կարող ենք հաղթահարել միմիայն Աստծու և միմյանց նկատմամբ ունեցած մեր անշահախնդիր սիրով:

Պողոս Առաքյալի այս գեղեցիկ խոսքը թող լինի իբրև վերջաբան. *«Եվ բոլոր նրանք, որ ուզում են աստվածպաշտությամբ ապրել Հիսուսով, հալածանքների մեջ պիտի լինեն» (Բ. Տիմ. 3:12):* Ամեն:

ԱՐԳԵԼՔՆԵՐ

«Ով սիրում է իր անձը, կկորցնի այն, իսկ ով այս աշխարհում իր անձն ատում է, այն կպահի հավիտենական կյանքի համար» (Հովհ. 12:25):

Այս կյանքում կան երկու արգելող պատճառներ, որոնք իբրև գլորելու պատրաստ քարեր, կանգնած են մեր ոտքերի առջև: Գրանցից առաջինը՝ *մարմինն է,* իսկ երկրորդը՝ *աշխարհը:* Ուրեմն եկէք քննենք դրանք, տեսնելու և հասկանալու համար, թե սրանք հավիտենական մի կյանք արժե՞ն, որոնց համար ներկա կյանքը մեր ձեռքից բաց թողնելու փորձության մեջ ենք և կամ թե սրանց կորցնելը հավիտենական կորստից աւելի՞ ծանր է:

Մեղավոր մարդը սիրում է *իր մարմինը* հոգուց ավելի, թեև գիտի, որ մարմինը ժամանակավոր է, իսկ հոգին՝ անմահ, մարմինը հողից է ստեղծված, իսկ հոգին՝ Աստծու պատկերն է: Մարմինը մի տուփ է, իսկ հոգին՝ նրա մեջ պահված մի գոհար: Մարմինը մի վանդակ է, իսկ հոգին՝ նրա մեջի սոխակը: Մի օր տուփի միջի գոհարը պիտի վերցվի կամ վանդակի միջից սոխակը պիտի թռչի և այն ժամանակ՝ այս անոթները պիտի մնան անգործածելի, ուրեմն ինչպիսի՜ հիմարություն է թողնել անմահը ու ժամանակավորի ետևից գնալ, մոռանալ Աստծու պատկերն ու հողին պաշտել, թողնել գոհարն ու տուփը վերցնել, ատել սոխակին ու վանդակը սիրել: *«Բայց ինչքան կարող ես, աշխատիր շահել մարմինդ... չէ՞ որ որոշ ժամանակ հետո պիտի կորցնես այն: Մի՛ նեղիր ինքդ քեզ պահքերով ու ծոմապահությամբ, ընդհակառակը գիրացրու մարմինդ համադամ կերակուրներով, սակայն կատարածդ որդերի համար փառավոր մի ճաշ պատրաստելուց տարբեր մի բան չի. զվարճացրու ինքդ քեզ ոգելից խմիչքներով, բայց մի օր մի կաթիլ ջրի կարոտ պիտի քաշես և այն էլ հավիտյան չպիտի կարողանաս գտնել: Զարդարիր ինքդ քեզ փառավոր ու գունավոր զգեստներով, բայց մի օր սպիտակ սավանով պիտի փաթաթվես՝ փոսի մեջ դրվելու համար: Հանգստացրու ինքդ քեզ փափուկ անկողինների վրա, բայց մի օր անկողինն ու վերմակդ էլ հողից պիտի շինեն:*

Յանկության կրակներդ կամքիդ համեմատ վառիր ու բորբոքիր, բայց երբ մահդ գա, դրանք պիտի հանգեն ու դժոխքի հավիտենական կրակները նրանց պիտի հաջորդեն»,- ասել է մեր մտածողներից մէկը: Ահա այս է Տիրոջ վճիռը, թե՝ «Ով որ իր անձը կորցնի, պիտի գտնի այն»: Հիմա իմաստուն մարդու պես մտածիր ու դատիր, թե այս կարգի մարմնապաշտ անձերը իրենք իրենց սիրա՞ծ թե ատած կլինեն, մինչդեռ իրենց այս անկարգ սերը իրենց անձերի հավիտյան կորչելու պատճառ պիտի լինի: Իսկ ով որ կուրանա իր անձը, կզսպի չար կրքերը և խաչը առնելով կմտնի Քրիստոսի ցույց տված նեղ ճանապարհը, ահա այդպիսին է, որ իր անձը ճշմարտապես սիրած կլինի, որովհետև հավիտենական կյանքում պիտի գտնի այն անհուն փառքով ու երջանկությամբ»:

Սա առաջին արգելող պատճառն էր, այսինքն՝ *Մարմինը:* Երկրորդ արգելող պատճառը՝ *աշխարհն է:* Աշխարհի համար փրկության ճանապարհից ետ կանգնելը նույնքան անմիտ մի գործ է, որովհետև անցավոր ու թշվառությամբ լի աշխարհը նշանակում է փոխել հավիտենական երջանկությամբ լցված մի այլ աշխարհի հետ: Սրան մարդը պատասխանում է. *«Ես այս աշխարհը շահելով հանդերձ երկինքը էլ եմ շահում»,* սակայն մի մարդ երկու տիրոջ չի կարող ծառայել, ինչպես ասաց մեր Տերը. *«Ոչ մի ծառա երկու տիրոջ ծառայել չի կարող, որովհետև, եթե մեկին ատի, մյուսին կսիրի, կամ եթե, մեկին մեծարի, մյուսին էլ կարհամարհի» (Ղուկ. 16:13):* Ինչքան մարդիկ կապված են աշխարհին, որքան էլ, որ սիրեն ու գիշեր ցերեկ իրենց անձը նրան հաճելի դարձնելու համար աշխատեն, աշխարհը երբեք չի կարող մարդկանց սիրել կամ գոնե նրանց սիրո համար փոխադարձաբար մի բարի բանով փոխարինել: Ձեզանից ցածր գտնվողները՝ ձեզ կատեն, հավասար եղողները՝ կնախանձեն, իսկ ավելի բարձրում գտնվողները՝ կարհամարհեն: Ճիշտ է, երբ հարստության տեր էիք, մարդիկ ձեզ շատ պատիվներ էին տալիս, բայց մի կարծեք, որ դրանք ձեզ, այլ՝ ձեր հարստության և ունեցվածքի համար էին, որովհետև, երբ դուք դրանից զրկվեք, մարդիկ ետ կկանգնեն ձեդ պատվելուց,

թերևս նախատեն ու արհամարհեն էլ, քանի որ այլևս ձեզանից որևէ ակնկալիք չունեն: Ուրեմն ձեզ իրար կապող կամուրջը ոչ թե սերն էր, այլ՝ շահը, իսկ շահի ու նյութի վերջը՝ կործանում է:

Բնական է, որ բոլորս էլ մոտ բարեկամներ, ազգականներ ու սիրելիներ ունենք, հնարավոր է, որ սրանց համար արգելք ունենանք մեր ճանապարհին, սակայն միշտ հիշեք Հիսուսի խոսքը. *«Ով որ իր հորը և կամ մորը ինձնից ավելի է սիրում, ինձ արժանի չէ. ով իր որդուն կամ դրստերը ինձնից ավելի է սիրում, ինձ արժանի չէ. ով իր խաչը չի վերցնում ու իմ հետևից չի գալիս, ինձ արժանի չէ» (Մատթ. 10:37-39):* Թերևս նրանք ձեզ անկեղծությամբ սիրեն, բայց այդ սերը հաստատուն ու մնայուն սեր չի կարող լինել, որովհետև երբ դուք մեռնեք ու ձեր մարմինը նրանց աչքերի առաջից աներևույթ լինի, ձեր հիշատակն էլ պիտի թառամի: Գերեզմանափոսի մեջ ծածկվելուց որոշ ժամանակ հետո, թող զարմանալի և տարօրինակ չթվա, ձեր սերը ամենամոտ սիրելիների սրտում իսկ մոմի լոյսի պես պիտի նվազի: Այսօրվանից մտածեք, թե իրապես արժի՞ այսպիսի ժամանակավոր երկրային հաճույքների ու վայելքների համար ձեր անձը մատնեք հավիտենական դատապարտության:

Հայրենի գրող Ավետիք Իսահակյանի այս պատմությունը ուսանելի է.

«Արևելքի քաղաքներից մեկում մի աղքատ դերվիշ (թափառաշրջիկ) պառկած մայթի վրա ննջում էր: Այդ պահին քաղաքապետը իշխանների շքախմբով անցնում է այդ ճանապարհից: Անցորդները խոնարհվելով մի կողմ են քաշվում, միայն ծերունին է մնում պառկած: Իշխանների առաջնորդը գավազանով խրփում է ծերունուն, ասելով.

«Վեր կա՛ց., չե՞ս տեսնում ով է անցնում»: Իսկ ծերունին հանդարտորեն պատասխանում է նրան:

- Ես միայն ինձանից մեծերի առաջ եմ ոտքի կանգնում:

Քաղաքապետը զարմանքով հարցնում է.

- Մի՞թե ես քեզնից մեծ (բարձր) մարդ չեմ:

- Իհարկե ոչ: Քեզանից ավելի բարձրերն էլ կան: Այդպե՞ս չէ:

- Այո՛:

- Դու քաղաքապետ ես, երբ պաշտոնդ բարձրանա, ի՞նչ կլինես:

- Նահանգապետ:

- Հետո ի՞նչ կլինես:

- Վեզիր:

- Հետո՞:

- Փոխարքա:

- Վերջ՞ը:

- Այսքան: Վերևում շահը (թագավորը) կա:

- Ասենք թե շահ դարձար, հետո՞:

- Հետո՝ ոչինչ,- պատասխանում է քաղաքապետը:

- Ահա,- ասում է ծերունին,- այդ ոչինչը ես եմ:

Քաղաքապետը զարմացած ամոթից թողնում հեռանում է»:

Քաղաքապետը պատրաստ մեկը չէր հասկանալու, որ իր այս կյանքը իրապես *«ունայնություն ունայնության»* է, ինչպես կասեր Սողոմոն իմաստունը, այսինքն բառիս բուն իմաստով *ծերունու ասածի նման՝ «ոչինչ», «որովհետև հող էիր և հող էլ կդառնաս» (Ծննդոց 3:19):* Ահա Աստծու հրամանը առաջին մեղավոր մարդուն՝ Ադամին:

Երբ դուք ձեր մեղքերի պատճառով դատապարտվեք, այնտեղ աշխարհը կամ ձեր սիրելիները ձեզ ի՞նչ մխիթարություն կամ ի՞նչ օգնություն կարող են ցույց տալ: Նույնպես աշխարհում վայելած ձեր հաճոյքները վերջին դատաստանի օրը ձեր չարչարանքների դիմաց ի՞նչ մխիթարություն կարող են լինել, կերուխումը, խաղն ու պարը կարծո՞ւմ եք դեռևս իրենց ազդեցությունները կունենան կամ այն ներդաշնակ նվագարանների ձայները դեռևս կլսվե՞ն, իհարկե՝ դրանց փոխարեն միայն պիտի լսվեն՝ հավիտենական ողբ, հուսահատություն ու հառաչանք: *«Ո՞ւր են նրանց աստվածները, որոնց ապավինում էիք, որոնց զոհերի ճարպն էիք*

ուտում, նրանց նվիրաբերումների գինին խմում: Թող վեր կենան, օգնեն, պաշտպան կանգնեն ձեզ (Բ. Օրինաց 32:37-38): Դատաստանի օրը այս բաների հիշատակությունը փոխանակ օգնություն կամ մխիթարություն լինելու, ավելի դառնություն և դժոխային մի կյանք պիտի լինեն, որովհետև սրանք Հովնաթանի նման քեզ հավիտյան պիտի աղաղակել տան. *«ճաշակելով ճաշակեցի մի քիչ մեղր և ահա ես պիտի մեռնեմ»,* որովհետև սրանք ձեզ պիտի հիշեցնեն, թե ինչպես ձեր վայելած հեշտ կեանքը մի կաթիլ մեղրի նման ոչինչ ու րոպեական մի բան էր, սակայն նրանց համար սահմանված պատիժները սոսկալի ու հավիտենական են: Քանի դեռ այդ վիճակի մեջ չեք ընկել, ձեզ համար կա հույս ու հնարավորություն փրկվելու. ձեր կամքով բաժանվեք մարմնից ու աշխարհից, քանի դեռ մահը ձեզ բռնությամբ չի բաժանել: Աստծուն հաճելի ու Նրա կամքը փնտրեք, ձեր սիրտն ու սերը ամբողջովին Նրան նվիրեք և հաղթելով ձեր դեմ եղած արգելքներին, առաջ գնացեք փրկության նեղ ճանապարհի մեջ: Ամեն:

ՊԱՏՐԱՍՏ ԼԻՆԵԼՈՒ ՈԳԻՆ

«Ով որ քեզնից բո բաճկոնդ բոնի է վերցնում,
նրան մի արգելիր, որ վերցնի շապիկդ էլ»
(Ղուկ. 6:29)

Ավետարանի պատգամներից մեկն է սա, որ հաճախ դժվարության է մատնում այն անձանց, որոնք իրենց ճակատի արդար վաստակով որոշ չափով բարեկեցիկ մի կյանքի կամ գոհացուցիչ մի վիճակի են հասել: Նրանք կարող են հավասարության մասին լավ ճառեր խոսել, սակայն իրենց հետ հավասարվելու ուրիշների ձգտումները կդատապարտեն իբրև ոտնձգություններ իրենց անձնական իրավունքների դեմ: Հիսուս ասում է.

«Ով որ քեզնից բո բաճկոնդ բոնի է վերցնում, նրան մի արգելիր, որ վերցնի շապիկդ էլ»:

«Ինչո՞ւ պիտի տամ այն, ինչ որ դժվարությամբ եմ շահել, ինքն էլ թող աշխատի ինձ նման և իր կեանքը շահի, թող տվորեն, թե ինչքան դժվարությամբ ենք տեղ հասել, ի՞նչ պարտավորություն ունեմ շահս իր հետ կիսելու, երբ նա ոչ մի վաստակ չունի այդ աշխատանքում» և այլն: Այսպիսի արտահայտություններ շատ կարելի է լսել, հատկապես օգնության դիմումների միջոցին, երբ անգործ ու չքավոր մարդիկ հույսները դնելով դրամ ունեցող մարդկանց վրա, ծեծում են նրանց դոները՝ օգնություն ստանալու ակնկալիքով: Մյուսներից տարբեր լինելու ձգտումը գրեթե բոլոր մարդիկ էլ ունեն: Պարահանդեսի ընթացքին իր հագած հագուստը մյուսներից ավելի գրավիչ ու վայելուչ տեսնելու ցանկությունը, առավելապես կանանց մոտ, որոշգաղափար է տալիս մեզ միշտ ամենալավը լինելու մարդու ձգտման մասին: Նայեցեք նույնիսկ զինվորական համազգեստ հագած մարդկանց: Թեև նրանք նույն գույնի ու ձևի զգեստներ են հագնում, բայց և այնպես յուրաքանչյուրը ցանկություն ունի մյուսներից տարբեր գեղեցկությամբ երևալու, մի տեսակ ինքնիրեն ցույց տալու ներկա հասարակության: Պարախմբերի ելույթների ընթացքում էլ հաճախ սա

պարզ երևում է: Եվ ի՞նչ է կյանքը, եթե ոչ մի տոնահանդես, ուր ամեն մարդ ցանկանում է ներկայանալ իբրև ամենաանթերի դերակատարը, ինքնիրեն դնելով ամենաարթուն ծաղրածուի տեղը:

Հիսուս Իր միտքը արտահայտում է առակի միջոցով, որի մեջ ակնարկություն ենք տեսնում ոչ միայն Աստծու աչքին մարդկանց հավասարութեան մասին, այլ այն, որ Նա է մեր ամբողջ ունեցվածքի, հարստության, կյանքի ու նույնիսկ իրավունքների տերը...:

Ավետարանում սա ծանոթ է *«Մշակների առակ»* անունով, ուր շեշտվում է, թե բոլոր մարդիկ ապաշխարությամբ հավասարապես կարող են երկնային թագավորության արժանի դառնալ: Հիսուս տարբերություն չի դնում հրեայի, հեթանոսի, արվի և էգի միջև, ցույց տալով, թե նրանք բոլորն էլ Աստծու զավակներն են: Աստված որ հողատերն է պատմըված առակում, առավոտ շուտ տեսնում է հրապարակում կանգնած անգործ մշակների ու նրանց ուղարկում է իր արտը աշխատելու: Ժամը իննի մոտ դարձյալ դուրս գալով, տեսնում է այլ մշակների, որոնց նույնպես ուղարկում է իր արտը աշխատելու: Կեսօրվա մոտ տեսնում է ուրիշ մշակներ, նրանց էլ է ուղարկում իր արտը խոստանալով նրանց վճարել օրվա վերջավորության: Երեկոյան ժամը հինգի մոտերը նույն նպատակով մի երրորդ խումբ էլ է ուղարկում նույն տեղը: Ի վերջո, օրվա ավարտին բոլորը գալիս են իրենց վարձը ստանալու: Արտի տերը բոլորին էլ համահավասար բաժիններ է տալիս: Այն ժամանակ առավոտ շուտ և կեսօրին եկողները բողոքում են տիրոջը եղած անարդարության համար, ասելով, որ իրենք ամբողջ օրվա հոգնությունը կրեցին, կիզիչ արևի տակ աշխատեցին, մինչ երեկոյան դեմ եկողները միայն մի ժամ աշխատելով, նույն վարձը ստացան: Ինչ որ բնական և արդարացի մի պահանջ է, ամեն մեկս էլ իբրև գործավոր, կարող էինք զարմացած ու վրդովված նույն հարցը տալ: Տերը հետաքրքիր ձևով է պատասխանում այս բողոքողներից մեկին. *«Միթե իրավունք չունե՞մ իմ ունեցածի հետ վարվելու, ինչպես կամենում եմ: Կամ թե՝ նախանձո՞ւմ են, որ ես առատաձեռն եմ» (Մատթ. 20:15):*

Մենք իբրև մարդիկ երբեմն հպարտանում ենք մեր աշխատանքի վաստակով, առանց հասկանալու, որ մեր շահն ու վաստակը, մեր ունեցվածքն ու հարստությունը Աստծուն ենք պարտական: Հաջողությո՞ւն ես ունենում՝ Աստծուն ես պարտական: Շատ դրա՞մ ես շահում՝ դարձյալ Նրան ես պարտական աշխատած եկամուտիդ համար: Այս գիտակցությունը Աստծու նկատմամբ իբրև երախտագիտություն ունենալով, որևէ անհատ իրեն թույլ չպիտի տա անարգելու իր նմանին ու զրկելու նրան: Եթե աշխատածդ պարտական ես Աստծուն, ուրեմն պետք է, որ քեզ տրված հնարավորությունից բաժին հանես նրան, որին այդ չի տրված: Մի մոռացիր, որ մեկի հաջողությունը մի ուրիշի ձախորդությունն է և փոխադարձաբար: Պողոս առաքյալը Եբրայեցիներին ուղղած իր թղթում ասում է. *««Մի՛ մոռացեք բարեգործությունը և ձեր ունեցած բարիքներին միմյանց մասնակից դարձնելը, քանզի այդպիսի պատարագներն են հաճելի Աստծուն» (Եբր. 13:16):* Հիսուս կրկնում է Օսեե մարգարեի խոսքը. *«Քանզի ողորմություն եմ ցանկանում և ոչ թե զոհաբերում» (Օսեե 6:6):* Ինչքա՛ն էլ հարստություն ունենաք, պետք է գիտակցեք, որ այն ստացել եք Աստծուց ե նրա հետ պիտի վարվեք իմաստությամբ: Չպիտի՞ նեղանայիք, եթե ձեր հարստությունը կորցնեիք, մի բան, որը նրա հետ ճիշտ չվարվելու պատճառով է առաջ գալիս: Նման մի մեծ սխալ գործած կլինեք, եթե այն ամբողջությամբ պահեք միայն ձեզ համար: Սա էլ նրա հետ սխալ վարվելու մի այլ ձև է: Ագահությունը նման է կավե մի գանձանակի, որը պիտի կոտրես, որպեսզի տիրանաս միջի գումարին: Որոշ հարուստների մահից հետո նրանց ունեցվածքի բաժանումը կարելի է այս պատկերին նմանեցնել, երբ իրենց չվայելածը ուրիշները հաճույքով սպառում են: Ժողովուրդը մի լավ խոսք ունի. *«Չուտողի մալը (այսինքն՝ ունեցվածքը) ուտողին հալալ է»: «Եթե աշխարհիկ հարստությունը գործածելու մեջ հավատարիմ չեղաք, ճշմարիտ հարստությունը ո՞վ պիտի վստահի ձեզ»:* Հիսուսի պատգամը, թե՝ *«Ով որ քեզնից քո բաճկոնդ բռնի է վերցնում, նրան մի արգելիր, որ վերցնի շապիկդ էլ»* չպետք է բառացի հաս-

կանանք: Այլ խոսքով մեր Տերը շեշտում է պատրաստակամության ոգին, երբ դրա կարիք կա ուզո՞ւմ ես օգնել: Պատրա՞ստ ես ընդառաջելու, երբ քո օգնության կարիքը ունենան, թե՝ ինքդ քո մեջ ամփոփված, փորձում ես ներքին ալեկոծությունդ խաղաղեցնել: Հակոբոս առաքյալը կարիքի դիմաց մի միջոց լինելու ձևի մասին հստակ բացատրում է, հասկացնելով, թե ո՞րն է քրիստոնեական ձևը. *«Եթե մի եղբայր կամ քույր մերկ յինեն կամ օրվա ուտելիքի կարոտ, և ձեզնից մեկը նրանց ասի՝ «գնացեք խաղաղությամբ, տաքացեք և հագեցեք», և դուք նրանց չտաք մարմնին անհրաժեշտ բաները, ի՞նչ օգուտ է» (Հակ. 2:15)* Ահա, թե ինչպես Առաքյալը *«Քրիստոնեական»* կոչվածը սխալ է համարում և փնտրում է քրիստոնյայի մեջ օգնելու պատրաստակամության ոգին:

Այս պատմությունը հետաքրքիր է.

Ամերիկայի սկզբնական տարիներին, երբ դեռևս ժողովրդարության մասին խոսք անգամ լինել չէր կարող, մի սևամորթ ստրուկի տանում են շուկա վաճառելու:

Խեղճ սևամորթը հուզմունքով սպասում էր, թե ո՞վ պիտի լինի իր նոր տերը:

Մի հարուստ երիտասարդ խղճալով, նրան գնելու համար մեծ գումար է վճարում և ասում ստրուկին. «Միրելիս, քեզ գնեցի մեկ նպատակով, որ այս րոպեից սկսած ազատ լինես և ոչ մեկից կախում չունենաս: Գնա և մի նոր կյանք սկսիր: Եթե պատահի, որ նեղություն ունենաս արի ինձ մոտ՝ ահա իմ հասցեն:

Սևամորթը, որն առաջին անգամ էր բարեսիրտ մի տեր տեսնում, աչքերը լցվում են երախտագիտության արցունքներով, իսկույն ընկնում է իր բարերարի ոտքերն ու լացելով՝ ասում.

- Տեր, նախընտրելի է ինձ համար քո ստրուկը լինել, քան թե քեզանից հեռու ապրել ազատ ու ապերջանիկ»:

Ահա խնդրեմ ձեզ հրաշալի մի օրինակ, որտեղ հարուստ երիտասարդը պատրաստակամության ոգի է հանդես

բերում օգնելու կարիքավորին, այս դեպքում՝ ստրուկ սևամորթին: Հիսուսի շեշտը սրա մասին էր, պատրաստ լինել միշտ օգնելու, երբ դրա կարիքը զգացվի:

Աստվածային պատվիրանը մեր ունեցածը հափշտակելու նպատակ չունի, այլ նա փորձում է մարդկանց մեջ ստեղծել ու զորացնել աստվածահաճո գործերի համար պատրաստ մի հոգի ու մի բարի սիրտ: Ամեն:

Ո՞Վ Է ԻՄ ԸՆԿԵՐԸ

Օրենքի ուսուցիչներից մեկը Հիսուսին հարցրեց. *«Իսկ ո՞վ է իմ ընկերը» (Ղուկաս 10:29):* Այս հարցմանը պատասխանելու համար մեր Տերը պատմում է *«Բարի Սամարացու»* առակը.

«Մի մարդ Երուսաղեմից Երիքով էր իջնում և ընկավ ավազակների ձեռքը, որոնք նրան մերկացրին, վիրավորեցին և կիսամեռ թողեցին ու գնացին: Պատահեց, որ մի քահանա նույն ճանապարհով իջնի, նրան տեսավ և թողեց անցավ, նույնպես և մի ղևտացի նույն տեղով անցնելիս, տեսավ և թողեց անցավ: Մի սամարացի, որ ճանապարհորդում էր, եկավ նույն տեղով նրա մոտ, եւ տեսնելով նրան՝ գթաց: Եվ մոտենալով՝ կապեց նրա վերքերը, վրան ձեթ ու գինի ածեց և դնելով նրան իր գրաստի վրա՝ տարավ մի իջևան և խնամեց նրան: Եվ հաջորդ օրը, երբ դուրս էր գալիս այնտեղից, իջևանատիրոջը երկու դահեկան հանեց տվեց և ասաց. «Խնամիր նրան և ինչ որ ծախսես դրա վրա, իմ մյուս անգամ գալուն կհատուցեմ քեզ» (Ղուկաս 10:29-35):

«Ո՞վ է իմ ընկերը»: Այս հարցի պատասխանը առակը ինքը տալիս է արդեն: Ոմանք ենթադրում են, որ առակում հիշված մարդը, որն ավազակների ձեռքն ընկավ նույնինքն *«ընկեր»* կոչվողն է: Այս ենթադրությունը հակասում է ճշմարտության: Ընկերը ավազակների ձեռքը ընկնող մարդուն օգնողն է և ոչ թե նույնինքն ավազակների ձեռքը ընկնողը: Ո՞վ էր օգնողը, եթե ոչ Քրիստոս: Հետևաբար, Քրիստոս Ինքնիրեն էր, որ ներկայացնում էր իբրև ընկեր, ճշմարիտ ընկեր, օգնող ընկեր: Առակը պատմելուց հետո, Հիսուս Օրենքի ուսուցչին հարցրեց. *«Արդ, ըստ քեզ, այդ երեքից ո՞րը մերձավորի պես վերաբերվեց նրան, ով ավազակների ձեռքն էր ընկել»:* Եւ սա ասաց. *«Նա ով նրան բարիք արեց»: Հիսուս նրան ասաց. «Գնա և դու նույն ձևով արա» (Ղուկաս 10:36-37):*

Մեզ շնորհված է գեղեցկագույն առիթը Հիսուսի

նման ընկեր լինելու մեր շրջապատի համար: Չփորձենք գտնել պատասխանը, թե՝ *«Ո՞վ է իմ ընկերը»* հարցմանը, այլ լինենք ուղղակի պատասխանը: Թույլ տանք, որ Հիսուս մեր միջից սիրի կարոտյալներին, վերականգնի գլորվածներին, սփոփի վշտահարներին և մխիթարի սգավորներին:

Լինենք մեր Տիրոջ ձեռքը մեկնված հիվանդներին: Լինենք Նրա տաքուկ շունչը՝ ցրտահարներին, ոտքը՝ կյանքի ճանապարհին կաղացողներին, Նրա քաղցրությունը՝ դառնացածներին, օգնականը' անօգնականներին, կարեկցող սիրտը՝ սրտաբեկներին, քաջալերությունը' հուսահատվածներին, ուրախարար ներկայությունը՝ տխուր մարդկանց, զորավիգը՝ անգորներին, բալասանը' խոցոտվածներին, այցելուն՝ անտեսվածներին և սիրող եղբայր բոլոր նրանց, որոնք դրա կարիքը ունեն:

Մանավանդ և ավելիով լինենք երկնքի ժպիտը երկրավորների համար: Ժպտացողների թիվը հետգհետե նվազում է: Աշխատենք այդ թիվը շատացնողներից մեկը լինենք: Պահենք մեր դեմքի վրա Հիսուսի ժպիտը: Թող մարդիկ մեր ժպիտի մեջ տեսնեն մահվան վրա հաղթանակ տարած մարդու ժպիտը:

«Գնա՛ և դու նո՛ւյն ձևով արա»: Մենք էլ նույնը անենք առանց խտրականության ու սիրահոժար կերպով: Վստահաբար այդպիսի վերաբերմունքը մեր նմանի հանդեպ հիմնովին պիտի փոխվի, եթե երբեք մտածենք, որ յուրաքանչյուր մարդ, որին տեսնում ենք, ապրում ու գործակցում ենք, մեկն է, որի հետ շատ երկար ճանապարհ պիտի անցնենք: Պատկերացրեք մի աշակերտ, որը պետք է ապրի մի ուրիշի հետ իբրև սենյակակից երկու-երեք տարի, բնական է, որ ուզի կամ չուզի խաղաղասեր ու սիրալիր վերաբերմունք պիտի ունենա նրա նկատմամբ՝ հանգիստ մի կյանք ապրելու համար: Այնպես էլ յուրաքանչյուր ճշմարիտ քրիստոնյա, պիտի աշխատի սիրով ու առողջ հարաբերության մէջ լինել իր նմանների հետ, որովհետև ոչ թե երկու-երեք տարիներ պիտի անցկացնի նրանց հետ, այլև՝ անվախճան և անավարտ մի հավիտենականություն:

Մի մոռանաք, որ մեր Տերը Ինքնիրեն պատկերացրեց. *«Քաղցած էի, և ինձ ուտելիք տվիք, ծարավ էի, և ինձ ջուր տվիք խմելու. օտար էի, և ինձ ձեր մեջ առաք, մերկ էի, և ինձ հագցրիք, հիվանդ էի, և ինձ տեսնելու եկաք, բանտում էի, և ինձ այցի եկաք» (Մատթ. 25:35-36):* Եթե Հիսուս Ինքնիրեն տեսավ այսպիսի մարդկանց մեջ, ճիշտ պիտի չլինե՞ր, որ մենք էլ Իր ներկայությունը տեսնեինք նրանց մեջ:

Հիսուսի սերը դասախոսություն չէ, որ մարդկանց առջև կանգնենք ու խոսենք: Դա նման կլինի մի ծարավ մարդու, որին փոխանակ ջուր տալու, խոսենք ջրի օգտակարության մասին: Հեշտ է ավազակների ձեռքը ընկած, կողոպտված, վիրավորված ու գետինը թողնված մարդուն ասել. *«Ընկեր, ցավում եմ քեզ համար: Վեր կաց, ուժերդ հավաքիր և տուն գնա»:* Հեշտ է կիսամերկ և օրվա հացի կարոտ մեկին ասել. *«Գնացեք խաղաղությամբ, տաքացեք և հագեցեք և դուք նրանց չտաք մարմնին անհրաժեշտ բաները, ի՞նչ օգուտ է» (Հակ. 2:16): Աստծու անունով խոսելը, բայց Նրա անվան համար չգործելը՝ կեղծ քրիստոնեություն է: Բարության և միայն Բարու մասին ճառելը, բայց բարին չգործելը, սուտ բարեպաշտություն է: Հեշտ է ուրիշներին ասել որ Հիսուս սեր է, Նա ձեզ սիրում է»:* Ամեն մարդ կարող է մեր Տիրոջը ներկայացնել իբրև եղբայր տառապյալների համար, բայց արդյոք ամեն մարդ կարո՞ղ է իր հերթին Նրա նման եղբայր լինել տառապյալների համար: Հարց է:

Բարի Սամարացու սերը ունեցող մարդը, օգնում է և բարեկամին և թշնամուն, ծանոթին և անծանոթին հավասարապես. *«Եթե քաղցած է քո թշնամին, հաց տուր նրան, և թե ծարավ, ջուր* տուր նրան. *այս անելով կրակի կայծեր կկուտակես նրա գլխին: Թույլ մի՛ տուր, որ չարը հաղթի քեզ, այլ բարիով հաղթիր չարին» (Հռոմ. 12:20-21): Ով կուզի կերակրել մի կորյունի, որը հետագայում իր հոշոտիչը պիտի դառնա: Ո՞վ ցանկություն պիտի ունենա խղճալ մեկին և օգնել, եթե նա ապագային անողորմ պիտի լինի իր նկատմամբ: Սակայն Հիսուս կերակրեց, ծառայեց ու բարոզեց այնպիսի մարդկանց, որոնք ծաղիկներով, ոստերով ու արմավի*

ճյուղերով գովաբանեցին և երկինք բարձրացրին նրան «ով-սաննա»- ներով», սակայն շատ չանցած փշե պսակ դրեցին Նրա գլխին, չարչարեցին, ապա՝ խաչեցին:

Մեր սիրտը խորապես ցավում է, երբ տեսնում ենք, որ *«ընկեր»* ու *«բարեկամ»* անվանումները տրվում են ավազակներին, փոխանակ տրվելու նրանց ձեռքն ընկած մարդկանց օգնողներին: Դարեր շարունակ մարդիկ փնտրել են՝ *«Ո՞վ է իմ ընկերը»* հարցի պատասխանը: Իսկ դու, ի՞նչ ես մտածում, ո՞ւմ ես նկատում քո ընկերներդ, բարձր դիրք վայելող մարդկա՞նց, մեծահարուստներին ու երևելիների՞ն, քեզանով հետաքրքրվողներին ու կարևորություն տվողների՞ն, քեզ սիրողներին ու ծառայություն մատուցողների՞ն: Կասկած չկա, որ սրանք բոլորն էլ լավ ընկերներ կարող են լինել, բայց լավ ընկեր կարող են լինել նաեւ ժողովրդի հասարակ և անտեսված խավը կազմող մարդիկ: Հակաքրիստոնեական է սիրել ոմանց և ատել ուրիշներին: Ցավալի է, որ մարդիկ ոմանց իրենց գլխի վրա են դնում, իսկ ոմանց էլ իրենց ոտքերի տակ առնում: Հետևելով մեր Տիրոջը քրիստոնյա մարդն էլ պիտի սիրի բոլորին հավասարապես և արդարորեն, պիտի սիրի լինեն նրանք ողորմած, թե՝ ողորմության կարոտ, գթառատ, թե՝ անգութ:

Աստուած սիրեց մեզ առանց պայմանի և ակնկալության, առանց մեզ կանչելու հաշվետվութեան կամ դատաստանի, առանց մեզանից աղերսագիր, զղջումնագիր կամ խոստումնագիր պահանջելու, ուրեմն՝ մենք էլ նույնը պիտի անենք:

Մեր նմանները ասելով, նկատի չունենք մեր հարազատներին ու հարևաններին: *«Իրապես որո՞նք են մեր ընկերները»:* Հիսուս ուզում է մեզ սովորեցնել, որ մեր ընկերները միայն մեր հարազատները, ազգականները, ազգակիցները ու հավատակիցները չեն կամ մեր հարևանները: Ընկեր պետք է համարենք զանազան երկրներում ապրող, տարբեր հավատքի, կրոնի, դասակարգի, ցեղի և գույնի մարդկանց:

Հիսուս գտել էր *«Ո՞վ է իմ ընկերը»* հարցի պատասխանը: Ամեն մարդ, որ ապրել է կամ ապրում է այս աշխարհում՝ մեր Տերը նրան ընկեր է նկատում: Մարդիկ ստեղծված

են իրար համար: Մեր Տիրոջ համար չկա աշխարհում մեկը, որն արժանի չի անընկեր մնալու, չկա մեկը, որի մասին մտածելը ավելորդ է, չկա մեկը, որի փրկությամբ մտահոգվելը ժամանակի կորուստ է: Հիսուսի համար ամեն մարդ պետք ունի փրկության և Փրկչին, ամեն մարդ արժեք է, ամեն մարդու իրավունքն է սիրվելը:

Եթե աշխարհասեր մարդուն հարցնենք, թե՝ *«Ո՞վ է ընկերդ»,* նրա պատասխանը պիտի լինի. *«Ինձ օգտակար հանդիսացողը, ինձ համար շահի աղբյուր եղողը»:* Արդեն այսպիսի մարդուց այլ պատասխան էլ չես կարող սպասել: Բայց մեր պատասխանն ու վերաբերմունքը տարբեր պիտի լինի: Ինչն է, որ քեզ իբրև քրիստոնյա աշխարհիկ մարդկանցից պիտի տարբերի. եթե նրանք ընկեր են նկատում միայն իրենց օգնողներին, դու իբրև քրիստոնյա ընկեր պիտի նկատես ոչ միայն քեզ օգնող մարդկանց, այլ նաև քո օգնությանը պետք ունեցողներին:

«Սամարացին նախ նայեց կիսամեռ մարդուն, ցթաց նրան, ապա մոտեցավ և նրա վերքերն օծեց ձեթով ու գինով: Այստեղ ձեթը խորհրդանշում է լույսը, իսկ ձեթով օծելը՝ հավատքը, հույսը և սերը: Գինով օծումը խորհրդանշում է ահն ու երկյուղը, քանզի գինին կսկծեցնում է վերքը: Վերքերը կապելը խորհրդանշում է Տիրոջ տասը պատվիրաններն ու Եկեղեցու յոթ խորհուրդները տալը: Տերը մեր փրկության համար ընդհանուր դեղ պատրաստեց, ձեթը Հոգու մկրտության, իսկ գինին՝ Տիրոջ Արյանը հաղորդվելու համար: Սրանցով մեր հոգու վերքերը բուժվեցին, մեղքերում մեռածներս կենդանացանք, և մեզ համար բացվեցին արքայության դռները» («Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու Տոները», Սուրբ էջմիածին, 200, էջ, 131):

Թող որ Բարի Սամարացու աստուածսիրության և եղբայրսիրության կրակը բորբոքվի մեր սրտերում, որպեսզի շտապենք օգնելու որեէ ժամանակ հարձակման ենթարկված ու վիրավորված մեր եղբայրներին և քոյրերին:

Թող որ Սուրբ Հոգին մեր բերանները բացի օրհնաբանությամբ, որպեսզի համարձակորեն և սրտի ցնծությամբ օրհներգենք երկնքի ու երկրի միակ Տիրոջը, Բարի Սամարացուն՝ Հիսուս Քրիստոսին, որն անարժաններիս արժանի արեց դառնալու Ամենասուրբ Երրորդության Սիրո Ընտանիքի անդամները: Ամեն:

ԱՏԵԼՈՒԹՅՈՒՆԸ ՉԱՐԻՔ Է

«Ատելութիւն գրգռէ զհակառակութիւն»

«Հակառակությունն ատելություն է գրգռում»
(Առակ. 10:12)

Աստված Մովսես մարգարեին տասնաբանյա պատվիրաններով հրահանգեց *«Մի սպանիր»:* Հովհաննես Ավետարանիչը գրում է. *«Նա որ իր եղբորը ատում է՝ մարդասպան է»,* որովհետև սպանության սկիզբը ատելություն է: Մարդ նախ ատում է, ապա՝ սպանում: Մարդասպանությունը Կայենից սկսեց, որը իր եղբորը Աբելին խաբելով սպանեց: Կայենի գործերը չար էին, իսկ Աբելինը՝ բարի: Աբելը սիրված էր Աստծու և իր ծնողների կողմից. ահա դրա համար Կայենը ատեց իր եղբորը: Ատելությունը եղավ բոլոր մեղքերի սկիզբն ու պատճառը: Նրանից ու նախանձից ծնվեցին՝ քենն ու ոխը, իսկ ոխակալությունից՝ նենգությունը, խաբելն ու սուտ խոսելը:

«Որոն՞ք էին Կայենի յոթը մեղքերը»:

ա. Աստծուն իր պտուղներից և բերքից վատն ու անպետքը նվիրեց: բ. Նախանձեց: գ. Ատեց: դ. Նենգությամբ խաբեց եղբորը: ե. Սպանեց: զ. Որպես առաջին ոճրագործ չար օրինակ եղավ աշխարհին: է. Երբ Աստված հարցրեց, թե' *«Ո՞ւր է քո եղբայր Աբելը» (Ծնն. 4:9),* նա ստեց ու ասաց. *«Չգիտեմ»:* Աստված նրան հարցրեց, որպեսզի զղջալով *«մեղա»* ասեր, մինչ նա լրբությամբ պատասխանեց. *«Մի՞թե ես իմ եղբոր պահակն եմ» (Ծնն. 4:9):* Աստված ասաց. *«Այդ ի՞նչ արեցիր, քո եղբոր արյան կանչը երկրից բողոքում է ինձ» (Ծնն.* 4:10): *Աստված յոթը պատիժ ուղարկեց Կայենի վրա: Նախ նրան անիծեց.* «*Արդ, անիծյալ լինես երկրի վրա, որը բացեց իր բերանը եղբորդ՝ քո ձեռքով թափած արյունն ընդունելու համար: Դու պիտի մշակես հողը, բայց նա պիտի չկարողանա քեզ տալ իր արդյունքը» (Ծնն.* 4:11-12): *Ծառի նման պիտի դողդողաս.* «Ահ ու դողի և երերման մեջ պիտի լինես երկրի վրա» (Ծնն. *4:12): Ծովի ալիքներից պիտի տատանվես: Մարդասպան Կայենի վրա նշան դրեց.* «Նա ով

կսպանի Կայենին, յոթնապատիկ վրեժի կարժանանա: Եվ Տեր Աստված նշան դրեց Կայենի վրա, որպեսզի ոչ ոք, ով հանդիպի նրան, չսպանի» (Ծննդ. 4:15):

Ատելությունը թշնամական մի կեցվածք է, որը մարդ ունենում է որևէ անձի նկատմամբ, երբ նրան սիրելուց դադարում է ու ցանկություն է ունենում հարվածելու: Նրա համար Առակագիրը ցրում է. *«Հակառակությունն ատելություն է գրգռում»:* Ատելությունը բաղմատեսակ մեղքերի դուռն է: Նրանից առաջ են գալիս՝ *բարկությունը, նախանձը, անգթությունը, վայրագությունը, հպարտությունը, վրեժխնդրությունը, կասկածն ու համառությունը:* Իսկ ատելությունը առաջ է *գալիս անձնասիրությունից ու փառասիրությունից:*

Համաձայն Անգլիացի նշանավոր գրող Բայրընի՝ *«Ատելությունը սրտի խենթություն է»:*

Երկու տեսակ մարդասպանություն կա: Առաջինը՝ արյունով և մի անգամ, երկրորդը՝ առանց արյան ու անդադար, ատելության ոգով:

Մարդիկ հաճախ անիրավ տեղն են իրար ատում: Այս երևույթը հնից ի վեր գոյություն ունի: Արժի լսել Սաղմոսերգուին, որը պաշտոնական բերանն է մերօրյա մի շարք անիրավությունների. *«Տե՛ս թշնամիներս որքա՛ն բազմացան և անիրավ ատելությամբ ինձ ատեցին» (Սաղմ. 24:19):* Աշխարհը այնպիսի մի վիճակ է ստացել, որ մարդը ուզում է իր կամքը պարտադրել դիմացինի վրա: Մարդիկ ամեն ինչ նյութական զորության մեջ են ուզում տեսնել, նկատելով, որ ապրելու համար նյութը էական է: Եվ եթե չեն կարողանում նյութապես ճզմել դիմացինին, սկսում են ատել նրան, գոհացում տալու համար իրենց փառասիրություններին:

Այս է պատճառը, որ աշխարհի չորս կողմերում տաք կամ սառը ատելություն կա: Գոյություն ունեն ազգամիջյան և համայնքային անհասկացողություններ: Այս բոլորը առաջ են գալիս իրար գործերին խառնվելուց: Մեր հանրային կյանքում, եթե ամեն մարդ իր գործին նայի, վստահ եմ, որ արդյունքը կլինի շինարար և արդյունավետ:

Ատելությունը թույնի է նման: Մարդը եթե այդ թույնը

չկարողանա իր ատած անձի մեջ ներմուծել և նրան սպանել, անպայմանորեն այդ հյութից կամ նյութից ինքը պիտի թունավորվի ու նրա արյունով բարոյապես պիտի սպանվի:

Ամերիկացի նշանավոր քարոզիչ Հենրի Էմիրսըն Ֆոստիքը ասում է. *«Մարդկանց ատել մի առնետից ազատվելու համար, նմանվում է ինքն իր տունը կրակի տալուն»:* Որով ատող անձը առավել կերպով վնասում է ինքնիրեն, քան՝ ատողին:

Վերևում նշեցինք, թե ատելությունից առաջ են գալիս մի շարք հոռի արարքներ, որոնք չարիք են պատճառում:

Օրինակի համար բարկությունը. *«Թե բարկանաք էլ, մեղք մի գործեք, արեգակը ձեր բարկության վրա թող մայր չմտնի: Ամեն դառնություն, բարկություն, զայրույթ, աղաղակ և հայհոյություն թող վերանա ձեզնից՝ իրենց չարությամբ հանդերձ» (Եփես. 4:26, 31):*

«Իսկ եթե ձեր սրտերում դառն նախանձ և հակառակություն ունեք, մի պարծեցեք, որ սուտ եք հանում ճշմարտությունը» (Հակ. 3:14):

Ամեն ասպարեզ ունի իր սկզբունքները: Եթե մի մարդ իր դիրքի ու հավատքի սկզբունքին կառչած տեղի չի տալիս՝ դա չի նշանակում թե այդ անձը համառ է, այլ՝ ընդհակառակը՝ օրինապահ մեկն է: Իսկ նա, որ ի շահ իր փառասիրությունների, ուզում է ոտնակոխ անել այդ ըսկզբունքները, դա նշանակում է նա ոտնահարում է նրա իրավունքները: Իսկ եթե ենթական չի կարողանում հաջողվել իր մտադրության մէջ՝ սկսում է ատել դիմացինին:

Ահա այստեղ է, որ Սաղմոսերգուն ատվողի բերանով ասում է. *«Բայց ովքեր մեղանչում են իմ դեմ, նրանք ամբարշտանում են իրենց հոգու մեջ, և ովքեր ատում են ինձ, նրանք սիրում են մահը» (Առակ. 8:36):*

Այս պատմությունը ուսանելի է.

«Ժամանակին մի իշխան կար՝ խիստ չար, անիրավ ու անխիղճ, որ իր հարկերով շատ էր նեղում քաղաքի բնակիչներին: Ամեն մարդ անիծելով նրա մահն էր ուզում. միայն մի այրի կին մշտապես աղո-

թում էր նրա առողջության ու կյանքի երկարակեցության համար: Այս լուրը հասնում է չար իշխանին, որը հետաքրքրության համար գնում է այրի կնոջ մոտ ու հարցնում նրան. «Ես քեզ բարություն չեմ արել ո՞վ կին, դու ինչո՞ւ ես աղոթում ինձ համար»: Իմաստուն կինը պատասխանում է. «Քո հայրը շատ վատ մարդ էր, ես անիծեցի և նա մեռավ, իշխանությունը անցավ քեզ և դու աւելի խիստ, դաժան ու չար եղար: Վախենում եմ, որ մեռնես և քո որդին քեզանից ավելի վատ ու անխիղճ լինի»:

Արդար մարդը ոչ մեկին չի ատում, որովհետև այս անցողիկ կյանքում ատելությունը մարդկային չէ:

Մեր Տերը ոչ մեկին չատեց: Սաստեց, խարազանեց, սիրեց և առանց ատելու ու առանց Իր սկզբունքից շեղվելու խաչ բարձրացավ, կամովին մահը գրկեց, սակայն փարիսեցիների փառասիրությանց և եսասիրությանց խաղալիք չեղավ:

«Տիրոջ հանդեպ զգացված երկյուղն ատում է անիրավությունը, թշնամանքն ու հպարտությունը և չարի ճանապարհը» (Առակ. 8:13):

Մեր Տերը իր դասերից մեկում հետևյալն է շեշտում. *«Ոչ ոք չի կարող երկու տիրոջ ծառայել կամ մեկին կատի և մյուսին կսիրի, կամ մեկին կմեծարի և մյուսին կարհամարհի. չեք կարող ծառայել Աստծուն և մամոնային» (Մատթ. 6:24):*

Ոչ ոք չի կարող միանգամից թե՝ բարուն և թե չարը սիրել: Ոչ ոք չի կարող միաժամանակ թե Աստծուն և թե սատանային պաշտել:

Աստծուն հավատացողը ատում է սատանային: Բարուն հավատացողը՝ ատում է չարը, Աստծուն հավատալով ոչ ոք չի կարող ատել իր եղբորը: Ոչ միայն Սուրբգրականորեն, այլ և մարդկայնորեն ներելի չէ այդպիսի մի արարք:

«Եթե մեկն ասի, թե սիրում է Աստծուն, և ատի իր եղբորը, սուտ է խոսում, ով չի սիրում իր եղբորը, որին տեսնում է, ինչպե՞ս կարող է սիրել Աստծուն, որին չի տեսել» (Ա. Հովհ. 4:20):

Ատելությունը չարիքի արմատն է: Այն արմատախիլ անելու կարողություն ունեցող միակ կացինը՝ Սերն է:

Չպետք է ատել մարդկանց, այլ պետք է ատել չար սովորությունները:

Ուստի այն քրիստոնյաները, որոնք իրար ատում են՝ մարդասպան են: Բոլորս էլ քույրեր ու եղբայրներ ենք, քանի որ նույն ավազանում ենք մկրտված ու Արարչին որպես *«Հայր»* ենք ընդունում: Ուրեմն մի ատեք իրար: Մի նախանձեք: Մի չարախօսեք: Ոխ մի պահեք: Մի անարգեք: Այլ իրար սիրեցեք ու ներեցեք: Ամեն:

ՀՊԱՐՏՈՒԹՅՈՒՆ

«Տերը հակառակ է ամբարտավաններին.
նա շնորհ է տալիս խոնարհներին»

(Առակ. 4:34*)*

Ամեն անգամ, երբ հավատացյալները Սուրբ Պատարագի ընթացքին իրենց մեղքերի համար թողություն են խնդրում Աստծուց և մասնակցում հավաքական խոստովանանքին, լսում են բազում մեղքերի մասին՝ *բամբասանքի, հայհոյանքի, նենգության, ատելության, խորամանկության, անզգամության, հանդգնության, դատարկաբանության, անիծաբանության, չարախոսության, ստախոսության* և այլն ու ասում են *«Մեղա Աստուծո»* և հոգևորականը թողություն տալով հաղորդությամբ մաքրում է նրանց մեղքերը: Սակայն այս հարյուրավոր մեղքերի կողքին, մեր եկեղեցական Հայրերը իմաստությամբ առանձնացրել են մեր առօրյա կյանքում թունավորող թուլություններ, որոնք *«մեղա»-ի* բաժնում կոչվում են յոթը մահացու մեղքեր. *«Հպարտություն, Նախանձ, Բարկություն, Ծուլություն, Ագահություն, Որկրամոլություն (շատակերություն), ցանկասիրություն»:* Այս մահացու մեղքերից ո՞րը կուզեք ընտրեք և կտեսնեք, որ մեր երկրային կյանքում սրանք իրապես նման են թունավոր նետերի, որոնց հարվածը անբուժելի է ու քեզ փրկություն չկա:

Ահա այս թունավոր նետերից մեկն է հանդիսանում *«Հպարտությունը»:* Այս մոլության հակառակ առաքինություններն են՝ *«Համեստությունը և Խոնարհությունը»:*

Աստվածաշնչում կարդում ենք, թե Աստված հակառակ է հպարտ և անբարտավան մարդկանց ու Իր շնորհները բաշխում է միայն խոնարհներին:

Առակաց Գրքում կարդում ենք՝ *«Տիրոջ անեծքն ամբարիշտների տներում է, մինչդեռ արդարների տներն օրհնվում են: Տերը հակառակ է ամբարտավաններին, նա շնորհ է տալիս խոնարհներին» (Առակ. 4:33-34):*

Յուրաքանչյուր մարդ կարող է հարց տալ, թե՝ *«Ի՞նչ է նշանակում ամբարտավան և կամ ո՞վ է նա»:* Հայերեն լեզվի բառագրքում *«ամբարտավան»* բառի դիմաց դրված է հետևյալ բացատրությունը. *«Մի մարդ, որ հպարտ ու գոռոզ է»:* Այս բառին իբրև հոմանիշ դրված են՝ *«ինքնահավան»* և *«մեծամիտ»* բառերը: Առակաց գրքում սրանց մասին հետևյալ բառերն են օգտագործվում. *«Ամբարիշտ, անիրավ, չար, անորեն, բարկասիրտ, նենգավոր, վատ, կարճամիտ...»* և այլն: Հիսուս Իր քարոզությանց մեջ շատ անգամներ ակնարկություն արեց մարդկանց մասին: Բերենք մի քանի օրինակներ: *Առաջինը* ՝ *Աղքատ Ղազարոսի և մեծահարուստի պատմությունն է (Ղուկ. 19:19-31):* Մեծահարուստը այստեղ *ամբարտավանի մեկն է, որովհետև իր անսիրտ և անզգամ* վարմունքով, աղքատ ու վիրավոր Ղազարոսին իր ուտելիքի փշրանքներից իսկ զրկեց և արժանացավ գեհենի կրակների մեջ այրվելուն: *Երկրորդը* ՝Տաճարում աղոթող փարիսեցին, որը նույնպես ամբարտավանի մեկն էր, քանի որ բարձրաձայն փառաբանում էր իր անձը և քննադատում Տաճարի անկյունում գտնվող մաքսավորին *(Ղուկ. 8:9-14):* Աստված անշուշտ չլսեց եսասեր ու ամբարտավան փարիսեցու աղոթքը և մերժեց այն ու արդարացրեց մեղավոր մաքսավորին, որը կուրծքը ծեծում էր և *«Աստված թողություն տուր իմ մեղքերիս»* էր աղերսում: *Երրորդը* ՝ Անիրավ Դատավորն էր, որը նույնպես ամբարտավանի մեկն էր, որովհետև ոչ Աստծուց էր վախենում և ոչ էլ մարդկանցից ամաչում *(Ղուկ. 18:8):*

Հպարտ մարդկանց ծանրագույն մեղքը այն է, որ նրանք իրենք իրենց աստվածներ են կարծում և փորձում են նստել Աստծու Աթոռին: Սատանան ժամանակին հրեշտակ էր, բայց գոհ չմնալով իրեն տրված պատիվներից, ուզեց Աստծուն հավասար լինել ու ընկավ փառքի աթոռից:

Այսօր 21-րդ դարում հոգեկան հիվանդագին մի վիճակ է տիրում մեր շուրջը: Մարդիկ ուղղակի տառապում

են *«մեծության»* և *«ինքնահավանության»* մոլուցքից: Դժվար է հասկացնել այսպիսիներին, որ ամեն մարդ գնահատվում է իր արժանիքների ու շնորհիքների համաձայն: Դժբախտաբար իրական ճշմարտությունից խուսափելու մի տրամադրություն կա, որը ժողովուրդը արդարորեն կոչում է *«ջայլամի քաղաքականություն»* կամ *«թզենու տերևով»* ծածկվելու ինքնախաբեություն:

«Հին Հունաստանում ապրող մի ոմն իմաստուն ոսպ (աղքատի կերակուր) էր ուտում ծառի տակ: Նրան է մոտենում մի մեծահարուստ և հպարտ մի պալատական հռետոր ու ծաղրանքով խրատում. - Ո՜վ իմաստուն մարդ, եթե դու քո խելացիությանդ հետ մի քիչ էլ շողոքորթություն ու հպարտություն ունենայիր և կարողանայիր կեղծավորություն անել, ապա այժմ պալատում փառահեղ ճաշ կուտեիր:

Իմաստունը անվրդով պատասխանում է.

- Իսկ դու, ո՜վ ստախոս, եթե ոսպով բավարարվեիր, կարիք չէիր ունենա կեղծավորություն անելու և ստորանայու մեծերի առջև»:

Համեստ մարդուն երջանիկ ապրելու համար բավական է աշխարհի մի խաղաղ անկյունը, սիրելի անձերով շրջապատված մի պատառ հացը ու հոգու խաղաղությունը:

Աստված նախընտրում է խոնարհ մարդկանց: Սուրբ Կույս Մարիամը Աստվածածին լինելու պատվին արժանացավ խոնարհ և հնազանդ լինելու պատճառով. *«Ահավասիկ ես մնում եմ Տիրոջ աղախինը, թող քո խոսքի համաձայն շինի ինձ» (Ղուկ. 1:38):* Մեր Տերը պալատների արժանի էր, սակայն ծնվեց մսուրի մեջ: Թագավոր էր և ավանակի վրայ նըստեց ու անուսում ձկնորս մարդկանց հրավիրեց Իրեն աշակերտ և առաքյալ լինել: *«Ես աղքատներին ու մեղավորներին քարոզելու եմ եկել»,*- ասաց նա:

Այս բոլորից հետո, որևէ մեկը իրավամբ կարող է հարցնել. *«Իսկ ովքե՞ր են խոնարհները»:* Առակաց գրքի համաձայն, խոնարհ մարդիկ լինում են՝ *«արդար, բարերար, հեզ, ուղիղ, երկյուղած, պարկեշտ, անարատ»* և նույնիսկ՝ *«իմաստուն ու խորագետ»: «Երանի հեզերին, որովհետև նրանք երկիրը պիտի ժառանգեն»: (Մատթ. 5:5),*- ասում է Հիսուս Իր *«Լերան քարոզում»:* Հոբ Երանելին

խոնարհ և համեստ մարդ էր, ինչպես նաև Բարի Սամարացին:

Խոնարհությունը անզորության և վախկոտության նշան չէ, *(ինչպէս սխալմամբ կարծում են որոշ մարդիկ)*, ու ոչ էլ մարմնավոր և կամ մտային հիվանդություն: նա օրհնություն է, առաքինություն և շնորհք է:

12-րդ դարի մեր վարդապետներից Սարգիս Շնորհալին այսպես է արտահայտվում.

«Մոտեցե՛ք Աստծուն և *նա կմոտենա ձեզ» (Հակոբ. 4:8):*

«Խոնարհությունը միմյանցից անսահման հեռավորությամբ բաժանված բնությունները միավորեց., քանի որ չկա մի այնպիսի վայր, ուր Աստված ներկա չինի, բացի ամբարտավան հոգուց: Որքան հեռու է արևելքն արևմուտքից, բյուրապատիկ ավելի հեռու է Աստված ամբարտավան հոգուց, սակայն երբ վերջինս կտրում-դեն է գցում չար արմատը ե խոնարհվում, իսկույն Աստծուն է մոտենում»:

«Դու որպես մարդ ես խոնարհվում՝ քո մեղքերի ու չարության պատճառով, իսկ նա քեզ իբրե Աստված է բարձրացնում՝ Իր մարդասիրությունից ու ողորմությունից մղված» (Սարգիս Վարդապետ Շնորհայի, «Խրատանի Ա.» Սուրբ Էջմիածին, 2002, էջ 60-61):

Ամեն մարդ պետք է լավ ճանաչի իր անձը, որպեսզի իմանա իր բարի հատկությունները, վստահի իրեն ե հաջողություն ունենա կյանքում, սակայն որեէ մեկը իրավունք չունի իրեն վերագրելու այնպիսի արժանիքներ, որոնք չունի ե ոչ էլ իրավունք ունի վիրավորելու ուրիշներին, որքան էլ նրանցից բարձր լինի իր հարստությամբ, մտքով, հեղինակությամբ ու գեղեցկությամբ: Ձեր ուշադրությանն եմ ուզում հանձնել Դանիել մարգարեի ընթերցվածներից մի հատված, որը կարդացվում է Սուրբ Ծնունդի և Սուրբ Զատկի ճրագալույցին Ավետարանների ընթերցումներից հետո:

«Բաբելոնի Նաբուգոդոնոսոր թագավորը գրավում է Արևելքի երկրները և գերում բազմաթիվ թագավորների: Հպարտանում է ու կարծում է, թե ինքը Աստված է: Այդ նպատակով պատրաստել է տալիս իր ոսկյա արձանը և հրամայում բոլոր մեծամեծներին ու գերի

թագավորներին, որպեսզի իրեն երկրպագեն: Այս տեսնելով Աստված մեծ պատիժ է տալիս Նաբուգոդոնոսոր արքային: նա խենթանում է, թողնում իր թագավորական աթոռը ու գնում է անապատ, և ապրում գազանների հետ: Որոշ ժամանակ հետո, անդրադառնում է, որ ինքը պարզ մարդ է և իր տարած հաղթանակները եղել են Աստծու շնորհիվ ու ինքը պարտական է Նրան, զղջում է, թողություն խնդրում իր սխալի համար և բոլորի մոտ հաստատում է Աստծու զորությունն ու սրբությունը: Աստված տեսնելով նրա դարձը, կրկին վերադարձնում է նրա աթոռն ու նախկին պատիվը»:

19-րդ դարի Կ. Պոլսի Պատրիարք Պողոս Ադրիանուպոլսեցին իր *«Խրատի Թանգարան»* գրքի *«Հպարտություն»* բաժնում ասում է հետևյալը.

ԻԲ. «Չկա աշխարհում մի ամրակուռ շինվածք, որը ժամանակի հնությունից չխարխլվի, ոչ էլ հզոր իշխանություն, որը թշնամուց չկործանվի, և ոչ հմուտ արվեստագետ, որին արիշները չգերազանցեն: Ուստի թող ոչ ոք չհպարտանա իր կորովամտությամբ, թե ոչ ոք չի կարող իր չափին հասնել որովհետև գուցե ուրիշներն ավելի լավ կարողանան իմանալ ու գործել:

ԻԴ. «Ամեն հպարտ կա՛մ տգետ է, կա՛մ հանդուգն: Տգետ է, որովհետև չունեցած բարին կարծում է, թե ունի, քանզի հպարտներին հատուկ է մտքով կուրանալ, և հանդուգն է, որովհետև ունեցած սակավ բարիքներով կամենում է ընկերների մեջ առավել՝ բարձր երևալ, որով և արհամարհում է ուրիշներին՝ իբրև բարիքներից զուրկ եղողների»:

ԼԸ. «Եթե հպարտը մտքով երևակայեր, թե աշխարհում միայն Աստվածն ու ինքն են և ուրիշ ոչ ոք, և աշխարհն ու նրանում եղող ամեն ինչ Աստված միայն իր՝ մարդու համար է ստեղծել միայն իր մասին է հոգում և իր բոլոր մտքերն ու գործերը քննում, բնավ չէր մեծամտանա: Որովհետև այդժամ ո՞ւմ պիտի կարողանար գերազանցել, եթե ոչ Աստծուն, քանի որ այլ

մեկը չէր լինի երկրի վրա, որին կարծեր, թե գերազանցում է: Բայց անհնար է, որ միտք ունեցող արարածն այնքան խելագարվի, որ իրեն Աստծուց բարձր համարի» (Պողոս Պատրիարք Ադրիանուպոյսեցի, «Խրատի Թանգարան» Սուրբ Էջմիածին 1999, էջ 258-260, 266):

Ուրեմն ամեն մարդ ինքն է, որ պատասխան պիտի տա իր գործերի համար: Եկեք իբրև հայ քրիստոնյաներ, հեռու մնանք հպարտության մահացու մեղքից և հետևենք Հիսուսի ճշմարիտ ու արդար ճանապարհին՝ *ազնվությամբ, համեստությամբ և իմաստությամբ* ու այս առաքինություններով զինված հավատարիմ զավակները լինենք Հայաստանյայց Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու, Մայր Աթոռ Սուրբ էջմիածնի ու մեր բազմաչարչար Հայրենիքի: Ամեն:

ԲԱՐՈՒԹՅՈՒՆ, ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆ

«Ով որ ունի, նրան կտրվի, իսկ ով որ չունի, և այն, ինչ որ նա կարծում է, թե ունի, կվերցվի նրանից» (Ղուկ. 8:18)

Ահաւասիկ այս հրաշալի, բայց միևնույն ժամանակ մի քիչ տարօրինակ խօսքը ես վերցրել եմ Ղուկաս Ավետարանչի 8-րդ գլխի 18 համարից:

Հիսուս Իր առաքելության երեք տարիների ընթացքում շատ հաճախ քարոզներ էր խոսում մարդկանց հետ, որպեսզի բացի նրանց հոգիները և ցանի Աստծու խոսքը: Եվ ահավասիկ, Ղուկաս Ավետարանչից ավանդված այս հրաշալի խոսքերը մեզ առիթ են տալիս մտածելու, թե ի՞նչ էր ուզում ասել մեր Տերը այս խոսքերով. *«Ով որ ունի, նրան կտրվի»:* Արդյոք ի՞նչի մասին էր խոսում. հարստությա՞ն, դրամի՞, կալվածների՞, թե՝ փառք և անուն ունենալու մասին: Անշուշտ՝ ոչ: *«Իմ թագավորությունը այս աշխարհից չէ...» (Հովհ. 18:36).*- հայտարարում էր մեր Տերը: Ոչ մեկը չի կարող Աստծու հետ լինել և Նրան հասկանալ, եթե ինքն իրեն չի ճանաչում ու հասկանում: *«Ով որ ունի»* խոսքը չի նշանակում նյութական բարիքներ ունենալ, այլ՝ գիտակցություն ունենալ և ինքն իրեն ճանաչելու հնարավորությունը ստեղծել: Կան մարդիկ, որոնք իրենց մասին մեծ կարծիք ունեն կամ շատեր կարծում են, թե իրենք ամեն ինչ ունեն և ամեն ինչի հասել են: Սխալ մոտեցում է կյանքի նկատմամբ: Ով որ գիտի կյանքը իրապես ապրելու գիտակցությունը, նրան է, որ պիտի տրվի, իսկ ով չի իմանում ն կարծում է, թե ունի, նրանից պիտի վերցվի եղածն էլ: Ուրեմն հարց կարող է առաջանալ. *«Ի՞նչ պիտի ունենանք»:* Գիտակցություն ունենալ, ըստ Պողոս Առաքյալի, նշանակում է կյանքը ապրել երեք հիմնական գաղափարներով. *բարությամբ, արդարությամբ և ճշմարտությամբ:* Մկըրտության ժամանակ քահանան հարցնում է կնքահորը, թե այս երախան *(երախա գրաբարյան բառ է, նշանակում է՝ չմկրտված)* ի՞նչ է խնդրում: Կնքահայրը պատասխանում է. *«Հավատք, հույս, սեր և մկրտություն»:* Հավատքը խորհրդանշում է բարությունը: Բարությունը արդեն իսկ հավատք է: Ասում ենք. *«Աստված բարի է»,* ուրեմն բա-

թությունը Աստծու ներկայությունն է մեր մեջ: Հիսուս հայտարարում է. *«...Հայրը իմ մեջս է, և ես՝ Հոր մեջ» (Հովհ. 10:38):*

Երկրորդ՝ արդարությունը Հույսն է, եթե մենք հույս չունենանք մեր կյանքում, արդար չենք կարող լինել: Բոլոր ավազակ մարդիկ, ովքեր կեղծում են, ստում, խաբում, առանց հույսի ապրող մարդիկ են, որովհետև խաբեբայությունը գալիս է հույսի պակասությունից:

Եվ երրորդ՝ ճշմարտությունը Սիրո ներկայությունն է մեր մեջ: *«Ես իսկ եմ հարություն և կյանք (Հովհ. 11:25),* ասում է Հիսուս և շարունակում. *«Ես եմ ճանապարհը, ճշմարտությունը և կյանքը»:* Ի՞նչ է աստվածային կյանքը և ի՞նչ է Աստծու տված ճըշմարտությունը, եթե ոչ սիրո բյուրեղացումը մեր հոգիներում: Պողոս Առաքյալը շատ գեղեցիկ կերպով մեզ բացատրում է Եփեսացիներին ուղղած իր նամակում. *«Մոտի խոսքերով թող ոչ ոք ձեզ չխաբի, որովհետև դրա համար է, որ գալիս է Աստծու բարկությունը անհնազանդ մարդկանց վրա: Ուրեմն՝ նրանց մասնակից մի եղեք, որովհետև, թեպետև մի ժամանակ խավար էիք, հիմա լույս եք ի Տեր. ընթացեք ինչպես լուսո որդիներ, քանզի լուսո պտուղներն են բարությունը, արդարությունը և ճշմարտությունը...» (Եփես. 5:7-10):*

Հետաքրքիր է իմանալ այս իրական պատմությունը բարի գործ կատարելու մասին.

«Քաղաքում անվանի ու հարուստ մի պաշտոնյա, մի օր դերձակի մոտից տուն գալու ժամանակ նկատում է մորուքավոր, երկարահասակ մի մարդու: Նրա տեսքից հայտնի էր, թե աղքատ և ցրտից սառած մեկն է, որովհետև սաստիկ ձմեռ էր: Աղքատ մարդը պաշտոնյայի վրա նկատելով նոր ու գեղեցիկ մի վերարկու, համարձակվում է մոտենալ և խնդրել նրան, ասելով. «Պարոն, ներեցեք, տեսա, որ նոր վերարկու եք գնել և եկա խնդրելու, որ ինձ տաք ձեր հինն ու մաշվածը»: Հարուստը այս խոսքերից ազդվելով, հանում է իր նոր վերարկուն և առանց տատանվելու մեկնում աղքատին, ասելով. «Այս մեկը վերցրեք, ես վաղը նորից կգընեմ»: Աղքատը հակառակվում է, բայց ի վերջո համոզվելով հեռանում է վերարկուն վերցրած իր հետ:

Մի ամիս հետո, հարուստը անհանգստանալով, սրտի կաթվածով տեղափոխվում է հիվանդանոց: Բժիշկները նրա տիկնոջը բացատրում են, որ հիվանդի վիճակը անհույս է, միայն Աստված կարող է փրկել նրան: Նրանք իրենց անելիքը կատարելով, թողնում են հիվանդին անգիտակից վիճակում: Որոշ ժամանակ հետո հիվանդը աչքերը բացելով տեսնում է իր մոտ բժշկի սպիտակ զգեստով աղքատին, որը բռնում է հարուստի ձեռքը ու ասում. «Դա ողորմած և բարի մարդ ես ու պիտի ապրես»: Հիվանդը առողջանում է ու խնդրում նորից տեսնվելու այդ մորուքավոր բժշկի հետ և ինչքան մեծ է լինում նրա զարմանքը, երբ իրեն հայտնում են, թե հիվանդանոցում ոչ մեկ մորուքավոր կամ իր նկարագրածի նման բժիշկ չկա, ոչ էլ երբևէ եղել է: Ավելին, իր հիվանդության օրերին միայն իր տիկնոջը և բուժող բժիշկներին էր թույլատրված իր սենյակը մտնել, ուրեմն, ոչ ոք չէր կարող իրեն այցելած լինել: Հայտնի է, թե մի հրաշք էր եղածը:

Ասվում է, թե մեծահարուստը առողջանալով, երբ վերադառնում է տուն, վաճառում է իր բոլոր հագուստները և աղքատներին բաժանում..»»

Ուստի, թող այս հոգեշահ իրական պատմությունը մխիթարություն և խթան հանդիսանա բոլոր նրանց համար, որոնք ողորմություն ու բարութիւն գործելով, հույս ունեն հասնելու Երկնքի Արքայության:

Թող Աստված բոլորիս հոգիների և գիտակցութեան մեջ իրապես բարությամբ ապրելու ուժը պարգևի, որպեսզի արդար ու ազնիվ լինենք և մանավանդ մեր Տիրոջ Հիսուս Քրիստոսի ճշմարտության սերմերը մարդկանց մեջ կարողանանք ցանել մեր կյանքի ընթացքում: Ձեզ հետ ձեր տները տարեք Նրա բարությունը, արդարությունը և ճշմարտությունը, որպեսզի հավիտենական կյանք ունենաք: Ամեն:

Հովհաննու Ավետարանի 7-րդ գլխի 37-րդ համարում կարդում ենք.

«Մեծ տոնի վերջին օրը Հիսուս կանգնած էր և աղաղակում էր ասելով. «Եթե մեկը ծարավ է, թող ինձ մոտ գա և խմի: Ով ինձ հավատում է- ինչպես Գիրքն է ասում,- նրա ներսից կենդանի ջրերի գետեր պիտի բխեն»: Նա այս ասում էր Հոգու մասին, որին ընդունելու էին իրեն հավատացողները, քանի որ Հոգին դեռևս չկար, որովհետև Հիսուս դեռ փառավորված չէր» (Հովհ. 7:37-38):

Ինչքան սրտառուչ է այս կոչը նրանց համար, որոնք իսկապես հավատացել են իրենց առաքելությանն ու կոչմանը այս կյանքում: Ի՜նչ կա ավելի գեղեցիկ բան քան Քրիստոսով ծարավը հագեցնելը: Ո՞վ արդյոք չի ապրել մարմնական ծարավի դառնությունը և նրան զուգընթաց՝ նաև հոգևոր ծարավի ահավորությունը:

Աստվածորդին, իբրև կյանքի աղբյուր, հավիտենական ջուր խոստացավ սամարացի կնոջ միջոցով, բոլոր իրեն հավատացողներին ասելով. *«Բայց ով որ խմի այն ջրից, որ ես եմ տայու նրան, հավիտյան չպիտի ծարավի: Իսկ այն ջուրը, որ ես նրան տայու եմ, նրա մեջ կլինի բխող ջրի աղբյուր հավիտենական կյանքի համար» (Հովհ. 4:14):* Ուրեմն Քրիստոս Իր շնորհներով պիտի պայծառակերպի բոլոր նրանց, որոնք կդիմեն Իրեն իրենց ծարավը հագեցնելու համար: Քրիստոս Ինքը այն ժայռն է, որից միայն հավիտենական ջուր է բխում: Պողոս Առաքյալը Կորնթացիներին ուղղած իր թղթում ասում է. *«Եվ բոլորն էլ նույն հոգևոր ըմպելիքը խմեցին, որովհետև խմում էին հոգևոր այն վեմից, որ գնում էր նրանց հետ և այն վեմը Ինքը Քրիստոսն էր» (Ա. Կորնթ. 10:4):*

Մեր Տիրոջ խոստացած ջուրը հավատացյալին մաքրելուց ու սրբելուց հետո, հավիտենականության ժառանգորդ է դարձնում, այլ խոսքով հավատացյալին վերածում է Սուրբ

Հոգու Տաճարի:

Նոր Կտակարանում հանդիպում ենք *երկու ջրամանների:* Ջուրը ոչ թե միայն քրիստոնեական աշխարհի, այլ զանազան կրոնների մեջ ընդունված է որպես բյուրեղացման և մաքրության խորհրդանիշ:

ա. Մատթեոսի Ավետարանում Երուսաղեմի կառավարիչ Պիղատոսը, երբ Հիսուս Նազովրեցու դատն էր տեսնում, մի ջրաման վերցնելով իր ձեռքերը լվաց:

Պիղատոսը տեսնելով, որ հրեաները ուզում են անպայման անմեղ մարդուն խաչ բարձրացնել, որպեսզի խռովություն չլինի, ջուր վերցրեց և նրանց ներկայությամբ ձեռքերը լվաց ու ասաց. *«Այդ արդարի արյունից անմասն եմ ես, դուք գիտեք»:* Իսկ ամբողջ ժողովուրդը պատասխանեց. *«Դրա արյունը մեր վրա և մեր որդիների վրա»: Այն ժամանակ Պիղատոսը նրանց համար արձակեց Բարաբբային և Հիսուսին գանակոծել տալով տվեց նրանց ձեռքը, որ խաչվի» (Մատթ. 27:24-25):*

Պիղատոսը ձեռքերը լվանալով հեշտ ճանապարհը գտավ, այն է՝ հրաժարվել որևէ պատասխանատվություն ստանձնելուց: Հակառակ որ նա տեսավ ու հասկացավ Քրիստոսի անմեղությունը, սակայն ինչ-ինչ քաղաքական պատճառներով չկարողացավ նույնիսկ փրկելու փորձ կատարել: Ներկա դարում էլ կան մարդիկ, որոնք երբեմն դժվարությունների հանդիպելով կամ ընտանեկան խռովություններ ունենալով, հեշտ ճանապարհ են ընտրում ասելով. *«Մեռնեմ ազատվեմ ամեն ինչից»:* Ճշմարիտ և քաջ քրիստոնյան պայքարող մեկը պիտի լինի իր աղոթքով ու հավատքով: Պետք է ոչ միայն ապրել, այլ նաև ապրեցնել:

Վերոհիշյալ ավետարանական հատվածներում հանդիպում ենք լվացման արարողությանց, որոնք տարբեր նպատակներ են հետապնդում:

ա. Մեր Տերը Հիսուս Քրիստոս, ծնկի գալով լվանում է Իր աշակերտների ոտքերը՝ ծառայելու խոնարհագույն օրինակը տալով մեզ:

բ. Մինչդեռ Պիղատոսը մերժում է ծառայելու պատասխանատվություն ստանձնել, որպեսզի քաղաքական

դրդապատճառներով հրեաների կողմից խռովություն չառաջանա:

Այսօր, 21-րդ դարում ավելի քան երբեք մարդկությունը պետք ունի Կենաց Ջրին, հագեցնելու համար ծարավ հոգիները, որովհետև մարդիկ չարացած և մոլեգնած վիճակ ունեն իրենց անձնական ու ընկերային կյանքում: Ամբողջ աշխարհը լցված է Պիղատոսներով, որոնք հազար ու մի տեսակ անարդարություններ, ավազակություններ կատարելով, նրա նման անմեղ ձևանալով իրենց ձեռքերը լվանում են պատասխանատվություն չստանձնելու համար: Չկա մի օր, որ չկարդանք կամ չտեսնենք ահռելի ոճրագործություններ, սպանություններ և քստմնելի գայթակղություններ: Նույնիսկ հավատացեալ ժողովուրդը *շվարած ու շփոթված մի վիճակ ունի, թե՛ «Ի՞նչ է լինելու այսքան անարդարության ու չարության վերջը: Ո՞վ պիտի պատասխան տա այսքան դժբախտությունների, ցեղասպանությունների ու ոճրագործությունների համար և չգիտի այլևս ո՞ւմ դիմի»: «Ո՞րն է այս բոլորի բանալին, ո՞վ կարող է հանգստացնել ու խաղաղեցնել աշխարհի մարդկությանը»:*

Պատասխանը մեկ է, մեր Տերը՝ Հիսուս Քրիստոս. *«Ես եմ ճանապարհը և ճշմարտությունը և Կյանքը: Ոչ ոք չի գա Հոր մոտ, եթե ոչ՝ ինձանով» (Հովհ 14:6):* Եկեղեցին է, որ մեր Տիրոջ միջոցով խաղաղության միակ նավահանգիստ կարող է դառնալ փոթորկալից ծովի դիմաց. *«Խաղաղություն եմ թողնում ձեզ, իմ խաղաղությունն եմ տալիս ձեզ...» (Հովհ. 14:27):* Որքա՜ն կարևոր է այս խաղաղությունը ամբողջ մարդկության համար:

Երբ խոսում ենք ծարավի ու ջրի մասին, հիշում ենք, իրապես, Հիսուսի վերջին խոսքը խաչի վրա *«ծարավ եմ»: «Այնուհետև Հիսուս, գիտենալով, թե ահա ամեն ինչ կատարված է, որպեսզի կատարվի գրվածը, ասաց՝ ծարավ եմ: Եվ այնտեղ քացախով լի մի ման կար. զինվորները լեղախառն քացախով մի սպունգ թրջեցին և այն դրին եղեգի ծայրին ու մոտեցրին նրա բերանին: Երբ Հիսուս լեղախառն քացախը բերանն առավ, ասաց. «Ամեն ինչ կատարված է»: Եվ գլուխը կախելով հոգին*

ավանդեց» (Հովհ. 19:28-30):

Բոլոր մարդկանց ծարավությունը ճիշտ Հիսուսի պես վերջանում է այսպես քացախի դառնությամբ: Ահա թե ինչու, մեր Տերը համայն մարդկության ծարավությունը Իր Անձի վրա վերցնելով՝ խաչվեց, որպեսզի Իր արյունը Կենաց Ջրի վերածելով, հազեցնի նրանց հավիտյան. *«Զինվորներից մեկը տեգով խոցեց նրա կողը, և իսկույն արյուն և ջուր ելավ» (Հովհ. 19:34):*

«Դեպի քեզ կարկառեցի ձեռքերն իմ. հոգիս հողի պես ծարավի է քեզ: Լսիր ինձ փութով, Տեր, քանզի շունչս պակասեց իմ ներսում, մի շրջիր երեսդ ինձնից, որ չնմանվեմ գերեզման իջնողներին» (Սաղմոս 142:6-7),- ասվում է Սաղմոսաց զրքում:

Ինչքա՜ն ճիշտ և ինչքա՜ն հարազատ է սաղմոսերգուի ընդգծած այս համեմատությունը մարդու վերաբերյալ՝ Աստծու ծարավի և հողի՝ անձրևի ծարավի միջև:

Մարդու ծարավը շատ նման է հողի ծարավին: Ինքն էլ հող է արդեն, որովհետև հողից է ստեղծված: Բայց մարդը ունի մշտական ծարավը իր Արարչի՝ Աստծու նկատմամբ: Ճիշտ է, որ բոլոր ժամանակներում էլ եղել են մարդիկ, որոնք ցանկացել են մերժել Աստծու ծարավը, Նրա անհրաժեշտությունը, նույնիսկ Նրա գոյությունը, հայտարարելով, թե մարդը կարիքը չունի Աստծուն՝ այս աշխարհում երջանիկ ու վայելքով լի մի կյանք ունենալու համար:

«Հոգիս հողի պես ծարավի է քեզ: Լսիր ինձ փութով, Տեր... մի շրջիր երեսդ ինձնից»,- աղաչում է սաղմոսերգուն: Որովհետև, եթե երեսդ դարձնես ինձանից, կնմանվեմ նրանց, որոնք գուբ, այսինքն գերեզման պիտի իջնեն ու հող դառնան: Ընդհակառակը, երեսդ դեպի ինձ դարձրու, այն ժամանակ կնմանվեմ արևի բացված կենսահորդ ու կենսախայտ ծաղիկին: Ահա թե ինչքան խորն է մարդու հոգու, զգացումի ու գիտակցության մեջ Աստծու ծարավն ու պահանջը: Աստված միանգամայն արև է, անձրև է, կենսահյութ է մարդու համար: Ահա թե ինչու մարդը Նրա անհագ ծարավը ունի:

«Հայ ժողովուրդը դարերի ընթացքին եղավ միշտ Աստծու ծարավի ժողովուրդ: Հաճախ մահվան

չափ ճնշվեց ու բռնադատվեց իր հավատքի համար, հաճախ էլ զլացվեց իրեն իր ուզած ձևով և իր ուզած չափով Աստծու իր ծարավը հագեցնելու ազատությունը: Բայց ոչ մի ուժ չկարողացավ հանգցնել Նրա մեջ Աստծու ծարավի կրակը: Ծաղրի, արհամարհանքի, նախատինքի մշտնջենական առարկա մի թող մեզ և մի թույլ տուր, որ մեր իրավունքը, մեր հայրենական ժառանգությունը հափշտակիչների սեփականությունը մնա, մի թույլ տուր, որ մեր սեփականությունը վերստին ու վերստին մեր ձեռքից հափշտակվի բռնաբար, դավադրաբար, վայրենաբար: Ողորմությանդ և գթությանդ լույսը ի վերջո ծագեցրու մեր վրա Տե՛ր, չբավարարող շնորհքովդ շրջապատիր մեզ և Քեզանով լիացրու, Քեզանով կշտացրու, ինչպես քաղցրատեղերը առատ անձրևով ես կշտացնում և վերակենդանացնում ծարաված, անապատականացած հողերը: Տե՛ր, ծարավի՛ ենք Քեզ ջո՛ւր եղիր մեզ» (Մեր հոգևորականներից մեկը խոսել է Սուրբ էջմիածնի Մայր Տաճարում, Միջինքին, 1 Մարտ 1990-ին):

Դրախտում, գիտության ծառի պտուղը ճաշակելով, մարդու ներսում անհագ ծարավ առաջացավ: Ծարավը նշանակում է երկու բան: Առաջինը՝ *ներքին ծարավն է, տանջող և նվազեցնող պահանջը, իսկ երկրորդը՝ արտաքինից այդ ծարավը հագեցնելը:* Ո՞րն է մարդու ներքին աշխարհում ծարավը հագեցնելու պատճառը: Երբ մարդը թողեց կենդանի ջրի ակնաղբյուր Աստծուն, ենթարկվեց այս կատաղի ծարավին: Երկրորդ՝ մարդու ներսում կան մի շարք ծարավներ: Առաջինը՝ *կյանքի ծարավ,* քանի որ ոչ մեկը չի ուզում մեռնել, երկրորդը՝ *ուրախության ծարավ,* և երրորդը՝ *սիրո ծարավ:* Աստված գիտի, որ մարդը շատ անգամ անտեսված, լքված է, չի նկատվում նույնիսկ իր նմանների կողմից, ուստի պետքը ունի սիրո և ուշադրության: Ուրեմն՝ կան նաև՝ *կարոտության ծարավ* ու *հոգևոր ծարավ:* Այս ծարավը ոչ մի բան չի կարող գոհացնել: Հոգին ծարավ է և գոհացում է ուզում: Դարերից ի վեր, մարդիկ փորձել են զա-

նազան միջոցներով իրենց ծարավը հագեցնել, բայց հակառակն է տեղի ունեցել՝ ավելի են ծարավել. *«Ով որ այս ջրից խմի, նորից կծարավի, բայց ով որ խմի այն ջրից, որ ես եմ տալու նրան, հավիտյան չպիտի ծարավի» (Հովհ. 4:13):* Պատասխանը այս է: Սովորական ջուր խմելով՝ մենք նորից պիտի ծարավենք, սակայն, Աստծու տված ջրից խմելով՝ երբեք չպիտի ծարավենք: *«Իսկ ո՞րն է այդ ջուրը»:* Շատ պարզ ու հստակ է: Աստծու բերանից դուրս եկած յուրաքանչյուր խոսքը:

Այսօր, մեր Տերը պատրաստ է և ուզում է Իր կենդանի ջուրը մեզ տալ, միայն թե մենք մեր չար ու անարդար սրտով, մեղքերով ու պղծությամբ, հպարտությամբ ի մարդկային բոլոր մոլություններով ուժը ունենանք Տիրոջ առաջ խոստովանվելու և մեղքերի թողություն ու ներում ստանալով, հագեցնելու մեր հոգու ծարավը:

Կան չորս կարևոր մտածումներ, որոնցով կարելի է գոհացում տալ մեր ծարավին:

ա. *Տիրոջ արյամբ մեղքերի թողություն* և մեղքի գերությունից փրկություն:

բ. *Մեր Տիրոջ մտերիմ սիրով:* Հիսուս խոստացավ ամեն օր մեզ հետ լինել՝ Իր սիրով գոհացնելու համար: Քրիստոսի սերը կենդանի ջուր է, որը մեր կյանքը երջանիկ է դարձնում:

գ. *Տերը մեզ գոհացնում է Իր Սուրբ Հոգով,* զորությամբ ու կարողությամբ:

դ. *Տիրոջ Երկրորդ Գալուստով:* Վերջնական գոհացում և բավականացում պիտի լինի, երբ մեր Տերը Հիսուս Իր Հոր փառքով ու բազում հրեշտակներով վերադառնա և մեզ փառավոր մարմին տա:

Ըստ Գրիգոր Տաթևացու, ջուրը տասներկու ձևով է իմաստավորվում:

«Առաջինը՝ *բնական:* Երկրորդը՝ նշանակում է *ժողովուրդ:* Երրորդը՝ *բարեբախտություն:* Չորրորդը՝ *դըժբախտություն:* Հինգերորդը՝ *ազահություն:* Վեցերորդը՝ *հեշտասիրություն:* Յոթերորդը՝ *լվանում է:* Ութերորդը՝ *նեղություն:* Իներորդը՝ *հանգստություն:* Տասներորդը՝

իմաստություն: *Տասնմեկերորդը* ՝ լուսավորություն: *Տասներկուերորդը* ՝ կոչում կամ տեսություն»:

(«Գրիգոր Տաթևացի «Գիրք Հարցմանց» Պրակ &Գ)

Մինչև տասներկուերորդը ամեն մի օրը նվիրված է ինչ որ մի բանի:

«Ավելի հարմար գտանք խոսել վերջինի' Տասներկուերորդի մասին, ուր ասվում է. *«Ինչպես փափագում է եղջերուն աղբյուրի ջուրը»:* Երկրի չորս կողմերում, չորս հողմեր կան, *արևելյանը տաք է ու խոնավ,* ինչպես ասում են բժիշկները: *Արևմտյանը,* հակառակ սրան, *հով է ու չոր: Հարավայինը տաք է ու չոր: Հյուսիսայինը,* սրան հակառակ, *հով է ու խոնավ:* Այսպես էլ մարդու չորս տարիքում փոխվում են չորս հողմերը: Նախ մանկության հասակում, երբ ծնվում է *երեխան, արևելյան հողմ է* ՝ *տաք ու խոնավ:* Պատանեկության հասակում *հարավային հողմն է* ՝ *տաք ու չոր:* Երիտասարդության հասակում հյուսիսային հողմն է՝ հով և խոնավ: *Տարեց հասակում* արևմտյան հողմն է՝ հով և չոր: *Իսկ ծերության ժամանակ* հյուսիսային հողմն է՝ հով ու խոնավ»:

«Իսկ մարդու մեջ չորս ջրերը չորս տարրերից են ՝ աղի, դառը, քաղցր և հոսած: Աղի ջուրը աչքի մեջ է, որպեսզի կարգավորվի ջերմությունը: Դառը ջուրը ականջում է, որ պահպանի մուտքը: Քաղցր ջուրը բերանում է' համերը ճաշակելու համար, իսկ հոսած ջուրը մեջքում է, որպեսզի պահպանվեն ծնունդները» (Գրիգոր Տաթևացի, «Գիրք Հարցմանց», «Մարդու մեջ եղած չորս հողմերի և չորս ջրերի մասին» պրակ Թ):

Գիտության և ճշմարտության իմացումը մարդու կյանքի գլխավոր նպատակակետն է եղել շարունակ: Ուսանողը իր աշակերտական գրասեղանից սկսած գիտության ծարավով է ապրում իր կյանքը, գիտնականը ինչքան որ հմտանում է իր ասպարեզում, դեռևս պահանջքը ունի ավելիին: Իր ծարավը հագեցնել փորձող մարդն է, որ կարող է բարձունքներ նվաճել: Վայ այն մարդուն, որ կարծում է թե իր ծարավը հագեցրել է:

Ամեն մեկս իբրև հավատացյալներ մեր կյանքում

հրավիրվում ենք լվացվելու: Երկու ճանապարհ կա, որից միայն մեկը կարող ենք ընտրել. ծառայելու պատասխանատվություն ստանձնել կամ անտարբերության մէջ կորստյան մատնվել: *«Ով ծարավ հոգիներ, եկեք՝ Կենաց Ջրից խմեցեք»:* Այդ Կենաց Ջուրը Ինքը մեր Տերն է՝ Հիսուս Քրիստոս: Մոտեցեք և ձեր կենդանի կյանքով խմեցեք Նրա հավատքի Ջրից ու **անմահացեք** և ձեր գանձերը հաստատեք Նրա վրա՝ բարի գործեր կատարելով ու արդար և մաքուր կյանք ունենալով, Աստծու փառքի համար: Ամեն:

ԲԱՐԿՈՒԹՅՈՒՆ

Ամեն անգամ, երբ հավատացյալները Սուրբ Պատարագի ընթացքին իրենց մեղքերի համար թողություն են խնդրում Աստծուց և մասնակցում հավաքական խոստովանանքին, լսում են բազում մեղքերի մասին՝ *բամբասանքի, հայհոյանքի, նենգության, ատելության, խորամանկության, անզգամության, հանդգնության, դատարկաբանության, անիծաբանության, չարախոսության, ստախոսության* և այլն ու ասում են *«Մեղա Աստուծո»* և հոգևորականը թողություն տալով հաղորդությամբ մաքրում է նրանց մեղքերը: Սակայն այս հարյուրավոր մեղքերի կողքին, մեր եկեղեցական Հայրերը իմաստությամբ առանձնացրել են մեր առօրյա կյանքում թունավորող թուլություններ, որոնք *«մեղա»-ի* բաժնում կոչվում են յոթը մահացու մեղքեր. *«Հպարտություն, Նախանձ, Բարկություն, Ծուլություն, Ագահություն, Որկրամոլություն (շատակերություն), ցանկասիրություն»:* Այս մահացու մեղքերից ո՞րը կուզեք ընտրեք և կտեսնեք, որ մեր երկրային կյանքում սրանք իրապես նման են թունավոր նետերի, որոնց հարվածը անբուժելի է ու քեզ փրկություն չկա:

Ահա այս թունավոր նետերից մեկն է հանդիսանում *«Բարկությունը»:*

«Լսել եք, թե ինչ ասվեց նախնիներին. ««Մի սպանիր», որովհետև ով որ սպանի, ենթակա կլինի դատաստանի: Իսկ ես ձեզ ասում եմ, թե՝ ամեն մարդ, որ զուր տեղը բարկանում է իր եղբոր վրա, ենթակա կլինի դատաստանի, և ով որ իր եղբորն ասի՝ հիմար, ենթակա կլինի ատյանի, և ով որ իր եղբորն ասի՝ ապուշ, ենթակա կլինի գեհենի կրակին:

Եթե սեղանի վրա քո ընծան մատուցելու լինես և այնտեղ հիշես, թե քո եղբայրը քո դեմ մի ոխ անի, քո ընծան թող սեղանի առաջ և գնա նախ հաշտվիր քո եղբոր հետ և ապա եկ քո ընծան մատուցիր...» (Մատթ. 5:21-25):

Ժամանակին փարիսեցիները կարծում էին, թե բավական է միայն արգիլել մարդասպանությունը և ամեն ինչ կկարգավորվի, բանի որ ըստ նրանց, միայն հանցագործությունն էր, որ մարդուն կարող էր տանել դատարան կամ մահվան: Բայց Հիսուս մարդկանց զգուշացրեց հեռու մնալ նաև բարկությունից և արգիլեց նրանց նույնիսկ մեկը մյուսին *հիմար ու ապուշ* ասել: Բարկությունը, ինչպես գիտեք արտահայտվում է կրակոտ շարժումներով, անվայել խոսքերով ու կեղտոտ հայհոյանքներով. *«Ով որ բարկանա իր եղբոր վրա և անարգի նրան»*- ասում է Հիսուս, արժանի պիտի լինի ամենածանր պատժին, որովհետև վիրավորում է նրա զգացումներն ու դրժում սիրո պատվիրանը, որի նպատակն է՝ *«համաձայնություն և խաղաղություն տարածել եղբայրների միջև»:*

Նա պատվիրում է մեզ նաև զգուշանալ *քենից:* Քենը մի զգացում է, որը ունեցողը անպայման իր կապերը խզում է իր եղբորից. չի խոսում նրա հետ, չի այցելում ու չի օգնում նրան, ընդհակառակը շատ անգամ նույնիսկ վրեժ է լուծում նրանից:

Այսպիսի դիրքորոշումը հակառակ է սիրո պատվիրանին: Դժբախտաբար, մեր առօրյա կյանքում շատ ենք հանդիպում այսպիսի դեպքերի. երանի չլինեին: Սիրով լցված քրիստոնյան գիտի ներել, ունի ներողամտության ոգի, քանի որ շարժվում է աստվածային ճշմարտությունների ուղիով, ուր ասվում է. «*Նախ հանիր քո աչքից այդ գերանը և ապա հստակ կտեսնես՝ քո եղբոր աչքից շյուղը հանելու համար» ((Մատթ. 7:5):* Չեք պատկերացնի, թե ինչպիսի բարոյական և ուժեղ մի պատվիրան է այս: Մեր Տերը նախընտրեց հաշտությունն ու ներողամտությունը: Ով նվեր է տալիս կամ արդար գործեր է կատարում ու նույնիսկ աղոթք անում, բայց իր հոգին լցված է քենով, չի կարող Աստծուն հաճելի մարդ լինել, ինչքան էլ, որ ինքը պնդի և փորձի ապացուցել այդ: Աստված բնականաբար մերժում է նրա աղոթքն ու արդար գործերը և միայն կարող է ընդունել այն ժամանակ, երբ տվյալ անհատը քենը վերացնում է ու մաքրում իր սիրտը:

Մի տոնակատարության առիթով, Հիսուս ճանապարհվում է դեպի Երուսաղեմ և անցնում Սամարիայից: Երբ հասնում է նրա սահմաններին, ուղարկում է Իր երկու աշակերտներին, որպեսզի իրենց համար գիշերելու տեղ ապահովեն: Սամարացիները, երբ իմանում են, թե նրանք հրեա են, մերժում են ընդունել նրանց: Այն ժամանակ էլ թշնամություններ կային: Առաքյալները վերադառնում են և այս մասին լուր տալիս Հիսուսին: Հովհաննես և Հակոբոս առաքյալները երբ լսում են նրանց ասածը պատահածի մասին, սաստիկ զայրանում են Սամարացիների դեմ ու դիմելով Հիսուսին ասում են. *«Տեր, կամենո՞ւմ ես, որ ասենք, և երկնքից կրակ իջնի ու բնաջինջ անի նրանց»:* Մեր Տերը հանգստացնում է նրանց և ասում. *«Չգիտեք ի՜նչ հոգուց եք դուք, որովհետև մարդու Որդին չեկավ մարդկանց հոգիները կորստյան մատնելու, այլ՝ փրկելու» (Ղուկ. 9:54-56):*

Բոլորդ էլ լավ գիտեք Աստծու զորության մասին, որ լինելով Ամենակալ, Ամենակարող և մանավանդ ծայր աստիճան համբերող, ըստ Աստվածաշնչի չդիմանալով մարդկանց անիրավություններին ու մեղքերին՝ մի քանի անգամներ սաստիկ բարկացավ. հիշենք թեկուդ Սոդոմ Գոմոր քաղաքը, որը կործանեց, ուղղակի կրակի բաժին դարձրեց ամբողջովին, այնտեղից ազատվեց միայն Ղովտ անունով մի արդար մարդ՝ իր ընտանիքով: Երկրորդ՝ Ջրհեղեղն էր, երբ Աստված աշխարհը կործանեց, որտեղից ազատվեց միայն մի արդար մարդ՝ Նոյն ու իր ամբողջ գերդաստանը և մի քանի տեսակի զանազան կենդանիներ:

Այստեղից հարց է ծագում. *«Եթե Աստված լինելով այդքան համբերող, չդիմացավ ու բարկացավ և չարաչար պատժեց մարդկանց ու աշխարհին, ապա ինչքան վտանգավոր են հավատքից թույլ այն մարդիկ, որոնք դուրս են գալիս իրենց սահմաններից, այնքան են բարկանում, որ վնասում են և իրենց և շրջապատի մարդկանց»:* Սաղմոսաց գրքում ասվում է. *«Բարկացեք, բայց մի մեղանչեք և օր չանցնի ձեր բարկության վրայից» (Սաղմ. 4:4),* այսինքն սխալ կամ անարդարացի բաների համար չափից ավելի բարկանալը մեղք է և վնասակար:

Ավելի հստակեցնելու և հասկանալի դարձնելու համար

այս ճշմարիտ խոսքերը, ուզում եմ ձեզ պատմել կյանքից վերցված մի դեպք, ուր կարող եք տեսնել, թե ի՞նչ մեծ վնասներ կհասցնի բարկությամբ ու զայրույթով լցված մարդը:

«Երիտասարդներից մեկը բարկությունից այլայլված մոտենում է մի ծերունու ու ասում, որ մի մարդ խիստ կերպով նախատել և վիրավորել է իրեն ու ինքը պիտի պահանջի, որ նա բոլորի ներկայությամբ ներողություն խնդրի իրենից, թե չէ, «Ամեն ինչ վատ կվերջանա նրա համար»:

- Միրելիս,-, պատասխանում է իմաստուն ծերունին,- լսիր իմ խորհուրդը, որով կարող ես լավագույն ձևով լուծել վրեժդ: Հայհոյանքը հագուստի վրա նետված ցեխ է, ավելի հեշտ է քեզ համար խոզանակել ու ջնջել այն, երբ չոր վիճակում է: Մի շտապիր, սպասիր մի քիչ, որպեսզի երկուսդ էլ հանդարտվեք ու պիտի տեսնես, որ ամեն ինչ պիտի վերջանա ավելի հանգիստ ձևով և փոխադարձ հասկացողությամբ: Իսկ եթե համառես և ինձ լսես, ձեր ատելությունը ավելի կխորանա և երկուսիդ համար էլ ծանր հետևանքներ կունենա:

Բարեբախտաբար երիտասարդը, որը հարգում էր մեծերին, (ինչը որ դժբախտաբար քիչ ենք հանդիպում այսօրվա մեր երիտասարդների մեծ մասի մոտ) լսում է ծերունու խորհուրդը: Հաջորդ օրն իսկ նրան վիրավորողը անդրադառնալով իր սխալին, գալիս ու ներողություն է խնդրում»: Ահա ձեզ համբերության արդյունքը:

Սա կյանքից վերցված մի օրինակ էր, որը շատ բան է սովորեցնում: Իհարկե, հեշտ է ուրիշներին ճիշտ ճանապարհ ցույց տալը: Մի լսեք այնպիսիներին, որոնք լեզվով են ամեն ինչի ընդունակ: *«Խոսքը առանց գործի մեռած է»,*- ասում է մեր ժողովուրդը: Մեր Տերը՝ Հիսուս եղավ աստվածային ճշմարտությունների իսկության կենդանի օրինակը:

Հետաքրքիր է նաեւ այս պատմությունը, որը պատկերում է բարկությունը, սակայն կենդանական աշխարհում.

«Պատմվում է, թե Հնդկաստանի անտառներից մեկի մոտակայքում գտնվող մի գյուղի ծայրամասի

հյուղակում երկու փոքրիկներ առանձին քնել էին: Անտառից մի խոշոր վագր է դուրս գալիս և մարդու հոտ առնելով մոտենում է հյուղակին ու նրա բաց դռնից ներս է մտնում: Տեսնում է քնած փոքրիկներին և պատրաստվում է նրանց վրա ցատկել ու բզկտելով ուտել նրանց: Հանկարծ դիմացի հայելու մեջ նկատում է մի խոշոր վագրի: Բարկանում է, նա էլ նույնն է կրկնում, գայրանում է և ատամները ցույց տալիս, նա էլ նույնն է անում: Այս արարքի վրա դիմացի վագրին պարտության մատնելու և որսը առանձին ուտելու համար վագրը իր ամբողջ ուժով նետվում է հայելու վագրի վրա: Արդյունքը այն է լինում, որ հայելին ջարդ ու փոշուր է լինում և աղմուկից վագրը երեխաներին թողած լեղապատառ անտառ է փախչում»:

Կռիվ հրահրողը անպայմանորեն ինքն է տուժում: Սրա համար հայկական ժողովրդային *առածն ասում է. «Բարկությամբ ոտքի կանգնողը՝ վնասով իր տեղն է նստում»:*

Մի մտածող ասում *է. «Մարդ երբ բարկանա, թող տասը հաշվի, իսկ երբ գայրանա՝ թող հարյուր հաշվի»:*

Հիշվում է, թե Հուլիոս Կեսարը ամեն անգամ բարկանալուց՝ արտասանում էր հռոմեական այբուբենի գրերը սկզբից մինչեւ վերջ՝ իր բարկությունը զսպելու համար:

Մեր հոգևոր կյանքի փորձառությունից կարող ենք մեջբերել այս վկայությունը.

«Ամուսնացած մի զույգ ապրում էին միասին երկար տարիներ: Հետաքրքիրն այն էր, որ երկուսն էլ բարկացկոտ էին: Ո՞րն էր նրանց միասին ապրելու գաղտնիքը: Ըստ նրանց վկայության, երկար տարիների ընթացքում ոչ մի անգամ չի պատահել, որ նրանք միասին բարկանան, մեկը բարկանում է՝ մյուսը լսում և այսպէս հաջորդաբար»: Եթե կարող եք, նույնը արեք նաև դուք: Մի բարկացեք միաժամանակ:

Շատ զարմանալի պիտի թվի, եթե ասենք, թե երկու տեսակ բարկություն կա: *Գովելի բարկություն և ժխտական բարկություն:*

ա. Ժխտական բարկությունը արգիլված է աստվածային օրենքով և հաշիվ պիտի պահանջվի նրա համար: «Ամեն մարդ, որ զուր տեղը բարկանում է իր եղբոր վրա, ենթակա կլինի դատաստանի..»» (Մատթ. 5:22):

Ժխտական բարկությունների բազմաթիվ օրինակներ ենք գտնում Աստվածաշնչում: Երբ Աստված չընդունեց Կայենի ընծան, Կայենը խիստ բարկացավ *(Ծնն. 4:5-6):* Հակոբը խաբեց Եսավին և նրա փոխարեն հոր օրհնությունը առավ: Եսավը բարկացավ *(Ծնն. 27:45)* և այլն:

Երբ Հիսուսին տեսնելու համար արևելքից մոգերը եկան, տեսնվեցին Հերովդես թագավորի հետ և խոստացան վերադարձին նրան հանդիպել ու տեղեկացնել հրաշք մանուկի գտնված վայրը. երբ չկատարեցին իրենց խոստումը՝ Հերովդեսը բարկացավ *(Մատթ. 2:16):*

բ. Ինչպես ասացինք բարկությունը ունի նաև *գովելի մի կողմ:* Այս կարգի բարկությանց հեղինակը Աստված Ինքն է: Աստված բարկանում է ընդհանրապես չարերի և մեղավորների վրա: Նրա բարկության օրինակներից կարելի է հիշել Սոդոմ Գոմորը, Ջրհեղեղը, Աշտարակաշինությունը, Եգիպտացիներին և այլն:

Շաբաթ օրով Հիսուս ժողովարանում գոսացած ձեռքով մարդու հետ էր խոսում, հրեաները քննադատեցին նրան: Այն ժամանակ *«Հիսուս նայելով նրանց՝ բարկությամբ լցված և նրանց կուրության համար տրտմած, ասաց մարդուն. «Երկարիր ձեռքդ»: Նա երկարեց և ձեռքն առողջացավ» (Մարկ. 3:5):*

Վերջին անգամ, երբ Հիսուս Երուսաղեմ գնաց. *«Տաճարի մեջ գտավ նրանց, որ վաճառում էին արջառներ, ոչխարներ և աղավնիներ, ինչպես նաև լումայափոխներ, որ նստած էին: Եվ չվանից խարազան շինեց ու բոլորին տաճարից դուրս հանեց. նաև ոչխարներին ու արջառները. իսկ լումայափոխների պղնձադրամները ցիր ու ցան արեց և նրանց սեղանները շուռ տվեց» (Յովհ. 2:14-15, տես նաև (Մատթ. 21:12, Մարկ. 11:15, Ղուկ. 19:45):*

Ուրեմն անարդար բարկությունը մարդուց է և նրա

շահերին ի նպաստ է, որը մահացու մեղք է, իսկ արդարացի բարկությունը Աստծուց է և Աստծու համար է: Այս պարագային մեղքը գնում է բարկության պատճառ հանդիսացողին:

Երբ Աստվածավախ մի մարդ տեսնում է օրենքի դեմ եղած մի սխալ շարժում ու բարկանում է, դա մեղք չի կարելի համարել. երբ անիրավ տեղը մեղադրում ու անպատվում են մեզ կամ մեր բարեկամներին, նրանց պաշտպանելու համար բարկանալը հանցանք չի կարելի համարել, որովհետև դա նշանակում է, թէ տվյալ անձը իր մեջ Աստծու վախը ունի ու իր պարտականությունն է, որ կատարում է: Դավիթ մարգարեն *ասում է. «Եթե բարկանաք, մի մեղանչեք» (Սաղմ. 4:5):*

Բարկությունը մի կիրք է, որ զգում ենք, երբ որ մեկը մեր կամքին հակառակ մի գործ է անում: Այն երկու մասի է բաժանվում. մեկը առաջ է գալիս մեր անհամբերությունից, որը մի հիվանդություն է և մահացու մեղք, իսկ երկրորդը՝ մեր պարտականության գիտակցությունից, արդարասիրությունից, որը առաքինություն է: Բարկությունը երբեմն ոչ թե օգտակար է, այլ նաև կարևոր է, առանց դրա ոչ մոլությունը և ոչ էլ արդարությունը չեն կարող սանձվել ու պահպանվել:

Երջանկահիշատակ Գարեգին Ա. ասում է.

«Բարկությունը ուրիշ բան չի, եթե ոչ այն թույլ տրտմությունը, որը փոքր մի գրգիռի առջև մեզ բնականից հեռու վիճակի է մղում, ուր մենք մեր տրտմության սանձը կորցրած ենք լինում և մեր ջղերը իրենց տիրապետությունն են ստեղծում մեր մեջ: Բարկացկոտ մարդը միշտ սովորականից տարբեր, չափազանց խիստ բառեր է գործածում իր խոսքում և միշտ պատրաստ է, առանց մտածելու իսկ իր ընթացքի մասին, կատարելու արարքներ, որոնք բանականությամբ չեն բացատրվում, տրամաբանությամբ չեն արդարանում»...

...Արդար ցասումը չպետք է շփոթել այս մոլութեան հետ. երբ ուրիշի բարիքի համար, և առանց մտքի հավասարակշռությունը կորցնելու, խիստ մի վերաբերմունքին է ակնարկվում այդ բացատրությամբ: Բարոյական գիտակցության և զգացումի տեր մի մարդու համար բնական երևույթ է սա և արտաքին ձևով միայն

կարող է նմանվել բարկության, իսկ խորքով և էությամբ՝ երբեք» (Գարեգին Ա. «Աստվածաբանություն» ««Հովվական Աստվածաբանություն» 2005, էջ 174):

Եթե մարդիկ մասնավոր նկատառումներով ու սատանայական խորհուրդներով փորձում են դիմացինին բարկացնել, նրան գայթակղեցնելու և վարկաբեկելու համար, այն ժամանակ վայ եկել է այդպիսիների գլխին, որովհետև նրանց ճակատագիրը արդեն իսկ որոշված է Աստծու վճիռով.

«Եվ ով որ ինձ հավատացող այս փոքրիկներից մեկին գայթակղեցնի, նրա համար լավ կլինի, որ նրա պարանոցից էշի երկնաքար կախվի, և նա սուզվի ծովի խորքը» (Մատթ. 18:6):

19-րդ դարի Կ. Պոլսի Պատրիարք Պողոս Ադրիանուպոլսեցին իր *«Խրատի Թանգարան»* գրքի *«Բարկություն»* բաժնում ասում է հետևյալը.

«Բարկացողը ոչ միայն իրեն է վնասում, այլև այն ընկերոջը, որի վրա բարկանում է, որովհետև նման է խախուտ որմի, որը փլչելիս ոչ միայն ինքն է փշրվում, այլև խորտակում ու փշրում է նրանց, ում վրա ընկնում է: Շատ անգամ բարկացողն այնքան է խելագարվում, որ ինքն իր վրա է հարձակվում ու իրեն կորստյան մատնում»:

«Բոլոր բարկացողները փոքրոգի են: Որովհետև մարդ բարկանում է այն բանի վրա, ինչին անկարող է տոկալ, և այդժամ ցասմնական կիրքը բորբոքում է արյունը սրտի շուրջ, ինչի պատճառով բարկացածը բոցաշնչում ու հառաչում է և սառը ջուր կամենում սրտի տապը զովացնելու համար... Գեղեցիկ բարկություն է սեփական բարկության վրա բարկանալը» (Պողոս Պատրիարք Ադրիանուպոլսեցի, «Խրատի Թանգարան» Սուրբ Էջմիածին, 1999, էջ 278, 285):

Հակոբոս Առաքյալն ասում է. *«Թող ամեն մարդ արագ լինի լսելու մեջ, ծանր՝ խոսելու մեջ և ծանր՝ բարկանալու մեջ. որովհետև մարդու բարկությունը Աստծու արդարությունը չի կատարում» (Ա. Հակ. 1:19-20):*

12-րդ դարի մեր վարդապետներից Սարգիս Շնորհալին այսպես է արտահայտվում.

«Աստծո արդարությունը բոլոր առաքինի գործերն են, մանավանդ հեզությունը, քաղցրությունը և ներողամտությունը, որոնցով Ինքը Քրիստոսը հանդես եկավ: Իսկ այն ամենը, որ բարկությունից է, հակառակ է սրանց, սրանցից անսահման հեռու, և մեկ անձի մեջ այս երկուսը չեն կարող միանալ»:

«Կրակը հանգցնելու համար ջուր է հարկավոր, այդպես էլ բարկությունը հանգցնելու համար նախ և առաջ պէտք է Աստծո երկյուղն ու դատաստանի տանջանքներն աչքի առջև ունենալը, ապա՝ հեզություն, խոնարհություն, սեր, ներողամտություն, հպատակություն եղբայրներին և իրեն ամենահետինն ու ամենամեղավորը համարել..» (Սարգիս Վարդապետ Շնորհալի, «Խրատանի Ա» Սուրբ Էջմիածին, 2002, էջ 22, 26):

Եկեք հետեւենք Հիսուսի աստվածային պատվիրաններին, մեր մեջ ավելի զորացնենք սերն ու ներողամտության ոգին մեկս մյուսի նկատմամբ, մնանք մեր բարձրության վրա, ապրենք պատվաբեր կյանքով, փորձենք չբարկանալ, նվիրվենք մեր ընտանիքին, մեր ժողովրդին ու մեր Եկեղեցուն: Դժվար է, բայց անկարելի չէ, ապրել հեզ, պարկեշտ, մաքուր ու սրբակենցաղ կյանքով: Ամեն:

ՏԵՐ, ՄԻ ՆՇԱՆ ՑՈՒՅՑ ՏՈՒՐ

«Չար և շնացող ազգը նշան է փնտրում, այլ նշան չի տրվի նրան, բայց միայն Հով նան մարգարեի նշանը» (Մատթ. 12:39)

Մատթեոսի Ավետարանի 12-րդ գլխի 39 համարից վերցված այս խոսքերը Քրիստոսի կողմից ասվել է իբրև հանդիմանություն կասկածամիտ ու անհավատ մարդկանց, խոսքեր, որոնք երկու հազար տարիներ հետո էլ այսօր մի անգամ ևս լսվում են մեզանից յուրաքանչյուրի ու բոլոր նրանց կողմից, որոնք չար են և անհավատարիմ Աստծու պատվիրանների նկատմամբ:

Մեր Տերը Իր առաքելության ճանապարհին ինչքան էլ քարոզեց ու հրաշքներ գործեց, մարդիկ տեսնելով իսկ այդ չհավատացին Նրան կամ քչերը հավատացին ու լսելով հանդերձ՝ չհամոզվեցին: Եվ երբ մի առիթով օրենքի ուսուցիչներն ու փարիսեցիները երկնքից նշան խնդրեցին, Հիսուս ասաց. *«Չար և շնացող ազգը նշան է փնտրում, այլ նշան չի տրվի նրան, բայց միայն Հովնան մարգարեի նշանը»* և նրանց տվեց Հովնան մարգարեի օրինակը, որը կետ ձկի փորում երեք օր ու գիշեր մնացել և ապա դուրս էր եկել ու ապաշխարություն էր քարոզում: Հիսուս ինքն էլ Իր Հարությունից ու Համբարձումից հետո աշակերտներին ուղարկեց քարոզելու և ավետարանելու երկնքի արքայությունը:

Նրա ժամանակ կասկածանքն ու թերահավատությունը պատել էր փարիսեցիների և օրենքի ուսուցիչների հոգիները:

Պողոս Առաքյալը Տիմոթեոսին ուղղած իր նամակում ասում է. *«Իսկ եթե մեկն այլ բան ուսուցանի և չանսա խոսքերին և այն վարդապետությանը, որ աստվածպաշտության համապատասխան է, այդպիսին գոռոզամիտ է և ոչինչ չգիտե»» (Ա Տիմ 6:3-4):*

Աստծու խոսքերը միշտ էլ լսում ենք, բայց մեզանից քանի՞ հոգի են կարևորություն տալիս և ուշադրություն դարձնում դրանց: Փոխանակ Աստուածաշունչը ամենօրյա մեր ընթերցման առարկան դարձնելու, այսօր 21-րդ դարում, մարդիկ այնքան են հեռացել Աստծու ճշմարտություններից, որ նույնիսկ հաճախ

պատասխան չենք կարողանում տալ բոլոր նրանց, որոնք իրենց մոլորեցուցիչ վարդապետություններով գալիս են մեր մտքերն ու ընդհանրապես մեզ մեր քրիստոնեական հավատքից շեղելու:

Մեր ապրած կյանքում վայելում ենք ամեն բարիք, որոնք Աստծու տվածներն են, մանավանդ յուրաքանչյուրիս կյանքը, որը հրաշալի մի պարգև է Նրա կողմից իբրև գերագույն նշան: Բայց դժբախտաբար մարդը ինչքան իր կյանքում հաջողություններ է ունենում, այնքան ավելի ու ավելի է հեռանում Աստծուց: Ինչո՞ւ, որովհետև նա չի գիտակցում պարզ մի ճշմարտություն. Աստված է մեզ տալիս ամեն ինչ, որով միշտ և ամեն անգամ փառք պիտի տանք Նրան, մեզ Ստեղծողին, որպեսզի նորից ստանանք: Աստված միշտ էլ լսում է մեր խնդրանքները: Հարց է ծագում, *«Իսկ մենք լսո՞ւմ ենք Նրա ձայնը»:* Հակոբոս Առաքյալը իր ընդհանրական նամակում ասում է. *«Իսկ եթե ձեզնից մեկը իմաստությամբ թերի լինի, թող խնդրի Աստծուն,- որ բոլորին այն տալիս է առատապես և չի հանդիմանում,- և նրան կտրվի: Միայն թե նա հավատով թող խնդրի և թող չերկմտի, որովհետև ով երկմիտ է, նման է ծովի հողմակոծ և տարուբերվող այիքներին»> (Հակ. 1:5-6):*

Դժբախտաբար աշխարհի ստեղծագործության օրից իսկ եղել են ու կան մարդիկ, որոնք ինչքան էլ տեսել են Աստծու ցույց տված նշաններն ու լսել Նրա հայրական խրատները՝ անտարբեր են մնացել: Հավատքը մարդու համոզումների արդյունքն է: Բայց մարդու Աստծուն հավատալու չափանիշը ի՞նչ է եղել, եթե ոչ միայն իր շահերի իրագործումը: Երբ պետք ունենք, հիշում ենք Աստծուն, որովհետև նյութապես վատ վիճակում ենք, դժվարությունների ու նեղությունների մեջ ենք կամ էլ հիվանդ ենք և սկսվում են ամենօրյա խնդրանքների ու աղաչանքների շարքը:

Այսօր էլ մեր ապրած կյանքում, երբ մեկը իրապես սրտանց և հավատքով է աղոթում կամ իր սիրտը ամբողջությամբ նվիրում է Աստծուն, դժբախտաբար երբեմն իր շրջապատում ծաղրանքի ու անարգանքի առարկա է դառնում: Իրենք իրենց իբրև թե Աստծու ծառայության նվիրած հոգիներն անգամ իսկ ծաղրում են այդպիսիներին, որովհետև նրանց հավատքը ձևական է և համոզուած չեն իրենց առաքելության ճշմարտացիությանը:

Հիսուս Ինքը իբրև Աստծու Որդի, մեծ վստահություն ուներ իր Հոր նկատմամբ, որով կոչ ուղղեց աշխարհի բոլոր թերահավատներին ձերբազատվել ամեն տեսակի մտահոգություններից:

Աստված միշտ էլ մեզ հետ եղավ, պահեց ու գուրգուրեց մեզ և եթե այսօր չի մոռացել մեզ, նրա համար է, որ դեռևս մեր մեջ սրտանց աղոթող սրտեր կան մեր բոլորի համար: Մենք էլ մեր պատմության ընթացքում մի քանի անգամներ փարիսեցիների և օրենքի ուսուցիչների նման նշան ուզեցինք Աստծուց և Նա տվեց՝ մեկի փոխարեն երեսուն, վաթսուն և հարյուր:

Կյանքի նպատակը մահը չի կարող լինել: Ճիշտ չի համեմատել այն անցնող ստվերի հետ: Ստվերը առարկա չի, այլ նրա թողած մթությունը լույսի մեջ: Իսկ կյանքը մի իրողություն է, որի նպատակը հենց իր մեջն է: Կյանքի նպատակը կյանքն է: Իմաստունը իրավունք ունի, երբ ասում է. *«Աստված մարդուն ստեղծեց անմահության համար»:* Անմահություն նշանակում է կյանքը կյանքի համար: Կյանքը իր բոլոր իրական բարիքներով, իր արդար հաճույքներով, իր ֆիզիկական և հոգեկան վայելքներով, իր երազներով ու տեսիլքներով, իր բոլոր հայտնություններով, խորհուրդներով ու առեղծվածներով, իր ամբողջական արժեքներով: Անմահության գաղափարը միացած Աստծու գաղափարի հետ, ոչ թե թմրեցնում է հոգին՝ *«անտեսելու ու նվազեցնելու երկրավոր կյանքի արժեքը, այլ էլ ավելի է բարձրացնում այդ արժեքը»:*

Այնքան անհեթեթ է ուրանալ Աստծու գոյությունն ու հոգու անմահությունը, որքան բանավոր ու բնական է հավատալ և մեկին և մյուսին: Ուրացումը թուլացնում է ու փչացնում հոգին, իսկ հավատքը այն զորացնում ու ազնվացնում է: Ուրացումը մահն է, հավատքը՝ կյանքը: Ճշմարիտ կրոնը այս հավատքի վրա հիմնված կյանքն է:

Այս առթիվ ուզում եմ ձեզ մի հեքիաթ պատմել, որը գրել է Ռուս նշանավոր գրող Տոլստոյը, ուր պարզ երևում է, թե ինչպե՞ս կարելի է Աստծուն տեսնել:

«Պատմվում է թե մի հեռավոր երկրում ապրում էր տարօրինակ և հաճախ անհեթեթ գաղափարներ սնուցող մի թագավոր: Մի գիշեր նա իր անկողնում քնելու փոխարեն մենախոսում է. «Չկա մի բան, որ

կյանքումս տեսած չլինեմ: Տեսա ու վայելեցի բոլոր բաները, որոնք կարող էին աննշմար մնալ հասարակ մահկանացուներից: Կա միայն մի բան, որը չեմ տեսել, ուզում եմ Աստծուն տեսնել»:

Հաջորդ առավոտ, նա հրավիրում է իր բոլոր ենթականերին, կրոնավորներին ու գիտնականներին և նրանց ասում, որ ուզում է Աստծուն տեսնել: Եվ երեք օր ժամանակ է տալիս, որպեսզի իր մտածածը իրականացնեն, չկատարելու դեպքում բոլորը դատապարտվում են մահվան:

Տարօրինակ ցանկություն, ո՞վ պիտի կարողանար գոհացնել այսպիսի արտառոց ու անիրականալի մի ցանկություն: Ամեն տան մեջ սուգ էր, բոլորն էլ ահուդողի էին մատնվել: Երեք օրը անցնում է, բայց ոչ մեկը չի կարողանում նրան պատասխանել: Թագավորը զայրացած պատրաստվում է հրաման արձակել պատժելու համար չկատարողներին, ծառան հայտնում է նրան, թե մի պարզ հովիվ (չոբան) ասում է, թե նա կարող է գոհացնել արքայի ցանկությունը:

Թագավորը հովիվին կրկնում է Աստծուն տեսնելու իր ցանկությունը:

Պարզ հովիվը հրավիրում է թագավորին դաշտ դուրս գարու: Օրը շատ արևոտ էր:

Հովիվը թագավորին խնդրում է վերև երկնքին նայել, սակայն թագավորը երբ փորձում է երկնքին նայել, աչքերը կկոցում է ուժեղ արևից ու չի կարողանում բացել կոպերը: Զայրացած թագավորը հովիվին ասում է, թե նրա նպատակը ի՞նչ է, արդյոք իրեն կուրացնե՞լ է ուզում:

Ուզում եմ մեջբերել հովիվի խոսքերը բառ առ բառ. «Քավ լիցի, Տէր արքա: Բայց իմացեք, որ Աստծու բյուրավոր փառքերից փոքրագույնն է միայն այս արևը, որը ձեզ ցույց տվեցի: Դուք, որ նրան անգամ չկարողացաք նայել, ինչպե՞ս պիտի հաջողություն ունենաք տեսնելու Աստծուն, որ միլիոն անգամ ավելի շողշողուն է, քան արևի ճառագայթները: Այս աչքերը անզոր

են դա անել, պետք է ունենալ ուրիշ աչքեր, որպեսզի կարողանաք Նրան տեսնել»:

Թագավորը տեսնում է, որ հովիվը խելացի է, ուզում է իմանալ, թե Աստծուց առաջ ի՞նչ է եղել: Հովիվը նրան առաջարկում է հաշվել մեկից առաջ եղող թվանշանով: Թագավորի պատասխանը ոչինչ է լինում: Հովիվը նրան հայտնում է, որ Աստծուց առաջ էլ ոչ մի բան չի եղել: Թագավորը չի գոհանում հովվի պատասխանով, այս անգամ հարցնում է, թե՝ «Ի՞նչով է զբաղվում Աստված, ամեն օր ի՞նչ է Նրա գործը»:

Հովիվը ասում է, թե կպատասխանի նրա հարցին միայն մի պայմանով, երբ թագավորի հետ իր հագուստները փոխվեն: Դրանից հետո հովիվը պատասխանում է. «Ճիշտ այն, ինչ որ մենք հիմա արեցինք: Նա մեկին բարձրացնում է և մի ուրիշին խոնարհեցնում, մեկին մերկացնում է, մյուսին շորեր է հագցնում: Մեկին ուրախացնում է, իսկ մյուսին՝ լացացնում»: Ահա այս է Աստծու զբաղմունքը և քանի որ թագավորի հագուստներ ուներ ու իշխանությունը անցել էր իր ձեռքը, հրամայում է հովիվի հագուստներ հագած թագավորին գլխատել և ինքը դառնում է թագավոր»:

Արժանի է չէ՞: Իհարկե: ժողովուրդն էլ ուրախ էր, որ թեկուզ պարզ, բայց խելացի թագավոր ունեցավ:

Այո, տեսնելու համար պետք է նայել ու դիտել, որովհետև կյանքի պայմանները այնպես են, որ այսօր դժբախտաբար մեր շրթունքներով Աստծուն ենք փառաբանում, բայց մեր կյանքով հակառակ ենք ապրում և փոխանակ մեր ներկայությամբ համ ու հոտ տալու մեր շրջապատին, դառնություն և կսկիծ ենք տալիս մեր նմաններին ու նրանց սիրտը և հոգին լուսավորելու փոխարեն, մշտական քննադատություններով նրանց հեռացնում ենք մեզանից:

Աստծու աղոթքի Տները շատ անգամներ դատարկ են, էլ այնտեղ աղոթողներ չկան կամ քիչ կան, դրա համար մենք մեր բերանը բացում ենք ու խնդրում մեր Տիրոջից. *«Տեր, մի նշան ցույց տուր, որպեսզի այդպիսիները խելքի գան»:*

Փոխանակ Թովմաս առաքյալի նման թերահավատ լինենք, աղաչենք մեր Տիրոջը, որ Իր սրբազնասուրբ մատները

մխրճի մեր մեղքերի մեջ թաթախված մտքին ու թարախոտված վերքերին, որպեսզի բուժվենք:

Եթէ չենք կարողանում լսել, աղաչենք, որ Տերը Իր ահեղ և ամենազոր ձայնը հնչեցնի առավել ուժեղ ու բարձր, որպեսզի Իր մոտ գնանք մեր հավիտենական փրկության համար:

Եթե ուզենք Աստծու կողմից մեզ տրված նշանները տեսնել, ամեն օր այնքա՞ն բան կա տեսնելիք... կարևորը մեր ցանկությունն է: Ահա թե ի՞նչ է ասում Պողոս Առաքյալը Եբրայեցիներին ուղղած իր նամակում. *«Այսօր, եթե նրա ձայնը լսեք, մի կարծրացրէք ձեր սրտերը ձեր հայրերի պես, որոնք Աստծուն բարկացրին փորձության օրը անապատում, ուր նրանք փորձեցին ինձ, քննեցին ինձ, թեև տեսան իմ գործերը ամբողջ քառասուն տարի..» (Եբր 3:7-12):*

Իմ աղոթքս է, որ դուք բոլորդ, իբրև Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու և Մայր Աթոռ Սուրբ էջմիածնի հավատարիմ զավակներ, կասկածամիտ չլինեք, սիրեք իրար Հիսուսի կտակի համաձայն, լավատես լինեք, ձեր հավատքով ու համերաշխությամբ զօրացրեք ձեր Աղօթքի Տունը, Աստծու Տունը և մանավանդ ձեր հոգիներից ներս կառուցեք Հավատքի Եկեղեցին, Սիրո Եկեղեցին, որպեսզի ամուր ընտանիք ու հանգիստ և խաղաղ կյանք ունենաք: Ամեն:

ՓՅՈՒՆԻԿԵՅԻ ԿՆՈՋ ՀԱՎԱՏՔԸ

«Լավ չէ մանուկների հացն առնել
և շներին գցել» (Մատթ. 15:26)

Եթե մի ակնարկ գցենք մեր Տիրոջ երեք տարվա առաքելության վրա, պիտի տեսնենք, որ Նրա գործունեության կարևոր մի մասը կազմում են բժշկությունները:

Ղուկասը, հեթանոսությունից դարձի եկած անտիոքացի բժիշկը, իր արհեստի բերումով Ավետարանում լայնորեն անդրադարձել է մեր Տիրոջ կատարած բժշկություններին:

Մանրակրկիտ կերպով ուսումասիրելով Նոր Կտակարանում արձանագրվածը նկատում ենք, որ բոլոր բժշկությունների հիմքը եղել է *հավատքը:*

Հիսուս Իր գործունեությունը հավատքի վրա հիմնելով, հրաշք է գործել միայն այն ժամանակ, երբ հավատք է գտել ենթակայի կամ ժողովրդի մոտ: Եթե հավատքի թերություն նկատեր, հրաշք չէր կատարում: *Օրինակի համար Մատթեոս Ավետարանի 9-րդ գիտի 27-29 համարներում նկարագրվում է, թե Հիսուս ինչպե՞ս է բուժում երկու կույրերին և մի համրի: Երբ նրանք խնդրում են իրենց բուժել Հիսուս ասում է. «Հավատո՞ւմ էք, որ ես այդ բանը ձեզ կարող եմ անել»: Նրանք ասացին Նրան, «այո, Տեր»: Այդ ժամանակ դիպավ նրանց աչքերին և ասաց. «Ըստ ձեր հավատի թող լինի ձեզ» (Մատթ. 9:27-29):*

Մեր Տերը օժտված էր բժշկելու աստվածային զորությամբ: Նա հրաշագործելու ժամանակ կերպարանափոխվում էր, աստվածային ճառագայթը շողում էր Իր անձի մեջ: Իր անձնավորությունից բխող զորությունը ներգործում էր հիվանդի հոգեբանական աշխարհում և բարեփոխում նրա գոյավիճակը: Հիշենք տասներկու տարի արյունահոսությամբ տառապող կնոջ պատմությունը, որտեղ Հիսուս մատնանշում է, թե Իրենից մի ուժ դուրս եկավ, երբ կինը դիպավ իր հագուստի քղանցքին. *«Մեկն ինձ դիպավ, որովհետև զգացի, որ ինձնից զորություն դուրս եկավ»: «Երբ կինը տեսավ, որ ծածուկ չմնաց նրանից, դողալով եկավ և ընկավ նրա առաջ ու ամբողջ ժողովրդին պատմեց, թե ինչ բանի համար*

դիպավ նրան և թե ինչպես իսկույն բժշկվեց: Եվ Հիսուս ասաց. «Քաջալերվիր, դուստր, քո հավատը փրկեց քեզ, գնա խաղաղությամբ» (Ղուկաս 8:47-48):

Շատ քչերը միայն կարող են ունենալ և գործածել գերբնական այդ ուժը: Օրինակի համար Առաքյալները, հակառակ որ մշտապես Հիսուսի հետ էին չկարողացան բուժել մի հիվանդի, ինչո՞ւ, որովհետև ըստ Վարդապետի, նրանք դեռնս չէին բարձրացել աստվածային ուժի գործածության և այդ հիվանդությունը կարելի էր բուժել միայն աղոթքով ու ծոմապահությամբ:

Ուրեմն, Մեր Տերը հրաշք էր գործում կամ բուժում էր միայն այն ժամանակ, երբ անհատը հավատք ուներ:

Ահա այսպիսի մի դեպք է նկարագրում Մատթեոս Ավետարանիչը *(Մարկոսն էլ ունի 7:27) «Փյունիկեցի Կնոջ հավատքը»* անվան տակ *(Մատթ. 15:21-28):*

Առաջին պահին կարդացողին ընդվզեցուցիչ է թվում Ավետարանից վերցված մեր այս խոսքը. *«Լավ չէ մանուկների հացն առնել և շներին գցել» (Մատթ. 15:26),* սակայն նրա իմաստը հասկանալու համար լավ կլիներ, որ ուղղակի կարդայինք Մատթեոս և Մարկոս Ավետարանիչների միջադեպի նկարագրությունը:

«Հիսուս այդտեղից ելնելով գնաց Տյուրոսի և Սիդոնի կողմերը: Եվ ահա այդ շրջաններից եկած քանանացի մի կին աղաղակում էր ու ասում. «Ողորմիր ինձ, Տեր, Դավթի Որդի, աղջիկս չարաչար դիվահարվում է»: Բայց նա նրան պատասխան չտվեց և նրա աշակերտները մոտենալով, աղաչում էին նրան ու ասում. «Արձակիր նրան, որովհետև մեր հետևից աղաղակում է»: Նա պատասխան տվեց ու ասաց. «Այլ տեղ չեմ ուղարկված, եթե ոչ Իսրայելի տան կորուսյալ ոչխարների մոտ»: Իսկ կինը մոտենալով երկրպագում էր նրան ու ասում. «Տեր, օգնիր ինձ»: Նա պատասխանեց նրան և ասաց. «Լավ չէ մանուկների հացն առնել և շներին գցել» Եվ նա ասաց. «Այո, Տեր, որովհետև շներն էլ կերակրվում են իրենց տիրոջ սեղանից ընկած փշրանքներով»: Այն ժամանակ նրան պատասխանեց և ասաց. «Ով կին,- մեծ է քո հավատը թող քեզ լինի՝ ինչպես որ կամենում ես»: Եվ նրա դուստրը նույն ժամին

բժշկվեց» (Մատթ. 15:26):

Ընդհանրական Քրիստոնեական Եկեղեցու Սրբերից՝ Սուրբ Հովհան Ոսկեբերան Հայրապետը հետաքրքիր մեկնաբանություն է տալիս Փյունիկեցի կնոջ հավատքի մասին *(Մատթ. 15:27-28):*

«Տես իր (կնոջ) խոնարհությունն ու հավատքը. Հիսուս հրեաներին անվանեց «մանուկներ», բայց կինը այս պատասխանից չհուսահատվեց, այլ հակառակը՝ (իր հերթին) նրանց «տերեր» անվանեց, և ուրիշներին գովելուց չտխրեց ու ասաց. «Այո, Տեր, նույնիսկ շները հացի փշրանքն են ուտում, որ թափվում է տերերի սեղանից»: Ահավասիկ տես կնոջ իմաստությունը: Նա չհանդգնեց հակառակ խոսել ուրիշների մասին: Ուրիշներին գովելու պատճառով չվիրավորվեց, ոչ էլ հանդիմանությունից՝ վրդովվեց: Տես իր հաստատակամությունը: Երբ Տերը ասաց, թե՝ «Արդար չէ մանուկների հացն առնել և շներին տալ»: Կինը պատասխանեց. «Այո, Տեր»: Հիսուս նրանց (հրեաներին) «մանուկներ» կոչեց, իսկ կինը՝ (ոչ միայն մանուկներ), այլ՝ «տերեր»: Հիսուս գործածեց «շուն» բառը, իսկ կինը բնութագրեց «շան» գործողությունը: Տեսնո՞ւմ ես կնոջ համեստությունը:

Այս ամենից հետո, համեմատիր նրա խոնարհությունը հրեա ժողովրդի հպարտության հետ. «Աբրահամի որդիներ ենք և երբեք ոչ ոքի չենք ծառայել, ինչպե՞ս ես ասում, թե ազատ կշինեք» (Հովհ. 8:33): Մենք պոռնկությունից չենք ծնվել, մեր Հայրը մեկ է՝ Աստված» (Հովհ. 8:41): Այս կնոջ պարագան տարբեր է: Նա ինքնիրեն «շուն» է անվանում և նրանց «տերեր»: Այդ պատճառով նա երեխայի նման եղավ: Եվ ինչ ասաց Քրիստոս. «Ով կին, մեծ է քո հավատը, թող քեզ լինի ինչպես որ կամենում ես» (Մատթ. 15:28):

Ուրեմն, կարող ենք ենթադրել, թե Տերը կնոջն անտեսեց, որպեսզի բարձրաձայն հայտարարի ու վարձատրի նրան, ասելով. *«Թող քո ցանկությունը լինի»,* այսինքն՝ *«Քո հա-*

վատը այնքան զորեղ է, որ կարող է ազդել ավելի կարեվոր դեպքերում»: Այս ձայնը նման է այն խոսքին, որն ասաց. *«Թող լույս լինի: Եվ լույս եղավ» (Ծննդոց 1:3) «Եվ նրա դուստրը նույն ժամին բժշկվեց» (Մատթ. 15:28):*

Տեսնո՞ւմ ես, թե ինչպես այս կինը ոչ քիչ չափով մասնակցեց իր աղջկա բուժմանը: Տես Հիսուս չասաց, թե՝ «Թող քո աղջիկը կատարյալ լինի», այլ՝ «Քո հավատը այնքան զորեղ է, որ կարող է ազդել ավելի կարեվոր դեպքերում»: Այս խոսքերը ամենևին պատահական չէին և ոչ էլ ասվեցին կեղծավորաբար, այլ (հիրավի) կնոջ հավատը մեծ զորություն ուներ ու այն շատ ուսանելի է:

Տերը այս միջադեպի հետ կապված որոշակի զորության ցուցադրում կատարեց, որի հետևանքով էլ կնոջ աղջիկը անմիջապես բուժվեց» (Սուրբ Հովհան Ոսկեբերան Հայրապետ, Մատթեի մեկնություն):

Հիշյալ դրվագը Հիսուսի կյանքում պատահած կարևոր նկարագրություններից մեկն է. այն խորհդանշում է հրեաների մերժումը Վարդապետի *քարոզության, որը հեթանոսները ընդունեցին:* Հրեաներից մերժված ու մի կողմ նետված հացը՝ ուրախությամբ ընդունվեց հեթանոս ժողովուրդներից: Հիսուս զիջեց Փյունիկեցի կնոջ խնդրանքին, տեսնելով նրա սերը իր հիվանդ դստեր նկատմամբ և մանավանդ նրա ունեցած խոր հավատքը:

Գարեգին Արք. Պեքճյանը Սուրբ էջմիածնի Մայր Տաճարում իր խոսած քարոզում հետաքրքորեն հիշում է իր մոր հավատքի մասին.

«Ես կհիշեմ իմ մորս հավատքը, որ տարիներ առաջ, երբ իմ ձեռքես բռնած որպես պզտիկ երեխա, եկեղեցի կտաներ առանց բառ մը հասկնալու հայերեն, առանց գիտնալու արարողության տևողությունը, և ամեն անգամ հինգ ժամ Եկեղեցի ներկա ըլլալեն հետո, կելլեինք Եկեղեցիեն դուրս, և մայրս կդառնար ինծի, կըսեր. «Տղաս, այսօր նորեն քահանան պակաս բան մը կարդաց»: Տեսեք մորս հավատքը, այն անձը, որ բառ մը իսկ չէր հասկնար աղօթքներեն, չի գիտեր լեզուն, չի

գիտեր արարողության տևողությունը, բայց հինգ ժամ արարողության ներկա գտնվելե հետո, կըսե, որ բան մը պակաս կարդացվեցավ: Ան կնշանակե, թե մայրս իր հավատքին մեջ, Եկեղեցվո մեջ միայն Աստուծո ներկայության մեջ կգտնվեր, Անոր հետ կիոսեր և ապրում մը ուներ՝ Աստուծո ներկայությամբ արդարորեն ապրիլ, Անոր հետ միասին աղոթել, Անոր հետ միասին եկեղեցվո մեջ ապրում մը ունենալ,- ահավասիկ կրոնքին առաջին և հիմնական սկզբունքներեն մեկը» (Գարեգին Արք. Պէքճյան, Ուիստի Պատարագ Մայր Տաճարում, 24 Օգոստոս 2003թ.):

Այո', իրապես ապրել հավատքով Աստծու ներկայության մեջ:

«Լավ չէ մանուկների հացն առնել և շներին գցել» խոսքը հասկանալով, տեսնում ենք, որ Աստծու արքայությունը բաց է բոլոր նրանց առաջ, որոնք սրտանց հավատում են մեր Տիրոջը ու հետևում Նրա ուսուցումներին, որպեսզի հավիտենապես վայելեն Նրա ներկայությունը իրենց կյանքում:

Հետաքրքիր է իմանալ.

«Պղատոնի իմաստասիրական գործերում կարդում ենք.

Սոկրատ փիլիսոփայի մահվան ժամանակ, երբ իր բարեկամ Կրիտոնը նրա վերջին ցանկության մասին է հարցնում, մեծ Իմաստասերը տալիս է հետևյալ պատասխանը.

«Կրիստոն, Ասկլեպ աստծուն պարտք եմ մի աքաղաղ, վճարիր այդ պարտքը, մի մոռացիր» ու ավանդում է հոգին»:

Այստեղ ամեն ինչ պարզ է, հակառակ, որ փիլիսոփաները հավատացյալ չեն եղել, սակայն այս պարագային Սոկրատի ասածը չէր վերաբերում պարզ մի անձի, այլ բժշկության աստուած Ասկլեպին, որը նրա հոգին բժշկում էր մարմնի տագնապից:

Երանի հասկանանք, որ մեր ապրած ամբողջ կյանքը ծնունդից մինչև մահ, երազի պես է, գալիս ենք ու գնում: Սակայն կան մարդիկ, որոնք իրենց այս կյանքը այնպես են արժևորում և իմաստուն կերպով անցկացնում, որ գալիս են, բայց չեն գնում,

այլ մնում են բոլորի սրտում: Այսպիսի դեպքերում նրանց մասին խոսելիս առավելապես Հայաստանում ապրող հայորդիները ասում են՝ *մեծատառով Մարդ էր,* գիտենք, որ *մարդ* բառը գրվում է փոքրատառով, իսկ *Աստծու* անունը մեծատառով: Այս ձեւով ժողովուրդը տալիս էր իր գնահատականը մեռնողի մասին, որի գլխավոր առաջնորդող ոգին այս ժամանակավոր կյանքում եղել էր՝ հավատքը և սերը Աստծու ու մարդկանց նկատմամբ: Այսպիսիների հոգին արժանանում է Երկնային Արքայության: Իսկ դու, սիրելի հավատացյալ հայորդի, չե՞ս ուզում հետևել այս տեսակի մարդկանց օրինակին: Եթե այո, ուրեմն քո այս կարճ կյանքում եղիր գթասիրտ, բարի ու ազնիվ և դու էլ Աստծու կամքով ու հրամանով, արժանի կլինես Նրա Երկ-նային Թագավորությանը: Ամեն:

«Բայց այն էլ իմացե՛ք, եթե տանտերը գիտենար, թե որ ժամին գող կգա, թույլ չէր տա, որ իր տունը կտրեն: Դուք էլ պատրաստ եղեք, որովհետև այն ժամին, երբ չէք սպասի, կգա Մարդու Որդին» (Ղուկաս 12:39-40):

Ո՞վ է այն անձը, որ քնած ժամանակդ կամ գործով տանից հեռու եղած պահիդ կքանդի տանդ դռներն ու պատուհանները և կկողոպտի ինչ որ ունես: Գողը նա է, որ իր գործում մասնագիտացել է: Նրա համար կարևոր չէ, թե ինչքան վնաս կհասցնի հանգիստ և խաղաղ ապրողներին: Նա ձրիակեր է, աննկարագիր, ծույլ է և օրենքը խախտող:

Դժվար է գողություն արած ժամանակ նրան ձերբակալել: Հաճախ ոստիկանությունը շաբաթներով, ամիսներով ու նույնիսկ տարիներով աշխատում է գտնել, վնասազերծել և արժանի պատիժը տալ նրան: Երանի թե այս գողը իր ճարպկությունը և ինչո՞ւ չէ իր շնորհները օգտագործեր ճակատի քրտինքով դրամ վաստակելու մեջ, պատկերացրեք նրա հաջողությունը:

Գող միայն չի կարելի համարել նրանց, որոնք տներն են կողոպտում: Գող է, նաև այն գործավորը, որը բավարար աշխատավարձ ստանալով հանդերձ, խաբում է իր գործատիրոջը և չի ուզում աշխատել: Գող է նաև այն գործատերը, որը շահագործում է իր գործավորին: Քիչ է վճարում, որն անընդունելի է հավատք ու խիղճ ունեցող մարդու համար: Դժբախտաբար փաստ է, որ դրամին գերի մարդու մեջ խիղճը մեռնում է: Այս դեպքում և գործատերը և գործավորը քրիստոնյային վայել ճանապարհի վրա չեն:

Պողոս Առաքյալը Փիլիպպեցիներին ուղղած իր նամակում ասում է. *«Գիտեմ զրկանքով ապրել, գիտեմ առատության մեջ լինել: Ամեն ինչում, բոլոր պայմանների տակ, սովորել եմ թե կուշտ լինել, թե քաղցած մնալ, թե առատության մեջ լինել, թե զրկանք կրել: Ամեն ինչին կարող եմ նրա շնորհիվ, ով ինձ զորացրեց» (Փիլիպ. 4:12-13):*

Պողոս առաքյալը ասում է. *«Թույլ մի՛ տուր, որ չարը*

հաղթի քեղ, այլ բարիով հաղթիր չարին» (Հռոմ 12:2):

«Արթո՛ւն կացեք այաուհետև, ամեն ժամ աղօթք արեք, որպեսզի կարողանաք զերծ մնալ այն ամենից, որ լինելու է, և արժանի լինեք կանգնելու մարդու Որդու առաջ» (Ղուկաա 21:36):

Երբ սխալ գործ անողը կամ գողը բռնվում է, ստանում է իր արժանի պատիժը, գնում է բանտ կամ դրամական տուգանք է վճարում: Բայց եթե Աստծու դատաստանի առաջ կանգնելով չենք կարողանալու արդարանալ, մեր ստանալիք բաժինը պիտի լինի հավիտենական տանջանք ե տառապանք: Ուրեմն ի՞նչ պիտի անենք: Արթուն մնանք և հսկե՞նք, որովհետե չգիտենք թե գողը ե՞րբ պիտի գա և կամ ե՞րբ պիտի փակենք մեր աչքերը ու ամեն բան այստեղ թողնելով պիտի անցնենք մյուս կյանքի՞ն:

«Բայց այն էլ իմացե՛ք, եթե տանտերը գիտենար, թե որ ժամին գող կգա, թույլ չէր տա, որ իր տունը կտրեն: Դուք էլ պատրաստ եղեք, որովհետե այն ժամին, երբ չեք սպասի, կգա Մարդու Որդին»:

Ի՞նչ պետք է անել: Ապրել ուղի՞ղ, աատվածահաճո կյա՞նք, ապրել օրը օրին համոզված լինելով, որ մի ժամ հետո կամ ամենաուշը վաղվա օրը կարող է մեզ համար վերջի՞նը լինել: Նստենք ու մտածե՞նք, թե ապրենք կյանքը ամբողջական նվիրումով, առանց ուրիշի ունեցածի վրա աչք ունենալու, առանց նախանձելու, բամբասելու ե չարախոսության: Այն մարդիկ, որոնք ուղիղ ճանապարհով ու անարդար կերպով չեն վաստակում, այլ՝ զանազան խարդախ ե անազնիվ միջոցներով են փորձում հափշտակել իրենց հացը, այդպիսիները ո չ մի բանի առաջ չեն կանգնում, եթե պետք լինի, մարդ էլ կարող են սպանել: Կարծո՞ւմ եք գողացված դրամը կարելի է վայելել: Ես ասում եմ՝ «ոչ» երիցս՝ ոչ: Աստված կա, որ նայում է մեզ և մի օր պատիժը պիտի հասնի: Գողացված դրամի համար մեր ժողովուրդը մի խոսք ունի. *«Քամու բերածը, քամին էլ կտանի»:* Այո, պետք է ապրել հ չդժգոհել, լավատես լինել, այլ ապրել իբրև լույսի որդիներ՝ ատելով խավարը, փառք տալ Աստծուն, հեռու մնալով այն ամենից, ինչ որ փչացնում է մարդու հոգին ու մարմինը:

Հունական կյանքից առնված այս պատմությունը ուսանելի է.

«Կոստան անունով մի կայսր իր եղբորն սպանում է և տիրանում գահին: Բայց կյանքում ոչ մի բոպե խաղաղություն չի ունենում: Գիշեր ու ցերեկ եղբոր ուրվականը հայածում է նրան և չարչարում: Ուր որ գնում է, իր սպանած եղբորն է տեսնում, որը մի բաժակ արյուն ձեռքում բռնած երկարում է իր ոճրագործ եղբորն ու ասում. «Խմիր, անկուշտ, եղբայրական արյունս խմիր»: Աշխարհում էլ տեղ չի մնում, որ կայսրը պտույտի դուրս չգա, որպեսզի խաղաղություն ունենա, սակայն չի կարողանում գտնել իր խղճի հանգստությունը և այսպես չարչարվելով, տանջվելով ու տառապելով մեռնում է»:

Մարդու խիղճը իր ամենամեծ դատավորն է:

Ուրեմն, ինչ որ Հիսուս շեշտում է արթուն մնալու մասին, այն է, որ գողը երբեք չի հայտարարում, թե քաղաքի ո՞ր մասում գտնվող տները պիտի կողոպտի: Միայն ու միայն ինքը գիտի օրն ու ժամը և տեղը: Այլապես, տանտերը և ոստիկանությունը անհրաժեշտ քայլերը պիտի առնեին նրա գողության գործը ձախողեցնելու համար:

«...Սիրեցե՛ք ճշմարտությունը, այս է այն գանձը թանկագին, որը սրբում է ձեր սիրտը և տիրում ձեր բոյոր խորհուրդներին ու սրտի շարժումներին և կյանքին, այս է այն վրձինը, որով ամենաճարտար նկարիչը միշտ պիտի նորոգի ձեզ, պիտի հաստատի իր գույները ձեր վրա, և պիտի հորինի ձեզ հարմար ու վայելուչ իրեն:... Սիրեցեք փրկությունը, Աստծու խոստումները, գրկեցեք Քրիստոսին մեզ սիրելու համար, Նրա չարչարանքներին, Նրա վերքերին... ինչքա՜ն պիտի ազնվանաք, բարձրանաք ու պիտի կատարելագործվեք» (Խորեն Քահանա Տաղլյան «Ընտիր քարոզներ-Հավաքածո» Անթիլիաս, Լիբանան, 1955, էջ 74):

Այլ խոսքով, Հիսուս մարդու ուշադրությունը հրավիրում է մշտապես պատրաստ լինելու վրա: Ո՞վ գիտի ժամն ու տեղը Նրա վերադարձի՝ ոչ ոք, ոչ երկնքի հրեշտակները և ոչ էլ Մարդու Որդին: Որոշումը մնում է Հոր Աստծու մոտ: Նա գիտի, թե աշխարհի վրա սատանայի իշխանությունը երբ *վերջ պիտի*

գտնի և ուր պիտի հաստատվի Աստծու Թագավորությունը. *«Բայց այդ օրվա ու ժամվա մասին ոչ ոք չգիտի, ոչ երկնքի հրեշտակները և ոչ էլ Որդին, այլ՝ միայն Հայրը» (Մատթ. 24:36):*

Հիսուս ցույց է տալիս մեզ այդ ճշմարիտ ճանապարհը. *«Արթուն կացեք»* ասում է Նա, այսինքն մեր բարի ու արդար կյանքով և քրիստոնյային վայել գործերով պատրաստ լինենք արժանի դառնալու Երկնքի Արքայությանը: Եկեք աղոթենք և խնդրենք աստվածային ուժ ու կարողություն այս նպատակին հասնելու համար: Ամեն:

ՀՈԳԵՎՈՐ ԱՂԸ

Իսկական հավատացյալները երկրի աղն են:

Նյութական իմաստով աղը ուտելիքը պահպանում է փչանալուց և համ տալիս նրան: Եթե աղը չլինի, կերակուրը կկորցնի իր համը: Հոգևոր իմաստով ճշմարիտ հավատացյալները մարդկանց պահպանում են սխալ ճանապարհով գնալուց՝ իրենց օրինակով, ուղղամտությամբ, մաքուր գործերով և բարի խորհուրդներով: Նրանց շնորհիվ կյանքը դառնում է քաղցր ու հաճելի: Մարդիկ սիրով հետևում են ճշմարիտ քրիստոնյային և նրա գործերին, որոնք պարզ երևում են այն քաղաքի նման, որը կառուցված է լեռան գագաթին: Ոչ մի մարդ թող չկարծի, թե իր գործերը գաղտնի ու ծածուկ կմնան, դրանք լինեն բարի թե չար, անպայման երևալու են: *«Երանի՜ բարի գործերը ծածուկ մնան ու, երբ հայտնաբերվեն, պատիվ և փառք բերեն կատարողին, թեկուզ և երկար տարիներ հետո, նույնիսկ եթե այդ բարի գործ կատարողը մահացել է»:*

Սուրբ Գրքում աղը հիշատակվում է բազմաթիվ առիթներով, նախ որպես համեմ կերակուրների համար: Եղիսե մարգարեի միջոցով աղով աղբյուրի ջուրը մաքրվում է. *«Ինձ մի նոր կուժ բերեք ու այդտեղ դրեք:* Նա գնաց ջրերի ակունքը և այնտեղ աղ գցելով՝ ասաց, *«Այսպես է ասում Տերը. «Ես մաքրեցի այս ջրերը, որ դրանցից մահ եւ անբերրիություն չառաջանա» (Դ. Թագ. 2:20-22):* Եվ այդ ջրերը մաքուր դարձան:

Հայ Եկեղեցում ես հնավանդ սովորության համաձայն, երբ մատաղ են անում, նախքան նրա պատրաստությունը, աղը օրհնվում է ու տրվում ոչխարին, գառնուկին կամ աքաղաղին: Սակայն Սուրբ Պատարագի նշխարն ու ժողովրդին բաժանվող մասը անխմոր և առանց աղի են պատրաստվում:

Սուրբ Գրքի համաձայն, բարի, հավատավոր ու սիրով լցված անձնավորությունները համարվում են *«Երկրի Աղը»:* Հիսուսի աշակերտները Նրա կողմից բնորոշվում են որպես *«երկրի աղը»: «Դուք եք երկրի աղը և աշխարհի լույսը, սակայն եթե աղը անհամանա, ինչո՞վ այն կաղվի. Այնուհետև ոչ մի բանի պիտանի չի լինի, այլ միայն դուրս կթափվի և մարդկանց ոտքի կոխան կլինի»*

(Մատթ. 5:13): «Ես եմ աշխարհի լույսը, ով իմ հետևից է գալիս, խավարի միջով չի քայլի, այլ կընդունի կենաց լույսը» (Հովհ. 8:12): Սուրբ Ներսես Շնորհալու ճշմարիտ խոսքերը ևս *«լեզվի աղ»* են կոչվում:

Աղը հետաքրքիր պատմություն ունի: Հույները նրա սպիտակության ու մաքրության համար, այն աստվածային են համարել: Հռոմայեցիները այն նկատում էին ամենամաքուրը, որովհետե աղը բաղկանում էր արևից ու ծովից. *«Աշխարհի վրա արևից ու աղից ավելի օգտակար բան չկա»,*- ասում էին նրանք: Իսկ Արևելքում, Քրիստոսի ժամանակ աղը այնքան թանկագին մի նյութ էր, որ երբեմն զինվորներին դրամի փոխարեն՝ աղով էին վարձատրում:

Վերոհիշյալներն աղի համար դրական իմաստով են ասվում, սակայն մյուս կողմից.

ա. Երբ աղը հողի համար է գործածվում, այն կարող է բերք չտալ ու կանաչություն կամ գյուղատնտեսություն կատարելը այնտեղ անկարելի լինի, բանի որ աղը պիտանի չի բերքի ու պտղաբերության համար:

բ. 21-րդ դարի բժշկությունը խորհուրդ է տալիս մարդկանց, որ զգույշ լինեն աղի չափից ավելի գործածությունից և նույնիսկ ոմանց հիվանդության պատճառով բացարձակապես արգիլվում է այն օգտագործելը:

Մարդկային տեսակետից, այնպես, ինչպես որ աղը համ է տալիս կերակուրներին, նույն ձևով նաև առօրյա ընթացիկ խոսքերի ժամանակ քրիստոնյաների արտահայտությունները տրամաբանական պիտի լինեն: Անհամ ու անիմաստ խոսքերը հաճելի չեն որևէ մեկի համար: Բարկություն պատճառող անճիշտ ու անտեղի արտահայտությունները բացի մարդկանց միտքն ու մթնոլորտը պղտորելուց, չեն կարող նման անհամ խոսք ասողին լուրջ մարդու տեղ դնել: Այս իմաստով է, որ այդպես խոսողներին ասում ենք. *«Խոսքիդ աղ խառնիր»,* այսինքն՝ ծիծաղելիության սահմաններից դուրս արի:

Այս պատմությունը ուսանելի է.

«Բարեհոգի ու բարեպաշտ մի եպիսկոպոս ասում է մի նորընծա աբեղայի.

- Գնանք քարոզենք քաղաքի զանազան շրջաններում:

Եվ քայլում են ամբողջ քաղաքով մեկ, փողոցից-փողոց շրջելով, առանց մի բառ իսկ արտասանելու:

Եպիսկոպոսի սրբակյաց ներկայությունը ամեն տեղ շատ համակրալիր տպավորություն է թողնում:

Աբեղան այլևս համբերությունը սպառված, հարցնում է եպիսկոպոսին.

- Սրբազան, երեկո եղավ, ե՞րբ պիտի քարոզեք:

- Քարոզը վերջացավ,- պատասխանում է Սրբազանը կտրուկ կերպով:- Միրելիս, ուր որ գնացինք, ժողովրդի վրա այնպիսի տպավորություն թողեցինք, որ էլ ավելորդ էր քարոզելը: Մեր արածը անաղմուկ քարոզչություն էր, զարմանում եմ, որ չնկատեցիր»:

ժողովրդական խոսք է. *«Լռությունը ոսկի է»:*

Հին աշխարհում աղը օգտագործվում էր իբրև կարևորագույն նյութերից մեկը: Աղի այս հատկության համար Պլուտարքոս Հույն պատմիչը այն նմանեցնում *է նոր հոգու,* պատճառաբանելով, որ միսը մեռած մի մարմին է կամ մեռած մարմնի մի մասը և, եթե առանց աղվելու թողնվի՝ կփչանա, բայց աղը պահպանում է նրան նեխելուց: Որով, եթե աղը եղել է և այսօր էլ պահպանում է կերակուրն ու մարմինը փչանալուց, ապա երբեմն այն եղել է նաև խորհրդանիշ ու պահապան չարի դեմ: Այս մտածողությամբ է, որ քրիստոնեության սկզբնական շրջաններում, մկրտվող երեխայի բերանը աղ էին դնում, իբրև համ տալու նշան:

Թեև քսանմեկերորդ դարի քաղաքակրթությունը ավելի բարձր մակարդակի վրա է գտնվում, քան Հունա-Հռոմեականը, սակայն դրանով հանդերձ, ներկայիս բազմապիսի աղանդներ սխալ ու անազնիվ ճանապարհների են առաջնորդում մարդկանց ու մեծ վտանգ հանդիսանում քրիստոնեության համար: Կարելի է զարմանալ, բայց դժբախտաբար սա իրականություն է, որ այս բոլորը հիմնականում արդյունք են կյանքի հանդեպ քրիստոնյաների որդեգրած անտարբեր կեցվածքի: Եթե յուրաքանչյուր քրիստոնյա իր ապրած միջավայրի ու ընդհանրապես կյանքի հանդեպ չեզոք դիրք ունենա, ինքնիրեն կդատարկի քրիստոնեական հավատքի վեհ ներշնչումներից ու իր պատյանում քաշված մի կյանք կվարի, մի խոսքով, եթե նա անօգուտ

ու անտարբեր դառնա իր շրջապատի, բարեկամության և ընկերության մեջ՝ անհամ կլինի: Որով ճշմարիտ քրիստոնյան ժողովրդի մեջ մտնելով, ոչ միայն իր, այլև իր նմանների կյանքին մի նոր իմաստ պիտի հաղորդի: Ուրեմն քրիստոնյան չպետք է ինքնիրեն մեկուսացնի աշխարհից, այլ պարտավոր է՝ *«անարատ պահել իր անձը աշխարհից» (Հակ. 1:27):*

Աղը այնքան հարգի ու նվիրական էր, որ հատուկ ուշադրություն էին դարձնում աղամանին և փայտից, կավից կամ հախճապակուց գեղեցիկ զարդարանքներով տուփեր էին պատրաստում:

Մեր եկեղեցական Հայրերից Գրիգոր Տաթևացին հետաքրքիր մեկնաբանություն ունի հոգևոր աղի մասին,

«...Հնում երկու ընծա կար զոհաբերության ժամանակ, նախ, մանանան, որին աղ չէր խառնվում, և երկրորդը սպիտակ ալյուրը՝ յուղով պատրաստված, որին աղ էր խառնվում:

Արդ, մանանան փրկչական խորհրդի օրինակն էր, որտեղ աղ չկար, իսկ հարած սպիտակ ալյուրը մարտիրոսների հիշատակն էր, որին աղ ենք խառնում զոհին մորթելու ժամանակ և անուշ յուղ՝ ի խորհուրդ նրանց:

Իսկ նրանք, ովքեր համարելով աղ են խառնում նշխարին հին օրինակով, նշանակում է պետք է խառնեն նաև ձեթ, հատիկ, խունկ, գառան միս՝ խառնելով կաթսայում կամ տապակի մեջ, որպեսզի օրինակը ամբողջությամբ կատարեն և հեռանան ճշմարտությունից» (Գրիգոր Տաթևացի «Գիրք Հարցմանց»):

Աղը նաև ժողովրդական ասացվածքների նյութ է դարձել և ժողովրդի կողմից մի շարք առածներ են հորինվել: Օրինակ՝

Աղ ու հաց կտրել - նշանակում է իրար հետ բարեկամություն հաստատել կամ մեկի տան մեջ հաց ու կերակուր ուտել և կամ մեկին առանց պատճառի պաշտոնից հանել:

Աղ ու հացի վրա լինել - նշանակում է մեկի տանը շաբաթներով ու ամիսներով ապրել:

Աղ ու հացով մարդ - նշանակում է հյուրասեր ու հաճելի մարդ:

Հիսուսի *«Դուք եք երկրի աղը»* խոսքը ուղղված չէր միայն քսանմեկ դար առաջ հավաքված ժողովրդին ու Իր առաքյալներին, այլ այսօր մի կարևոր պատգամ է նաև մեզ՝ բոլորիս համար: Երանի թե մեզանից յուրաքանչյուրը կարողանար համ տալ իր ապրած միջավայրին և այն մաքուր պահել: Դա անելու համար նախ մեզ պետք է լրիվ չափով գործադրել քրիստոնեական վարդապետության սկզբունքներն ու պատվիրանները, որոնք մեզ շնորհված են իբրև աստվածային ճշմարտություններ մեր Տիրոջ կողմից, սկզբունքներ, որոնք ոչ միայն մեզ հեռու կպահեն աշխարհիկ մոլություններից, այլ՝ կառաջնորդեն դեպի Աստված:

Ուրեմն հետևենք մեր մեծ Ուսուցչի՝ Աստվածորդու պատգամին, լինենք ճշմարիտ քրիստոնյաներ, առանց ձանձրանալու աղոթենք ու ապրենք մի կյանք, որը համապատասխան լինի Նրա ուսուցումներին ու մշտապես լցվելով Սուրբ Հոգու շնորհներով, կարողանանք աղ լինել և համ տալ մեր ընտանիքին, մեր շրջապատին, մեր Եկեղեցուն ու մեր Համայնքին, բարեկամությանը և ընկերությանը, սիրելով ու օգնելով մեկս մյուսին, ստեղծելով այնպիսի պայմաններ, որոնք ամեն օր ավելի և ավելի կզորացնեն մեր հավատքը դեպի Աստված: Ամեն:

ՄՈՄ, ՄԱՏԱՂ, ՍՐԲԱՊԱՏԿԵՐՆԵՐ ԵՎ ԽԱՉ

Հոգևորականի առաջին և ամենամեծ պարտականությունը Քրիստոսի Ավետարանը քարոզելն է: Սակայն բացի Ավետարանից մի շարք այլ բաներ կան, որոնք անմիջականորեն կապված են մեր հավատքի հետ, առավել ևս մեր առօրյայի անբաժանելի մասն են դարձել: Այսօր պիտի խոսենք *մոմի, մատաղի, սրբապատկերների և Խաչի մասին:* Ինչո՞ւ որոշեցինք խոսել դրանց մասին: Երկու պատճառով, առաջին, որպեսզի բոլորս վերհիշենք և ամբողջովին հասկանանք մեր կատարածը ու երկրորդ՝ համոզված լինելով և իմանալով կարողանանք մեզ պաշտպանել մեր Եկեղեցուն ու մեր ժողովրդի սովորություններին խորթ զանազան տեսակի կրոնական հարձակումներից:

Մեր Եկեղեցու դավանանքը, աստվածաբանությունն ու ազգային ավանդությունները պատահականորեն չեն ստեղծված, նրանք իրենց մեջ կրում են կյանքի իմաստությունը, զարդարված ազգային հատկանիշներով և անցնելով գերագույն քննիչի *«ժամանակ կոչվածի»* ձեռքի տակից՝ հասել են մեզ:

Ուրեմն սկսենք.-

ՄՈՄ - Մեզ ասում են, որ մենք կրակապաշտ ենք, Եկեղեցիներում և նույնիսկ մեր տներում մոմ ենք վառում: Ավետարանում չի ասված, որ աղոթելիս մոմ վառենք: Կրակ պաշտելը հեթանոսների սովորությունն է: Մոմ վառելը բացարձակապես չի նշանակում կրակապաշտ լինել: Այդ գեղեցիկ սովորությունը գալիս է շատ հին ժամանակներից և նպատակն էլ տարբեր է: Դեռևս Հին Կտակարանում տեսնում ենք, որ Աստված Մովսես մարգարեի միջոցով պատվիրեց մշտավառ ճրագներ ունենալ Վկայության Խորանի մոտ: Առաջին շրջանում քրիստոնյաները անընդհատ հալածանքների տակ էին, ստիպված գետնափորներում, քարայրներում կամ գերեզմանախորշերում էին հավաքվում աղոթելու, ուր մշտապես խավար էր, լուսավորվելու համար ստիպված մոմեր ու կանթեղներ էին վառում: Այսօր մենք կարիքը չունենք մոմերով մեր Եկեղեցիները լուսավորելու, քանի որ էլեքտրականություն ունենք, սակայն այդ բարեպաշտ սովորությունը պահում ենք, նրա մեջ ուրիշ ավելի կարևոր ու

գեղեցիկ մի իմաստ տեսնելով: Վառվող մոմերը առաջին հերթին մեզ համար խորհրդանշում են մեր Տիրոջը՝ Հիսուս Քրիստոսին: Հիշո՞ւմ էք, թե ի՞նչ ասաց Նա. *«Ես եմ աշխարհի լույսը, ով իմ հետևից է գալիս, խավարի միջով չի քայլի, այլ կընդունի կենաց լույսը» (Հովհ. 8:12):* Հիսուս ինքը անշիջելի մի մոմ էր, այդ մշտավառ մոմից միլիոնավոր ուրիշ մոմեր վառվեցին և շարունակվում են վառվել: Մեր ժողովուրդն էլ դարեր առաջ իր մոմը վառեց ու մինչև այսօր վառված է պահում այն: Մեր ձեռքում փոքրիկ մոմը խորհդանշում է մեր հավատքի լույսը: Այդ վառվող մոմերը մեզ հիշեցնում են, որ միշտ արթուն լինենք Իմաստուն Կույսերի պես *(խոսքը Ավետարանի տասը կույսերի առակի մասին է Մատթ. 25:1-13),* որոնք Փեսայի *(Հիսուսի)* գալստյան ժամանակ իրենց լապտերները պատրաստ ու վառված էին պահել:

ՄԱՏԱՂ: Հին Կտակարանում Մովսես Մարգարեի միջոցով Աստված պատվիրեց մարդկանց զոհ մատուցել իրենց գործած մեղքերի համար: Սակայն Հիսուսի խաչելությունից ու Հարությունից հետո այդ օրենքը ամբողջովին նորոգեց իր իմաստն ու նշանակությունը, քանի որ Ինքը մեր Տերը դարձավ մատաղ իբրև Գառն Աստուծո, զոհվեց ու Իր արյունը թափեց մեր մեղքերի համար: Ուրեմն ոչ մի այլ զոհ իմաստ չունի՞: Հարց է ծագում, ապա *«Ինչո՞ւ ենք մատաղ անում, դրա իմաստը ի՞նչ է»:* Քրիստոնեության հիմքը Աստծու և մերձավորի նկատմամբ մեր ունեցած սերն է: Սիրո արտայայտման լավագույն ձևերից մեկը ողորմությունն է: Երբ մեր հայրերը մատաղ էին անում՝ դա ողորմության համար էր: Կարեկցել աղքատին, հիվանդին, որբին և կարիքավորին ու նրանց ուտելիք մատակարարել: Ահա սիրո արտահայտության կարևոր մասը: Հիսուս ասաց. *«Եղեք գթասիրտ, ինչպես որ գթասիրտ է ձեր երկնավոր Հայրը» (Ղուկ. 6:36):* Այսօր մենք շարունակում ենք մեր հայրերի սովորությունը, մատաղ ենք անում: Եվ գիտե՞ք թե ինչ աղոթք է արտասանվում *«Խորհրդակատարության Մաշտոց»-ում* մատաղի աղը օրհնելու ժամանակ. *«Օրհնիր Տեր, Քո ողորմությամբ այս աղը և սրբիր այն, որպեսզի ամէն ինչ, որ սրան խառնվի, հաճելի ու ընդունելի լինի Քեզ և մեզ համար հոգու ու մարմնի մաքրություն և առողջություն լինի»:*

Արտակ Արք. Մանուկեանը այս մասին հետևյալն է ասում.

«Մատաղ բառը մի քանի իմաստ ունի, այսպես՝ մատաղ նշանակում է մատղաշ, նորածին, փափուկ, իսկ կրոնական իմաստով նշանակում է այն կենդանին, որ մորթվում է որպես զոհ և եփվելով բաժանվում է ժողովրդին: Հնում տարածված սովորություն էր, որ որպես մատաղ մորթվեր գառնուկը, իբրև նորածին:

Մատաղ նշանակում է նաև զոհ, ընծա, բայց այս բոլորի մեջ ընդհանրացած իմաստը զոհվող կամ մորթվող կենդանին է:

Մատաղը կամ զոհը այն կենդանի է, որ պարզապես իբր նվեր մորթվում է և նվիրվում աղքատներին կամ ժողովրդին:

Նախաքրիստոնեական շրջանում, հատկապես հեթանոսական որոշ կրոնների և ժողովրդի մեջ տարածված սովորություն էր զոհաբերումը: Հեթանոսական տաճարներում կենդանիներ էին զոհվում և այս կերպով մատաղ լինում:

Տաճարներում հատուկ վայր գոյություն ուներ՝ ուր քուրմը կամ կրոնականը կենդանին մորթում և զոհ էր կատարում:... Տաճարում հատուկ տեղ էր նկատի առնվել նաև զոհաբերման համար և այդ կոչվում էր վկայության խորան:

Հրեաների մոտ երեք տեսակ զոհ գոյություն ուներ.

«Ողջակեզ, Վասն մեղաց և Խաղաղության զոհ»:

«Հեթանոսական շրջանի գոյություն ունեցող զոհի, ընծայի կամ մատաղի սովորույթը փոխանցվեց քրիստոնեության և մինչև իսկ Պողոս առաքյալը իր թղթերի մեջ անդրադառնում է առաջին շրջանի քրիստոնեական համայնքում տեղի ունեցող վեճին ու տարակարծությանը՝ զոհաբերվող կենդանիների միսը եփելու և ուտելու առնչությամբ:

Կիրակի և տոն օրերին մատուցվող պատարագը ևս նշանակում է զոհ, մատաղ, ընծա. Հիսուսը

խաչի վրա իր արյունը դրեց և հանդիսացավ զոհ՝ մարդկանց մեղքերի թողության համար, և ամեն անգամ որ պատարագ է մատուցվում, հիշատակվում է նաև Հիսուսի զոհաբերումը. պատարագը համարվում է նաև անարյուն զոհ» {«Շողարձակ», Արտակ Արք. Մանուկյան, Բ. հատոր, 1996, Թեհրան, էջ 157-158):

Մի սովորություն կա մատաղացու կենդանու արյունը քսել ճակատին, որը ընդունելի չէ ու սխալ է: Ինչո՞ւ: Լսենք 12-րդ դարի մեր Հայրապետներից Սուրբ Ներսես Շնորհալուն, որը արգիլել *է այդ բանը անել, ասելով, որ «մեր բոլոր զգայարանները Քրիստոսի արյունով օծված են Սուրբ Մկրտության ժամանակ և մեր ճակատները կնքված են Սուրբ մյուռոնով, ուստի կարիքը չունենք այլ կնիքների»:*

«Այս օրերին թելադրելի է, որ մատաղի փոխարեն նվիրատվություններ կատարվեն ազգային, եկեղեցական, կրթական կամ բարեսիրական նպատակների համար, որովհետև արդի պայմաններում քաղաքակրթության նվաճումների հետ փոփոխության են ենթարկվել նման սովորույթներ ու մտայնություններ, և Աստվածահաճո ու մարդահաճո գործը տրվող նվերն է, որ լավ ու բարի նպատակների պիտի ծառայի...» («Շողարձակ», Արտակ Արք՝ Մանուկյան, Բ. հատոր, 1996, Թեհրան, էջ 161):

ՍՐԲԱՊԱՏԿԵՐՆԵՐ - Շատերից լսել ենք, վստահ եմ դուք էլ լսած կլինեք, որ սրբապատկերներ ունենալը նյութապաշտություն է: Ըստ նրանց բոլոր սրբերը մեզ պես մարդիկ են եղել և նրանց դիմաց աղոթելը ճիշտ չէ:

Նախ եկեք տեսնենք, թե որտե՞ղից են գալիս սրբապատկերները: Հիսուսի Հարությունից հետո, շատերը նահատակվեցին և ժամանակի ընթացքում Եկեղեցու Հայրերի կողմից սրբացվեցին: Նրանց բարի օրինակով բազմաթիվ սերունդներ դաստիարակվեցին, իրապես դարձան Հիսուսի Եկեղեցու սյուները: Նորադարձ քրիստոնյաները, որոնք այնքան շատ էին լսել սրբերի կյանքի, նրանց սխրանքների մասին, ցանկանում էին ավելի շատ տեղեկություն ունենալ: Սա շատ բնական ցանկություն էր: Մենք էլ հաճախ մեր հին նկարները վերցնում ենք,

նայում ու փորձում ենք վերհիշել մեր և մեր հարազատների ապրած անցյալ կյանքի օրերը: Ուրեմն, նույն ձևով էլ սրբերի ժամանակակիցները քրիստոնյա դարձող հավատացյալների ազնիվ ցանկությունը գոհացնելու համար, սկսեցին Եկեղեցիների պատերի վրա այս կամ այն սրբի նկարը և կամ Հիսուսի կյանքից որևէ ավետարանական մի դրվագ նկարել: Սակայն դժբախտաբար եկավ մի ժամանակ, երբ Եկեղեցիները չափից ավելի սկսեցին սրբապատկերներին ուշադրություն դարձնել: Այդ ժամանակաշրջանը կոչվեց *պատկերապաշտություն* անունով: Նկարներ պաշտելը ծայրահեղություն էր: Դրան հակառակ ծայր առաւ *պատկերամարտություն* կոչված շարժումը, որը փորձում էր հակազդել պատկերներ պաշտող ծայրահեղականներին: Մեր Եկեղեցիներում կան մի բանի սրբագործված պատկերներ, նրա համար, *որպեսզի հավատացյալները իրենց աչքի առաջ ունենան սրբերին, բաջալերվեն և փորձեն նմանվել նրանց:* Հայրենիքի մեջ մեր քարաշեն Եկեղեցիները երբ մտնեք, պարզ քարի մեջ կգտնեք ամենամեծ խորհուրդը: Խորհուրդ, որը քեզ ակամայից ծնկի է բերում սրտանց աղոթելու և փառք տալու Աստծուն, դրա համար էլ սրբապատկերները քիչ են և արտաքին ճոխություն չկա:

ԽԱՉ - Եթե մոմը, մատաղը և սրբապատկերները նյութական իմաստով մեր սերը արտահայտելու միջոցներ են, ապա Խաչը մեր փրկության և հավիտենական կյանքի փարոսն է:

Նախքան Քրիստոս ի՞նչ էր Խաչափայտը, եթե ոչ անարգանքի և մահապատժի միջոց: Այսինքն Խաչը ինքը մահն էր: Մարդիկ իրենց մեղքերի համար պատժվում էին մահով: Բայց ի՞նչպես պատահեց, որ մահվան անգութ և խայտառակ գործիքը փառավոր ու հաղթական, հավիտենական կյանքի զինանշանը դարձավ: Պարզ է, որովհետև մեր Տերը Իր վրա վերցրեց մարդկության բոլոր մեղքերը և Խաչ բարձրացավ: Հիսուս մեզ ցույց է տալիս ներելու և սիրելու ճանապարհը: Մահը հաղթվել է: Այն ամբողջապես մաքրվել է ոչ թե ջրով կամ մեր իմացած նորագույն հեղուկներով և փոշիներով, այլ՝ մեր Տիրոջ' Հիսուս Քրիստոսի Արյունով ու Իր Հաղթական Հարությամբ:

Ի զուր չէ, որ ամեն անգամ հոգևորականը հավատացյալներին օրհնում է այս բառերով.

«Քրիստոս Աստված մեր, որ հավատացյալների պահապանն ու հույսն ես, Քո սուրբ և պատվական Խաչիդ հովանու տակ, խաղաղության մեջ պահիր և պահպանիր (հավատացյալ ժողովուրդը կամ Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին և այլն), փրկիր երևելի և աներևույթ թշնամիներից: Արժանի արա գոհությամբ փառավորելու Քեզ, Հոր և Սուրբ Հոգուդ հետ, այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից: Ամեն:

ԱՊՐԻԼ 24, 2001
ԵՂԵՌՆԻ ՀՈՒՇԱՐՁԱՆ
ՖԻՆԻՔՍ (ԱՐԻԶՈՆԱ)

ՍԻՐԵԼԻ ՄԱՅՐԵՐ և ՀԱՅՐԵՐ, ՔՈՒՅՐԵՐ
ՈՒ ԵՂԲԱՅՐՆԵՐ,

Քիչ առաջ, բոլորս միասին, հակառակ կիզիչ արևի ճառագայթների այրելուն, մոտ մեկ ու կես մղոն քայլեցինք, ի հիշատակ մեր բյուրավոր նահատակների: Գնահատելի է, որ մեզ հետ են Սքաթստեյլի (Արիզոնայի նահանգ, ԱՄՆ) Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու Հայ Երիտասարդաց Միության անդամները: Այս հուշարձանի առջև, ուր հավաքված եք բոլորդ, ծաղիկները ձեր ձեռքերում, ես տեսնում եմ ձեր աչքերում մի կաթիլ արցունք, մի կաթիլ երազ և մի կաթիլ հույս: Այն ուժը, որը կարողացել է ձեզ տանից դուրս հանել այստեղ գալու և մասնակցելու այս սգո հոգեհանգստյան արարողության, դա մեր մայրերի և հայրերի անմեղ մարտիրոսությունն է: Ձե ներկայությունն իսկ մեծ հարգանք է Ապրիլյան Եղեռնի մեր նահատակների արյան կանչին, նահատակներ, որոնք զոհվեցին՝ *«Վասն Հավատոց և վասն Հայրենյաց»:*

ԱՊՐԻԼ 24, 1915: Հայ ժողովրդի պատմության մեջ մեզ և հատկապես մեր վաղվա սերունդների համար անմոռանալի մի թվական պիտի մնա: 86 տարիներ առաջ, խաղաղ և ստեղծագործ մի ժողովրդի զավակները ենթարկվեցին ջարդի ու կոտորածի: Ապտյուլ Համիտ *«Կարմիր սուլթանի»* ոճիրները այս անգամ ավելի կատարելագործված կերպով ի գործ էին դրվում երիտասարդ թուրքերի կողմից, որոնք ուզում էին Հայաստանը տեսնել առանց հայերի:

Թարմ է դեռևս մեր ժողովրդի ցավը և վերքը: 86 տարիները պատմության համար մի ակնթարթ են միայն: Դեռևս երեկ, մի բանի տասնյակ տարիներ առաջ, Տեր Զորի ավազների վրայից քայլող հայ որբերի զավակները այսօր ոտքի են կանգնել և ապրում են վճռականությամբ: Վերածնվել են Մայր Հայրենիքն ու Սուրբ էջմիածինը: Նոյան աղավնին ձիթենյաց մի նոր ճյուղ ամուր պահած սրտին, տանում է դեպի ձյունածածկ Արարատները՝ մեր Սրբազան Լեռը:

Ավելի բան մեկ ու կես միլիոն հայեր մարտիրոսացան: Ի՞նչ է սպասվում մեզանից՝ այսօր. *առաջին հերթին* հարգանք մեր բյուրավոր նահատակների հիշատակի հանդեպ. *երկրորդ,* ոչ միայն պարզ հարգանք, այլն շատ հստակ է. մեր երիտասարդները պիտի սովորեն, բարձր տիտղոսներ ու պաշտոններ ունենան, զորանան իրենց հավատքի մեջ և այս ձևով մենք կարողությունն ու հնարավորությունը կունենանք պաշտպանելու մեր արդար դատը: Հայրենիքի և մեր դարավոր Մայր Եկեղեցու դռները բաց են գրկաբաց ընդունելու բոլոր հայ զավակներին: Ուրեմն, եկեք չմոռանանք անցյալը, սակայն նրա վրա հենվելով, մեր ներկայով և մանավանդ վաղվա ապագայի պայծառ տեսիլքով, կառուցենք մեր Տունը ու տեր կանգնենք մեր ավանդություններին, Եկեղեցիներին և մշակութային ժառանգությանը, բայց մանավանդ, առավել ևս տեր կանգնենք հայ ընտանեկան սրբության: Հայ ընտանիքի հիմքերը պետք է հաստատված լինեն գթասրտության, զոհաբերության, հավատարմության և սիրո վրա:

Մի քանի վկայություններ Ապրիլյան Եղեռնի օրերից.

«1913-1916 թվականներին, Կ. Պոլսի Ամերիկյան դեսպան Մորգենթաուն իր հուշերում մանրամասնորեն պատմում է ջարդերի մասին ու ասում. «Ժանդարմները առաջին առիթով ենթակային ծեծում էին ոտքերի տակ, մինչև որ նրա ուշքը գնար, ապա ջուր սրսկելով նրա երեսին շարունակում էին ծեծը: Եթե այս մեթոդը ապարդյուն էր անցնում, դիմում էին այլ միջոցների, քաշում էին նրա թարթիչները, մորուքն ու մազերը, նրա ձեռքի ու ոտքի եղունգները և նրա կրծքի վրա թափում էին հալած կարմիր երկաթ ու ապա եռացած կարագ վերքերի վրա... Այս տանջանքները կատարում էին գիշեր ժամանակ, երբ թուրքերը շրջում էին, որպեսզի տառապանքի ու չարչարանքի ցավերը խեղդվեին ուրախության ձայների մեջ» (Ambassador Morgenthau's Story - H. Morgenthau, page 306):

Եվ, որպեսզի առավել հստակ լինի և կարողանաք պատկերացնել, թե ինչպիսի վայրագությամբ ու կատաղությամբ էին նրանք կոտորում մեր ժողովրդին տեղահանությունների ընթացքում, ուզում եմ մեջբերել հենց թուրքերի

պատմածները: Սոսկալի են լսել այս պատմությունները, բայց մեր երիտասարդ սերունդը թող իմանա, թե ի՞նչ է *կատարվել իր նախնիների հետ:*

Պատմում է թուրք բժիշկ Ազիզ Պեյը.

«Սվազի Վիլայեթում էի գտնվում, երբ իմացա, որ հայերի մի կարավան պիտի բնաջնջվի: Գնացի անմիջապես հրամանատարի (գայմաքամի) մոտ և ասացի նրան. «Ես բժիշկ եմ և բժիշկների ու մսագործների միջև մեծ տարբերություն չկա, որովհետև մենք էլ հաճախ մորթելով ենք զբաղվում: Խնդրում եմ հետևաբար, որ թույլ տաք ինձ դիտելու այս գործողությունը:

Թույլատրությունը ստացա: Այնտեղ տեսա չորս մսագործների, որոնք մի մի դանակ էին բռնել իրենց ձեռքերում: Նրանց առջև ոստիկան զինվորները հայերին բաժանում էին տասական հոգուց բաղկացած խմբերի և մեկը մյուսի հետևից ներկայացնում դահճին, որը ասում էր զոհին. «Մոտ բեր վիզդ»: Զոհը մոտենում էր և մսագործը գիսատում էր նրան այնպես, ինչպես պիտի մորթեր մի ոչխար»:

Երկրորդ, պատմում է թուրք Շահին Պեյը.

«Բանակում գտնվելով, ինձ վստահեցին տղամարդկանցից ու կանանցից բաղկացած հայերի մի կարավան, որը պիտի ոչնչացնեի: Ճանապարհին նրանց մեջ գտա շատ գեղեցիկ մի երիտասարդ աղջիկ, որին ճանաչում էի: Կանչեցի ու նրան ասացի.

- «Ուզում եմ քեզ փրկել: Ընդունիր ուրեմն ամուսնանալ այս նահանգի քուրդ կամ թուրք մի երիտասարդի հետ»:

«Մերժեց և ասաց.

- Եթե ուզում ես ինձ օգնած լինել մի ծառայություն եմ ուզում քեզանից»:

- «Պատրաստ եմ ուզածդ անելու»,- պատասխանեցի:

- «Մի եղբայր ունեմ»,- ասաց նա,- «ինձանից ավելի երիտասարդ, որը գտնվում է այս մարդկանց կարավանում: Խնդրում եմ քեզանից, որ ինձանից

առաջ նրան սպանես, որպեսզի նրա ճակատագիրը իմանալով ես էլ հանգիստ մեռնեմ»:

Ցույց տվեց եղբորը, որին անմիջապես կանչեցի: Աղջիկը նրա հետ այսպես խոսեց.

- «Եղբայրս, քեզ հանձնում եմ Աստծուն: Արի, որ գրկեմ քեզ վերջին անգամ: Մենք իրար պիտի գըտնենք այն աշխարհում և Աստված շուտով պիտի լուծի մեր վրեժը նրանցից, որոնք չարչարում են մեզ»...

Գրկախառնվեցին: Եվ եղբորը հանձնեց ինձ: Իսկ ինձ մնում էր հնազանդվել քրոջ կամքին: Կացինի մի հարված իջեցրեցի նրա գլխին, գանգը բացվեց, ուղեղը թափվեց և տղան մեռած փռվեց գետնին:

- «Ամբողջ սրտովս շնորհակալ եմ քեզանից»,- ասաց քույրը ինձ,- և հիմա խնդրում եմ, որ բարիքդ ամբողջացնես»:

Ապա ձեռքերով սև աչքերը փակելով ասաց.

- ««Հարվածիր ինձ էլ այնպես, ինչպես արեցիր եղբորս ու մի չարչարիր ինձ»:

- Մի հարված էլ նրա գլխին իջեցրեցի, որը աղջկան սպանեց: Եվ մինչև այսօր էլ չեմ դադարում ցավելուց նրա գեղեցկության ու երիտասարդության և հիանալուց նրա քաջասրտության վրա»:

Եղեռնի սև օրերին հայոց աշխարհի պատկերը եղավ նույնը, ինչ որ Եզեկիել մարգարեն տեսավ դաշտի մեջ. մի դաշտ լիքը չոր ոսկորներով: Հայ ժողովուրդը ունեցավ Եզեկիել մարգարեի երկխոսությունը Աստծու հետ. *«Մարդու որդի, արդյոք կկենդանանա՞ն այդ ոսկորները»:* Ես ասացի. *«Տեր Աստված, այդ դու գիտես»:* Եվ Նա ասաց. *«Մարդու որդի, մարգարեացիր այդ ոսկորների վրա ու ասա դրանց. «Չորացած ոսկորներ, լսեցեք Տիրոջ պատգամները: Այսպես է ասում Տեր Աստված այդ ոսկորներին. «Ահա ես ձեր վրա կենդանի շունչ եմ բերելու, ձեզ ջղեր եմ տալու, ձեզ վրա միս եմ բերելու և մաշկ քաշելու, իմ հոգին եմ տալու ձեզ, և դուք կենդանանալու եք. Եվ պիտի իմանաք, որ ես եմ Տերը» (Եզեկիել 37:3-6):*

Հոգի առան չորացած ոսկորները ու հայոց աշխարհը

ծնեց մեր ոգեկանության խորհրդանիշը՝ Սարդարապատը, որի զանգերի ղողանջներում մենք ամեն պահի լսում ենք երջանկահիշատակ Գարեգին Արքեպիսկոպոս Հովսեփյանցի պատգամը ուղղված քաջարի մարտիկներին. *«Ես ահա Սուրբ էջմիածնից եկել եմ ձեր բոլորի ձեռքը համբուրելու, որ փրկեք հայրենիքը... փրկեք ձեր պատիվը, Հայի պատիվը»:*

Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին դարեր շարունակ, երբ մեր երկիրը ավելի քան վեց հարյուր տարի պետականություն չի ունեցել, կատարել է և այսօր էլ շարունակում է կատարել Եզեկիել մարգարեի դերը, հավատարիմ մնալով Աստծու կանչին:

Սիրելի մայրեր և հայրեր, քույրեր ու եղբայրներ,

Այսօր, ավելի քան երբեք, մեր ժողովրդի ամենամեծ մտահոգությունը Հայապահպանումն է:

Գովելի է, որ մեր հին սերունդը կտրված լինելով իր մայր հողից ու նետված օտար հորիզոններ, դեռ այսօր որոշ չափով դեմ է կանգնում կյանքի ահավոր փոթորիկներին, բայց պետք է խոստովանվենք, որ հետզհետե ավելի է դժվարանում օտարության մեջ մեծացող հայ նոր սերունդներին ազգային ոգով դաստիարակելու հարցը:

Հայտնապես սպիտակ ջարդի սարսափի առաջ ենք կանգնած: Իսկ ամենացավալին այն է, թե ինչ որ երեկ չկարողացավ անել *զուլումը,* այսինքն՝ բարբարոս ու վայրագ թուրքը և այլ ժողովուրդներ, այսօր կարողացել է ու անում է սպիտակ ջարդը՝ *ձուլումը:* Այսօր, առանց բռնության ու տեղահանության, դժբախտաբար Սփյուռքի մեջ մեր իսկ թուլությամբ կորչելու վտանգի առաջ ենք կանգնած:

Ես գալիս եմ Լոս Անջելոսից և Եղեռնի այս հուշարձանի առջև կոչ եմ ուղղում մեր սիրելի երիտասարդներին, հայ մնալ ու ամուր հենվել մեր մայրերի և հայրերի հավատքի վրա: Սիրեցեք իրար եղբոր պես, սիրեցեք մեր Հայրենիքը և մեր հավատքի Կենտրոն Մայր Աթոռ Սուրբ էջմիածինը ու սիրեցեք մանավանդ մեր Մեսրոպյան անմահ լեզուն, որը քաղցր է, անուշ է և գեղեցիկ է:

Ապրիլ 24-ը հանդիսացավ մի թվական, որն ազգը անջատեց իր գլխից և կացինահարեց արմատից:

Աստվածապաշտ մի ժողովուրդ ենթարկվեց մարդակերպ գազանի ահռելի ու զազրելի տանջանքներին և խաչելության ու սակայն երբեք չուրացավ իր հավատքը և ինքնիրեն սրբացրեց իր արյունը թափելով:

Չկա մի ժողովուրդ, որն իր ազգի քանակի համաձայն տված լինի այնքան զոհ, որքան հայ ազգը:

Չկա մի ժողովուրդ ամբողջ մարդկության պատմության մեջ, որը խաչը գրկած լինի այնքան պինդ, որքան մերը և նրա սիրույն զոհած լինի իր թվի կեսը ու տառապած լինի նաև մյուս կեսը:

Չկա մի ժողովուրդ, որի շուրջ երկու հազար տաճարները ամբողջությամբ կործանված լինեն և ավելի քան տասը հազար եկեղեցականներ իրենց արյունով վկայած լինեն Քրիստոսին՝ ինչքան մերը:

Չկա մի երկիր, որի ժողովուրդը մահվան մանգաղով հնձված և ամայության վերածված լինի, ինչպես եղավ Պատմական Հայաստանը և Կիլիկիան հայկական շնչից:

Ինչքան էլ կոտորվեն հանճարեղ ազգի մտավորականներն ու արվեստագետները, եկեղեցականներն ու հավատացյալները և կամ ազգի կեսը, մնացողները հողի տակ թաքնված արմատների նման, կծլեն դարձյալ աշխարհի թատերաբեմի վրա ներկայանալու որպես գեղատեսիլ սաղարթախիտ ու պըտղալից մի ծառ:

Այս է Հայ ժողովրդի պատկերն ու նկարագիրը, որովհետև Աստված թաքնվել է նրա մեջ: Վերապրեց Հայ ժողովուրդը, Վերակենդանացավ հայոց աշխարհը, Վերածաղկեցին հայոց պարտեզները, հարություն առան և ոտքի ելան հայ մեռելները ու Տերը հրամայեց. *«Եկ, ո՛վ շունչ, չորս հողմերից, ու փչիր մեռելների վրա, և նրանք կկենդանանան» (Եզեկիել 37:9):*

Չորս հովերը փչեցին ու աշխարհի չորս կողմերը լցրեցին հայությամբ, որն իր կենդանությունը զգացնել տվեց ամեն տեղ:

Թուրքը իրագործեց իր ճիվաղային ծրագիրը, բայց հայը դատարկ թողեց իր գերեզմանը, որովհետև ուզում էր ապրել ու ապրեցնել իր հինավուրց ազգը, այն կատարյալ համոզումով, թե՝ *«Եթե Աստված մեր կողմն է՝ ո՞վ կարող է մեզ հակառակվել» (Հռոմ 8:31).*

Լսենք երջանկահիշատակ և մեր բոլորի կողմից սիրելի Վաղգեն Վեհափառին.

«Հայ Եկեղեցին ու իր ժողովուրդը առանձնապես ծանրորեն մտահոգ են այս օրերին և իրենց ձեռքերը երկինք բարձրացրած՝ Աստծու օգնականությունն են խնդրում Վասն խաղաղության աշխարհի, որովհետև մենք՝ հայերս, ողբերգական փորձառությունը ունենք անցյալի ողբերգությանց և մանավանդ սև թվականին, երբ առաջին համաշխարհային պատերազմի ընթացքին ամբողջ Արևմտահայաստանը բնաջնջվեց, զոհվեցին մոտ երկու միլիոն անմեղ ու անպաշտպան հայ քրիստոնյաներ, հրկիզվեցին և քանդվեցին բազմահարյուր հայկական պատմական վանքեր ու Եկեղեցիներ, բոլորը հայ դասական ճարտարապետության հուշարձաններ՝ կառուցված հինգերորդից մինչև տասնիններորդ դարերի ընթացքին»:

«Մշտապես աղոթելով մեր նահատակների հոգիների համար, ես աղոթում եմ նաև, որ աշխարհի վրա ոչ մի տեղ, ոչ մի ժողովուրդ չտեսնի նման ողբերգություններ: Ամեն պատերազմ համագումարն է մարդկային բոլոր մեղքերի Հետևաբար ընդդիմանալ պատերազմին՝ նշանակում է հնազանդվել Աստծու կամքին: Ուզում ենք հավատալ, որ մեր օրերին ոչ մի պետություն չպիտի ցանկանա դառնալ ավերակների ճարտարապետ» («Վազգեն Ա. Կաթողիկոս Ամենայն Հայոց» Սուրբ էջմիածին, 2005, էջ 83: Քարոզ Աշխարհամատրան Կիրակիի առիթով, 16 Մայիս 1984թ. խոսված «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» Մայր Եկեղեցում: Գիրքը նվիրվել է Վեհափառի մահվան 10-րդ տարելիցին):

1915, Ապրիլ 24: Ամեն հայ քրիստոնյայի համար մի անմոռանալի օր է երկու իմաստով. *առաջինը*՝ ոգեկոչում ենք մեր նահատակների հիշատակը և *երկրորդ*՝ նույն Ապրիլը մեզ ներկայանում է որպես Հայ ժողովրդի հարության օրը: Այսօր Ավետարանից մեջբերում եմ Պողոս *Առաքյալի այս խոսքը. «Որովհետև ուր որ կտակ կա, կտակարարի մահը պետք է հաստատվի, քանի որ կտակը հետ մահու է*

ուժի մեջ. ապա թե ոչ ինչպե՞ս ուժի մեջ կլինի այն, քանի դեռ կտակարարը կենդանի է» (Եբր. 9:16-18): Կտակը, որի մասին խոսում է Առաքյալը, Քրիստոսի զոհաբերությունն է և Նրա հաստատած հավիտենական կյանքի խորհուրդը: Ավետարանները վկայում են և մենք հավատքով ենք տեսնում Քրիստոսի մահը՝ մարդկանց հոգիների փրկության համար: Ահա նույն իմաստով էլ հասկանում ենք Եղեռնը: Մեր մեծ հայրերը իրենց նահատակված կյանքը որպես կտակ թողեցին մեզ, որով հաստատեցին իրենց հավատքի չափն ու զորությունը:

Կյանքի օրինաչափությունն է, որ մարդ մեռնի, լինի տարիքի բերումով թե հիվանդության պատճառով և թե այլ պարագաներում: Սակայն բնական մահ չէ, երբ գիտակցորեն դիմում ենք մահվան՝ պաշտպանելու համար մեր հայրենիքը, մեր ընտանիքն ու մեր սրբությունները: Եղեռնի մեր նահատակները գիտակցաբար դիմեցին մահվան, որպեսզի կյանք կտակեն մեզ. *«Չգիտակցված մահը՝ մահ է, գիտակցված մահը՝ անմահություն»,*- ասել է Եղիշե պատմիչը *(5-րդ դար):*

Մահը իր ահավոր թեերը տարածեց հայոց կենսուրախ աշխարհի վրա: Լռեցին զանգակատները, մահվան դեմ անօգնական մաքառողների աղաղակներից խլացան *«հորովելների»* դյութիչ արձագանքները, որովհետև՝ մահը քայլեց հայոց դաշտերի ի քաղաքների միջից, չծաղկած՝ չորացավ Հայաստանի հիասքանչ գարունը, ու *«Հայոց աշխարհը լքված, մոռացված խնկամանի նման ծխաց»: Լռեց գարնանաբույր կարկաչը հայոց գետերի, որովհետև նրանք դարձան «կարմիր հոսող ու դիակ փոխադրող գետեր»:*

Ժամանակին որբացած հողի ու կոտորված ժողովրդի հառաչանքներից գալարված մի սիրտ ասել է. *«Ի՞նչ ես կերել, հող իմ, որ այդքան արյուն ես խմում ու այդքան արցունքներ»:*

Մեզ այսօր կյանք է կտակված: Կյանք՝ ապրելու համար: Կյանք՝ լցնելու համար արյան գնով: Կյանք՝ նվիրելու ու պարգևվելու համար մեր հայրենիքին, մեր ընտանիքներին ու մեր բարեկամներին:

Այսօր համաշխարհային պատմության մեջ, մենք տեսնում ենք, որ մեր ժողովրդի կյանքը բոլորից ավելի փոթորիկի է մատնված: Եթե չմտածենք, թե մեզ տրված կյանքը

կտակվել է մեր նահատակների արյունով, այն ժամանակ խեղդած կլինենք մեր մեջ այն հավատքը, որը մեր հայրերինն է եղել: Խեղդել մեր մեջ նրանց հավատքը, նշանակում է թույլ տալ, որ քաղաքական թե տնտեսական, ընկերային թե կրոնական տագնապները քարուքանդ անեն մեր կյանքը:

Ստեղծագործ, լույսի ջահակիր և հանճարի սերմերով երկիրը բանավոր աղքատությունից դուրս հանած հայ ժողովրդի լիակատար կոտորածից հետո, Թուրքիայի ներքին գործոց դահճապետը՝ Թալյաթ փաշան ասում էր. *«Հայկական հարցը լուծելու տեսակետից, երեք ամիսների ընթացքում ես ավելի մեծ գործ կատարեցի, քան Սույթան Համիտը երեսուն տարվա ընթացքում»:*

Մեծ Եղեռնը հանգցրեց մեր գրականության ջահը, որը դեռհս պիտի բոցավառվեր. ոչնչացրեց գրողների պատկառելի մի խումբ, որոնք կարող էին շարունակել լույս սփռել մարդկանց հոգիներում:

Մեծ Եղեռնին զոհ գնացած գրողները և այդ նահատակներին փոխարինելու եկած վաղաթառամ ծիլերը շիրիմ չունեցան, քար ու հուշարձան չունեցան, բայց նրանց հուշարձանը, Մեծ Եղեռնի բոլոր զոհերի հուշարձանը մեր ժողովրդի սիրտն է, մեր մանուկների մեսրոպատառ շուրթերը հ այդ հուշարձանը անմահ է:

Հիշեցեք, որ մեզանից յուրաքանչյուրի կյանքի կտակագիրը մի նահատակ է: Մեր կյանքը հաստատում է նրանց աննախընթաց մահը: Մեր նախնիները կտակեցին իրենց կյանքը մեզ, այնպես ինչպես Քրիստոս Իր Անձը զոհեց, որպեսզի մաքրենք մեր խղճմտանքը մեռյալ գործերից և ծառայենք կենդանի Աստծուն:

Աղոթքի այս բոպեն՝ հոգիների լուսավորության պահն է: Սա այն վիճակն է, երբ մեր հոգիներում իջնում են Եղեռնի նահատակները ու մեր մեջ են փչում մեր Տիրոջ Հարության շունչը, մի շունչ, որի սնունդը առաջնորդում է հավիտենական կյանքի:

Աղոթքի այս պահը՝ վաղվա օրը կերտող ոգեղեն ուժն է տալիս մեզ: Այնպես չէ, որ կռվի ենք գնում, որպեսզի հաղթենք, այլ հաղթելու գիտակցությամբ և լավատեսությամբ ենք գնում կռվելու: Սա քրիստոնեական կյանքի մեծագույն առաքինու-

թյունն է, քանզի *«Քրիստոս Իր իսկ մահվամբ մահին պարտության մատնեց և մեզ պարգևեց վերստին կենդանության շունչը»:*

Աշխարհի տարբեր երկրներում ցրված Հայ ժողովրդի զավակները երախտիքի խոսք են ուղղում իրենց հյուրընկալող բոլոր ժողովուրդներին: Մենք էլ պարտավոր ենք մեր երախտագիտությունը հայտնելու այս հյուրընկալ երկրին *(Ամերիկայի Միացյալ Նահանգներին*), ուր ապրում ենք, մեր տխուր պահին մեզ վշտակից լինելու, մխիթարելու և առիթը տալու հանգիստ ու ապահով մի կյանք ունենալու:

Օրհնում եմ բոլորիդ և աղոթում, որ Աստված խաղաղություն ու հանգստություն պարգևի մեր բյուրավոր նահատակների հոգիներին: Ամեն:

ՀԱՑ, ՋՈՒՐ ԵՎ ԱՂ

ՀԱՑ

Մեր սովորությամբ հացը որպես խորհրդանիշ հիմնականում կիրառվում է նաև քրիստոնեության մեջ: Այն փոխաբերական իմաստով նշանակում է ն հոգնոր սնունդ ն մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի մարմինը: Հիսուս Վերջին Ընթրիքի ժամանակ, հացը օրհնեց ն տվեց Իր աշակերտներին ասելով. *«Այս է իմ մարմինը, որ շատերի համար է տրված, այս արեք իմ հիշատակի համար» (Ղուկ. 21:19):* Օրհնեց նաև գինին ն տվեց նրանց, ասելով. *«Այս բաժակը նոր ուխտ է իմ արյունով՝ ձեզ համար թափված» (Ղուկ. 21:20):*

Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս Գարեգին Հովսեփյանցը շատ գեղեցիկ կերպով է արտահայտվում այս մասին.

«...Ո՜հ, ինչ կորստաբեր է լինում երբեմն հաց ձեռք բերելու սխալ ճանապարհը, հազարավոր կյանքերի կորուստ, նյութական, մշակութային, բարձր ստեղծագործությունների ոչնչացում. ինչպես հացի անունով կեղեքումներն են կամ պատերազմները... Հիշում ենք Բոդլերի մի փոքրիկ պատմվածքը. երկու երեխաներ նստած էին իրար կողքի. նոցանից մեկը կարկանդակի մի կտոր ուներ ձեռքին, մյուսը կամենում էր հափշտակել նորա ձեռքից, ե ահա կարկանդակը անցնում է ձեռքից ձեռք, բայց շարունակ փշրվելով և գետին թափվելով: Երբ կռիվը վերջացավ, փոշիացած և գետին էր թափած կարկանդակը, որի համար սկսված էր կռիվը» (Գարեգին Կաթողիկոս Հովսեփյանց, «Դեպի Լույս և կյանք», Երևան, 1994, էջ 185):

Հացը կիսել և որևէ մեկի հետ ճաշակելը *նշան է միության, կամքի և համաձայնության: Անալի, անթխմոր հացը* նշան է մաքրության և զոհաբերության:

ՋՈՒՐ

Ջուրը համարվում է մաքրության, պտղաբերության, կյանքի բուն ակունքի հնագույն խորհրդանիշը: Մեզ հայտնի բոլոր առասպելներում երկրի վրա կյանքն առաջացել է նախասկզբնական ջրից: Ընդհանուր առմամբ ջուրը նյութական աշխարհում առկա բոլոր տեսակի հեղուկների և դրանց շրջանառության, լուծումի ու շաղախումի, ծննդի ու վերածննդի խորհրդանիշն է:

Հնդկական ավանդության մեջ ջուրը փառաբանվում է որպես ամենայն գոյության կրողի *(«Ռիգուեդա»): Մաքուր ջուրը,* մանավանդ *ցողը, ակնաղբյուրը և անձրևաջուրը* ունեն բուժական նշանակություն ու համարվում են աստվածային ողորմածության տեսակներից՝ *ակնաղբյուրի ջուրը որպես մայր հողի պարգև, իսկ անձրևաջուրն ու ցողը՝ երկնային աստվածների:*

Ջուրը խորհրդանշում է նաեւ *Իմաստություն:* Չինաստանի հին կրոններից մեկում *«Դաոսիզմ»-ում,* դժվարին արգելքները հաղթահարող և իր ճանապարհը մշտապես գտնող ջրի կերպարը թվացյալ թուլության հաղթանակն է չար ուժի դեմ: Հոգեբանության մեջ ջուրը ենթագիտակցական էներգիայի, նրա խորության ու վտանգի խորհրդանիշն է: Բուդդիզմում անխոնջ ջուրը կեցության բուռն հոսքնթաց է նշանակում, իսկ զուլալ ու հանդարտ ջուրը՝ արարչագործության ընկալում:

Ջուրը, որպես անցումային վիճակի խորհրդանիշ, իր արտահայտությունն է գտել բազում առասպելներում, որտեղ գետերը կամ ծովերը միմյանցից բաժանում են մեռածներին ու ողջերին: Շատ ժողովուրդների ավանդություններում կան աստվածություններ, որոնք ծնվել են ծովից և կամ կարողանում էին քայլել ջրի վրայով: *Հիշենք, որ ծովի վրայով քայլեց Հիսուս Քրիստոսը:* Ջուրը հնում, որպես մաքրության խորհրդանիշ, այնքան զորավոր ուժ ուներ, որ կարող էր քշել, մաքրել նաև դևերին ու չար ուժերին: Այս ավանդությունը այսօր էլ դեռևս պահպանվում է մեզ մոտ. *«Մեր շատ-շատ գավառներում ու շրջաններում ընդունված է ճանապարհ գնացողի ետևից ջուր ցանելու՝ մի տեսակ կարծեք նրա ճանապարհից սատանային քշելու սովորությունը»:*

Քրիստոնեության մեջ ջուրը մաքրության և մկրտության խորհրդանիշ է: Մկրտությունն իր մեջ միավորում է ջրի մաքրող, լուծող և պտղաբերող հատկանիշները, այլ կերպ ասած՝ լվանում է մեր մեղքերը, իր մեջ լուծում մեր հին՝ մինչ մկրտության պահն եղած կյանքը և ծնունդ տալիս նորին: Աստվածաշնչյան Ջրհեղեղի պատմությունը լավագույն հաստատումն է մեղքերի մաքրման և նորի ծննդյան խորհրդի:

Եթե բուսական աշխարհը ծարավը ունի առավոտյան ցողի՝ նրանով կենսավորվելու համար, որքա՜ն հապա մարդը ինքը, իբրև շնչող էակ անհրաժեշտ կարիքը ունի աստվածային ցողին, իր վրա շնորհքի հեղման համար:

Ջրի պակասը երբեմն կարող է մարդուն խելագարության առաջնորդել: Հին ուխտի մարդիկ, այս պատճառով, իրենց տոնական օրերին, հատուկ սաղմոսներով ու երգերով դիմում էին Աստծուն, որպեսզի թե իրենց և թե իրենց արտերը ջրով ապահովեր: Եսայի մարգարեն ասում է. *«Ես ջուր պիտի տամ ծարավածներին, որոնք ընթանում են անջրդի տեղերով. և իմ օրհնանքները՝ քո որդիների վրա (Հակոբին ուղղելով): Նրանք պիտի ծլեն ու ծաղկեն ինչպես ջրարբի խոտը, ինչպես ուռենին՝ հոսող ջրերի մոտ» (Եսայի 44:3-4):*

Ըստ Հայ Եկեղեցու Հայրերի՝ ջուրն ունի երկու հատկություն.

ա. մաքրում, լվանում է արտաքին մարմինն ու մեղքերը.

բ. զովացնում, թարմացնում է մարմինն ու հոգին:

Ջուրը նաև հրի՝ մեղքերի ու անմաքուր կրքերի հակառակ ուժն է:

ԱՂ

Հնում Մերձավոր Արևելքի ժողովուրդների մոտ աղը խիստ թանկ ու կարևոր ապրանք էր համարվում, շատերի համար նույնիսկ անմատչելի: Այս իսկ պատճառով այն դարձավ հյուրընկալություն և բարեկամություն արտահայտող հիմնական խորհրդանիշը: Հին Հույներն ու Հռոմեացիները աղին վերագրում էին պահպանող հատկություն, այստեղից էլ այն հավատալիքը, որ եթե աղը թափվում է, ուրեմն անհաջողություն է սպասվում և, որպեսզի դրա առաջն առնեին, մի բուռ աղ պիտի

նետեին ձախ ուսի վրայով: Ես հիշում եմ, որ Հույների պես մենք հայերս էլ ունեինք մի այսպիսի սովորություն, երբ զգում էինք, որ երկինքը ամպամած է և կարող է անձրև գալ, որպեսզի չգա, աղով խաչ էինք անում գետնի վրա: Թե դա ինչքանով էր օգնում, չգիտեմ, բայց մի բան պարզ էր, որ երբ հաջողվում էինք ու անձրև չէր գալիս, դա վերագրում էինք այդ աղով խաչի զորությանը:

Անշուշտ սա էլ հավատքի մի արտահայտություն էր: Աղը նաև խորհրդանշում է *սրամտություն ու իմաստություն:*

Աղը կենցաղային և ազգագրական նշանակություն ունի, իմաստավորում է հյուրասիրությունն ու ծառաների հավատարմությունը: Հայ ժողովրդի մոտ հնավանդ սովորության համաձայն, երբ բարձրաստիճան անձնավորություն էր ճամբորդում, բարի գալուստի ընթացքում ափսեի մեջ աղ ու հաց էր մատուցվում կամ սովորաբար, երբ բարեկամության ու հավատարմության մասին խոսք էր լինում, հայտնում են թե միասին աղ ու հաց են կերել:

Հիսուս Իր աշակերտներին ասաց, *«Դուք եք երկրի աղը» (Մատթ. 5:13) և նրանց* մեկնաբանելով այս, եզրակացրեց. *«Եթե* աղը անհամանա*, ինչո՞վ այն կհամեմվի, արդ դուք ձեր մեջ ունեցեք աղը և իրար հետ խաղաղ եղեք» (Մատթ. 5:13):*

Երբ Հիսուս Իր առաքյալներին ու հետևորդներին երկրի աղ է կոչում, այստեղ աղը բարոյախոսական իմաստ է ստանում ու առաքինի կյանքին, հոգեշահ խոսքին ու չափված գործերին է ակնարկվում: Ամեն:

ԳԱՆՁԵՐ

«Ինչ որ ունես, վաճառիր և տուր
աղքատներին և երկնքում գանձեր
կունենաս, և արի իմ հետևից»
(Ղուկ. 18:22-23)

Ավետարանական այս բառերը մեր Փրկչի՝ Հիսուս Քրիստոսի խոսքերն են, երբ Նա Իր աշակերտների հետ էր: Այդ ժամանակ մի երիտասարդ և հարուստ մարդ, որն իր կյանքի ընթացքում պատվիրանները պահող մեկն էր եղել, մոտենում է մեր Տիրոջը ու իր հարցը ուղղելով Նրան պատասխանում է. *«Բարի Վարդապետ, ի՞նչ պիտի անեմ, որ հավիտենական կյանքը ժառանգեմ» (Ղուկ. 18:18):* Հիսուս նրան ասում է. *«Ինչո՞ւ ինձ բարի ես կոչում, ոչ ոք բարի չէ, այլ միայն՝ Աստված: Պատվիրանները գիտես. մի շնացիր, մի սպանիր, մի գողացիր, սուտ մի վկայիր, մեծարիր քո հորը և մորը»:* Եվ նա ասում է. *«Այդ բոլորը պահել եմ իմ մանկությունից»:* Երբ Հիսուս այս լսեց, ասաց նրան. *«Դեռ մի բան պակաս է քեզ. ինչ որ ունես, վաճառիր և տուր աղքատներին և երկնքում գանձեր կունենաս, և արի իմ հետևից» (Ղուկ. 18:22-23):*

Այս կյանքի ընթացքում հաճախ մեզ էլ է ուղղվում այս հարցը, թե ինչպե՞ս անենք, որ արժանի դառնանք ժառանգելու հավիտենական *ու* երկնային կյանքը:

Ավետարանի պատվիրանները պահելու հա*մար* քիչ է միայն համոզված լինել, թե դրանք պահելը բավական են և կասկածել, այն վախով, թե դրանք կարող է մեզ զրկել այս կյանքում վայելելիք բարիքներից, ինչպես մտածում էր հարուստ երիտասարդը, որն զգաց ու տխրեց, որովհետև շատ ունեցվածք ուներ: Նրա համար ունեցվածքը, հարստությունը մի տեսակ արգելք էր արժանանալու իր ցանկությանը. *«Երբ նա այս լսեց,*

տրտմեց, որովհետև չափազանց հարուստ էր» (Ղուկ. 18:23):

Մեր կյանքը միշտ ենթարկվում է զանազան ալեկոծումների, ինչո՞ւ, որովհետև մեզ պակասում է առողջ մտածելակերպը նույնիսկ մեր ապագայի նկատմամբ, թե ինչպե՞ս պիտի անցկացնենք մեր կյանքի օրերը և վազե վազ փորձում ենք հարստություն կուտակելու ու միմիայն նրա մեջ տեսնելու մեր ապագա երջանկությունը: Ցավալի ու խղճալի մի հոգեվիճակ է այս: Մեր օրերը սահմանափակ են ու մենք բոլորս էլ պանդուխտ ենք այս կյանքի ճանապարհորդության մեջ: Ինչքա՜ն երջանիկ պիտի զգայինք, եթե կյանքի նկատմամբ մեր մտածելակերպը փոխվեր Ավետարանի ճշմարիտ խոսքերի ազդեցության տակ և դա առիթ լիներ, որպեսզի օգնության ձեռք երկարեինք զրկյալներին ու կարոտյալներին, որոնք վստահաբար պիտի հրճվեն և նրանց ուրախությունը մեզ պիտի պարգևի հոգեկան մեծ գոհունակություն ու խղճի և մտքի հանգստություն:

Աստծու պատվիրանները պահելը և աշխարհային և թե հոգևոր կյանքում կարևոր է: Դրանք պահող անձը, երբեք վախ չունի, թե կարող է ձախորդություն ունենալ իր կյանքում, որովհետև հետևում է իր խղճի ձայնին ու միշտ բարձր է մնում բոլոր այն հակասական երևույթներից, որոնք հանդիպում են իրեն, կամա թե ակամա, իրեն դժվարութեան մատնելու ու իր հավատքի մեջ թուլություն մտցնելու մտածումով:

«Քո պակասությունը հարստությունդ է»- ակնարկեց Հիսուս երիտասարդին. *«Բայց սա ճշմարտազանցության Իր ձեն էր միայն, հաջորդ բառերով Նա ամբողջացնում էր Իր միտքը, երբ ասում էր. «Ծախիր ունեցածդ և աղքատներին բաժանիր. Իր պատգամն էր. «Քո հարստությունը թերություն է քեզ համար, եթե դու չկարողանաս այն բարի նպատակի գործածել:... Երիտասարդը իր հարցի պատասխանը ստանալուց հետո, տխրած, հնարավոր է՝ զ այրացավ էլ,- այդ նշանակում է նաև «խոժոռված» - հեռացավ Հիսուսի մոտից: Կեղծիք էր հավիտենական կյանքի պայմանների մասին նրա հարցասիրությունը, իր մակերեսային կատարելություններից շլացած՝ նա դեռ ավելիի ձգտումը ուներ. միայն թե չէր սպասում այդպիսի պատասխանի, չէր կարող մտածել, թե ինչ որ իրեն թանկագին մի բան էր թվացել իբրև բոլորի դժվար վիճակը*

պիտի ցույց տրվեր իրեն, չէր հասկացել իր պակասը, որովհետև երկրավոր և նյութական արժեքների մեջ միշտ մտասույզ, չէր կարողացել կշռել, թե իսկապես ինքը ի՞նչ արժեք ուներ»:

«Ու սա է դրամը սիրելու ամենադաժան հետևանքներից մեկը, անգետ դարձնել մարդուն իր բուն արժեքին ու դրա համար նույնիսկ, նրանց արժանիքի, որոնք իր դասակարգից չեն, այսինքն չքավոր են ըստ աշխարհի..» («Ամբողջ երկեր» Թորգոմ Պատրիարք Գուշակյանի, Ե. Քարոզներ, Երուսաղեմ, 1940, էջ 100-102):

Մահից առաջ Մեծն Ալեքսանդր Մակեդոնացու զորավարները նրան հարցնում են.

«Ո՞ւմ ես թողնում թագավորությունդ»:

Նա պատասխանում է.

«Հզորագույնին (այսինքն՝ բոլորից ուժեղին): Նա հասկացել էր, որ ամենամեծն ու ամենաուժեղը Աստված է, ոչ թե աշխարհը նվաճող և ծունկի բերող Մեծն Մակեդոնացին»:

Ավետարանում շատ օրինակելի պատգամներ կան պահելու համար պատվերները մեր ծնողների, ուսուցիչների և մեր կյանքի առաջնորդների: *Ավետարանական պատգամը ասում է. «Պատվիր քո հորն ու մորը, որպեսզի բարիք գտնես, երկար ապրես բարեբեր այն երկրի վրա, որ Տեր Աստված տալու է քեզ» (Ելք. 20:12): Մի պատգամ, որը վերաբերում է բոլորիս: Ինչքա՜ն դաստիարակիչ խոսքեր են այս պատգամները, որոնք մեր վրա պարտականություն են դնում հարգել մեր ծնողներին, մեր ալեհեր հայրերին ու մայրերին, լսել նրանց մեզ տրված խրատները, այն վստահությամբ, թե դրանք կատարելու պարագային կստանանք նրանց սերն ու օրհնությունը, որը շատ ու շատ բաներից ավելի կենսական է:*

Հետաքրքիր է այս պատմությունը և ուսանելի զավակների համար.

«Մի զավակ, կորցնելով իր սիրելի մորը, դառնացած գոռում էր «Աստված չկա, նա մորս ընդմիշտ հեռացրեց ինձանից»: Երկար ժամանակ նա սգում է իր մոր մահը ու անդադար բողոքում Աստծու դեմ: Մի գիշեր, տեսիլքով (տեսիլքը - կես քուն, կես արթուն վիճակն է) նրան է

հայտնվում մայրը, ծովի նման ջրերի մեջ մինչև կոկորդը կանգնած և խոսում է. «Տղաս, այս ջրերը արցունքներդ են ու ցաված խոսքերդ, որոնց մեջ պիտի խեղդես ինձ, ինչպես որ ջրասույզ ես արել հույսերդ: Սակայն ուզածս քո աղոթքներն են ու ողորմությունդ կարոտյալներին իմ անունիս համար, սա է այն ամենը, որ մերժել ես իմ հոգուս»: Տղան ապշած հարցնում է մորը. «Մայր, ինչպես իմանամ, որ դու ես ինձ երևացողը, ողջ առողջ առջևս կանգնած, երբ սառը դիակդ հողի մեջ դրվելը տեսա»: Մայրը ժպտում է նրան ու ասում. «Հոգին տեսնելու համար սրտի աչքեր են պետք. գնա նայիր տերևի վրա նստած թրթուրին, շերամին, որն իր պատյանում է ամփոփված, այնտեղ խավարն է թագավորում, կարծում ես նա մեռա՞վ, բայց ո՛չ, բոժոժը պատռվում է ու ոսկեթև թիթեռնիկն է ծնվում: Ճանաչո՞ւմ են թրթուրին, ոչ, բայց նա այժմ թիթեռնիկ է, լի կյանքով ու ջերմությամբ: Ուստի, վեր կաց, որդիս, եւ մի սրբապղծիր շրթունքներդ Աստծու առջև, որով Ինքն իսկ է ամբողջ կյանքը: Եվ հավատքը ամոթով չի թողնի քեզ»:

Մեր մանկության ու պատանեկության տարիներին մեր ուսուցիչներն ու դաստիարակները, մեզ ցույց տվեցին կյանքի իսկական ուղղությունը և դրանով մեզ դարձրեցին բարոյականով ու հավատքով զորացած մարդիկ: Մենք այսօր պետք է հարգենք անմոռանալի վաստակն ու հիշատակը նրանց, որոնք հանդիսացան մեր այսօրվա կյանքի իսկական և օրհնյալ դաստիարակները:

Աշխարհային հասկացողությամբ, երբ այսքան կարևոր տեղ ենք հատկացնում մեր կյանքի դաստիարակներին ու նրանց տված պատվիրանների պահպանմանը, ինչքա՜ն ևս առավել կարիքն ունենք գիտակցելու ու հասկանալու մեր Երկնավոր Հոր մեզ տված պատգամների կարևոր իմաստը, որոնք մեզ տրվեցին Ավետարանի ճանապարհով: Այդ պատվիրանների գործադրության ճանապարհին, չմոռանանք հիշելու բոլոր նրանց, որոնք դժբախտությանց մեջ են և մեր աջակցությամբ ու օգնությամբ, կարող ենք սրբել նրանց արցունքը և շնորհել իսկական երջանկությունը: Նրանց հետ ուրախակից լինելու և օգնության ձեռք երկարելու գիտակցությունը արդեն իսկ նշանակում է Աստծու պատվիրանները գործնական ճանապարհով իրագործել ու իմաստավորել մեր կյանքը:

«Ու այդ պատճառով անհրաժեշտություն է իր չափի մեջ պահել դրամի համար զգացված սերը: Առանց սանձի՝ մի գազան է այն, մի բռնավոր, որը խորտակում է ամեն ինչ որ գեղեցիկ է հոգու մեջ: Պետք է կարողանալ գետնին տապալել մարդուն Աստծու դեմ պատերազմի մղող այդ բռնավորին: Ի՜նչ երանելի ուրախություն պիտի լինի նրա համար, որը հնարավորությունը ունենա դա անելու...»:

Սա այն մոլությունն է, որը փչացնում է բոլոր մյուս առաքինություններին, երբ մի անգամ իրեն իբրև բույն է դարձնում սիրտը, այնտեղ այլևս տեղ չունի սերը, ոչ ընկերոջ, ոչ ընտանիքի, ոչ ազգի, ոչ Աստծու և ոչ իսկ իր անձի - այս վերջինը անշուշտ իր լավագույն իմաստով - այո, ոչ իսկ իր անձի նկատմամբ: Կարող ենք զարդարված յինել մի քանի բարեմասնություններով, բարի կենցաղավարության և նույնիսկ բարեպաշտության շնորհներով, բայց եթե նրանց հետ կա, եթե նրանց տակ ծածկված է դրամի կամ ստացվածքի մոլությունը, այն կնսեմացնի, անտեսանելի կդարձնի ամեն ինչ ու մեջտեղում կերևա ինքը, իբրև չբուժվող մի ախտ, չնվաճվող մի թերություն, հոգու ամբողջ գեղեցկությունը տգեղացնող մի մեծ պակասություն: Ի զուր չի, որ հառաչել է հնության ամենամեծ բանաստեղծներից մեկը, «Գարշելի արծաթսիրություն, ի՜նչ ահավոր ոճիրների ես առաջնորդում դու հաճախ մարդկային սիրտը» {«Ամբողջ երկեր» Թորգոմ Պատրիարք Գուշակյանի, Ե. Քարոզներ, Երուսաղեմ, 1940, էջ 100,103):

Թող Աստծու օրհնությունը իջնի բոլորիս վրա, մեզ շնորհի Իր պատվիրանները պահելու և գործադրելու հավատքն ու զոհաբերության ոգին, որպեսզի այդ գիտակցությամբ ու նվիրյալ հավատքով և գործնական հողի վրա օգտակար հանդիսանալու հասկացողությամբ, կատարենք մեր պարտականությունը բոլոր նրանց հանդեպ, որոնք կարիքն ունեն մեր աջակցության և օգնության ու այս ձևով իրավատերը և ժառանգորդը կարող ենք դառնալ հավիտենական ու երանավետ կյանքի, փառավորելու համար մեր Երկնավոր Հորը: Ամեն:

Ե Ր Ա Ն Ի Ն Ե Ր

ՀՈԳՈՎ ԱՂՔԱՏՆԵՐ

«ԵՐԱՆԻ ՀՈԳՈՎ ԱՂՔԱՏՆԵՐԻՆ, ՈՐՈՎՀԵՏԵՎ ՆՐԱՆՑՆ Է ԵՐԿՆՔԻ ԱՐՔԱՅՈՒԹՅՈՒՆԸ»

(ՄԱՏԹ. 5:3)

«Երանի սգավորներին, որովհետև նրանք պիտի մխիթարվեն»:

«Երանի ողորմածներին, որովհետև նրանք ողորմություն պիտի գտնեն»:

««Երանի նրանց, որ քաղցն ու ծարավն ունեն արդարության, որովհետև նրանք պիտի հագենան»:

Երանի հեզերին, որովհետև նրանք երկիրը պիտի ժառանգեն» (Մատթ. 5:4-7) և այլն:

Մեր Տերը զգում ու ապրում էր Իր առաքյալների ու հետևորդների վիճակը: Ուստի պետք էր պատրաստել, քաջալերել և հավատքի ու հույսի զրահներով ամրացնել նրանց, որպեսզի հեթանոս աշխարհում կարողանային Իր վարդապետությունը տարածել, որն այդքան էլ հեշտ չէր:

Սուրբ Ներսես Շնորհալի Հայրապետն ասում է. *«Երանությունը բոլոր բարիքների, իսկ թշվառությունը՝ բոլոր չարիքների լիությունն է»:*

Գրիգոր Տաթևացին բացատրելով *«Երանություն» և «երանելի» բառերը ասում է. «Իմաստասիրական երեք մտածողություններ կան. նախ ստոյիկյանները, որոնք ասում են, թե երանությունը կայանում է հոգու առաքինության մեջ: Երկրորդ՝ ճեմականները, (արիստոտելյաններ), որոնց համար երանությունը կայանում է ճշմարտության մեջ: Եվ երրորդ՝ էպիկուրյանները, որոնք ասում են, թե երանությունը կայանում է մարմնական բարի հեշտությունների մեջ: Առաջին երկուսը թեև հոգեպես իմանում են դրանց իմաստը, սակայն անցավոր են. իսկ վերջինների բացաատրությունը, բոլորովին սուտ և մարմնավոր է...»:*

Հունարեն լեզվում գոյություն ունեն երկու հոմանիշներ, որոնք օգտագործվում են *«աղքատ»* բառի նշանակությամբ: Նրանցից մեկը վերաբերվում է այն աշխատավոր մարդուն, որը ոչ մի ավելորդ բան չունի պահած, իսկ մյուսը՝ այն մարդուն, որն ընդհանրապես ոչ մի բան չունի: Համաձայն Քրիստոսի ուսուցման, իսկական երջանկությունը գտնվում է *«աղքատ»* հոգի ունենալու մեջ: Եբրայերեն լեզվում *«աղքատ»* բառը նշանակում է այն անօգնական և խոնարհ անհատը, որն իր ամբողջ հույսը դրել է Աստծու վրա: Այս իմաստով է, որ Սաղմոսերգուն գործածել է *«աղքատ»* բառը. *«Աղքատն այս Տիրոջը դիմեց, և Տերը լսեց ու իր բոլոր նեղություններից փրկեց նրան» (Սաղմ. 33:7):* Եսայի մարգարեն ասում է, թե Տիրոջ ծառան պետք է աղքատների մոտ *ուղարկվի. «Տիրոջ հոգին ինձ վրա է, դրա համար իսկ նա օծեց ինձ, ուղարկեց ինձ՝ ավետարանելու աղքատներին, բժշկելու բեկվածներին, գերիներին ազատություն քարոզելու և կույրերին՝ տեսողություն» (Եսայի 61:1-2):*

Սուրբ Ներսես Շնորհալի Հայրապետն ասում է. *«Աղքատության երկու վիճակներ կան. մեկը ցանկալի, իսկ մյուսը՝ արհամարհելի: Ցանկալի է մեղքերի աղքատությունն ու առաքինությունների հարստությունը»:* Ապա ավելացնում է. *«Ինձ թվում է, թե հոգով աղքատությունը կամավոր խոնարհությունն է, որի գեղեցկագույն օրինակը Քրիստոս Ինքն է, ինչպես առաքյալն է ասում, «մեզ համար աղքատացավ Նա, որ մեծատուն էր»: Առակաց գրքում ասվում է. «Ով որ հույսը դնում է Տիրոջ վրա՝ երանելի է»:* Այսպես, Հոբ երանելին երբեք իր հույսն ու ակնկալությունը չկտրելով Աստծուց, կարողացավ դիմանալ սատանայի կողմից իրեն տրված բազում դժբախտություններին ու համբերությամբ և հավատքով, հաղթական դուրս եկավ նրա հետ ունեցած մենամարտից:

Պատկերացրեք մի ագահ մարդ, որի ձեռքը պատահաբար ընկնում է մի փաստաթուղթ, որտեղ ասվում է, թե այսինչ վայրում գանձ է պահված, սակայն այդ գանձին հասնելու համար շատ աշխատանք ու նույնիսկ տառապանք է հարկավոր: Ի՞նչ եք կարծում, մի՞թե այդ դժուարությունները կարող են հու-

սահատեցնել նրան: Նա պատրաստ է կանչել իր բոլոր ընկերներին, որպեսզի օգնեն իրեն այդ գործում, նրանց, որոնց հետ միասնաբար կարող է ձեռք բերել թաքնված գանձը: Սա այն նյութական գանձն էր, որի մասին հայտնում է փաստաթուղթը, սակայն ճշմարիտ գանձը քողարկված է անհայտության մեջ: Ուրեմն մենք, որ ցանկանում ենք ձեռք բերել մաքուր ոսկին, եկեք միավորենք բյուրավոր ձեռքեր՝ մեր աղոթքները, որպեսզի գտնվի այդ գանձը և բոլորին բաժանվի հավասարապես: Չէ՞ որ առաքինությունը բաշխվում է բոլոր նրանց, ովքեր ցանկություն ունեն հասնելու նրան:

Հմուտ նկարիչը անտեղյակ մարդուն կարող է ասել, որ գեղեցիկ դեմք ստեղծելու համար հարկավոր են արտաքին որոշ տվյալներ՝ այսպիսի մազեր, աչքեր, հոնքեր, այտեր, մի խոսքով ամեն մի բարեմասնություն, որով գեղեցկությունը դառնում է կատարյալ: Իսկ Նա, Ով Միակ Երանելիի նմանությամբ մեր հոգիներն է կերտում, բառերով հայտնում է այն ամենը, ինչը երանություն է ծնում:

Մեր Տերը խոսեց նաև աղքատության և հարստության մասին, շեշտելու համար նյութի կարևորությունն ու անկարևորությունը: Նա հաճախ հստակեցրեց նյութի կարևորությունը մարմնավոր կյանքի, իսկ անկարևորությունը՝ հոգևոր կյանքի համար: Աշխարհի վրա հարստություն դիզելու երկու ձևեր կան: Առաջինը՝ արդարությամբ և ճակատի քրտինքով, որը հաճելի է Աստծուն և մարդկանց, իսկ երկրորդը՝ անիրավությամբ ու խարդախությամբ: Այս վերջինը դատապարտելի է Աստծու և մարդկանց առջև:

Մեծահարուստը եթե ագահ է, ապրում է աղքատի պես:

Այստեղ հարց է ծագում, թե՝ *«Ի՞նչ է աղքատությունը»:*

Տեսնենք, թե ի՞նչպես է պատասխանում այս հարցին անցյալ դարի Երուսաղեմի Պատրիարք Թորգոմ Գուշակյանը.

«Աղքատությունը կամ, եթե ուզում եք, ավելի լայն իմաստով մի բառ օգտագործելու համար համար ասենք, տառապանքը երբեմն կարծվածի պես չարիք կամ անեծք չի մարդու ճակատին գրված, այլ՝ բարոյական զգացողություն ունեցողների համար կատարյալ

մի օրհնություն: Տառապանքի սալի վրա է, որ կամքի երկաթը փոխվում է պողպատի: Չքավորության դպրոցում է, որ մարդը սովորում է կյանքի ամենաառողջ վարդապետությունները» («Ամբողջ երկեր» Թորգոմ Պատրիարք Գուշակյան, Ե. Քարոզներ, Երուսաղեմ, 1940, էջ 206):

Աղքատությունը դրսևորված է զանազան կերպերով: Մեկը կարող է դրամով աղքատ լինել, մյուսը՝ մտքով, մի ուրիշը՝ սրտով, հոգով, ուսումով և այլն:

«Երանի հոգով աղքատներին»:

Մարդն ինչքան էլ իրապես հարուստ լինի, նորից ինչ-որ *մի բանի կարիքը ունի, որովհետև դրամը երբեք հոգին չի կշտացնում: Հոգին էլ ստամոքսի նման միշտ սովածանում է և սնունդ պահանջում: Ստամոքսին հացով կարելի է գոհացնել, բայց հոգուն՝ ոչ: Հոգու «աղքատություն»-ը մարդու երազած հոգևոր հարստությունն է. «Որովհետև,-* ասում է Հիսուս,- *դրանով միայն հնարավոր պիտի լինի ժառանգել Երկնքի Արքայությունը»:*

Բայց ո՞վ է ուրեմն «Հոգով աղքատ»-ը: Հին և նոր Կտակարաններում պարզված բազմաթիվ ըսկզբունքների վրա հիմնվելով, «հոգով աղքատ» ասելով հասկանում ենք իր անհամեմատելի դժբախտությանց մեջ ինքնիրեն խոնարհ զգացող մարդուն, որը չի հուսահատվում ոչ վշտից և ոչ էլ մահվան չափ տագնապեցնող տառապանքներից:

...«Հոգով աղքատ»-ը այսինքն ըստ աշխարհի անզոր, անօգնական, բոլորի կողմից մերժված և արհամարհված մեկը ու լինելով այդպիսին, նա չի կորցնում երբեք ապրելու և աշխատելու ցանկությունն ու քաջությունը, որովհետեւ ամեն ինչ սպասում է Աստծու կողմից, մեծ հույս ունի Նրա վրա: «Հոգով աղքատ»-ը նա է, որ չի կորցնում իր հույսը Աստծու վրա ու երանի նրան, երջանիկ է նա, որովհետև երջանկությունը Աստծու վրա դրված անսակարկ հույսն է»:

«Ամբողջ երկեր» Թորգոմ Պատրիարք Գուշակյան, Ե. Քարոզներ, Երուսաղեմ, 1940, էջ 192–193):

Այս պատմութիւնը հետաքրքիր է.

«Պատմվում է, թե Հույն մեծ Փիլիսոփա Դիոգինեսը մի օր այցելության է գնում Պղատոն մեծ փիլիսոփային: Երբ Դիոգինեսը նրա տան դռնից ներս է մըտնում, նայում է փառավոր կահավորմանը և քայլելով գեղատեսիլ ու արժեքավոր գորգերի վրայից, բարձրաձայն ասում է: «Այսպես կկոխկոտեմ Պղատոնի հպարտության վրա»:

Պղատոնը ձայն չի հանում և մի օր էլ փոխադարձ այցելությամբ երբ մտնում է Դիոգինեսի բնակարանից ներս, գետնի վրա հին ու ծակծկված մի կարպետ է տեսնում, որի վրայից քայլելու ժամանակ ասում է. «Այս կարպետի անցքերի միջից, ես տեսնում եմ Դիոգինեսի փառքը»:

Հպարտությունը կայանում է աշխարհային հարստության ու փառքի մեջ, իսկ խոնարհությունը՝ հոգեկան և իմացական հարստության մեջ *«Հոգով աղքատ»* լինելը համարվում է հոժարակամ խոնարհությունը: Առաքյալը բերում է Աստծու աղքատության օրինակը. *«Զեզ համար աղբատացավ, Նա, որ հարուստ էր, որպեսզի դուք Նրա աղքատությամբ հարստանաք» (Բ. Կորնթ. 8:9):* Առանց չարչարանքի անկարելի է հասնել խոնարհության: Թշնամին քնած չի, նա միշտ պատրաստ է չար սերմեր ցանել, որպեսզի մարդը հեռանա Աստծու ճշմարիտ ճանապարհից: Այդ չար սերմը *հպարտության* մոլությունն է:

Մեր եկեղեցական Հայրերից Գրիգոր Տաթևացին ասում է.

«Հոգու աղբատությունը աշխարհականից հրաժարվելն է, այսինքն՝ մարմնական հեշտանքները սիրելուց, առատությունից, պատվից, քանի որ աշխարհական սերը պարունակում է այս երեքը:

Եվ հոգով աղքատ են, ովքեր չեմ ձգտում ցանկասեր ախտերի. աղքատ են հոգով խոնարհները, որ

երկյուղած են. աղքատ են հոգով, նաև մարմնով աղքատները, որոնք ոչինչ չունեն և ամեն ինչ ունեն» (Գրիգոր Տաթևացի «Գիրք Հարցմանց»):

Արդարև մեր Տերը երանի է տալիս այն անձերին, որոնք իրենց միջից հանել են աշխարհային ցանկություններն ու ճոխությունները և հետևում են հոգևոր կյանքի առաքինություններին:

Ուրեմն՝

«Երանելի են նրանք, որոնք խոնարհությամբ ու համեստությամբ ապրում են իրենց կյանքը մշտապես կապ պահելով իրենց Արարչի հետ, հեռանալով իրենց «ես»-ի տիրապետությունից, դառնում են Աստծու ճառագայթը այս երկրի վրա ու ապրում ծառայասիրությամբ մի կյանք:

Երանելի են նրանք, որոնք Աստծու մեծության գիտակից մշտապես ապրում են աղքատացյալ մի կյանք, ի խնդիր հարստության և աստվածային շնորհքների լիության:

Երանելի են նրանք, որոնք գիտակցելով իրենց անօգնականության, իրենց ամբողջ հույսը դնում են Աստծու վրա, ապրելով կատարյալ հնազանդության մեջ Նրա հետ, ի խնդիր երկնքի արքայության:

Եվ վերջապես՝ «Երանելի են նրանք, որոնց կյանքի մեկնակետն ու նպատակակետը աստվածահաճո կյանքն է»: (Գրիգոր Տաթևացի «Գիրք *Հարցմանց):*

Այս երանության արժանանալու հեռանկարով ապրեցին և ստեղծագործեցին Քրիստոնեական Ընդհանրական Եկեղեցու ու մեր հայրերը և երկհազարամյա պատմություն ունեցող Հայաստանյայց Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին:

Այսօր մենք ևս օրինակ ունենալով նրանց, փորձենք հետևել այդ երանական կյանքին, որպեսզի ապագա մեր օրերը լինեն ավելի պայծառ ու հույսով լի:

Հոգու աղքատությամբ մարդու մեջ դադարում են կրքերը, ատելությունները, ագահությունը, սպանությունների ծրագրերը և աշխարհային տեսակ-տեսակ ցանկությունները ու խաղաղություն է տիրում նրա ներսում:

«Հոգով աղքատ»-ը ծարավ է արդարության, որովհետև արդարությունը Աստծու Թագավորությունը ժառանգելու մեջն է: Մարդ կարող է ամեն ինչ կորցնել այս աշխարհում, բայց ապրել սրբի պես, և հոգով աղքատ»: Սուրբ Բարսեղ Հայրապետն ասում է. *«Այս թագավորությունը ժառանգելու հույսը պետք է քաջությամբ և զվարթությամբ լցնի հավատացյալին՝ իր բոլոր նեղությունների մեջ»:*

Մանուկի համար երջանկությունը կայանում է իր անմիջական հաճույքին գոհացում տալու մեջ: Օրինակ, փոքրիկներից մեկը, երբ քաղցրեղենի խանութի առջևից է անցնում, բնականաբար նրա մեջ արթնանում է դրանք համտեսելու ախորժակը, եթե գոհացում տրվի երեխայի քիմքին, նա իրեն գոնե այդ պահին երջանիկ կզգա, բայց դուք պատկերացրեք, եթե որևէ պատճառաբանությամբ նրան խոստանանք հաջորդ օրը դնել քաղցրեղենը, գիտեք ի՞նչ կլինի, ամենայն հավանականությամբ փոքրիկը չպիտի հավատա եղած խոստմանն ու իրեն դժբախտ պիտի զգա, քանի որ նա ապրում է ներկայով և նրա համար դեռևս ապագան գոյություն չունի:

Քսանմեկերորդ դարի աշխարհի երիտասարդությունը կարծում է, թե գտել է իր երջանկությունը ազատ, հաճույքներով լի և շռայլ ու հեշտալի կյանք կատարելու մեջ: Սակայն ինչո՞ւ ենք զարմանում և գուցե արդարացի զայրանում: Պետք է հասկանանք, որ այսօրվա երիտասարդությունը փորձում է իր վրայից նետել ամեն տեսակ պարտավորություն, չստանձնելու համար որևէ պատասխանատվություն, քանի որ նա երջանկություն է զգում իր այսպիսի ժամանակավոր հաճույքների մեջ, անզուսպ կերպով հետևելով դրանց գործադրմանը, առանց մտածելու, թե դրանք ի՞նչ հետևանքներ կարող են ունենալ և ինչպիսի՜ խոր աղդեցություն կթողնեն վաղը իրենց հոգեկան աշխարհի վրա:

«Հոգով աղքատ» անձը միշտ առիթը ունի զարգանալու և առաջդիմելու: Նա երբեք չի բավականանում իր իմացածով և ամեն րոպե ցանկանում է մի նոր բան սովորել: Եթե մարդկային քաղաքակրթության նպաստող անձերի կյանքը ուսումնասիրենք, կտեսնենք, որ նրանք բոլորն էլ *«աղքատ հոգի»* են ունեցել:

«Ունեցվածքներից աղքատանալը՝ ուժերով հարստանալ է: Դիտեցեք թե իրենց կյանքի ո՞ր շրջաններում է, որ մեծ գիտնականները արել են իրենց ամենակարևոր գյուտերը ու մեծ մատենագիրները երբ են գրել իրենց գլուխ գործոցները. գրեթե միշտ՝ իրենց տանջանքի ժամանակ և ապրելու համար հարկադրված ստեղծել են ամենաբացառիկ ու բուռն դժվարությունների միջոցին... Աշխարհի ամենամեծ միաբանության հիմնադիրը իր կրոնական գինվորության մեծագործությունը հիմնելուց առաջ ինքնիրեն ենթարկել է կամավոր ապաշխարության ամենածանր չարչարանքներին: Տառապանքի սանդուխքն է ամենաապահով ելարանը, արժանիքի ստույգ բարձրություններին հասնելու համար» («Ամբողջ երկեր» Թորգոմ Պատրիարք Գուշակյան, Ե. Քարոզներ, Երուսաղեմ, 1940, էջ 204):

Աստծու Թագաւորությունը արտաքին մի տեղում կամ վիճակում չէ, այլ մարդու անձի մեջ. *«Ձեր ներսում է Աստծու արքայությունը»,*- ասաց Հիսուս: Աղքատ հոգի ունեցողը իր համեստ նկարագրով, բայց ուժեղ հավատքով սրբակյաց մի կյանքով է ապրում: Հայ հավատացյալը եթե մի անգամ հագնի այդ նկարագիրը, կմոտենա Աստծ ուն և իր երանելի կյանքը կհասնի Գերագույն Երջանկության, որը Երկնքի Թագավորությունն իսկ է:

«Զդադարենք երբեք հավատայուց. հոգով աղքատը նա է, որ բոլոր մարդկանցից և աշխարհից անիրավված ու հալածված, երբեք չի կորցնում ապրելու իր կորովն ու քաջությունը, որովհետեւ մշտական հույս ունի Աստծու բարեգթության վրա, գերազանցապես երջանիկ մարդն է. իսկ այդ հույսը կարող է ծնվել և զորանալ այն հոգիներից ներս միայն, ուր Աստված է թագավորում: Աստծու թագավրությունը և երջանկությունը, պետք է փնտրել այնտեղ, ուր նա կարող է միայն գտնվել՝ սրտի, խղճի և հոգու մեջ» («Ամբողջ երկեր» Թորգոմ Պատրիարք Գուշակյան, Ե. Քարոզներ, Երուսաղեմ, 1940, էջ 196):

Ուրեմն եկեք մեր աղոթքով, հավատքով ու սիրով իրար միանանք, որպեսզի կարողանանք ձեռք բերել մեր երազների երազը՝ հոգևոր երջանկությունը: Ամեն:

ԵՐԱՆԻ ՍԳԱՎՈՐՆԵՐԻՆ

«ԵՐԱՆԻ ՍԳԱՎՈՐՆԵՐԻՆ, ՈՐՈՎՀԵՏԵՎ
ՆՐԱՆՔ ՊԻՏԻ ՄԽԻԹԱՐՎԵՆ»
(ՄԱՏԹ. 5:4)

«Երանի նրանց, որ սրտով մաքուր են, որովհետև նրանք Աստծուն պիտի տեսնեն»:

«Երանի հոգով աղքատներին, որովհետև նրանցն է երկնքի արքայությունը»:

«Երանի ողորմածներին, որովհետև նրանք ողորմություն պիտի գտնեն» (Մատթ. 5:4-7) և այլն:

Սուգը թանկագին կորուստների առթիվ զգացված ցավն է, որը մարդկանց իրապես տխրեցնում է և շատ անգամներ լացացնում: Կյանքը մարդու թանկագին հարստությունն է, երբ նա առողջ է և հոգով և մարմնով ու մանավանդ այդ նույն կյանքը նրան սգավոր չի դարձնում:

Մահը երբեմն սարսափեցնում է մարդկանց: Պատմության ընթացքին մեռնողների գերեզմանների վրա կամավոր մարդիկ էին մեռնում: Հայոց Արտաշես թագավորի մահը մեծագույն սուգը պատճառեց իր ժամանակիցներին և այնքան կյանքեր զոհվեցին նրա մահվան առթիվ, որ ծաղկող Հայաստանն ավերակի պես էր երևում գահաժառանգ Արտավազդի աչքին: Այսպես կամ այնպես, մարդիկ վերջապես մխիթարվում են, ինչքան էլ ծանր լինի նրանց սուգը: Բայց Ավետարանի «*Երանին*» ուղղված չէ միայն հարազատի մահ ունեցող սգավորներին:

Մարդիկ ավելի մեծ, դառն ու անբուժելի կորուստներ ունեն իրենց կյանքում, որոնց սուգը չի կարող համեմատվել մահվան սգի հետ: Հավատքի կորուստը մարդու ներսում ավելի սգավոր է դարձնում նրան: Հույսի կորուստը՝ ամենածանր դժբախտության ե թշվառության է տանում հուսահատվածին: Սիրո կորուստը՝ դատապարտում է մարդուն մենակության տառապանքներին: Արժանապատվության կորուստը՝ ողջ-ողջ սպանում է մարդուն: Սրբության կորուստը մարդու հոգուց՝ մեղքերով է լցնում նրան ու նա դառնում է ամենաանմխիթար սգավորը:

Սգավոր ենք այսօր բոլորս, որովհետև մահամերձ է մեր հավատքը: Շատերը նույնիսկ այն կորցրեցին: Հավատքը անսպառելի գանձն է Հայ քրիստոնյա ժողովրդի համար, որը այդ հրաշալի ուժով կառուցեց իր տունը, գրկեց ու փայփայեց նրան, իր գոյությունն ու պատիվը պաշտպանելու համար և դրանով ամրացրեց իր Եկեղեցին, դպրոցը, շուկան ու իր ընկերային կյանքի այլ բերդերը:

Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս Բաբկեն Կյուլեսերյանն ասում է.

«Ասպետական ոգին եղել է հայ ժողովրդի նկարագիրը: Արժանապատվությունը, անձի պատիվը, մարդու ներքին արժեքը, ասպետական ոգու ակնաղբյուրն է: ...Կրոնի լեզվով սրբությունը Աստծուն տեսնելու միակ միջոցն է: Նա մեր ներքին մարդու առաստաղն է: Սրբության կորուստը մեղքի գյուտն է: Վերցրեք սրբությունը ձեր հոգուց՝ մեղքը անմիջապես կտիրի նրան: Եվ մեղքը հիմա այն անիմաստ բառն է, որի համար մարդիկ միայն ծիծաղում են: Չէ՞ որ ասում են, իրավունք ունենք ուրախանալու... Խաբողը ասում է. սա առևտուր է, թող գնողը աչքերը լավ բացի և չխաբվի, ո՞վ է իրեն ստիպում: Խաբիր, այսպիսի առիթ ե՞րբ պիտի պատահի մի անգամ էլ: Մի՞թե սա շատ բնական չի՞: ... Թող աչքը բացի և չխաբվի: Մնացածը շան քարոզ է, շուկայում այդպիսի բան չի անցնում: Մենք տուն, ընտանիք ենք պահում:... Շահենք, որ եկեղեցուն էլ, ազգային կարիքների համար էլ տանք: Սովորական շահերով սոված կմնանք:

Արդյոք շատ խի՞ստ են այս պատկերի գծերը: Չեմ կարծում: Սա է առևտրական կյանքի հոգեբանությունը: Եվ սա ինքնին մեղքն է» (Երուսաղեմ, «Սիոն» ամսագիր, 1929-1930):

Ավետարանը հակառակ չի շահելուն: Շահիր ինչքան որ կարող ես և հնարավոր է: Դա քո իրավունքն է: Քաջերի համար սահման չկա, նրանց սահմանը զենքն է: Ավետարանում չափ ու սահման չկա առևտրի համար: Սուտը, խաբելը, ագահությունը, սրանք են, որ ապականում են առևտուրը և խափանում մեծ ու իրական շահերի տնականությունը: Սրանք են, որ ջնջում են

սրբությունը հոգիներից և լայն տեղ բացում մեղքի թագավորության:

Ըստ Ավետարանի մարդկային տառապանքների պատճառները հոգեկան են:

Մեր Փրկիչը իր երանիների երկրորդը ուղղում է սգավորներին, որովհետև նրանք պիտի մխիթարվեն, բավական է, որ գան Ավետարանի լույսին և չխարխափեն խավարում: Սխալ ըմբռնումները և կյանքի իրականությունների մասին մարդկանց սխալ մոտեցումները, իրապես նրանց սգավոր են դարձնում:

«Երանի սգավորներին, որովհետև նրանք պիտի մխիթարվեն», մի պայմանով, որ նրանք նետվեն Փրկչի գիրկը և ամբողջությամբ զգան Նրա ներկայությունը իրենց մեջ:

Հին Կտակարանում հարազատի կորուստը սգի առիթ էր լինում: Աբրահամը սգում է իր տիկնոջ Սառայի մահը *(Ծնող. 23:2):* Հակոբը, երբ լսեց Հովսեփի՝ իր կրտսեր զավակի ենթադրյալ մահը, սուգ բռնեց *(Ծնող. 37:34):*

Նոր կտակարանում ևս հանդիպում ենք սգի նույնիմաստ գործածության *(Մարկ. 16:10):* Պողոս Առաքյալի մտածողության մեջ սգի պատճառը միայն սիրելիի կորուստը չէ. մեղքի ծանրությունը ևս սգի է մատնում քրիստոնյային. *«Եվ դուք հպարտանում եք. ավելին. չեք էլ սգում, որպեսզի վերանա ձեր միջից նա, ով այդ արարքը կատարեց...» (Ա. Կորնթ.5:2).* Պողոս Կորնթացիներին գրած իր երկրորդ նամակում ասում է. *«Երբ գամ, գուցե դարձյալ իմ Աստվածն ինձ նկուն դարձնի ձեր առաջ, և սուգ անեմ նախապես մեղանչած շատերի համար, որոնք չեն ապաշխարել իրենց գործած պղծության, պոռնկության և վավաշոտության համար»...(Ա. Կորնթ. 12:21):*

Հայերեն լեզվում *սուգ* նշանակում է *վիշտ,* տառապանք, հարազատի կորուստի պատճառած նեղություն ու ցավ: Անկասկած սիրելիի կամ բարեկամի մահը խոր սուգի է մատնում բարեկամներին ու հարազատներին և երբեմն սա առիթ է լինում, որ սգավորը անդրադառնա իր ապրած սխալ ընթացքին ու փոխելով իր ճանապարհը քրիստոնյային վայել կյանքով ապրի: Հաճախ ոչ միայն մահը, այլ նաև մտերիմ բարեկամի և ընկերոջ նեղ կացությունն ու թշվառությունը պատճառ են հանդիսանում մարդու սթափության և զգաստության, եթե նա սխալ

ճանապարհի վրա է գտնվում:

Արևելյան առակն ասում է. *«Չկա մարդ առանց վրիպտի, բայց եթե կա մեկը, որ վիշտ չի ունեցել նա մարդ չէ»:* Հետաքրքիր և տարօրինակ խոսք է և հակառակ դրան ինչ-որ տեղ նաև ուսանելի:

Ավետարանի հասկացողությամբ սգավոր է նա, որ գիտակցորեն զգալով, որ մեղավոր է, զղջում է ու ապաշխարությամբ և աղոթքով Աստծու ողորմությանը ու ներողամտությանն է դիմում: Սուրբ Ներսես Շնորհալի Հայրապետը ասում է. *«Ինչքան ժամանակ, որ մարդը մեղքի մեջ է, չի կարող հեշտությամբ սգալ» Սուգը, ըստ նրա,* մարդու մեջ այն վիճակն է, որով զգում ու ապրում է իր մեղավորությունը: *«Կույրը, որն արևը չի տեսնում, երբ բանտում նստի չի զգա լույսից իր զրկվածությունը, մինչդեռ նա, որ տեսել է արևի գեղեցկությունը, կզրկվի նրանից, գիտի թե ինչ բան է զրկված լինելը»:*

Մեր Եկեղեցու հայրերը, Ավետարանի ճշմարիտ մշակները իրենց ամբողջ կյանքում *«սգավոր»-ի* իրական վիճակով ապրեցին ի խնդիր հավիտենական մխիթարության:

Այսօր, դժբախտաբար աշխարհը իրական սգի մեջ է, որովհետև.-

ա Հավատքը թուլացել է.

բ. Հույսը հուսահատության է փոխարինվել.

գ. Սերը դարձել է *«պղնձյա շեփոր հնչյուն եւ դոդանջ ծնծղաների».*

դ. Սրբության երանական վիճակը տեղի է տվել մեղքի առջև:

ժամանակը հասել է, որ քրիստոնյա անհատը ինքը ևս իր Փրկչի հետևությամբ *«Հավատա Աստծուն և քաջասրտությամբ հաղթի աշխարհին»:* Չէ որ նույն այդ Փրկիչը տառապեց, որ կարողանա մեզ օգնել *(Եբր. 2:18):*

Մեր Տերը քարոզության սկսեց Իր հետևորդներին հրավիրելով ապաշխարության ու մի նոր կյանքի. այսօր Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին ևս նույն կոչն է անում իր հավատացյալներին: Քրիստոսի Ավետարանի ժիր մշակը՝ Պողոսն ասում է. *«Արդ, ո՞վ պիտի բաժանի մեզ Քրիստոսի սիրուց, տառապա՞նքը, թե՞ անձկությունը, թե՞ հալածանքը, թե՞ սովը, թե՞ մերկությունը, թե՞ վտանգները,*

թե՞ սուրը: Բայց այս բոլորից էլ ավելի հաղթական ենք դուրս գալիս նրա միջոցով, ով սիրեց մեզ...» (Հռոմ. 8:35,37):

Նույն խոսքը կրկնեցին մեր Հայրերը 5-րդ դարում, ահեղ թշնամու սպառնալիքների առջև և հաղթական դուրս եկան, որովհետև անկեղծ էին իրենց խոսքերի մեջ: Մենք այսօր իբրև նրանց ժառանգորդները կարո՞ղ ենք նույն ուժով կրկնել այս խոսքերը, աշխարհի այն չարերի երեսին, որոնք մեզ իրական սգավորներ դարձրեցին ու մինչև այսօր էլ դարձնում են, մեր պատմական հայրենիքի հողերի սրբապղծմամբ: Կարո՞ղ ենք այս խոսքերով ապրել, գործել, աշխատել, ստեղծագործել, աղոթել և ինչո՞ւ չէ նաև պայքարել մեր սգավորութեան մեջ, ուժեղացնելու քրիստոնեական մեր հավատքը, ամրապնդելու մեր հույսը, գործնականացնելու համար մեր սերը և ամուր հիմքերի վրա դնելու մեր կամքը: Ինչպես արևմտահայ սքանչելի գրող Վահան Թեքեյանը կասեր. *«Եկեղեցին հայկական, մեն մի քարին, տակ գետնի, դեպի երկինք բարձրացող գաղտնի ճամբա մը ունի»:*

Այո', պետք է գիտակից սգավորությամբ ապրել մեր կյանքը, որպեսզի արժանանանք երանության, որով և հավերժական մխիթարության:

Մեր Տերը շատ տարօրինակ խոսքերով քարոզեց Լերան վրա: Այդ արտահայտություններից մեկն այն էր, որ երանի է տալիս սգավորներին, որովհետև նրանք մխիթարություն պիտի գտնեն: Կողքից մեկը կարող է այսպես մտածել ու գլուխը շարժել. *«Ինչպե՞ս կարող է մարդ իր սիրելիին կորցնել ու մխիթարվել»*

Փորձենք պատասխանել Ընդհանրական Եկեղեցական Հայրերից Սուրբ Հովհան Ոսկեբերան Հայրապետի բերանով. *«Երբ Աստված մխիթարում է, այնուհետև եթե սուգերը ձյունի փաթիլների նման հազարներով իսկ իջնեն ձեր վրա, բոլորին էլ պիտի կարողանաք ոտքերով տրորել»:*

Իսկ Սուրբ Բարսեղ Կեսարացին ասում է. *«Այդ սուրբ առավոտը (խոսքը մահվան մասին է) այն հունտն է, որից պիտի բացվի ու մեծանա հավիտենական ուրախության ծաղիկը»:*

Մարդ իր մեղքերից երբ ձերբազատվում է, իրապես

կարծեք թեթևություն է իջնում նրա հոգու վրա ու մխիթարություն է գտնում, նույնիսկ այն պարագային, եթե ֆիզիկական նեղության մեջ էլ գտնվելիս լինի:

Պողոս Առաքյալը Փիլիպպեցիներին ուղղած իր թղթում ասում է. *«Եթե կա մխիթարություն Քրիստոսով, եթե կա սիրո սփոփանք, եթե կա Հոգու հաղորդություն, եթե կա գթություն և ողորմություն, ուրեմն կատարյալ դարձրեք իմ ուրախությունը, նույն բանը խորհեցեք, միաշունչ, միախորհուրդ» (Փիլ. 2:1-2):*

Մեր Տերը սգավորներին խոստանում է լրիվ մխիթարություն, պայմանով, որ նրանք իրենց հավատքը ամրացնեն Աստծու վրա: Հովհաննես Առաքյալը Նրա ձայնը երկնքից լսեց, որ ասում էր.

«Եվ երկնքից լսեցի մի ձայն, որ ասում էր. «Ահավասիկ Աստծու խորանը, որ մարդկանց մեջ է. նա պիտի բնակվի նրանց հետ, և նրանք պիտի լինեն նրա ժողովուրդը, և նա էլ նրանց Աստվածը, և պիտի սրբի նրանց աչքերից ամեն արտասուք, և այլևս մահ չկա. ոչ սուգ, ոչ աղաղակ, ոչ ցավ և ոչ չարչարանք, քանի որ առաջինն անցավ» (Հայտ. 21:3-4):

«Մի վախեցեք նրանցից, որ մարմինն են սպանում, բայց հոգին սպանել չեն կարող, այլ դուք առավել վախեցեք նրանցից, ով կարող է գեհենի մեջ կորստյան մատնել հոգին և մարմինը» (Մատթ. 10:28):

Երբ մարդը չարիք է գործում, թաղվում է մեղքերի ծովի մեջ ու ամբողջովին տրվում դրանց: Երբ մեր Տերը կենդանի մարդկանց մասին ասաց. *«...թող մեռյալները թաղեն իրենց մեռելներին» (Մատթ. 8:18)* նկատի ուներ անաստվածությունն ու անհավատությունը: Աստծուց հեռանալն արդեն ինքնին մահ է:

«Հոգին ավելի է քան մարմինը», այսինքն՝ ինչպես որ մարմինն ավելի է, քան՝ հագուստը: Քրիստոնյան մահը աչքերի առաջ պիտի ունենա ամեն օր, միշտ, սակայն առանց վախի: Հետաքրքիր է, թե մեր Տերը ինչո՞ւ է հատկապես շեշտում մեր այցելությունը սգո տները կամ սգո վայրերը, որովհետև այնտեղ մարդկանց հոգիներն ավելի պատրաստ են Աստծու խոսքն ու ճշմարտությունը լսելու և ընդունելու, քանի որ ուզեն կամ

չուզեն մտածում են մահվան մասին:

Մարդիկ վախենում են մահից, ինչո՞ւ, որովհետև նրանք հավատքից թույլ են և չեն ընդունում հավիտենական կյանքի իրողությունը, քանի որ նրանց համար մահը առեղծված է, իսկ ճշմարիտ քրիստոնյայի համար մահը երբեք էլ գաղտնիք չէ, որովհետև նա իր բարի և արդար գործերով, աղոթքով ու հավատքով պատրաստ է դիմավորելու նրան և իր խնդրանքը ուղղված է Աստծուն, որպեսզի արժանացնի իրեն Երկնքի Արքայության:

Ճշմարտություն է, որ հավատքով ապրած, փորձություններից ու մեղքից հեռու մնացած հավատացյալ մարդը, ավելի խաղաղ և հանգիստ է ընդունում մահվան իրողությունը, քան նա, ով ապրել է Աստծուց հեռու, միմիայն նյութական կյանքով:

Իբրև վերջաբան մեջ եմ բերում Պողոս Պատրիարք Ադրիանուպոլսեցու խոսքերը մահվան մասին.

«Մահը մարդկանց վրա Աստծուց կարգված անհրաժեշտ ոստիկան է, որ ծննդյան օրվանից բռնած պահում է յուրաքանչյուր մարդու օձիքը՝ տանելու և կանգնեցնելու Աստծու առաջ... (էջ 228)»:

«Երեք պատճառով է մահը դառը թվում աշխարհի սիրո, խղճմտանքի և փրկության անստուգության: Ուստի մի իմաստասեր ասում էր. «Քանի որ չգիտես, թե որտեղ ու երբ է քեզ մահը սպասում, դու նրան ամեն ժամ սպասիր, որպեսզի անպատրաստ չլինես նրա գալստյան ժամանակ... (էջ 31):

«Գերեզմանատունն այնպիսի դպրոց է, որտեղ մեռյալները սովորեցնում են ապրողներին, համրերը՝ խոսողներին...» (էջ 233):

«Մահը բարիներին երկու շնորհ է անում. Մեկը՝ նրանց ազատում է աշխարհի չարիքներից, որոնցում տառապում էին, և մյուսը՝ նրանց հասցնում իրենց փափաքած երկնային բարիքները ժառանգելուն» (Պողոս Պատրիարք Ադրիանուպոլսեցի, «Խրատի Թանգարան», Սուրբ էջմիածին, 1999, էջ 234): Ամեն:

ԵՐԱՆԻ ՀԵԶԵՐԻՆ

«ԵՐԱՆԻ ՀԵԶԵՐԻՆ, ՈՐՈՎՀԵՏԵՎ ՆՐԱՆՔ ԵՐԿԻՐԸ ՊԻՏԻ ԺԱՌԱՆԳԵՆ» (ՄԱՏԹ. 4:5)

«Երանի հոգով աղքատներին, որովհետև նրանցն է երկնքի արքայությունը»:

«Երանի սգավորներին, որովհետև նրանք պիտի մխիթարվեն»:

«Երանի նրանց, որ քաղցն ու ծարավն ունեն արդարության, որովհետև նրանք պիտի հագենան» (Մատթ. 5:4-6) և այլն:

Դժբախտաբար, մարդկային ընկերության մեջ, առաջընթացի և զարգացման այս հզոր դարում, հեզերը նկատվում են խեղճեր, ողորմելիներ և վախկոտներ:

Հակառակ տիրող այս սխալ ըմբռնմանը, հեզությունը ողորմելիություն, վախկոտություն կամ էլ խեղճություն չէ, այլ բարոյական քաջություն, ինչպես նաև ավետարանական առաքինություն, որը չի կասկածում իր ուժերի վրա, սակայն ճանաչում է իր տկարությունը. գիտի ճշտել տարբերությունը բնության օրենքների և իր հասկացողության միջև ու ամբողջ սրտով խոնարհվում է թե Աստծու և թե մարդկանց առջև:

Յուրաքանչյուր մարդ, եթե մի պահ մտածի, թե ի՞նչ է հիմա ու ի՞նչ պիտի լինի վաղը, երբեք էլ չի հպարտանա, այլ վեհանձնորեն կնայի տկարին, ընկածին ու կօգնի նրան՝ իր հնարավորության սահմաններում:

Հեզերը կրոնի խորքը թափանցող, կյանքի օրենքներին գիտակ, նրա ոգով ապրող ու ներքին օրենքներով ղեկավարվող մարդիկ են, որոնք գիտակից լինելով իրենց կարողությանը, իրենց սեփական նկարագիրը ունեն, հանդարտ դիմավորում են կյանքի բոլոր արտաքին հարվածները ու շնորհիվ իրենց խոնարհ բնավորության, հեշտությամբ արհամարհում են բռնությունը, անիրավությունը և չեն կորցնում իրենց հոգու հիանալի խաղաղությունը:

Պատմությունը ցույց է տվել, թե իսկական տաղանդներն ու մեծ հոգի ունեցողները, միայն կարող են հեզ լինել:

Հեզերը լավ գիտեն, որ իրենք Աստծու ստեղծածներն են ու աշխարհին նայում են իբրև Նրա ունեցվածքը,

քանի որ Աստծու կամքով են կառավարվում բոլոր իրերը և բնության մեջ ամեն ինչ ենթակա են Նրա օրենքներին: Աստված մարդացավ, որպեսզի մարդը բարձրանա: Մեզ բոլորիս հստակ է, թե հեզության և խոնարհության ուսուցիչն ու մարմնացումը եղավ Ինքը՝ Աստվածորդին՝ Հիսուս Քրիստոս. «*Եկեք ինձ մոտ, բոլոր հոգնածներդ ու բեռնավորվածներդ, և ես ձեզ կհանգստացնեմ: Իմ լուծը ձեր վրա վերցրեք և սովորեցեք ինձնից, որ հեզ եմ և սրտով խոնարհ. և ձեզ համար հանգիստ պիտի գտնեք, որովհետև իմ լուծը քաղցր է և իմ բեռը՝ թեթև» (Մատթ. 11:2830):*

Հեզը նման է մի պտղատու ծառի, որի պտուղը ինչքան առատ լինի, այնքան կխոնարհվեն նրա ճյուղերը: Նրա դեմքը միշտ պայծառ է, սիրտը մաքուր, իր խոնարհ բնավորությամբ նա հեշտ է հաղորդակցվում ուրիշների հետ ու վստահություն ստեղծում իր շուրջը: Նա գիտի, որ իր ունեցած արժանիքները տրված են Աստծու կողմից ու դրա համար էլ ոչ պարծենում է և ոչ էլ հպարտանում: Ճանաչելով իր անձի կարողությունը, չի ձգտում այն բանին, որին արժանի չէ ու ինչքան էլ փառքի, պատիվների և պաշտոնի մեծության հասնի, չի գոռոզանում, այլ ընդհակառակը՝ աշխատում է միշտ Աստծու պատվիրանները կատարել, որովհետև՝ *«Ով որ ինքն իրեն բարձրացնում է, պիտի խոնարհվի և նա, ով ինքն իրեն խոնարհեցնում է, պիտի բարձրանա» (Ղուկ. 14:11):*

Հեզությունը քրիստոնյա մարդու իսկական նկարագիրն է, որը միշտ կարող ենք ձեռք բերել աղոթքի միջոցով ու Քրիստոսի օրինակին հետևելով:

Հակառակ որ մարդը ստեղծվել է Աստծու պատկերի համաձայն և ունի Նրա հրաշալի հատկությունները՝ *բարություն, մաքրություն, հավատք և ամուր կամք,* սակայն նրա վրա իշխում է նյութը, որը բերում է վնասակար հատկություններ, ինչպես՝ *ագահություն, չարություն, նախանձ և հպարտություն:* Իսկ այդպիսիները, երբ տեսնում են հեզ, խոնարհ, արդար և օրենքներին ենթարկվող մարդկանց, ոչ միայն օրինակ չեն վերցնում նրանցից, այլ ընդհակառակը՝ նույնիսկ ծիծաղում են նրանց վրա, առանց հասկանալու, թե այս կյանքը ժամանակավոր է և հավիտենական են միայն մարդկանց

թողած բարի գործերը: Եկեք լավ մտածենք այս մասին, լսենք մեր խղճի ձայնը, լինենք հեզ ու խոնարհ, քանի որ Աստված մեզ տվել է ամենակարևոր մի բան՝ մտածելու կարողություն և ազատ կամք, որպեսզի զանազանենք չարը՝ բարուց և ընտրենք լավն ու գեղեցիկը: Ոչ մեկս մյուսի համար պատասխան չենք տալու և մեզ էլ իրավունք չի տրված դատելու որևէ մեկին: Հիսուսի պատվիրանն է. *«Մի դատեք, որ Աստծուց չդատվեք. որովհետև ինչ դատաստանով, որ դատեք, նրանով եք դատվելու. և ինչ չափով, որ չափում եք, նրանով պիտի չափվի ձեզ համար» (Մատթ. 7:1-3):*

Իրական հեզերին տրված է Ավետարանի լուծը տանելու կարողությունը և այս է պատճառը, որ մեր Փրկիչը Իր անձը օրինակ բերելով, խոսքը ուղղում է աշխարհի բոլոր մարդկանց. *«Ես հեզ եմ ու սրտով խոնարհ» (Մատթ. 11:29):*

Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս (1868-1936) Բաբկեն Ա. Կյուլեսերյանը հետաքրքիր մեկնաբանություն ունի.

«Եվ մեր Փրկիչը Ավետարանը նմանեցրեց լուծի: Ավետարանը, այո,... կյանքի այս նոր կանոնագիրը: Հպարտը, ամբարտավանը, աշխարհի հզորներն ու բռնավորները չեն կարող այն կրել, ընդվզում են և լուծից ընկնելու պես են շինում: Իրական հեզերին է միայն տրված Ավետարանի լուծը տանելու կարողությունը և այս է պատճառը, որ մեր Փրկիչը ուղղակի մատնանշում է Իր Անձը, խոսքը ուղղելով աշխարհի բոլոր վաստակաբեկ և հանգստացած հոգիներին, թե Ինձ մոտ եկեք, որ ձեզ հանգստացնեմ, որովհետև հեզ եմ, իմ սիրտս շատ խոնարհ է, եկեք Իմ մոտ, առեք Իմ ավետարանի լուծը, նա շատ թեթև ու շատ հաճելի է, առեք այն ձեր ուսերի վրա, ինչպես որ Ես եմ առել և Ինձանից սովորեցեք, թե ի՞նչպես կարելի այն կրել. իմ հաջողությունների գաղտնիքը կայանում է Իմ հեզության մեջ...»:

...«Մենք տեսնում ենք, որ «իրավունքը» շատ գոռացող ամբարտավանին է: Ով որ ուժեղ է իր ներվերի մեջ և դրամ ունի իր քսակում, նա է խոսքի և գործի տերը:

Այս է տեսնված իրականությունը այսօրվա

կյանքի պայքարում էր: Բայց սա չի իրական կյանքը: Սա իր նպատակից շեղված, հիվանդոտ, խենթի կյանք ունեցողի արտահայտությունն է...:

Ավետարանի լույսով պետք է նայել կյանքի մթին իրականությունների վրա և Ավետարանը ասում է, թե աշխարհի տերերը և ժառանգորդները հեզերն են ու նրանք պիտի լինեն» (Բաբգեն Ա. Կյուլեսերյան, *«Միոն» ամսագիր, Երուսաղեմ, լույս տեսած 1929-1930 թվականներին: Քաղված Ֆրեզնոյի «Ս. Պողոս» Հայց. Եկեղեցու «Տաճար» թերթիկից):*

Աստծու և մարդկանց հարաբերության մասին էլ Հին Ուխտի մարգարեական պատգամը հստակ կերպով ասում է, թե Աստված հեզերի մեջ է միայն հանգստանում *(Եսայի 46):*

Հեզեր չեն նրանք, որոնք համեստությունը և խոնարհ լինելը կեղծում են, ծածկելով իրենց չարությունը և տկարությունը խեղճության քողի տակ: Հեզ մարդը կուշտ է, այս աշխարհի կյանքը դիմավորելու կեցվածք ունի, մի մարդ է, որի լույսը ներսից է գալիս, կարող է տառապել ու դժվարություններին համակերպվել, սա ոչ թե տկարության, այլ հոգեկան մի ներքին ուժի նշան է:

Ս. Ներսես Շնորհալի Հայրապետը ասում է. *«Խոնարհությունը հեզության ծնունդն է, իսկ ամբարտավանությունը՝ բարկության, որովհետև բարկությունը թշնամություն և անարգանք է պատճառում, մինչդեռ այնտեղ, ուր խոնարհություն կա, անարդարություն ու տխրություն չկա»:*

Հայերեն լեզվում հեզ նշանակում է քաղցր, մեղմ բնավորություն, խոնարհ, ավելի մեղմ ու հանդարտ բնավորության տեր:

Այս պատմությունը ուսանելի է.

«ԻՆՔՆԱՀԱՎԱՆ ԳԻՏՆԱԿԱՆԸ

Մի անգամ ծովի վրա ճամբորդելու ժամանակ մի անվանի ու ինքնահավան գիտնական հարցնում է նավավարին.

- *Տղաս, ֆիզիկա գիտե՞ս.*
- *Ոչ - գլուխը շարժելով պատասխանում է նա:*

- Ափսո՛ս,- ասում է գիտնականը.- կյանքիցդ մի մաս կորցրեցիր:

Մի քիչ հետո մեծամիտ գիտնականը նորից է հարցնում.

- Նավավար, քիմիա գիտե՞ս.

- Ոչ, տխուր խոստովանվում է նավաստին.

- Ափսո՛ս դժբախտ ես, ուրեմն կյանքիդ կեսը կորցրեցիր:

Հանկարծ ծովում ուժեղ փոթորիկ է սկսվում ու նավը ընկղմվելու վտանգի տակ է: նավավարը տագնապահար հարցնում է գիտնականին.

- Գիտնական, դուք լողանալ գիտե՞ք:

- Ոչ,- պատասխանում է գիտնականը:

- Ափսո՛ս, ուրեմն ձեր ամբողջ կյանքը կորցրեցիք»:

Ի՞նչ է այս պատմության դասը: Ո՞չ համալսարանների վկայականները, ո չ հարուստ օժիտը, ո չ հաջող գործը, ոչ դրամը, ոչինչ չեն օգնի, եթե խոնարհություն չունես և Հիսուսի պես հեզ չես, որպեսզի կարողանաս լողանալ կյանքի ծովում:

Մեր Տերը, որ հեզության մարմնացումն էր, տաճարում, երբ տեսավ, որ կենդանիների առևտուր էր կատարվում ու սեղանավորները ապրանք էին ծախում, սաստիկ բարկացավ, ճիպոտով խարազանեց, բոլորին դուրս վռնդեց տաճարից, ասելով. *«Գրված է՝ Իմ տունը աղոթքի տուն պիտի կոչվի, իսկ դուք ավազակների որջ եք արել այդ» (Մատթ. 21:13):*

Մեր եկեղեցական հայրերից Գրիգոր Տաթևացին ասում է.

««Հեզն է, որ չի չարչարում և չի բռնադատում: Իսկ հեզությունը նույնանում է հաստատակամության հետ, որովհետև ասում են, թե հաստատակամությունը համբերություն է, որովհետև համբերությունն էլ նախատինքներին դիմանալն է»:

««Հարց - «Ի՞նչ է հեզությունը» և «Ի՞նչ է խոնարհությունը»:

Պատասխան - Հեզությունը ցասմանն է հակառակ, խոնարհությունը՝ հպարտությանը»:

(*Գրիգոր Տաթևացի «Գիրք Հարցմանց»*)

Սուրբ Գիրքը մեզ ուսուցանում է, որ գոյություն ունի երկու տեսակի հարստություն, մեկը՝ ցանկալի, իսկ մյուսը՝ դատապարտելի: Պետք է հետամուտ լինել առաքինության գանձերին և մերժել նյութական հարստությունը, որովհետև առաջինը, այսինքն՝ ցանկալին, հոգևոր վաստակ է, իսկ երկրորդը, այսինքն՝ դատապարտելին՝ խեղաթյուրում է: Եթե մարդը աղքատ է ժուժկալությունից, արդարամտությունից, իմաստությունից, խոհեմությունից կամ նման այլ մեծարժեք գանձերից, ողորմելի է, որովհետև զուրկ է ճշմարիտ արժեքներից: Իսկ եթե նա հոժարակամ աղքատ է չարից, եթե նրա ներաշխարհում դիվային գանձեր չկան թաքնված և նա նախանձախնդիր է հոգով, ապա անկորչելի գանձ է կուտակում: Ինչպես առաքյալն է ասում, «...Որին իր ժամանակում հայտնի պիտի անի Երանելին և միակ Հզորը, Թագավորների Թագավորը և Տերերի Տերը, նա, որ միայն Ինքն ունի անմահությունը և բնակվում է անմատչելի լույսի մեջ...» (Տիմ. 6:15-16): Որով, կան աստվածային օրենքներ, որոնց կարող է հետևել որևէ մարդ, եթե ցանկություն ունենա: «Որո՞նք են դրանք»: «Հոգով աղքատ» լինելը համարվում է կամավոր խոնարհությունը: Առաքյալը բերում է Աստծու աղքատության օրինակը, ասելով. «...Ձեզ համար աղքատացավ նա, որ հարուստ էր, որպեսզի դուք Նրա աղքատությամբ հարստանաք» (Բ. Կորնթ. 8:9): Եթե Աստծուն նմանվենք ինչը հնարավոր է այս երկրային կյանքում, անպայման երանելի վիճակ կունենանք: Բայց առանց չարչարանքի, չեք կարող խոնարհ լինել: Այն ավելի շատ աշխատանք է պահանջում, քան որևէ այլ առաքինություն: Ինչո՞ւ: Պատասխանը պարզ է. թեև մարդու մեջ բարի սերմեր են ցանվել, սակայն նրա քնած ժամանակ արմատավորվել է մեր կյանքի թշնա-

մու շաղ տված չար սերմերից ամենաուժեղը՝ հպարտության սերմը: Ոչ մի բան մարդկանց համար այնքան վտանգավոր ու ողբալի չէ, որքան հպարտության պատճառած չարիքը: Եվ քանի որ հպարտության այս մոլությունը արմատավորված է գրեթե բոլոր ժողովուրդների մեջ, Տերը Երանիները սկսում է հենց դրանից. «Երանի հոգով աղքատներին, որովհետև նրանցն է երկնքի արքայությունը» (Մատթ. 5:3): Նա մեր բնությունից արմատախիլ է անում հպարտությունը՝ մեզ հորդորելով նմանվել Իրեն՝ ճշմարիտ Երանելիին, որ հոժարակամ աղքատացավ: Այսպես, ինքնահոժար աղքատությամբ միայն կարելի է բաժնեկից լինել նրա Երանությանը: Ինչպես առաքյալն է ասում. «Զեզանից յուրաքանչյուրը թող խորհի այն, ինչ որ կա Քրիստոս Հիսուսի մեջ, որը Աստծուն հավասար լինելը հափշտակություն չհամարեց, այլ Իր անձը ունայնացրեց ծառայի կերպարանք առնելով, մարդկանց նման լինելով և մարդու կերպարանքով խոնարհեցրեց ինքն իրեն...» (Փիլիպ. 2 :5-7): Աստծու համար կա՞ ավելի մեծ աղքատություն, քան ծառա լինելը: Իշխանների Իշխանը, Տերերի Տերը կամավոր կերպով ինքնակամ հագնում է ծառայի պատմուճանը:

Մեր նախահայրերի նման լսենք նրա ձայնը և պատգամը ու քայլենք հեզության և խոնարհության ճանապարհով, որպեսզի արժանանանք աստվածային օրհնության ու երանության: Ամեն:

ԵՐԱՆԻ ՈՂՈՐՄԱԾՆԵՐԻՆ

«ԵՐԱՆԻ ՈՂՈՐՄԱԾՆԵՐԻՆ, ՈՐՈՎՀԵՏԵՎ ՆՐԱՆՔ ՈՂՈՐՄՈՒԹՅՈՒՆ ՊԻՏԻ ԳՏՆԵՆ» (ՄԱՏԹ. 5:7)

«Երանի նրանց, որ սրտով մաքուր են, որովհետև նրանք Աստծուն պիտի տեսնեն»:

«Երանի հոգով աղքատներին, որովհետև նրանցն է երկնքի արքայությունը»:

«Երանի սգավորներին, որովհետև նրանք պիտի մխիթարվեն»: (Մատթ. 5:4) և այլն:

«Որո՞նք են ողորմածները»: «Ի՞նչ է նշանակում ողորմություն անել կամ տալ»: «Անհրաժե՞շտ է ողորմություն տալ և կամ ինչո՞ւ պիտի տանք»:

Սրանք հարցեր են, որոնք բնականաբար պատասխանի կարոտ են յուրաքանչյուր ճշմարիտ քրիստոնյային լուսաբանելու համար:

Այս չի նշանակում սակայն, որ ողորմածները նրանք են միայն, որոնք նյութապես օգնում են ուրիշներին: Նրանք, որոնք հակառակ իրենց աղքատ լինելուն, ցավում ու տառապում են ուրիշների դժբախտությունների և նեղությունների համար, իրենց հոգին լցնում են գթասրտությամբ, սրտակից ու կարեկցող են դառնում իրենց եղբայրներին, փորձում են ինչ որ ձևով մխիթարել և ուրախացնել նրանց:

Եղբայր ասելով այստեղ պիտի չհասկանանք միայն նույն մորից ծնված գավակներ, այլ բոլոր քրիստոնյաներին, որոնք եղբայր են իրար հետ Քրիստոսով միացած:

«Տվեք՝, և պիտի տրվի ձեզ... այն չափով, որով չափում եք, նույն չափով պիտի չափվի ձեզ համար» (Ղուկ. 6:38):

«Տո՛ւր նրան, ով քեզնից խնդրում է. և ով կամենում է քեզնից փոխ առնել, երես մի դարձրու նրանից» (Մատթ. 5:42):

Ի՞նչ եք կարծում՝ *«Ի՞նչպես և ի՞նչ ձևով մարդ կարող է ողորմած լինել իր եղբայրների նկատմամբ»:*

Նախ՝

ա. Ուտելիք, դրամ, խմելիք, հագուստ և դեղեր տալ կարոտյալներին, ծերերին, որբերին, անտուններին և անօգնականներին: Եսայի մարգարեն վկայում է. *«Եթե դու քո միջից հեռացնես խարդախությունը, ձեռնձգությունն ու տրտունջի խոսքերը, քո հացը հոժար սրտով քաղցածներին տաս և չքավոր մարդկանց կըշտացնես, այն ժամանակ խավարի մեջ կծագի քո լույսը, քո խավարը կվերածվի միջօրեի» (Ես. 58:10):*

Իսկ Հակոբոս Առաքյալն ասում է. *«Սուրբ և անարատ բարեպաշտությունը Աստծու և Հոր առաջ այս է. այցելել որբերին և այրիներին իրենց նեղության մեջ, անարատ պահել իր անձը աշխարհից» (Հակոբ. 1:27):*

բ. Բաժնեկից դառնալ դժբախտների ցավերին ու տանջանքներին, այցելել նրանց և օգնել, որ հնարավորության չափով ազատվեն նրանցից, թեթևանա իրենց ցավը և մեղմանան տանջանքները: Կարեկցել տգետներին և փոխանակ արհամարհելու՝ օգնել, որ տեսնեն գիտության լույսը, զարգանան և օգտակար մարդիկ դառնան իրենց հարազատների ու մարդկության համար:

գ. Հավատքից շեղվողներին և տկարացածներին զգուշացնել ու քաջալերել՝ ապաշխարությամբ և գղջումով քավելու իրենց մեղքերը:

Սակայն այս բոլորը պետք է անել առանց ցուցամոլության և աննկատ: Չպետք է, այնպես անել, որ մարդիկ տեսնեն

մեր արած ողորմությունը: Հիսուս ասում է. *«Այլ երբ ողորմություն անես, թող քո ձախ ձեռքը չիմանա, թե ինչ է անում քո աջը, որպեսզի քո ողորմությունը ծածուկ լինի և քո Հայրը, որ տեսնում է, ինչ որ ծածուկ է, կհատուցի քեզ հայտնապես» (Մատթ. 6:3-4):*

դ. Հարգել բոլոր մարդկանց արժանապատվությունը և իր կյանքի օրինակով ցույց տալ, թե բոլոր մարդիկ եղբայրներ են իրար հետ:

Ողորմածությունը գլխավոր առաքինություններից մեկն է: Ողորմած են, գթասիրտ, բարին կամեցող, ուրիշների վշտերին կարեկցող, բարեգործ, անշահախնդրորեն օգնության հասցնողները: Ողորմություն բաշխել կարող են ոչ միայն նյութապես ապահովվածները՝ կարիքավորներին դրամական օգնություն տալով, այլ ընդհանրապես բոլորը, ովքեր ցավակից են լինում նեղության, դժբախտության մեջ ընկածներին, փորձում են բարի գործով կամ խոսքով մխիթարել նրանց:

Քանի որ մարդը և՛ հոգի է և՛ մարմին, ապա կարիք ունի հոգալու թե մարմնավոր և թե հոգևոր կարիքները: Հետևաբար ողորմածությունը լինում է երկու բնույթի՝ *հոգևոր և մարմնավոր:*

ա. ՄԱՐՄՆԱՎՈՐ ողորմածություն է, երբ հնարավորության սահմաններում կերակրում ենք, ջուր տալիս և կամ հագցնում կարիքավորներին, հյուրընկալում օտարներին ու այցելում հիվանդներին: Ողորմածությունը պարգևում է ներքին գոհունակություն, որովհետև ամենամեծ ուրախությունը կարոտյալին օգնելն է: Այս բարի գործը կատարելով հոգեպես թեթևանում ես, քանի որ դա անում ես անվարձահատույց, որովհետև գիտակցում ես, որ նա այդ օգնության կարիքը ունի և որ ամենակարևորն է ու ընդունելի մեր Տիրոջ կողմից՝ *քեզ փոխհատարձել չի կարող:*

բ. Մարմնավորի կողքին կարևոր է ՀՈԳԵՎՈՐ ողորմածությունը: Մեղավորին մոլության ճանապարհից ետ դարձնելը, ճշմարտության ճանապարհը սովորեցնելը, ճիշտ և բարի խորհուրդներ տալը դժվարին կամ վտանգավոր վիճակում գտնվողներին, մերձավորների համար Աստծուն աղոթելը, վշտացյալին մխիթարելն ու սփոփելը, չարին չարությամբ չհատուցելը,

վիրավորներին օգնելը, սրանք բոլորն էլ հոգևոր ողորմածության արտահայտություններն են:

Ճշմարիտ և աստվածահաճո է այն բարեգործությունը միայն, որն արվում է Աստծու և մարդկանց նկատմամբ մեր ունեցած անկեղծ ու անշահախնդիր սիրուց: Մեր Տերը պատվիրում է. «Զգույշ եղեք, որ ձեր ողորմությունը մարդկանց առջև չանեք, որպես թե այն լիներ ի ցույց նրանց, այլապես վարձ չեք ընդունի ձեր Հորից, որ երկնքում է» (Մատթ. 6:1):

Ողորմածությամբ պիտի շահենք Երկնքի Արքայությունը: Այս պարագան մեր Տերը Հիսուս հայտնում է վերջին դատաստանի նկարագրության մեջ. *«Այն ժամանակ թագավորը պիտի ասի նրանց, որ իր աջին են. «Եկեք, իմ Հոր օրհնյալներ, ժառանգեցեք աշխարհի սկզբից ձեզ համար պատրաստված արքայությունը, որովհետև քաղցած էի, և ինձ ուտելիք տվիք, ծարավ էի, և ինձ ջուր տվիք խմելու. օտար էի, և ինձ ձեր մեջ առաք, բանտում էի, և ինձ այցի եկաք:... ճշմարիտ եմ ասում ձեզ, քանի որ իմ այս փոքր եղբայրներից մեկին արեցիք այդ՝ ինձ համար արեցիք» (Մատթ. 25:34-36, 40):*

«Կյանքում ամեն ինչ ողորմություն է, և ամեն ինչ կյանքում կարող է ուրախություն լինել, եթե ուրախալից սրտով հավասարապես ընդունվեն թե այն, ինչ տրվում է, թե՝ ինչ որ վերցվում է: Մենք հաճախ մտածում ենք, թե ուրախություն լինում է միայն նրանից, ինչը ստանում ենք. իսկ ինչպիսի մեծ, ցնծալի ուրախություն է լինում, երբ ինչ-որ բանից կարծես զրկվել ենք, սակայն դրանով դրսևորվել է Աստծու իմաստուն հոգածությունը... Օգնիր մեզ, Տեր, հասկանալու, որ ամեն ինչ ողորմություն է...» (Մետրոպոլիտ Անտոնի Սուրոժսկի, 5 Նոյեմբեր 1967թ. «Քրիստոնյա Հայաստան» - 2006»):

Կարող եմ ասել, որ այս ճշմարտությունները գալիս են՝ առաջինը՝ մարդկանց նկատմամբ ունեցած Աստծու սիրուց, որովհետև Նա այնքան սիրեց մեզ, որ ստեղծեց Իր պատկերի համաձայն, այսինքն՝ Իր հոգու շունչը տվեց առաջին մարդուն: Իսկ երբ մեր նախածնողները մեղանչեցին, Իր անսահման ողորմածությամբ փրկեց նրանց, Իր Միածին Որդուն աշխարհ

ուղարկելով, որ խաչի վրա Իր արյունը թափեց և Իր հրաշալի Հարությամբ հաղթելով մահվան, մեզ մի նոր կյանք պարգևեց: Պողոս Առաքյալը Տիտոսին ուղղած իր նամակում ասում է. *«Իսկ երբ մեր Փրկիչ Աստծու քաղցրությունը և մարդասիրությունը հայտնվեց, ոչ այն արդարության գործերի համար, որ մենք արեցինք, այլ իր ողորմության համաձայն փրկեց մեզ վերստին ծննդյան ավազանի միջոցով և նորոգությամբ Սուրբ Հոգու...» (Տիտոս 3:4-5):*

Պատմեմ մի ճգնավորի կյանքի մասին:

«Նա ապրում էր մենակության մեջ, մոռացված բոլորից, թեև ինքը շատերին էր ծառայում, բայց նրանք ում ծառայում էր, նրա մասին քիչ էին հոգ տանում: Եվ մի անգամ մի հավատացյալ, որ ներկա էր նրա առավոտյան աղոթքին, որում նա գոհանում էր Աստծուց նրա անթիվ բարերարությունների համար,- ասում է նրան. «Ինչպե՞ս կարող ես ստել Աստծու առաջ և ինչպե՞ս կարող ես Նրանից շնորհակալ լինել Նրա պարգևների համար, չէ՞ որ Նա քեզ ոչինչ չի տվել...»: Իսկ ճգնավորը, նայելով այդ հավատացյալին, ասում է. «Դու կյանքն այնպես չես հասկանում ինչպես հարկն է: Դու մտածում ես, որ ես չունեմ ընկերներ, ջերմություն, կերակուր, ոչինչ կարծես թե չունեմ: Բայց ես այլ կերպ եմ տեսնում ամեն ինչ: Տերը նայել է իմ հոգու խորքը և տեսել, որ ես չեմ աճի մինչև այն չափը, որին Ինքը կանչել է ինձ, եթե ինձ չտրվի և քաղցել, և մրսել և միայնակ լինել: Եվ նա ինձ ավելցուկով է տվել թե մարդկանցից անտեսվելը և մոռացումը, թե զրկվածությունն այն ամենից, ինչ փնտրում են մարդիկ: Դու սրանում զրկվածություն ես տեսնում, իսկ ես իմ օժտվածությունը...»

Մետրոպոլիտ Անտոնի Սուրոժսկին ասում է.

«Մեզանից ոչ ոք այդպիսի ծայրահեղ պարագաներում չի ապրում, և մեզանից քչերը կկարողանային այդ ամենը կրել և փրկվել, այլ մեզանից յուրաքանչյուրը շարունակ բողոքում է, թե ինքն ինչ որ բանից զրկված է. իր վրա ուշադրություն չեն դարձնում, իր հետ ընկերություն չեն անում, իր մասին հոգ չեն տանում, ինքը չունի

այն, ինչը կուզեր ունենալ մարմնավոր, հոգեկան և հասարակական աշխարհում: Մենք միշտ խոսում ենք նրա մասին, ինչը չունենք, և երբեք չենք մտածում, որ Տերը մեզ չի զրկել, այլ օժտել է և ազատելով մեզ, հնարավորություն տալով հարուստ լինելու, սակայն այլ կերպ:

Մտածե՛ք այս մասին, որովհետև տրտունջը, նախանձը և նման այլ զգացումները ոչ միայն ավերում են մեր հոգին, այլև անտեղի փոթորիկ են ստեղծում, դրա համար առիթ էլ չկա, եթե միայն հասկանայինք, թե որքան առատորեն Տերը մեզ պարգևներ է բաշխում և ինչպես է քայլ առ քայլ տանում ապականացուից դեպի անապականը, ունենալու կեղծ վիճակից դեպի ճշմարիտ հարստացումը: (Մետրոպոլիտ Անտոնի Սուրոժսկի, 5 Նոյեմբեր 1967թ. «Քրիստոնյա Հայաստան» - 2006»):

Մեր եկեղեցական Հայրերից Գրիգոր Տաթևացին ասում է.

«Ողորմությունն այն է, որով երկրավորները շահում են երկնավորներին:

Ողորմությունը կամավոր ցավակցությունն է ուրիշների թշվառությանը:

Ողորմությունը տասնչորս կերպ է իրականանում, որոնցից յոթը մարմնավոր են, յոթը՝ հոգևոր.

ՄԱՐՄՆԱՎՈՐ ԵՆ ՍՐԱՆՔ.

Քաղցողներին կերակրելը, ծարավին ջուր տալը, մերկին հագցնելը, օտարներին ժողովելը, գերվածներին փրկելը, հիվանդներին այցելելը, մեռածներին թաղելը:

Առաջին վեցը Ավետարանն է սովորեցնում, յոթերորդը՝ Տուբիթի գիրքը:

ՀՈԳԵՎՈՐ ՈՂՈՐՄՈՒԹՅՈՒՆ ԵՆ.

Նախ հանցավորին ներելը, մեղավորին հանդիմանելը, տգետներին ուսուցանելը, երկմիտներին խրախուսելը, տրտմածներին մխիթարելը, ընկերոջ փրկության համար աղոթելը, համբերել սեփական անձի դեմ

գործած անիրավություններին: Եվ այս վերջինը ողորմության գործ է ասում, որովհետև փափուկ և խոնարհ պատասխանը խորտակում է ընկերոջ բարկությունը և շահում նրան»: (Գրիգոր Տաթևացի «Գիրք Հարցմանց»)

Մարդ միշտ էլ կարիք է ունեցել Աստծու ողորմածության և Նա շնորհներ է տվել այն չափով, որքանով որ մարդը ողորմած է եղել իր նմանների նկատմամբ: Ով որ օգնում է իր եղբորը և ներում նրա մեղքերը, Աստված էլ օգնում է նրան: Եթե ներենք նրանց, Աստված էլ կների մեզ *(Մատթ. 6:14-15):*

Ուրեմն՝ *«Ի՞նչ է ողորմությունը»:*

ա. ՈՂՈՐՄՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՐՏՔ է: Աստված շատերին է հարստություն տվել, սակայն նրանք ողորմություն չեն անում: Այդ պատճառով էլ ծանր կլինի նրանց պատիժը: Նա Իր բարիքները բաշխեց բոլորին, բայց որոշ մարդկանց մեծ հարստություն տվեց, որպեսզի նրանք առիթ ունենան ողորմություն անելու աղքատներին ու չքավորներին: Սակայն այս մեղավոր աշխարհում դա ինչքանո՞վ է օգտագործվում, միայն Աստծուն է հայտնի:

բ. ՊԷՏՔ է ՈՂՈՐՄԱԾ ԼԻՆԵԼ ԲՈԼՈՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ: Հիսուս Ինքը գթասրտության և ողորմածության լավագույն օրինակը եղավ: Մարդիկ Նրա մոտ հիվանդներ էին բերում՝ խնդրելով, որ Նա մոտենա և բժշկի նրանց: Եվ ոմանք անմիջապես ապաքինվում էին՝ միայն Նրա հագուստի փեշերին դիպչելով: Հիսուս պատվիրեց Իր աշակերտներին, որ Իր անունով բժշկեն բոլոր հիվանդներին անխտիր:

Մեր Տերը հրամայեց բարեգործ ու ողորմած լինել և այս աշխարհի աղքատներին Իր եղբայրները կոչեց:

Մեղքի մասին խոսելիս Նա ասաց, որ Աստծու արքայության մեջ պիտի վարձատրի ողորմածներին, իսկ անգութը պիտի պատժվի դժոխքի կրակով: Հակոբոս առաքյալն ասում է. *«Ով որ գիտե, թե ինչ է բարին, և չի անում, նրա համար այդ մեղք է» (Ա Հակոբ. 4:17):*

Իր ժամանակին փարիսեցիները Հիսուսին քննադատեցին, երբ ճաշում էր մեղավորների ու կարոտյալների հետ, սակայն մեր Տերը ասաց նրանց, թե Աստծու համար ավելի մեծ արժեք է ներկայացնում մի մեղավորի փրկվելը կամ մեկին երջանկացնելը:

Այս պատմությունը հետաքրքիր է.

«Իշխաններից մեկը թագավորի կողմից ուղարկվել էր արքունի ինչ-ինչ գործի: Եվ երբ նա գնում էր ճանապարհով, տեսավ մի աղքատ մեռածի, որ մերկ ընկած էր: Երբ տեսավ այդպես ընկած, գթալով ողորմեց նրան, իջնելով կառքից հանեց վրայից իր պատմուճանը, գցեց մեռածի վրա, ծածկեց նրան և գնաց: Մեկ այլ ժամանակ ևս նույն իշխանը արքայի կողմից առաքելությամբ ուղարկվեց ինչ-որ մի տեղ: Երբ ելավ քաղաքից, այնժամ չարի ազդմամբ ձիուց ընկավ և նրա ոտքերը կոտրվեցին: Ծառաները նրան տուն տարան և բժիշկներ հրավիրեցին նրան օգնություն ցույց տալու համար: Հինգ օր անց նրա ոտքերը սկսեցին սևանալ: Երբ բժիշկները տեսան նրա ոտքերի սևանալը, սկսեցին ակնարկել միմյանց և ասել, թե պետք է կտրել նրա ոտքերը, ապա թե ոչ՝ նրա բոլոր անդամները կփտեն, կնեխեն և նա կմեռնի: Եվ ասացին նրան. «Այսօր մենք տուն գնանք և վաղը կգանք, կբժշկենք քեզ»: Իսկ հիվանդը ասաց իր ծառային. «Գնա բժիշկների հետ և տես, թե ի՞նչ են մտածում»: Ծառան, ըստ նրա խոսքի, գնաց բժիշկների մոտ, որոնք բացատրեցին նրան իրենց տիրոջ վիճակը: Ծառան տուն վերադառնալով, արտասվելով հայտնեց տիրոջը նրանց ասածը: Արդ, երբ իշխանը լսեց այս մասին, տրտմությունից քնել չկարողացավ: Ամբողջ գիշեր կանթեղը պայծառորեն վառվում էր:

Կեսգիշերին հիվանդը տեսավ մի մարդու, որը պատուհանից ներս մտավ, կանգնեց նրա մոտ և ասաց,- «Ինչո՞ւ ես տրտմել ու լալիս»: «Լալիս եմ, որովհետև բժիշկներն այսինչ բանն ասացին»,- պատասխանում է նա: Անծանոթն ասում է. «Ցույց տուր ինձ քո ոտքերը»: Հայտնված անծանոթն ինչ-որ բանով օծեց դրանք ու ասաց. «Վեր կաց և քայլիր»: նա վեր կացավ և չկարողացավ քայլել: Հայտնվածն ասաց նրան. «Դեռ կաղո՞ւմ ես» և դարձեալ օծեց նրա ոտքերը: Այնժամ իշխանը վեր կացավ և բոլորովին առողջացած քայլեց: Իսկ այն հայտնված բարեկամը ողորմության մասին

բազում խոսքեր ասաց նրան, թե՝ «Տերն ասում է. «Երանի ողորմածներին, որովհետև նրանք ողորմություն կգտնեն» և անողորմ դատաստան է լինելու նրա հանդեպ, ով ողորմություն չի գործում»: Ապա ասաց. «Խաղաղություն քեզ»: Իշխանն ասաց. «Ցանկանո՞ւմ ես գնալ, մինչդեռ քո մասին չես հայտնել, հանուն Տիրոջ ասա ո՞վ ես դու»: Եվ անծանոթն ասաց, «Ճանաչո՞ւմ ես այս պատմուճանը»: Իշխանը թե՝ «Այո, տեր իմն է»: Եվ անծանոթն ասաց. «Ես այն մեռյալն եմ, որին դու տեսնելով մերկ ընկած ճանապարհին, սրանով ծածկեցիր: Եվ արդ, Տերն առաքեց ինձ բժշկելու քեզ: Իսկ դու գոհացիր Աստծուց և ողորմությունը մի մոռացիր»: Այս ասելով դարձյալ ելավ պատուհանով, որով և մտել էր ու գնաց: Իշխանը բոլորովին առողջացավ, գոհաբանեց Աստծուն և ուրախ էր, որովհետև ողորմածությունը, որը սիրում էր և միշտ ուներ, արդյունքով երևաց նրան ու հաստատվեց նրա մեջ»:

«Վարք հարանց» ժողովածուից

Ձեզանից յուրաքանչյուրը իբրև քրիստոնյա, մանավանդ իբրև դարավոր և հերոսական մի Ազգի զավակը, թող լինի ողորմած, գթասիրտ և ներող մարդկանց նկատմամբ: Մի սպասեք որևէ վարձատրության կամ գնահատանքի, դուք ձեր բարի գործը կատարեցեք և ձեր ողորմությունը տվեք՝ կարիքավորին, հիվանդին ու անօգնականին առանց սպասելու որևէ վարձատրության:

Մեր Տերը այնքան սիրեց մարդկանց, որ Իրեն դրեց բոլոր դժբախտների և հիվանդների տեղում: Իրապես, եթե մենք էլ նույնը կատարենք, այն ժամանակ միայն կհասկանանք, թե ինչո՞ւ պետք է միշտ ողորմություն անել: Ամեն:

ՍՐՏՈՎ ՄԱՔՈՒՐ ՄԱՐԴԻԿ

«ԵՐԱՆԻ ՆՐԱՆՑ, ՈՐ ՍՐՏՈՎ ՄԱՔՈՒՐ ԵՆ, ՈՐՈՎՀԵՏԵՎ ՆՐԱՆՔ ԱՍՏԾՈՒՆ ՊԻՏԻ ՏԵՍՆԵՆ» (ՄԱՏԹ. 5:8)

«Երանի հոգով աղքատներին, որովհետև նրանցն է երկնքի արքայությունը»:

«Երանի սգավորներին, որովհետև նրանք պիտի մխիթարվեն»:

«Երանի ողորմածներին, որովհետև նրանք ողորմություն պիտի գտնեն»:

«Երանի է ձեզ, երբ ձեզ նախատեն ու հալածեն և իմ պատճառով ձեր մասին սուտ ասեն: Ցնծացեք և ուրախացեք, որովհետև երկնքում ձեր վարձը շատ է, քանի որ այսպես հալածեցին մարգարեներին, որոնք ձեզնից առաջ են եղել» (Մատթ. 5:3-12):

Հիսուս օրհնեց և երանի տվեց բոլոր նրանց, որոնք մաքուր սիրտ ունեն, գովեց այն մարդկանց, որոնք իրենց անձնական կյանքում առաքինի են և մտածում են իրենց սրտի մաքրության մասին, որովհետև մաքուր սրտում միայն կարող է զորանալ և աճել արմատները մեր հավատքի:

Մյուս կողմից, Նա խստորեն հանդիմանեց փարիսեցիներին և դպիրներին, որոնք կարևորություն էին տալիս իրենց արտաքինին և անտեսում սրտի մաքրությունը. *«Վայ ձեզ կեղծավորներիդ՝ օրենսգետներիդ և փարիսեցիներիդ, որ բաժակի ու պնակի դուրսը մաքրում եք, մինչ ներսից*

նրանք լի են ձեր գողությամբ և անժուժկալությամբ: Կույր փարիսեցի, նախ մաքրիր բաժակի ու պնակի ներսը, որպեսզի դրանց դուրսն էլ մաքուր լինի» (Մատթ. 23:25-26):

Բաժակի դրսի կողմը ասելով Հիսուս ակնարկում էր մարդկանց արտաքին երևույթին, իսկ ներսի կողմ բացատրությամբ՝ հասկանում էր սիրտը: Այս մասին Առակաց գրքում ասվում է. *«Ամենայն զգուշությամբ պահիր և պահպանիր քո սիրտը, որովհետև նրանից է բխում կյանքի աղբյուրը» (Առակաց. 4:23):*

Սիրտը աղբյուրն է բարու և չարի: Այս է պատճառը, որ երբ բարի գործեր կատարող մի մարդ ենք տեսնում, ուրախությամբ *«բարեսիրտ»* անունն ենք տալիս նրան, իսկ երբ չարիք գործողի ենք հանդիպում, տխրությամբ ասում ենք՝ *«չար սիրտ ունի»:* Հիսուս այս ճշմարտության *լավագույն սահմանումն է արել. «Բարի մարդը իր սրտի բարի գանձերից բարին է բխեցնում, իսկ չար մարդը՝ չարն է բխեցնում, որովհետև սրտի ավելցուկից է, որ խոսում է նրա բերանը» (Ղուկ. 6:45):*

Հետաքրքիր է այս պատմությունը.

«Պատմվում է, թե երկու եգիպտացի վանականներ պատահաբար հանդիպում են մի կնոջ, որը գետի չափազանց խոր մի ծանծաղուտի մեջ խրված, չէր կարողանում այն կողմ անցնել: Վանականներից մեկը նրան գրկելով, ապահով մյուս կողմն է անցկացնում, սակայն այս արարքը գայթակղեցնում է իր ընկերոջը: Վերջապես, երկար ճանապարհ անխոս անցնելուց հետո, նա բարկությամբ հանդիմանում է իր եղբորը հոգևոր ուխտը դրժելու համար: Մյուս վանականը պատասխանում է. «Ես նրան գրկեցի և գետի մյուս կողմը անցկացրեցի ու այնտեղ թողեցի, սակայն դու դեռևս նրա հետ ես»:

Սրտի մաքրություն նշանակում է Հիսուսին կրել մեր մտքի ու սրտի մեջ, Իր անվամբ արտաքսելով չար խորհուրդները, որպեսզի մեր սրտերը մաքուր մնան:

Որպես մաքուր սրտի լավագույն օրինակ, Հիսուս նկատի է ունենում մանուկների սրտերը, որոնք դեռես մեղքը չեն ճանաչում: Նրանք նման են աղբյուրի այն ջրերի, որոնք հողից

դուրս եկած բոպեից մաքուր ու ջինջ են: Նույնն է նաև սիրտը: Իր նախնական վիճակում միշտ նա մաքուր է: Բայց երբ այնտեղ տեղ են գտնում չար ցանկությունները և վատ զգացումները՝ կեղտոտվում է:

Ս. Ներսես Շնորհալի Հայրապետն ասում է. *«Եթե մեկը սիրտը մաքրի ամեն տեսակ կեղտոտություններից, պիտի տեսնի իր հոգու մեջ գեղեցկությունը աստվածային կերպարանքի, այնպես, ինչպես, երբ մեկը մաքուր հայելիով արևին դիտի, թեպետ դժվար և սակայն հայելիի ճառագայթներով լույսի ուժգնությունը կտեսնի, այնպես էլ մենք, երբ մաքրվենք մեր կեղտոտություններից, պիտի կարողանանք Աստծուն տեսնել»:*

Մարդկանց սրտերը չորս տեսակ են լինում՝ *քարացած, մակերեսային, փշոտ և բարի:*

ա. ՔԱՐԱՑԱԾ ՍԻՐՏ - *Սիրտը քարացած է լինում, երբ մարդ չի լսում Աստծու խոսքը և միայն իր հաճույքների մասին է մտածում, ամեն ինչ իր անձնական շահերի համար է անում, չի մտածում Աստծու և իր կարիքավոր ընկերոջ մասին: Այդպիսի մարդն անձնասեր է, այսինքն՝ իր անձը ամենաշատն է սիրում:*

բ. ՄԱԿԵՐԵՍԱՅԻՆ ՍԻՐՏ - *Մակերեսային է այն մարդու սիրտը, որն Աստծու խոսքը լսելով և կամենալով բարիք անել դժվարութեան պահին մոռանում է իր սովորածը և վարվում ըստ հին սովորության, կարծես թե երբեք չի էլ լսել Աստծու ու Նրա պատվիրանների մասին:*

գ. ՓՇՈՏ ՍԻՐՏ - *Մարդու սիրտը փշոտ է, երբ նա լսում է Աստծու ձայնը և ցանկանում հետևել Նրան, սակայն իր սրտից չի հեռացնում չար սերմերը, այսինքն՝ սուտը, հայհոյանքը, գողությունը, ավազակությունը և այլ վատ սովորությունները, որոնք բարիք գործելու ցանկությունը խեղդում են մարդու մեջ:*

դ. ԲԱՐԻ ՍԻՐՏ - *Մարդու սիրտը բարի է, երբ լսում և մտքում պահում է Աստծու խոսքը, հոգին մաքրում է չար ցանկություններից, կատարում իր կրոնական պարտավորությունները, սովորում դասերը, սիրում*

ընկերներին... այդպիսի մարդու կյանքը բարի պտուղներ է տալիս:

Քրիստոնյայի կյանքի ամենամեծ նպատակը Երկնքի Արքայությունը ժառանգելն է: Հիսուս նրան հասնելու համար հիմնական պայման դրեց սրտի մաքրությունը: Երբ Իր աշակերտները վիճում էին, թե ո՞վ պիտի լիներ իրենցից մեծը Երկնքի Արքայության մեջ, Հիսուս մի մանուկ առավ, կանցնեցրեց նրանց դիմաց և ասաց. *«Ճշմարիտ եմ ասում ձեզ, եթե չդառնաք ու չլինեք մանուկների պես, երկնքի արքայությունը չեք մտնի» (Մատթ. 18:3),* այսինքն, եթե մանուկի պէս մաքուր սիրտ չունենաք և անմեղ չլինեք, չեք կարող մտնել այնտեղ, ուր Աստված հատկացրել է արդարների համար:

Մեր Հայրապետները և բոլոր սրբերը հավատում էին, որ Աստծուն կարող են տեսնել միայն նրանք, որոնք բարի զգացումներով և առաքինութիւններով լի սիրտ ունեին ու այդ անհատնում գանձանակից շարունակ բարիք էին հանում և առատորեն բաշխում իրենց եղբայրներին ու նվիրում Աստծուն:

Բարի սիրտ ունեցողների և եղբայրական վերաբերմունք ցույց տալու ամենամեծ օրինակը տալիս է Հիսուս, պատմելով Բարի Սամարացու ուսանելի առակը, որը կարող եք կարդալ Ղուկաս Ավետարանչի 10-րդ գլխի 30-35 համարներում: Առակի բովանդակությունը այն է, որ ավազակների կողմից կողոպտված, վիրավոր մի մարդու օգնության ձեռք երկարելով, Բարի Սամարացին կատարում է իսկական ընկերոջ, մաքուր սիրտ ունեցող մարդու գործ, օգնելով խնամքի կարոտ մարդուն, ինչը չի կարելի ասել քահանայի և Ղևտացու համար, որոնք իրենց խիղճը կորցրած անտարբեր գտնվեցին խնամքի ու օգնութեան կարոտ մարդու նկատմամբ:

Հայերեն լեզվում *սուրբ* նշանակում *է մաքուր, անարատ, նվիրական, կեղտից ազատ, անխառն, զուտ:* Կրոնական իմաստով *«Սուրբ առնել զանձն»* նշանակում է *«Ինքն իր անձը Աստծուն նվիրել»* (Մալխասյանց-Աճառյան):

«Սրտի մաքրությունը,- ասում է Գարեգին Հովսեփյանց Կաթողիկոսը,- *ճշմարտության գերիշխանությունն է մեր խղճի և հոգու մեջ, որ ազնվացնում է մեր զգացումները ու ջերմացնում մեր հոգին բարու, գեղեցիկի և*

ճշմարտության գաղափարների համար» (Գարեգին Հովսեփյանց, «Դեպի Լույս և Կյանք», «Գանձասար», Երևան, 1994, էջ 55):

Սաղմոսերգու մարգարեն գեղեցիկ կերպով է բնորոշում սուրբ մարդու տիպարը.

«Նա, ով անբասիր է ընթանում, արդար գործ է կատարում, ճշմարտություն խոսում իր սրտում: Ով չի նենգել իր լեզվով և ընկերոջը վատություն չի արել մերձավորներից նախատինք նա չի ստանում և չարագործն անարգված է նրա աչքում: Այդպիսին փառաբանում է նրանց, ովքեր երկյուղ ունեն Տիրոջից, երդվում է իր բարեկամին և երդումն իր չի դրժում: Իր արծաթը վաշխով չի տալիս, իրավունքի դեմ կաշառք չի վերցնում: Ով անում է այս, նա հավիտյան չի սասանվի» (Սաղմ. 14:2-5):

Բարի սիրտ ունենալ նշանակում է քրիստոնյային վայել կյանք ունենալ, որովհետև ով չի կատարում մեր Տիրոջ պատվիրանները՝ խնամել հիվանդին, օգնել կարիքավորին, ձեռք մեկնել բանտարկյալին, կնշանակի նա չի ընթանում ճիշտ ճանապարհով և նրա սիրտը չի կարող մաքուր լինել:

Այս պատմությունը Հայրենի մեծանուն գրող Ավետիք Իսահակյանի գրույցներից մեկն է, որը ուսանելի է.

«Դարեր առաջ փառատենչ ու դրամասեր մի իշխան էր ապրում Արևելքում: Նա կռվազան էր, անհանգիստ, դավադիր, ագահ ու անկուշտ և ուզում էր աշխարհակալ լինել: Մի անգամ նորից հարևան երկրների դեմ պատերազմի է գնում և հաղթականորեն հասնում ամրակուռ մի քաղաքի պարիսպներին, որը պաշարելով վրաններ է խփում նրա շուրջբոլորը:

Մի օր իշխանը զբոսանքի է դուրս գալիս քաղաքի շրջակայքը, երբ վերադառնալիս է լինում իր զինվորական վրանները, անցնում է մի գերեզմանատան միջից և հետաքրքրությունից դրդված սկսում է կարդալ շիրմաքարերի արձանագրությունները. «Անուն, ազգանուն, մեծահարուստ վաճառական, ծնվեց այսինչ

թվին, մեռավ այնիչին և չապրեց ոչ մի օր»: Ի՞նչ տարօրինակ գրություն, զարմանում է իշխանը: Կարդում է մեկ ուրիշը. *«Անուն-ազգանուն, հոչակավոր զորապետ, միշտ հաղթական, ծնվեց-մեռավ, ապրեց միայն մի օր»* և ապա՝ *«Անուն-ազգանուն, մեծափարթամ կավածատեր, հողատեր, ծնվեց- մեռավ, ապրեց յոթ տարի»:* Նորից՝ *«Անուն-ազգանուն, ծնվեց-մեռավ, մարդասպան, ապրեց երեք տարի»:* Ի վերջո՝ *«Անուն-ազգանուն, խորհրդամաստ հեղինակ, իմաստասեր մարդ, ծնվեց-մեռավ, ապրեց իր կյանքի բոլոր օրերը»:*

Իշխանը անկարող լինելով լուծել մահարձանների գրությունները, հրամայում է գտնել-բերել մի տեղացու, որը կարող էր բացատրել այս առեղծվածը: Զինվորները բերում են գերեզմանոցի ծերուկ պահակին և իշխանը հրամայում է նրան մեկնել յուրաքանչյուր գրությունը: Ծերուկը ասում է. «Հնից սրբագործված ավանդություն ու սովորություն է մեր մոտ, երբ մի քաղաքացի մեռնում է, գյուղի ծերունիները հավաքվում են քննելու համար նրա արժանի և անարժան գործերը: Քաջություն, խելք, հարստություն անարժեք են, երբ չեն օգտագործված, չեն ծառայեցված ուրիշների համար: Իր անձի համար ապրված օրերը նժարի մեջ թեթև են կշռում, իսկ բարիք գործած օրերը ծանր են և այդ օրերը ապրած օրեր են համարվում: Ընկերության ու ազգի համար նվիրվողն է, որ իսկապես ապրում է, որովհետև կյանքի իմաստը ուրիշին բարիք անելու մեջ է: Եվ այսպես կյանքի մեջ բարիք և ողորմություն արած օրերն են հաշվում և թիվը գրվում է տապանի վրա: Սհավասիկ այստեղ ննջող իմաստունը հրաժարվեց կյանքի հաճույքներից, խորապես զգաց թշվառի և կեղեքվածի տանջանքները, նա տառապեց քաղցածի ու կեղեքվածի հետ, մխիթարեց և օգնեց կարիքավորին, իսկ հարստահարողին սաստեց: Նրա կյանքի և ոչ մեկ օրը իզուր չանցավ: Այս մարդասպան ավազակը կյանքի վերջին երեք տարիներին զղջաց և դրանք անցկացրեց ճամբորդներին անվճար սառը ջուր հրամցնելով,

ուստի ապրեց երեք տարի: Իսկ այստեղ պառկած զորապետը մի պատերազմում թշնամու մի զինվորի խնամեց ընդամենը մեկ օր: Մի քիչ այն կողմում ննջող մեծահարուստը միայն մի բան արեց, գանձեր դիզեց և հարստություն, կեանքում ոչ մեկին բարություն չարեց և միայն իր մարմնի մասին մտածեց: Եվ իմաստունները գրեցին... չապրեց և ոչ մի օր»:

Իշխանը լսեց ծերունու մեկնությունները, առանձնացավ, մտածեց և ապա նահանջի հրաման արձակելով թողեց հեռացավ իր երկիրը: Այնտեղ նա սկսեց բարի ու արդար գործեր կատարել, ուրիշների բարօրության համար ապրել և ամեն իրիկուն քնելուց առաջ մտածում էր. *«Ես բախտավոր եմ ու երջանիկ: Հիմա է որ ես ապրում եմ»:*

«Արժի, որ մենք էլ ամեն իրիկուն քնելուց առաջ մտածենք ու մենք մեզ հաշիվ տանք, ապրո՞ւմ ենք իրապես, թե մեռած ենք արդեն»:

Բարի մարդ և մաքուր սիրտ ունենալու մի երևույթ է նաև մեր Եկեղեցու հանդեպ ունեցած մեր սերն ու նվիրումը, որը մենք չենք կարող կատարել տունը նստած սուրճ խմելով կամ հեռուստացույց դիտելով, այլ՝ Եկեղեցի գալով և մեր մասնակցությունը բերելով: Կարևոր է, որ գանք, որպեսզի մեր Աղոթքի Տունը շեն մնա ու դատարկ և որբ չմնա, ոչ միայն Աղոթքի Տունը, այլ նաև մեր հոգին դատարկ ու անսնունդ չմնա, որը նույնպես կարևոր է:

Մաքրենք մեր միտքն ու հոգին ամեն տեսակ կեղտոտություններից, պայծառացնենք և զորացնենք մեր հավատքը, ամենօրյա մեր աղոթքներով ուժ առնենք ու փորձենք նմանվել մեր սրբերին, որոնք մեզ նման մարդիկ էին, սակայն իրենց *«ես»ը* ատելով, այն պահեցին հավիտենական կյանքի համար:

«Երանի նրանց, որ սրտով մաքուր են, որովհետև նրանք Աստծուն պիտի տեսնեն»:

Երանի, հազար երանի բարի և մաքուր սիրտ ունեցողներին: Ամեն:

ՔՐԻՍՏՈՍԻ ԱՎԵՏԱՐԱՆԸ
ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԲԱՆԱԼԻՆ

«ԵՐԱՆԻ ԽԱՂԱՂԱՐԱՐՆԵՐԻՆ, ՈՐՈՎՀԵՏԵՎ ՆՐԱՆՔ ԱՍՏԾՈՒ ՈՐԴԻՆԵՐ ՊԻՏԻ ԿՈՉՎԵՆ»
(ՄԱՏԹ. 5: 8)

«Երանի հոգով աղքատներին, որովհետև նրանցն է երկնքի արքայությունը»:

«Երանի սգավորներին, որովհետև նրանք պիտի մխիթարվեն»:

«Երանի նրանց, որ սրտով մաքուր են, որովհետև նրանք Աստծուն պիտի տեսնեն» (Մատթ. 5:3-11) և այլն:

Իր կյանքի ու ժամանակի արժեքը իմացող յուրաքանչյուր մարդու համար կարող ենք ասել, թե աշխարհի բոլոր բարիքներից ամենացանկալին ու ամենակարևորը՝ խաղաղությունն է:

Խաղաղ խիղճը, միտքը, հոգին և խաղաղ ժողովուրդը կարող են բարոյապես և տնտեսապես բարձրանալ ու զորանալ:

Անգնահատելի ու անփոխարինելի մի գանձ է խաղաղությունը: Եթե Աստված նվեր տար ամբողջ աշխարհը մեզանից մեկին և սակայն վերցներ նրանից խաղաղությունը՝ վստահ եմ նա ամենադժբախտ մարդը պիտի լիներ:

Մի ընտանիք, կազմակերպություն և մի ժողովուրդ, որոնք խաղաղ չեն, կնշանակի թե մեղքի մեջ են և մեղավոր մեկը, մարդ թե հասարակություն ապստամբ մեկն է ու հակառակորդ Տիրոջ սիրո օրենքներին: Աշխարհում համաժողովներ են գումարվում, զինաթափություններ են ստորագրվում, բանակցություններ են կատարվում և դաշինքներ կնքվում ազգերի միջև խաղաղության, սակայն դեռևս շատ երկրներում շարունակվում են պատերազմները միմյանց միջև և զոհվում են հազարավոր մարդիկ, քաղաքներ և գյուղեր են քանդվում ու որբերը շատանում են: Ե՞րբ պիտի հասնենք կատարյալ խաղաղության: *«Աստված գիտի,»*- ասում են մարդիկ: Այս հարցը հուզում է ամեն մարդու, անկախ իր ազգությունից ու անշուշտ առավել ևս՝ մեզ հայերիս, որովհետև մենք և մեր Հայրենիքը օդի ու ջրի պես միշտ պետք ունենք խաղաղության:

Մեր Տերը՝ Հիսուս Քրիստոս աշխարհ եկավ իբրև *«Խաղաղության Իշխան և Արդարության Արեգակ»:* Նա խաղաղություն հաստատեց, բաժանեց և ստեղծեց Իր ամբողջ կյանքով, գործով ու խոսքով: Երբ առաքյալները սարսափի էին մատնվել ալեկոծ ծովի վրա, Նա Իր օրհնյալ ձեռքերով հրաման տվեց հովերին և ջրերին ու խաղաղություն տիրեց: Նա խաղաղություն շնորհեց նույնիսկ Իր աջ կողմը խաչվող ավազակին: Եվ ի վերջո նա Իր խաղաղությունը ժառանգ թողեց Իր առաքյալներին:

«Խաղաղություն եմ թողնում ձեզ, իմ խաղաղությունն եմ տալիս ձեզ. ձեզ չեմ տալիս այնպես, ինչպես այս աշխարհն է տալիս, ձեր սրտերը թող չխռովեն, և չվախենաք»...» (Հովհ. 14:27):

Ի՞նչ խաղաղության մասին էր, որ խոսում էր մեր Տերը: Այն ժամանակները, երբ շատ ազգեր և ժողովուրդներ, տառապում էին Հռոմեական հզոր կայսրության տիրապետության տակ և երազում էին ազատ, անկախ ու խաղաղ մի երկիր լինելու մասին, արդյո՞ք պիտի օգներ Հիսուսի բերած խաղաղությունը նրանց: Եթե առարկայական մտածենք, անշուշտ՝ ոչ, որովհետև Հիսուս ոչ զինվորական բանակներ և ոչ էլ բավականաչափ զենք ուներ, որ կարենար հաղթել Հռոմեական հզոր կայսրության: Նրա բերած խաղաղությունը ուրիշ էր: Հիսուսի խաղաղությունը աստվածային էր, երկնային, հրաշալի, որ չի վերջանում, չի կորչում և հավիտենական է: Այդ խաղաղությունը ունեցողները կրակից ու սրից են անցնում, օձերի և կարիճների վրա են կոխում, մարմին ու ինչք են զոհում և սակայն՝ ոչ մեկը չի կարող խլել նրանցից այդ խաղաղությունը: Մի խոսքով Հիսուսի բերած խաղաղությունը՝ Հոգու խաղաղությունն է: Նրա բերած խաղաղությունը ջնջում է խռովությունները, հալեցնում հակառակությունները, շոգիացնում փառասիրությունները, ոչնչացնում է նախանձի ու ատելության արմատները և լցնում սրտերը սուրբ ուրախություններով:

Աշխարհի խաղաղության բանային Քրիստոսի Ավետարանն է:

Ինչքան ուրախ և երջանիկ պիտի լինի մի ընտանիք, եթե տան բոլոր անդամների միջև կա Աստծու սերը, որը բերում

է համերաշխություն և փոխադարձ հասկացողություն, այսինքն՝ այնտեղ իշխում է Հիսուսի թողած Հոգու խաղաղությունը: Նրա համար Հիսուս ասում է, եթե Իմ խաղաղությունը ունենաք, *«թող չխռովեն ձեր սրտերը և չվախենաք»:*

Մի ընտանիք, որը Աստուն չի ճանաչում և ապրում է ճշմարտութեան լույսից հեռու, իր կյանքի մեծ մասը պիտի անցնի վշտերի ու նեղությունների մեջ: Եվ եթե ընտանիքի անդամները միացած չեն իրար հետ քրիստոնեական սիրով ու ներողամտության ոգով, շարունակ պիտի վիճեն և կռվեն իրար հետ, նույնիսկ չպիտի ուզեն խոսել ու տեսնել իրար և մի օր էլ դժբախտաբար պիտի դառնան իրար մոլի հակառակորդներ: Այս է ճշմարտությունը:

Ուրեմն, ի՞նչ պետք է անեն մարդիկ, որ ունենան Հիսուսի խաղաղությունը: Միակ ճանապարհն է. սեր ունենալ Աստծու, Եկեղեցու և մարդկանց հանդեպ: Ահա բանալին Նրա մեզ թողած խաղաղության: Երկու հազար տարիներ առաջ մեզ ժառանգ թողած Հիսուսի պատգամը *«Միրեցեք միմեանց»* պիտի լինի Նրա խաղաղության բանալին:

Հիսուսի խաղաղությունը մարդկության համար պարգևների պարգևն է: Սակայն՝

«Ե՞րբ է մարդկային ընկերությունը եղել «այն աստվածային տաճարը, ուր հոգիները կարողանային ունենալ իրենց աննենգ ու երջանիկ թևախառնումը»: «Մարդու թշնամին իր ընտանիքն իսկ չի՞ եղել: Անհատը չի՞ տեսել իր դեմ հավաքականությանը և փոխադարձաբար: Արյունը արյան դեմ բորբոքված, լեզուն լեզվի դեմ սրված և կրոնը կրոնի դեմ զինված չե՞ն: Խիղճը սար չի՞ քաշել խղճի և միտքը մտքի դեմ: Ողջագուրվող կրծքի տակ դաշույնը պահված և համբերող շրթներին դավող թույն չի՞ թափված:...» ասում է Կ. Պոլսի Պատրիարք Գարեգին Տրապիզոնցին և շարունակում է.

«...Աշխարհի խաղաղությու՞նը: Նա խաղաղեցնո՞ւմ է իրապես տիեզերական Խիղճը, ընկերային այն բոլոր անհերդաշնակությունների առջև, որոնցով մարդիկ իրենց «կենցաղի ծովն» են միշտ ալեկոծում...: Նա մոռացնել՞ է տալիս մշտապես երեկվա «չարիքը» այսօրվա «բարիք»-ով, հնարավորություն տալով, որ «յուրաքանչյուր մարդ

ճշմարտությունը խոսի իր ընկերոջ հետ, խաղաղությամբ և արդարությամբ դատաստան տեսնի իր դռների մոտ, չունենա վատ խորհուրդներ ընկերոջ մասին իր սրտի խորքում և չսիրի՞ սուտ երդումը...»:

«Օ՜հ, սրանցից ո՛չ մեկը չի կարող տալ դժբախտաբար աշխարհի խաղաղությունը:... Չե՞ք ճանաչում «խաղաղության ավետարանչ»-ի ձայնը. «Խաղաղությո՞ն եմ թողնում ձեզ, իմ խաղաղությո՞ն եմ տալիս ձեզ - (Հովհ. 14:27-28): Այդ խաղաղությունն է, որ հաշտեցնում է երկինքն ու երկիրը իրար հետ եւ հիմնում «Աստծու թագավորությունը»: Եվ Աստծու թագավորությունը ուրիշ բան չէ արդեն, բայց եթե «արդարություն, խաղաղություն և ուրախություն տիեզերքը լցնող Սուրբ Հոգով»: Այդ խաղաղությունը շինարար է, ստեղծագործ ու հավիտենական» («Ընտիր Քարոզներ», հաւաքածո, Անթիլիաս, Լիբանան, 1955, Գարեգին Պատրիարք Տրապիզոնցի, էջ 92, 93. 94-95):

«Երանի խաղաղարարներին,որովհետև նրանք Աստծու որդիներ պիտի կոչվեն»: Հիսուս երանի է տալիս խաղաղությունը ցանկացողներին, պահպանողներին և նրա համար պայքարողներին ու շեշտելով իր խաղաղության կարևորությունը ամենամեծ շնորհը տալիս է նրանց, ասելով, որ նրանք Աստծու Որդիները պիտի կոչվեն: Ի՞նչ մեծ պատիվ է լինել Աստծու Որդին:

Այստեղ ուզում եմ հիշել երջանկահիշատակ Վազգեն Վեհափառի խոսքը.

«Ամեն բանի մասին կարելի է տարակարծիք լինել և վիճել, խաղաղությունը սակայն վեր պետք է լինի ամեն վիճից և դառնա բոլորի համար մտածելու և գործելու գերագույն կանոն՝ ամեն տեսակի հարցերը լուծելու»:

Խաղաղություն ցանկացողը նա է, որ կարողանում է իր խաղաղությունը փոխանցել ուրիշներին, մեկը, որի հետ շփվելիս և հաղորդակցվելիս մարդկանց հոգիները խաղաղվում են, լցվում հոգևոր կյանքի ճշմարտություններով: Արդ, Քրիստոսի խաղաղությունը, որ ամեն Կիրակի բաշխվում է Եկեղեցում՝ մշտապես կանչում է մեզ: *«Լսեցեք ինձ և բարիքներ ճաշակեցեք ու բարության մեջ ձեր հոգիները վայելք պիտի զգան» (Ես. 55:2):*

Երանի նրանց, որոնք կարողանում են պահել Տիրոջ պատգամը, սակայն գուցե շատերն ասեն, որ դժվար է խաղաղարար լինել, մանավանդ այս անօրեն աշխարհում, ուր անարդարությունն ու չարությունն են թագավորում: Հովհաննես առաքյալը պատասխանում է այդպիսիներին. *«Եվ նրա պատվիրանները ծանր չեն, քանի որ ամեն օր ամեն ոք, որ Աստծուց է ծնված, հաղթում է աշխարհին: Եվ այս է այն հաղթությունը, որ հաղթում է աշխարհին՝ մեր հավատը» (Ա. Հովհ. 5:4),* որովհետև մեր Տերը սկզբից զգուշացրեց մեզ, որ նեղ է Իր դուռը, դուռ, որը մեզ արքայություն է խոստանում: Նա երբեք մեզ չի խաբել, նեղ է ճանապարհը, որը մեզ պիտի մոտեցնի հավիտենական դռներին, սակայն խաղաղության Ավետարանն է, որը մեզ հաղթել պիտի տա, ինչպես որ Հիսուս հաղթեց աշխարհին:

Այնտեղ, ուր տիրում է խաղաղությունը, անպայման առկա է նաև շինարար աշխատանքը: Պարզ է, որ երկարատև խաղաղություն վայելող երկրում, միշտ զարգանում է շինարարությունը, արդյունաբերությունը, իսկ ժողովուրդը՝ առաջադիմում: Նույնը կարող ենք տեսնել Եկեղեցում: Եթե Եկեղեցու անդամները ձգտում են խաղաղ և համերաշխ հարաբերություններ հաստատել միմյանց հետ, անպայմանորեն հոգևոր վերելք են ապրում: Վաղ քրիստոնեության շրջանում, ինչպես պատմում է *«Գործք Առաքելոց»* գիրքը, հավատացյալներն ապրում էին սիրով ու խաղաղությամբ: Այդ իսկ պատճառով էլ քրիստոնեությունն արագ տարածվեց աշխարհում: Հասկանալի, թե ինչո՞ւ Եկեղեցու և ժողովուրդների մեծագույն երազանքը դարեր շարունակ եղել է խաղաղությունը:

Մեր եկեղեցական հայրերից Գրիգոր Տաթևացին ասում է.

«Խաղաղությունը առաքինության կայանն է, որ լցված է հեշտությամբ ի Աստված առանց մարմնականի, աշխարհիկի և սատանայականի: Եվ եթե որևէ պակասություն լինի, անզոր է դառնում, ուստի պարզ է, որ խաղաղություն կարող է ունենալ հույժ մաքրված հոգին:

Արդ, խաղաղարարները ավելի շատ են Աստծո որդի ասվում, քան այլք, որովհետև չնայած ողորմությունը

ավելի է մարդուն նմանեցնում Աստծուն երևացող գործերով, սակայն ըստ ներքին էության ավելի նմանեցնում է խաղաղությունը:

Խաղաղություն է նաև համացեղակիցների հետ սիրով ապրելը:

Եվ խաղաղությունը երեք տեսակ է.

Նախ, որ խաղաղեցնում է ուրիշներին իբրև միջնորդ:

Երկրորդ՝ իրենց այլոց հետ, ինչպես հեզերը ըստ առաքյալի խրատի, բոլորի հետ խաղաղության մեջ եղեք:

Երրորդ՝ ինքն իր հետ, ինչպես առաքինիներն են ունենում հոգու, մարմնի մտքի ներդաշնակ խաղաղություն և չեզոքացնում այն հակամարտությունը, որն ունի մարմինը հոգու դեմ:

Սրանք բոլորը կոչվում են երանելիներ, քանզի Աստծո որդիներ են համարվում:

Հարց - Ո՞րն է Աստծո Որդու խաղաղությունը:

Պատասխան - Այն, որ մեղքը, չար կամքը և սատանային, որոնք խռովարար էին, մեջտեղից դուրս բերեց ու խաղաղություն հաստատեց երկնքի և երկրի միջև:

Նախ, խաղաղություն հաստատեց Իր անձով, որովհետև աստվածային և մարդկային բնությունը միավորեց Իր մեջ՝ մի կամքով և մի անբաժանելի գործունեությամբ:

Երկրորդ՝ հաշտեցրեց Հոր Աստծուն արարածների հետ և պարգևեց Սուրբ Հոգուն:

Երրորդ, հաշտեցրեց հրեշտակներին և մարդկանց՝ վերացնելով հրեղեն սուրն ու թշնամանքը:

Չորրորդ, հրեաներին և հեթանոսներին մի եկեղեցում ժողովեց:

Հինգերորդ, խաչողների և չարչարողների համար աղոթք արեց:

Արդ, առաջինը խաղաղության հաստատումն էր ինքն Իր հետ, վերջինը՝ Իր և ուրիշների միջև, իսկ միջինը՝ ուրիշների միջև:

(Գրիգոր Տաթևացի «Գիրք Հարցմանց»)

Մեր, համերաշխություն, խաղաղություն... Ահա այս երեքն են, որ ամփոփված են այս երանիի մեջ և անքակտելի

կապված, քանզի չկա սեր՝ առանց համերաշխության կամ խաղաղություն՝ առանց սիրո...: Եվ սրանից մեծագույնը սերն է, որից և բխում են մյուս երկուսը:

Մեր կյանքում բազում են այն օրինակները, երբ խաղաղություն պիտի սերմանեինք, բայց եղանք խոովարար, երբ համերաշխությունից առավել անհաշտությունը սիրեցինք: Սակայն եթե այդ պահերին հիշենք *«Աստծու որդիներ պիտի կոչվեն»-ը,* համոզված ենք, որ այլ կերպ պիտի վարվենք:

Մի՞թե կա ավելի մեծ երանություն, քան այն, որ Աստված մեզ Իր որդիները կոչելու շնորհն է տալիս՝ փոխարենը խնդրելով մեզանից, որ սիրենք խաղաղությունը, սիրենք միմյանց...

Այո', Քրիստոսն է մեր խաղաղությունը, Նա Ինքն է մեծագույն դեսպանը խաղաղության, հաշտության կամուրջը՝ մարդ արարածի և Արարչի միջև:

Այս երանիին արժանանալով զարմանալիորեն պիտի տեսնենք, որ զերծ ենք մնում մեղքերի մի մեծ ընտանիքից՝ *բարկություն, ատելություն, զայրույթ, նախանձ, չարություն և այլն:*

Ամեն կիրակի պատարագիչի շուրթերից լսվող *«Խաղաղություն բոլորին»-ը* թող լցնի մեր սրտերը սիրով միմյանց նկատմամբ, քանզի, եթե չսիրեցինք, չենք կարող խաղաղարար լինել՝ չենք կարող Քրիստոսինը լինել. *«Եթե դուք միմյանց սիրեք, դրանով բոլորը պիտի իմանան, որ դուք իմ աշակերտներն եք» (Հովհ. 13:35):*

Ուստիէ՝ *«Եվ Աստուծո խաղաղությունը, որ վեր է քան ամենայն միտք, պիտի պահի ձեր սրտերը և մտածումները Քրիստոս Հիսուսով» (Փիլ 4:7):*

Աղոթենք, որ Աստված մշտական խաղաղություն պարգևի համայն աշխարհին և առավելապես մեր ազատ ու անկախ Հայրենիքին:

Աղոթենք նաև, որ մեր Տերը Իր խաղաղությամբ մտնի ամեն հայ ընտանիքից ներս, այնտեղ հաստատելու համար համերաշխություն, նվիրվածություն և ամենակարևորը՝ սեր ու հավատք իրար նկատմամբ: Ամեն:

ՆԱԽԱՏԻՆՔ ԵՎ ՀԱԼԱԾԱՆՔ

«ԵՐԱՆԻ Է ՁԵԶ, ԵՐԲ ՁԵԶ ՆԱԽԱՏԵՆ ՈՒ ՀԱԼԱԾԵՆ ԵՎ ԻՄ ՊԱՏՃԱՌՈՎ ՁԵՐ ՄԱՍԻՆ ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ՁԱՐ ԽՈՍՔ ՍՈՒՏ ԱՍԵՆ: ՑՆԾԱՑԵՔ ԵՎ ՈՒՐԱԽԱՑԵՔ, ՈՐՈՎՀԵՏԵՎ ԵՐԿՆՔՈՒՄ ՁԵՐ ՎԱՐՁԸ ՇԱՏ Է, ՔԱՆԻ ՈՐ ԱՅՍՊԵՍ ՀԱԼԱԾԵՑԻՆ ՄԱՐԳԱՐԵՆԵՐԻՆ, ՈՐՈՆՔ ՁԵԶՆԻՑ ԱՌԱՋ ԵՆ ԵՂԵԼ» (ՄԱՏԹ. 5:11-12)

«Երանի հոգով աղքատներին, որովհետև նրանցն է երկնքի արքայությունը»:

«Երանի սգավորներին, որովհետև նրանք պիտի մխիթարվեն»:

«Երանի ողորմածներին, որովհետև նրանք ողորմություն պիտի գտնեն» (Մատթ. 5:4-7) և այլն:

Երանիներից վերջինը մյուսների պսակը լինելով, կարելի է ասել հանդիսանում է ամենամարդկային և հավատքի մեջ զորացած քրիստոնյային կյանք տվողն ու ներշնչիչը: Մարդկությունը շատ հին ժամանակներից սկսած իր մեջ ունեցել է լուսավորիչներ, առաջնորդներ, ճշմարտության հետևորդներ, որոնք գրեթե միշտ ենթակա են եղել ծաղրի, հեգնանքի, այլ նաև նախատինքի ու հալածանքի: Զարմանալին նրանում էր, որ մինչ այդ չէր պատահել, որ որևէ մեկը երանի տար այդպիսիներին: Իրապես, եթե խորը մտածենք, վերջին երանին նույնիսկ կարող է մեզ շատ անհասկանալի թվալ:

Հիսուս Իր աշակերտներին պատվիրում է չվախենալ ու համարձակորեն խոստովանվել իրենց հավատքը մարդկանց առջև: Թելադրում է նրանց չընկճվել սպառնալիքից, չարչարանքից ու նույնիսկ մահից: Քաջալերում է, որ չամաչեն իրենց հավատքից, այլ բարձր ձայնով հայտարարեն դրա մասին: Հորդորելով կատարել այն, ինչ Ինքը պատվիրում է, հուսադրում է, թե նրանք պատիվ պիտի համարեն քաջաբար այն խոստովանվելով, որով իզուր չպիտի անցնեն նրանց զոհողությունները. *«...Ով որ մարդկանց առաջ խոստովանի ինձ, մարդու Որդին էլ նրան կխոստովանի Աստծու հրեշտակների առաջ» (Ղուկ. 12:8):*

Եթե մեր սերը Քրիստոսի հանդեպ կատարյալ է, ոչ չարչարանքները հ ոչ էլ մահը մեզ չեն կարող վախեցնել: Այս իմաստով Պողոս Առաքյալն ասում է. *«Արդ, ո՞վ պիտի բաժանի մեզ Քրիստոսի սիրուց, տառապա՞նքը, թե՞ անձկությունը, թե՞ հալածանքը, թե՞ սովը, թե՞ մերկությունը, թե՞ վտանգները, թէ՞ սուրը» (Հռոմ 8:35):* Ավելին, պատահում է ճիշտ հակառակը: Բոլոր դառնությունները ավելի են խորացնում աստվածային սերը: Սա հաստատեցին առաջին դարի և քրիստոնեական բոլոր դարաշրջանների նահատակները: Աշխարհը նրանց արյամբ ոռոգվեց՝ պատճառ հանդիսանալով քրիստոնեության տարածմանը:

Ահա ձեզ մի օրինակ արդարության ու ճշմարտության համար հալածվող մի սրբի կյանքից:

«Քրիստոնեության հալածանքների ժամանակ Բերիլոս եպիսկոպոսը ձերբակալվում է իր հրաշալի քարոզների և ուսուցումների համար:

Բյուզանդիայի Լևոն Կայսրը գաղտնի հրաման է տալիս, որ նրան բանտում գլխատեն, որպեսզի չշարունակի իր պայքարը հանուն քրիստոնեության ուղղափառ հավատքի:

Բերիլոս եպիսկոպոսը Կայսրի հին բարեկամն էր և իր նվիրապետական աստիճանների բարձրացումը ստացել էր նրա հրամանով:

Երբ դահիճները գալիս են մահապատիժը գործադրելու, եպիսկոպոսը ծնկի եկած գրում է հետևյալ երկտողը և խնդրում, որ այն անպայման հանձնեն Կայսրին:

Նամակի բովանդակությունը այս էր.

«Վեհափառ Տեր, միշտ էլ ուզել ես պատվել քո հին բարեկամիդ:

Սարկավագությունից ինձ բարձրացրեցիր աբեղայության, աբեղայությունից՝ Եպիսկոպոսության և հիմա մեծագույն շնորհն ես անում պատվելով ինձ սրբազնագույն տիտղոսով, մարտիրոսության պսակով, շնորհակալ եմ»:

Կայսրը կարդալուց հետո այս սրտառուչ տողերը, ցնցվում է և հրամայում, որ մահապատիժը չգործադրվի, բայց ավա՜ղ սուրբն արդեն իսկ գլխատված էր»:

Այս կյանքում չարչարանքները և ուրախությունները չափանիշ չեն ոչ չարության ու ոչ էլ՝ բարության: Աստված հաճախ փորձում է Իր ընտրյալներին՝ համբերության, հավատքի ու սիրո մեջ աստվածային վեհ նպատակների իրագործման համար: Դրա լավագույն օրինակը հանդիսանում է Հոբ Երանելին, որն իր ամբողջ ունեցվածքն ու զավակներին կորցնելով հանդերձ, թե հարստութեան և թե դժվարությունների ժամանակ չհեռացավ Աստծուց, ամուր պահեց իր հավատքը ու միշտ փառք տվեց Նրան:

Նախատինքն ու հալածանքը, արդյունք են սիրո պակասին, ոխին, քինախնդրության և աստվածային ճշմարտության անգիտության: Նախատել, արհամարհել, անպատվել իր նմանին, նշանակում է ծաղր ու ծանակի ենթարկել նրան: Արդարության ու ճշմարտության զգացումից զուրկ մարդիկ են, որոնք այսպես են մտածում և գործում:

Մեր Տերը ծանոթ լինելով մարդու ներաշխարհին ու ապրելակերպին, նոր ձև ու գույն է տալիս դրան: Կյանքը, որն ապրում է մարդը, լի է նեղություններով ու տառապանքներով: Եվ զարմանալին այն է, որ նույն մարդն է դրանց ստեղծողն ու առաջ բերողը, այսինքն մենք ենք նեղություն և տառապանք պատճառում մեր նման մարդկանց: Դժբախտաբար մարդիկ փորձում են ամեն ինչ իրենցով չափել ու մտածում են, թե ամեն բան իրենց ներքին աշխարհի զգացումներին ներդաշնակ պիտի լինի ու այդպես էլ կշռում են աշխարհը: Մարդու մէջ *«ես»-ը* այնքան ուժեղ է, որ դրանից դուրս ուրիշ բան չի տեսնում և կամ չի ուզում տեսնել, հետևաբար նա ստիպված ուզի կամ չուզի հարմարվում է այդ վիճակին, ինչպես մեր ժողովուրդն է ասում. *«Հոսանքին հակառակ չգնալու համար»,* հակառակ դեպքում նրանց սպասվում են՝ *«հայածանքը, նախատինքը, բամբասանքն ու չարախոսությունը»:*

Դժբախտաբար իրականություն է հաստատել այն դառն իրողությունը, թե մարդիկ, որոնք խորապես չեն ապրում քրիս-

տոնեական կյանքով, սիրով ու հավատքով, հեռացնում են իրենցից ճշմարտությունը և փոխանակ զղջալու, դարձի գալու ու իրենց մեղքերը Աստծու մոտ խոստովանվելու, արհամարհում, բամբասում ու հալածում են նրանց, որոնք ապրում են հավատքով, արդարությամբ, մաքրությամբ ու ազնիվ կյանքով:

Հիսուս նախատեսել էր այդ. *«Մի տխրեք սրա համար, այլ ուրախացեք, որովհետև մարդիկ դարերով հալածել ու նախատել են ճշմարտության, աստվածպաշտության հետամուտ մարդկանց, մարգարեներին ու արդարներին»:* Իրապես, Քրիստոսով պայծառացած հոգիների համար հալածանքը պատիվ է ու փառավորության ճանապարհ: Չէ որ Նա էլ հալածվեց ու Իր արյունը թափեց մարդկության փրկության համար: Նրա սիրո հուրով վառված հոգիների համար հալածանքը գեղեցկագույն առիթ է ճշմարիտ վկայության: Հալածանքն ու նախատինքը, որոնք հավատքով տկարների համար կարող են խոչընդոտ լինել, մինչդեռ ճշմարիտ հավատացյալին դրանք իբրև սանդուղք են ծառայում դեպի Աստված բարձրանալու համար:

Դարերով մարդիկ ոչ միայն չեն սիրել ճշմարտությունն ու արդարությունը, այլն հալածել, նախատել են ճշմարտախոսին ն չարչարանքներով նույնիսկ մահվան են դատապարտել արդարին: Բամբասանքը, չարախոսությունը եղել են, կան ու պիտի լինեն իբրն զենք նրանց համար, որոնք թույլ են՝ հավատքի, հույսի ու սիրո մեջ:

Ի սեր գերագույն ճշմարտության հալածվել՝ սիրո առաքինություն է: Այս հավատարմության գեղեցկագույն օրինակները տվեցին առաջին դարի քրիստոնյաներն ու Եկեղեցու հայրերը: Կարող ենք հիշել Պողիկարպոս Զմյուռնիացի Հայրապետին, որ դահիճների առջև կանգնած աղոթում էր Հիսուսին, որպեսզի իրեն արժանի անի արյունով նահատակության:

Ճշմարիտ քրիստոնյայի համար կյանքի իմաստն ու արժեքը չհալածվելու, չնախատվելու մեջ չէր, այլ՝ հալածվելով, նախատվելով, սակայն երբեք չհուսահատվելու մեջն էր: Պողոս Առաքյալը իր սիրելի աշակերտ Տիմոթեոսին թելադրում է. *«Եվ բոլոր նրանք, որոնք ուզում են աստվածպաշտութեամբ*

ապրել Քրիստոս Հիսուսով, հալածանքների մեջ պիտի լինեն... ...Արթուն եղիր ամեն ինչում, նեղությունների մեջ համբերիր, ավետարանի գործեր արա, լիուլի կատարի՛ր քո պաշտոնը» (Ա. Տիմոթէոս 3:12, 4:5):

Հավատքով զորացած հոգիների համար հալածանքը դեղ է ու բալասան, որով նրանք բուժում են իրենց մարդկային տկարությունները: Սրբերը հանդիսանում են մեծագույն օրինակները հավատքի, հույսի ու սիրո: Քրիստոսի սիրով վառված հոգիների համար նեղությունը, հալածանքը, սովը կամ այլ վտանգներ բավարար չեն նրանց հեռացնելու Աստծուց ու Նրա ճշմարտություններից:

Հալածանքն ու նախատինքը կարծեք միշտ ուղեկից են եղել բոլոր նրանց, որոնք եղել են *հոգով աղքատ, սգավոր, հեզ, արդարության քաղցն ու ծարավը ունեցող, ողորմած, սրտով սուրբ և խաղաղարար:*

Չարչարանքն ինքնըստինքյան չարիք չէ քրիստոնյայի համար, մանավանդ, երբ հավատքի դավանության հետևանքն է, որովհետև Երկնքի Արքայությունում այս երկրային կյանքում կրած չարչարանքների դիմաց վարձատրությունը շատ ավելի մեծ է լինելու: Ավելին, հավատացյալն այսպիսով լրացնում է Քրիստոսի չարչարանքները Եկեղեցու շինության ու պայծառության համար: Պողոս Առաքյալն ասում է. *«Եվ այժմ ուրախ եմ ձեզ համար կրած իմ չարչարանքների համար և լրացնում եմ իմ մարմնի մեջ Քրիստոսի նեղությունների պակասը իմ մարմնի համար, որ է եկեղեցին» (Կող. 1:24):* Իսկ Պետրոս Առաքյալը քաջալերում է քրիստոնյաներին՝ նման չարչարանքները դիմագրավելու. *«Իսկ եթե արդարության համար չարչարվեք էլ երանի է ձեզ» (Ա Պետ. 3:14):*

Ընդհանրական Քրիստոնեական Հայրերից Սուրբ Հովհան Ոսկեբերան Հայրապետն ասում է. *«Լավություն - քաջություն է ոչ թե վատ խոսքեր լսելը, այլ լսելը և այն քաջությամբ տանելը, որովհետև այս կերպով գործնականապես հանդիմանվում են դրանք ասողները, որովհետև ոչ թե չչարչարվելն է, չնայածվելն է մեծությունը, այլ չարչարվելը, հայածվելը և սակայն չհուսահատվելը»:*

Իր ծագման օրից իսկ քրիստոնեությունը ենթարկվեց

հալածանքների: Քրիստոնյաները զարմանալի համբերությամբ և հավատքով հանձն առան դրանք: Պատճառը Հիսուսի Տեր և Աստված դավանելն էր, հրեաները, ազդված առաքյալների կատարած հրաշքներից, խումբ առ խումբ զալիս էին քրիստոնեությունն ընդունելու: Նրանց մեծամեծները խիստ հալածանքներ շղթայազերծեցին Եկեղեցու դեմ: Առաքյալներից և հետևորդներից ոմանք սպանվեցին, բանտարկվեցին, չարչարվեցին, ոմանք էլ, հալածանքների պատճառով, ցրվեցին աշխարհով մեկ:

Հեթանոսները ևս ձեռնպահ չմնացին: Տասը տարի մինչև չորրորդ դարի սկիզբը մեծ հալածանքներ կազմակերպվեցին: Երբ 312 թվականին Կոստանդիանոս կայսրը քրիստոնեությունը հռչակեց ազատ կրոն, կարծես քրիստոնյաների հոգսը թեթևացավ, զոնե այդպես թվաց նրանց, սակայն առաջին հալածանքը սկսեց Ներոն կայսրը: Չորս տարի անընդմեջ (64-68) քրիստոնյաներն աներևակայելի տանջանքների ենթարկվեցին: Նահատակվեցին շատերը, այդ թվում նաև Պետրոս և Պողոս առաքյալները: Վերջին հալածանքի կազմակերպիչը եղավ Դիոկղետիանոս կայսրը: Ամենասոսկալին, սակայն, պարսից Շապուհ արքայի շղթայազերծած հալածանքն էր, որը տևեց քառասուն երկար տարիներ և ստացավ *«Քառասնամյա հալածանքներ»* անվանումը: Հալածանքին զոհ զնացին հարյուր հազարավոր քրիստոնյաներ:

Արդարությունը արևի նման փայլող մի իրականություն է, զողերն ու ավազակները փախչում են նրանից և նախընտրում են խավարը, որպեսզի իրենց չար ծրագրերը իրագործեն: Եսասեր, փառամոլ ու պաշտոն սիրող մարդիկ գունավոր ակնոցով են դիտում արդարությունը: Այսպիսի մարդկանց համար արդարությունը բառարանում տպված բարդ մի բառ է:

«Եվ բոլորը վկայում էին ու զարմանում նրա բերանից ելած շնորհայի խոսքերի վրա ու ասում. «Սա Հովսեփի որդին չէ"»: Եվ նա ասաց նրանց. «Անշուշտ, ինձ այս առածը կասեք. «Բժիշկ, բժշկիր ինքդ քեզ»: Այն ամենը, ինչ արել ես Կափառնայումում, որչափ որ լսեցինք, արա և այստեղ, քո գավառում»: Եվ նա ասաց, «ճշմարիտ եմ ասում ձեզ, որ մարգարեն ընդունելի չէ իր քաղաքում» (Ղուկաս 4:22-24),- ասել է Փրկիչը: Ինչո՞ւ, որովհետև մարգարեն Աստծու մարդն է և ճշմարտությունն է

խոսում: Այս նյութապաշտ դարում Ավետարանի ճշմարիտ քարոզչությունը հաճելի չէ շատերի ականջին: Այդ պատճառով էլ ուղղափառ քարոզիչը հալածվում է քրիստոնեությունը դիմակ դարձնողների կողմից:

Մարդիկ այսօր *«Աստծուն երկնքում չեն փնտրում, այլ՝ նյութի մեջ և «Իրավունքը ուժեղինն է»* սկզբունքին են հավատում: Այդ *«ուժեղ»-ը* անխուսափելիորեն նյութն է: Հավատում են, թե ամեն հարգանք ու պատիվ պիտի ընծայվի նյութին և ոչ թե խելքին, սրտին ու հոգուն:

Այսօրվա ամենաահավոր հիվանդությունը ցուցամոլությունն է: Սա մի հոգեբանական հիվանդություն է, որ նմանվում է դատարկ տակառի ձայն հանելուն:

Անգյիացիների համար ասվում է, թե ճակատամարտները կորցնում են, բայց դրա փոխարեն շահում են պատերազմը:

Արդարության համար հալածվողներն էլ նման են այս վիճակին: Նրանք ժամանակավոր կերպով ենթարկվում են հալածանքի, չարչարանքի, տառապանքի, ճակատամարտեր են կորցնում, բայց վերջ ի վերջո վերջնական հաղթանակը նրանցն է:

Հիսուսից հետո ո՞ր մի առաքյալը, ճշմարտախոս և արդար հայրապետը, վարդապետը կամ ճշմարտութեան ո՞ր մի քարոզիչը չի հալածվել: Սակայն այսօր այդ նույն հալածվողները իբրև սրբեր զարդարում են Եկեղեցիների Սուրբ Սեղանները: Նրանք պատմության էջերը փայլեցնում են ու դառնում սերունդների ներշնչման աղբյուր: Բայց ո՞ւր են հալածողները, ո՞ւր են արդարության երեսին ապտակողները և փշե պսակ դնողները: Նրանք Աստծու օրենքի համաձայն խառնվել են գերեզմանների փոշիներին:

Արդարության ձայնը չի կարող խեղդվել: Այդ բարի ու անուշ ձայնը ուշ թե շուտ լսվելու է ու նրա դատին օգնողները ստանալու են իրենց արժանի վարձը:

Հալածվել բամբասանքի ու չարախոսության արժանանալ միայն նրա համար, որ Հիսուսի հետևորդներն ենք, նշանակում է փառքի պսակը ունենալ: Մեր ժողովուրդը դարեր շարունակ օտար բռնակալների կողմից փշե պսակների է արժանացել, շատ անգամներ նահատակվել, բայց այսօր հակառակ

նրան, որ իրեն հալածողներից, տիրապետողներից ու անարգողներից շատերը աշխարհի երեսից ջնջվել են կամ փոքրացել իրենց մեծությունից, փառք ու պատիվ մեր ժողովրդին, քանի որ ինչպես մեր մեծ բանաստեղծ Պարույր Սևակն է ասել, *«ապրել ենք, ապրում ենք ու պիտի ապրենք»:*

Երկնքի Արքայության մէջ կյանքը պիտի լինի զուտ հոգևոր գոյություն՝ հիմնված հավիտենական արդարության, խաղաղության, երանության և Սուրբ Հոգու շնորհաբեր ներկայության վրա: Պողոս առաքյալը փորձում է նկարագրել այս վիճակը, երբ ասում է. *«Ինչ որ աչքը չտեսավ, և ականջը լսեց, և մարդու սիրտը չընկավ, Աստված այն պատրաստեց իր սիրելիների համար» (Ա Կորնթ. 2:9):*

Երկնքի Արքայությունն սկսվում է այս աշխարհից, Հիսուսի հանդեպ մեր ունեցած հավատքով և իր ավարտին պիտի հասնի երկնքում՝ Աստծու շնորհներով:

Քրիստոսի հավատարիմ զինվորի նման համբերությամբ տանենք չարչարանքներն ու նեղությունները: Այս խրատը դարձնենք մեր կյանքի նշանաբանը, որպեսզի ժառանգենք հավիտենական կյանքը:

Պողոս Առաքյալը Թեսաղոնիկեցիներին ուղղած երկրորդ թղթում ասում է. *«Եղբայրներ, պարտավոր ենք միշտ գոհություն մատուցել Աստծուն ձեզ համար, ինչպես որ արժանի իսկ է, քանի որ ավելի ու ավելի է աճում ձեր հավատը, և շատանում է ձեզնից յուրաքանչյուրի սերը միմյանց հանդեպ, այնպես որ մենք ձեզնով պարծենում ենք Աստծու եկեղեցիներում ձեր համբերության և հավատի համար՝ ձեր այն բոլոր նեղությունների մեջ, որոնց դուք համբերում եք: Դրանք ապացույց են Աստծու արդար դատաստանի, որպեսզի դուք արժանի լինեք Աստծու արքայությանը, որի համար էլ նեղություն եք կրում: Եվ արդար է Աստծու առաջ, որ ձեզ նեղողներին նեղություն հատուցվի, իսկ ձեզ՝ նեղություն կրածներիդ՝ հանգիստ մեզ հետ, երբ Տեր Հիսուս հայտնվի երկնքից իր հրեշտակների զորքով կրակի բոցով վրեժ լուծելու համար նրանցից, որոնք չեն ճանաչում Աստծուն և չեն հնազանդվում մեր Տեր Հիսուս Քրիստոսի Ավետարանին...» (Բ. Թեսաղ. 1:3-9):*

Աղոթում եմ Աստծուն, որ աղքատներ, կարոտյալներ և մանավանդ անբուժելի հիվանդներ չլինեն: Աստծու մոտ անկարելի ոչինչ չկա: Մեր աղոթքով կարող ենք հասնել ամեն ինչի: Միշտ աղոթեցեք և լցվեցեք մեր Տիրոջ սիրով և եթե այդ սիրո համար նույնիսկ հալածանքի ենթարկվեք. *«...Յնծացեք և ուրախացեք, որովհետև երկնքում ձեր վարձը շատ է...» (Մատթ. 5:12):* Ամեն:

ՈՎՔԵ՞Ր ԵՆ ՍՐԲԵՐԸ

«ԻՄ ՄԵՋ ՄԱՔՈՒՐ ՍԻՐՏ ՀԱՍՏԱՏԻՐ, ԱՍՏՎԱԾ ԵՎ ԱՐԴԱՐ ՀՈԳԻ ՆՈՐՈԳԻՐ ԻՄ ՈՐՈՎԱՅՆՈՒՄ»
(ՍԱՂՄ. 50:12)

Աստված Իր սրբության մեջ է, որ հայտնվում է մարդկանց ե միայն սուրբ ու արդար կյանք կատարելով է, որ մարդ կարող է գնալ դեպի Աստված ե միանալ Նրան:

Դժվար է բացատրել *«սրբություն»* բառը, սակայն մարդու հոգին առանց սպասելու որևէ բացատրության, ճանաչում ու ապրում է սրբությունը:

Բնական է, որ կան զանազան կարծիքներ և մոտեցումներ սրբության հարցի վերաբերյալ: Ահա դրանցից մի քանիսը:

«Քչերը կարող են սրբանալ և ես նրանցից չեմ»:

«Այս մարդը չի՝ խմում, չի՛ ծխում, չի՛ հայհոյում, կատարյալ սուրբ է»:

«Ես ո՞ւր, սուրբը ո՞ւր...»

Ոմանք էլ կան, որոնք սրբության գաղափարին արհամարհանքով են նայում և բարի, սակավախոս, անվնաս մի մարդ տեսնելով, հաճախ ասում են. *«Ի՞նչ է, սո՞ւրբ եղար»:*

Երջանկահիշատակ Գարեգին Ա. Կաթողիկոսը սրբերի մասին այսպես է արտահայտվում.

«Բնականորեն, որոշ անձերի մեջ սրբության ներկայությունը, Աստծու հետ հաղորդությունը այնքան շեշտված և ճառագայթուն նկարագիր ու տարողություն կարող է ունենալ, որ Եկեղեցին դրանց հատուկ հարգանքի է արժանացնում որպես ներշնչման աղբյուր, որպես բարեխոս առ Աստված: Ահա սրանք են, որ տոնելի սրբեր են նկատվում և հատուկ օրեր ու արարողություններ են սահմանվում, շարականներ հորինվում, նրանց միջից որոշակի և ուժգնորեն արտահայտվող սրբությունը փառաբանելու ու նրան հավատացյալների կյանքում ձգտման ներշնչումի վերածելու նպատակով: Պատկերավոր բացատրությամբ կարող ենք ասել, թե՛ պարզ մարդիկ, որոնք սրբության

վիճակ են ապրում իրենք իրենց մեջ, նմանվում են մոմերի. եկեղեցու կողմից հոչակված և տոնված սրբերը նմանվում են փարոսների...» («Սուրբերը և մենք», Նյու Յորք, 1993, Գարեգին Ա. *«Ի՞նչ է Սրբությունը»,* էջ, 51-52):

«Ովքե՞ր են Սրբերը»: Այս հարցի պատասխանը տալիս է անցյալ դարի մեր նշանավոր Պատրիարքներից՝ երջանկահիշատակ Շնորհք Գալուստյանը.

«Սրբերի համար կյանքի դրական կամ ժխտական երևույթները մեծ կարևորություն չունեին, նրանց համար հիմնական մտածումը այն էր, որ իրենց կյանքում տիրապետող լինեին հավատքի գործերը, այսինքն՝ «Ինչ որ ճշմարտությամբ է, ինչ որ պարկեշտությամբ, ինչ որ՝ արդարությամբ, ինչ որ՝ սրբությամբ, ինչ որ՝ սիրով, ինչ որ՝ բարի համբավով, ինչ որ՝ առաքինությամբ, ինչ որ՝ գովությամբ» (Փիլ. 4:8):

«Նրանք հասել էին այնպիսի մի վիճակի, ուր այլևս սովորել էին գոհանալ իրենց ունեցածով և կարող էին ասել Պողոս Առաքյալի հետ. «Գիտեմ զրկանքով ապրել, գիտեմ առատության մեջ լինել», այսինքն ուզում էին ասել. «Ամեն ինչում, բոլոր պայմանների տակ, սովորել եմ թե կուշտ լինել, թե քաղցած մնալ, թե՝ առատության մեջ լինել, թե՝ զրկանք կրել: Ամեն ինչի կարող եմ նրա շնորհիվ, ով ինձ զորացրեց» (Փիլ.4:12-13), (Շնորհք Արք. Գալուստյան, «Հայազգի Սուրբեր» էջ 13):

Այս խոսքերով սրբերը գալիս են հաստատելու, թե՝ կյանքի պայմանները չեն ազդում առողջ հիմքով դրված հավատքի վրա, որովհետև այդ հավատքը հաստատված է Քրիստոսի Վեմի վրա, որը նույնն է երեկ, այսօր և նույնն է՝ հավիտյան:

«Ի՞նչ էր սրբերի տարբերությունը պարզ սովորական անհատ մարդկանցից, ինչո՞վ էին նրանք առավել նրանցից, ի՞նչ առաքինություններով ու դրական կողմերով էին նրանք առանձնանում»:

Սրբերը տարբերվում էին մարդկանցից ոչ թե պարզ, վերացական առաքինություններ ունենալու պատճառով, այլ դրանք իրական կյանքում գործի վերածելու ճանապարհով, ինչ-

պես օրինակ՝ «*կրոնասիրությունը, քաջությունը, բարեպաշտությունը իրենց նմանների նկատմամբ ծառայելու տրամադրությունը, բայց բոլորից ավելի Աստծու ու մարդկանց սերը»:*

Սրբությունը մի ասպարեզ է, որը բաց է բոլորի առաջ, հատկապես հավատավոր քրիստոնյաների համար անխտիր:

Ուրեմն բոլորս էլ կարող ենք մեր սրբակենցաղ կեանքով, մեր Տիրոջ Հիսուս Քրիստոսի ճշմարիտ պատգամներին հետևելով, դառնալ մեկ-մեկ Սրբեր, սակայն գնահատողը միայն Աստված է:

Այս բոլորը իմանալուց հետո, կարող ենք ևս մի հարց տալ, թե՝ *«Ուրեմն, Սրբերը ի՞նչ են թելադրում մեզ, ինչպիսի՞ քրիստոնեավայել կյանք պիտի ունենանք, որպեսզի արժանանանք Աստծու գնահատանքին և օրհնության»:*

Պատասխանը կրկին կարող ենք գտնել երջանկահիշատակ Շնորհք Պատրիարք Գալուստյանի մոտ.

«Սրբերը առանց տատանվելու թելադրում են մեզ, իրենց կյանքով ու խոսքով, որ միշտ և անսայթաք Աստծու ու Արդարության կողմը կանգնենք, հակառակ ամեն բանի և ի գին ամեն զոհողության: Միշտ ձգտենք Սրբության ու քաջության: Միշտ պատրաստ լինենք փոքր, աշխարհիկ, գոեհիկ ու ժամանակավոր բաները զոհել, մեծագույն, հոգևոր, ազնիվ ու հավիտենական բարիքների համար: Եվս մի բան. մեզ տրված այս երկրավոր կյանքը այնպիսի ձևով գործածենք, այնպես արժևորենք, որ շահենք ու ժառանգենք ի վերջո հավիտենական երանական կյանքը, ինչպես սրբերը արեցին. «Որք զչարսն պարտեցին, նեղությանցն համբերեցին, յուսեղեն եւ երկնային անթառամ պսակացն արժանի եղեն», այսինքն՝ «Չարերին պարտության մատնեցին, նեղություններին համբերեցին և արժանի եղան լուսեղեն ու անթառամ պսակներին» (Շնորհք Արք. Գալուստյան, «Հայազգի Սուրբեր», էջ 17):

Սրբերը ամեն բանից առաջ և ամեն ինչից առավել եղել

են կռապաշտության, ուրացումի և անտարբերության հակառակորդները: «*Հաստվածներիդ չենք պաշտի և քո կանգնեցրած ոսկի արձանիդ երկրպագություն չենք անի»:* Երեք մանուկների՝ Սեդրակի, Միսակի և Աբեթնազովի այս համարձակ արտահայտությունը բոլոր դարերում եղել է Սրբերի նշանաբանը: Ինչո՞ւ, որովհետև՝ *«Մենք երկնքում մեր Աստվածը ունենք և Նրան ենք պաշտում»,*- հայտարարում էին նրանք: Հատկապես Հայազգի Սրբերը, իրենց հոգու և սրտի կապը անխզելի պահեցին կենդանի Աստծու հետ ու արժանացան հավերժական կյանքին, երկնային արքայությանը, ժողովրդի հարգանքին ու սիրույն:

Երբեմն ժխտական ու անհավատ մարդիկ կան, որոնք չեն ուզում ընդունել, թե այս անիրավ աշխարհում կարելի է լավ մարդ ու լավ հայ դաստիարակել և արհամարհանքով են մոտենում նրանց, որոնք փորձում են հնարավորության սահմաններում զբաղվել իրենց երեխաներով ու նրանց ցույց տալ Աստծու ճշմարիտ ճանապարհը: Արհամարհանքով մոտեցող մարդկանց խոսքն է. *«Ի՞նչ է այս անիրավ ու անտուրբ աշխարհում, տո՞ւրբ եք ուզում մեծացնել»:* Նրանք չեն կարողանում հասկանալ, որ Աստծու առաջ ոչ մի անկարելի բան չկա:

Այսօր էլ սրբերը խոսում են մեզ հետ իրենց կյանքով, պայքարով ու արյունով և պատգամում են մեզ. *««Նմանվեցէք մեզ, հետևեցեք մեզ ու մի խզեք ձեր կապը մեր Երկնավոր Հոր, մեր Փրկիչ Հիսուս Քրիստոսի և մխիթարար ու զորացուցիչ Սուրբ Հոգու հետ»:*

Սրբերը անթիվ անհամար են ըստ Հայտնության գրքի հաստատման.

«Եվ դրանից հետո տեսա մի մեծ բազմություն,- որին թիվ չկար բոլոր հեթանոսներից և բոլոր ազգերից, բոլոր լեզուներից և բոլոր ժողովուրդներից, որոնք կանգնած էին աթոռի առաջ և Գառան առաջ իրենց վրա սպիտակ զգեստներ զցած և արմավենու ճյուղեր իրենց ձեռքերին:...

...Ո՛չ քաղց են զգալու, ո՛չ էլ ծարավելու են. և նրանց չի վնասելու ոչ արեգակը, ոչ էլ տոթը: Եվ Գառը, որ իր աթոռի մեջտեղում է, պիտի հովվի նրանց ու

պիտի առաջնորդի նրանց դեպի կյանքի աղբյուրը կենդանի ջրի, քանզի Աստված նրանց աչքերից սրբեց ամեն արտասուք» (Հայտ. 7:9-16):

Մյուս կողմից Սրբերը գալիս են կյանքի բոլոր ասպարեզներից, խոնարհագույնից մինչև բարձրագույնը, կաթողիկոսներից մինչև պարզ հոգևորականը, թագավորից մինչև պետական բոլոր պաշտոնյաները: Նրանք իրենց կյանքով ու խոսքով, թելադրում են մեզ, որ միշտ ու անսայթաք կանգնենք Աստծու և Արդարության կողմը, հակառակ ամեն բանի ու ի գին ամեն զոհողության: Միշտ ձգտենք Սրբության ու քաջության և պատրաստ լինենք աշխարհիկ ու ժամանակավոր փոքր բաները զոհել, մեծագույն, ազնիվ ու հավիտենական բարիքների համար: Մի խոսքով, մեզ տրված այս երկրավոր կյանքը այնպես գործածենք և այնպես արժևորենք, որ ի վերջո շահենք ու ժառանգենք հավիտենական երկնային կյանքը, ինչպես Սրբերը արեցին:

Չմոռանանք, որ *«Սուրբ»* բառը, ոչ միայն գործածվում է Աստծու և Սուրբ Երրորդության յուրաքանչյուր դեմքի, հրեշտակների, այլև բոլոր քրիստոնյաների համար անխտիր: Սրբության ասպարեզը ոչ միայն բաց է ամենքի առաջ, այլ աստվածային հրահանգ կա այս մասին. *«Սուրբ եղեք, որովհետև ես սուրբ եմ»,*- ասում է Աստված *(Ղեւտ. 11:45): «Եղեք կատարյալ ինչպես ձեր Երկնավոր Հայրը կատարյալ է»,- պատգամում է Հիսուս:*

Սրբերը մեզ համար արդար, մաքուր և հավատքով ապրելու սքանչելի օրինակ են: Եկեք հետևենք ու նմանվենք նրանց: Ամեն:

ԱՐԺԱՆԱՇՆՈՐՀ ՏԵՐ ՀՈՎՍԵՓ ԱՎԱԳ ՔԱՀԱՆԱ ՀԱԿՈԲՅԱՆ

Արժանաշնորհ Տեր Հովսեփ Ավագ Քահանա Հակոբյանը ծնվել է Հոկտեմբերի 7-ին, 1950, Էջմիածին քաղաքում, Հայաստան:

1960-62 թվականներին հաճախել է Էջմիածին քաղաքի Սուրբ Աստվածածին եկեղեցին:

1962-ի Սեպտեմբերին ընդունվել է Սուրբ Էջմիածնի Հոգևոր Ճեմարան:

1967-ին ձեռամբ Մայր Տաճարի Լուսարարապետ՝ Գերշ. Տ. Հայկազուն Արքեպս. Աբրահամյանի ձեռնադրվել է Սարկավագ:

1968-ին ավարտել է Հոգևոր Ճեմարանը և նույն տարվա Հունիս ամսին նշանակվել Կաթողիկոսարանի Քարտուղար:

1974-ի Փետրվարի 16-ին ամուսնացել է Մերի Մանվելյանի հետ:

1974-ի Դեկտեմբերի 22-ին Մայր Աթոռում ձեռնադրվում է ամուսնացյալ Քահանա և 1975-ի Մարտին նշանակվում Էջմիածին քաղաքի Սբ. Հռիփսիմե վանքում իբրև ծիսակատար, միաժամանակ շարունակելով Կաթողիկոսարանի Քարտուղարի պաշտոնը:

1977-ին Տեր Հոր ընտանիքը բախտավորվում է արու զավակով, որին ի հիշատակ իր վաղամեռիկ եղբոր՝ անվանակոչում են Խաչատուր:

1978-ի Մայիսին իբրև Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ներկայացուցիչ, Տեր Հայրը մի Վարդա-

պետի հետ մասնակցում է Հյուսիսային Ամերիկայի Արևելյան Թեմի Հոգևորականաց Համագումարին:

Ամերիկայից վերադարձին շարունակում է իր ծառայությունը Մայր Տաճարում և նույն թվականի Սեպտեմբեր ամսից նշանակվում Էջմիածին քաղաքի Սբ· Աստվածածին եկեղեցու պատասխանատու, ապա՝ Վանահայր:

1979-1993 թվականներին ծավալել է թե շինարարական և թե հոգևոր լայն գործունեություն, պատշաճ մակարդակի հասցնելով եկեղեցու առաքելությունը: Այդ թվականներին Երջանկահիշատակ Վազգեն Վեհափառի հանձնարարությամբ ստեղծում է նախապատրաստական դպրոց բաղկացած 9-14 տարեկան փոքրիկներից ու պատանիներից: Դպրոցի նպատակն էր պատրաստել եկեղեցական արարողություններին որոշ չափով գիտակ պատանիներ Հոգևոր Ճեմարանների համար:

Այդ փոքրիկներից և պատանիներից շատերը այսօր արդեն իսկ ձեռնադրյալ հոգևորականներ են կուսակրոն կամ ամուսնացյալ և ծառայում են Հայաստանյայց Առաքելական Եկեղեցուն՝ ի Հայաստան և ի Սփյուռս աշխարհի:

1994-ի Դեկտեմբերին Տեր Հայրը ընտանյոք տեղափոխվել է Ամերիկայի Միացյալ Նահանգներ և 1995-ի Հուլիս ամսից մինչև այսօր շարունակում է իր հոգևոր ծառայությունը Հյուսիսային Ամերիկայի Արևմտյան Թեմում՝ զբաղեցնելով զանազան պաշտոններ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ էջ

Օրհնության խոսք 5

Շնորհակալության խոսք 7

Սիրո Աղավնին՝ Աստված
Աղավնու սիրտը՝ Մայրը 8

Ապրելու նպատակը 17

Ժառանգության բաժանարարը 24

Նեղության անհրաժեշտությո՞ւնը 28

Արգելքներ 36

Պատրաստ լինելու ոգին 41

Ո՞վ է իմ ընկերը 46

Ատելությունը չարիք է 51

Հպարտություն 56

Բարություն, արդարություն և
Ճշմարտություն 62

Հոգու ծարավը 65

Բարկություն 73

Տեր, մի նշան ցույց տուր 81

Փյունիկեցի կնոջ հավատքը 88

Արթուն կացեք 94

Հոգևոր աղը 98

Մոմ, մատաղ, սրբապատկերներ
և խաչ 103

Ապրիլ 24, 2001
Եղեռնի Հուշարձան 109

Հաց, ջուր և աղ …….. 119

Գանձեր …… 123

ԵՐԱՆԻՆԵՐ
Հոգով աղքատներ
Երանի հոգով աղքատներին... …….. 128

Երանի սգավորներին. . . ……. 136

Երանի հեզերին 143

Երանի ողորմածներին. . . …….. 150

Սրտով մաքուր մարդիկ
Երանի նրանց, որ
սրտով մաքուր են. . . …… 159

Քրիստոսի Ավետարանը՝
Խաղաղության բանալի …….. 166

Նախատինք և հալածանք
Երանի է ձեզ, երբ ձեզ
նախատեն ու հալածեն... …… 173

Ովքե՞ր են Սրբերը …… 182

Իմ կենսագրությունը …… 187

Բովանդակություն …… 189